

91(075)

34-16

Во сибиріонску Академію  
ревскаго Института  
прикомисіи оны Архіе  
мандрита Гавріила  
Айвазовскаго изъ Парижа.

1857 г.

Краткая на Армян  
скомъ языкѣ общаа  
географія. Масть,  
кто простонароднои  
картыи еи нарисано.



363

1-2

91(075) 564-ԱԿ 3948

Յա-16 ՀԱՄԱՌՈՏ

ԵՇԽԵՐՀԵՐՐՈՒԹԻՒՆ

ԴՊՐԱՏԱՆ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

ԸՆԲԵՐՔՑ

Հ. ՍՏԵՓԵՆՈՍ ԵԱԶԸՃԵԱՆ

ՄԻԹԱՐԵԱՆՑ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ԴԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԸ

1847

2004

3748



(4927  
38)

17130-58

1930

### Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Աս համառօտ աշխարհագրութեան առաջին  
ապագրութեանը այսպէս շուտով ըմբննալը յայտնի  
նշան է աս ամենահարկաւոր ու գեղեցիկ ուսման  
մեր ազգին մէջ ալ ծաղկիլ սկսելուն: Միանգա-  
մայն իրաւունք ունինք նաև աս կողմանէ ուրախա-  
նալու որ բռնած ոճերնիս յարմար եկեր է մեր  
դիտած վախճանին, ինչպէս որ կը յուսայինք, և  
փոքր աշխատութիւննիս հաճոյ անցեր է վարժա-  
պետաց և աշակերտաց, որ մեծ քաջալերութիւն  
է մեզի:

Ասոնք մտածելով հարկ համարեցանք նորէն  
աչքէ անցնել առաջինը, և որչափ որ աս գրքու-  
կիս մեծութեանը՝ ոճին ու վախճանին ձեռք կու-  
տար նէ կատարելագործ եցինք:


Կարելի ալ չէր<sup>ժ</sup> առանց կարևոր փոփոխու-  
թեանց կրկին տպագրութիւն ընել այսպիսի ուս-  
ման մը դասատեարի, որ ուրիշ ամէն ուսմունք-  
ներէն աւելի փոփոխութեան տակ է շատ բանի  
կողմանէ : Ուստի բաց 'ի Բնական մասէն, որ քիչ  
փոփոխութիւն ունեցաւ, մէկալ երկու մասին մէջ  
ալ երևելի փոփոխութիւններ ըրինք. մանաւանդ  
Քաղաքական մասին մէջ՝ քաղաքներու բնակչաց  
թիւը ճշգեշով, Ուսոթնական մասին մէջ ալ նոր  
գտնուած մոլորակները և քանի մը հարկաւոր տե-  
ղեկութիւններ աւելցրնելով :

Աս փոփոխութիւններն ու ճշգութիւնները  
աւելցրնելու ատեն մեծ օգնութիւն ըրաւ մեզի  
նաև համբաւաւոր Պալպի աշխարհագիրը՝ թէ խոր  
հըրդով և թէ իր նոր նոր գրուածքներովը :

Յոյս ունինք թէ քիչ ատենէն ընդարձակ Աշ-  
խարհագրութիւնն ալ որ պատրաստ է՝ տպուե-  
լով, աս համառօտութեանս պակաս երեցած մա-  
սերն ալ անով լրանան :



*[Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several lines within a rectangular border.]*





## Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

# ԸՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ



1. ԸՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ ուսմունքը կը սորվեցընէ երկրիս բնական կազմութիւնը, բնական և քաղաքական բաժանմունքը, և աշխարհիս ԴԵՐՔԸ :

2. Իրեք մաս կը բաժնուի աշխարհագրութիւնը. բնական, քաղաքական, և Ուսումնական :




1. Աշխարհագրութիւնը ինչ կը սորվեցընէ :

2. Քանի՞ կը բաժնուի աշխարհագրութիւնը :

# Մ Ա Մ Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ԲՆԱԿԱՆ



### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՎ

1. ԲՆԱԿԱՆ աշխարհագրութիւնը կը սորվէ-  
ցընէ երկրիս վրայի բնական բաժանմունքները,  
երևոյթներն ու անոնց ընդհանուր յատկութիւն-  
ները:

2. Երկիրս կամ հողագունտը իրեք գլխաւոր  
մաս կը բաժնուի. Յամաք, Զուր, և Օդ:

### Ա Յ Ա Մ Ա Ք

3. Բոլոր հողագունտիս մակերևութին իրեք  
մասը Զուր ու մէկ մասը ցամաք երկիր է. ցամաքին



1. Բնական աշխարհագրութիւնը ի՞նչ կը սորվէ-  
ցընէ:

2. Երկիրս բնական քանի՞ կտոր կը բաժնուի:

3. Ցամաք երկրին այլևայլ կտորները որո՞նք են:

այլևայլ կատրնները կ'ըսուին՝ կզգի, թերակզգի,  
լէռ, Դաշտ, և այլն:

ԿՂԶԻ, ԱՐՇԻՊԵՂԱԳՈՍ

1. Կըչի կ'ըսուի որ և իցէ ցամաք երկիր, որուն  
չորս գին ջուրը սրտած ըլլալով ամենեկին ուրիշ  
ցամաքի հետ կազած չէ:

2. Այսպիսի երկիրներու մէջ իրեքը խիստ մեծ  
ըլլանուն համար՝ Յամա+ կ'ըսուին. այս ինքն, Կ.  
Հին յամա+, որ են Ասիա, Աֆրիկէ ու Եւրոպա.  
Բ. Նոր յամա+, որ է Ամերիկա. Գ. Նոր Հողանտա,  
կամ Աւստրալիա: Ասոնցմէ ետքը մեծ կզգիներն  
են՝ Պորնէոյ, Փափուաղիա կամ Նոր Կուլինէա,  
Կրոնկանտիա, Սուամատրա, Մատակապար, Նի-  
Ֆոն, Բուպա, Մեծ Բրիտանիա, և այլն:

3. Երբոր ծովու մը մէջ շատ կզգիներ կան իրա-  
րու մտա, բոլորը մեկէն Արշիպելագոս կ'ըսուին.  
ինչպէս Յունաստանի արշիպելագոսը, Անթիլեան  
արշիպելագոսը, և այլն:

4. Թէ որ արշիպելագոսի մը կզգիները իրարու  
խիստ մօտիկ են, իսո՛մբ իշխե՞ն կ'ըսուին. ինչպէս  
Մալթայի խումբը, Սուամատրայի խումբը:

1. Ի՞նչ է կզգին:

2. Աշխարհիս ամենէն մեծ կզգիները որո՞նք են:

3. Արշիպելագոսը ի՞նչ է:

4. Խումբը ի՞նչ է:

ԹԵՐԵՎԿՂՁԻ, ՊԵՐՆՆՈՑ

1. Թէրա՛նչէ կ'ըսուի ան ցամաք երկիրը, որուն բողորախըը ջուրը պատած ըլլալով, միայն մէկ կողմով ուրիշ ցամաքի հետ կպած է. ինչպէս են Մորա, Խրիմ:

2. Պարա՛նչ կ'ըսուի թերակղզիին ան ցամաք կրտորը, որով երկրին հետ կպած է. ինչպէս Վորն-Թոսի պարանոցը, Օր դափուի պարանոցը, Փանամայի պարանոցը, և այլն:

3. Թերակղզեաց մէջ ամենէն մեծը Ափրիկէն է, որ Սիւէզի պարանոցովը Ասիոյ հետ կպած է:

ԼԵՌ, ՀՐՈՒՆԵՂԻՆ

4. Երկրիս վրայի բնական բարձր կոնոնաձև տեղուանքը Լէ՛ռ կ'ըսուին. աս լեռներն ալ իրարու կպած ըլլան նէ. լեռներու Գօթի:

5. Մեծամեծ գօտիներուն գիբբը ընդհանրապէս հարուէն գէսլ 'ի հիւսիս է. ինչպէս Ամերիկայի մէջ Քորալիւան լեռները, Ասիոյ մէջ Ուրալ ու Հիմալայա լեռները, Եւրոպայի մէջ Ալպեան ու Քէօլէն լեռները:

1. Ի՞նչ է թերակղզին:

2. Ի՞նչ է պարանոցը:

3. Ամենէն մեծ թերակղզին որն է:

4. Լէռը որն է: — Ո՞րն է լեռներու գօտին:

5. Գօտիներուն գիբբը ի՞նչպէս է:

1. Աշխարհիս ինչուան հիմա չափուած լեռներուն ամենէն բարձրները ասոնք են .

Ասիոյ Հիմալայա լեռներուն մէջ Տավալակիրի , որ 8556 մեթր բարձր է .

Հայաստանի մէջ Արարատ կամ Մասիս 5216 մեթր բարձրութիւն ունի .

Ամերիկայի Անական լեռանց մէջ Նէվադոյ տէ Սորաթա 7695 մեթր .

Եւրոպայի Ալպեան լեռանց մէջ Սպիտակ լեռը 4810 մեթր .

Աֆրիկէի մէջ Մուրիա լեռը 5000 մեթր .

Ովկիանիա , Սուամարա կղզիին մէջ , Կունուն Քոսուամպրա լեռը 4570 մեթր :

2. Ան լեռն որ դէսլ 'ի ծովերկնցած է՝ Հրաանդան կամ Գլխի կըսուի . ասանկ է Լափոնիայի ծայրը Հիւսիսային գլուխը , Աֆրիկէի հարաւային ծայրը Բարեյուսոյ գլուխը , և այլն : Պզտիկ գլուխները Սուր կըսուին :

Հ Բ Յ Բ Ո Ւ Ն , Գ Ե Տ Ն Ա Շ Ա Ր Ժ

3. Հրաբխի կըսուին կրակ ցառքեցընող լեռները , որ ընդհանրապէս ծովեզերեայ տեղուանք կըլլան :



1. Աշխարհիս ամենէն բարձր լեռները որոնք են :

2. Հրուանդանը կամ գլուխը ո՞րն է : — Սարը ո՞րն է :

3. Ի՞նչ է հրաբուխը : — Հրաբուխը ո՞ւր տեղուանք կըլլայ :

1. Հրաբուխին պատճառը գեանին տակը եղած հրային նիւթերն են, որ յանկարծակի կը բռնկին ու սաստիկ ուժով հողը պատրասելով գուրս կ'ելեն:

2. Հրաբուխները միշտ չեն բռնկիր, հապաատեն ատեն: Շատ հրաբուխներ ալ կան որ երկայն ատեն վառելով մարեր հատեր են. ինչպէս է նաև Մասիս լեռան մարած հրաբուխը:

3. Ծովային հրաբուխ կ'ըսուի ան հրաբուխն որ ծովուն տակէն կը բռնկի, որով նոր նոր կղզիներ գուրս կ'ելեն. ինչպէս է Սանթուրին կղզին քովի պղտի կղզին, որ 1707ին հրաբուխէն ելեր է:

4. Մարած հրաբուխներէն զատ հիմա աշխարհիս վրայ 300 հրաբուխէն աւելի կայ. կ'երևնայ թէ ասոնք գեանին տակէն իրարու հետ հազորգահցութիւն ունին:

5. Գեանաշարժ կ'ըսուի երկրիս մէկ կտորին գողգողալը:

6. Գեանաշարժը շատ անգամ հրաբուխէն կ'ըլլայ, որ կրակը ուժով գեանէն գուրս ելլելու ատեն գետինը կը թօթօվէ. շատ անգամ ալ գեանին

1. Հրաբուխը ինչէն կ'ըլլայ:

2. Հրաբուխները միշտ կը բռնկին:

3. Ո՞րն է ծովային հրաբուխը:

4. Աշխարհիս վրայ ո՞րչափ հրաբուխ կայ:

5. Ի՞նչ է գեանաշարժը:

6. Գեանաշարժը ինչէն կ'ըլլայ:

տակի կազերէն՝ կ'ըլլայ, որ հողը պատրուակելով  
գուրա ելլելու ատեննին հոնտեղի գեախնը կըշար-  
ժեն: Աս ատեսակ գեանաշարժները շատ եղած են  
նաև Հալէպի, Հայաստանի ու Պարսկաստանի  
կողմերը:

ԴԱՇՏ, ԱՆԱԳԱՏ

1. Դաշտ կ'ըսուին երկրիս շիտակ ու տափարակ  
տեղուանքը:

2. Մեծ ութեան կողմանէ անուանի են Կուխ-  
նէայի դաշտերը, որոնց մէջ ինչուան տասը ոսնա-  
չափէն բարձր խոտ կը բուսնի: Անոնցմէ ալ մեծ  
են Ամերիկայի մէջ Ամազոնեաց գեախն քովի դաշ-  
տերը որ հազար մղոնի չափ տարածութիւն ունին  
ու մէջերնին ամենեկին քար չցանուիր:

3. Ան դաշտերն որ անբեր կամ աւազուա են՝  
Ասորի կ'ըսուին. ասոնց մէջ ամենէն մեծն է  
Սահրա անապատը, որ գրեթէ երկու իրեք ամ-  
սուան ճամբայ միակերպ դաշտ է:



1. Ի՞նչ է դաշտը:

2. Գաշտերուն մէջ ամենէն մեծը ո՞րն է:

3. Անապատը ո՞րն է: — Ամենէն մեծ անապատը  
ո՞րն է:

\* Կազը օդի նման ճարձն է, որ գուրընդի գեա՝ փա-  
ռա-թեմբի ի՛նչ քարտախի, բայց ատանց քիթիսիան բազա-  
րա-թեմն ու ըս-ր ինքառանայ անոր պէս, և ու ըրի պէս  
ինք պտանայ:

1. Մեծամեծ անապատներուն մէջ տեղ տեղ բարեբեր երկիրներ կը գտնուին կողի պէս . ասոնք Ուլտիս կ'ըսուին :

ԱՅՐ

2. Այլ կ'ըսուին երկրիս խորունկը կամ լեւնե-  
րուն տակը եղած մեծամեծ ծակերը :

3. Աշխարհիս ամենէն խորունկ այրն է Անգ-  
ղեայի մէջ Էլսէն այրը , որ 9600 ոտնաչափ խո-  
րութիւն ունի :

4. Ընդարձակութեան կողմանէ անուանի է  
Աւստրիոյ մէջ Թրեատի մօտ Ատէլսպէրկ այրը , որ  
6 մղոնի չափ մեծութիւն ունի :

5. Թուրինի քով Եւոզոս ըսուած լեւան վրայ  
այր մը կայ , որուն մէջէն ամառը տաք ատեն պաղ  
հով մը կը փչէ :

6. Շատ տեղ այրեր կան՝ որոնց վրայէն կրային  
ջուր մը կը վազէ . վազելու ատենը կամոց կամոց  
զտուելով պարզ ջուրը կը վազէ , և մէջի կիրը կը  
բարանայ ու սառի ձևով կը կախուի : Ասանկ այ-

1. Ի՞նչ է ովասիսը :

2. Ի՞նչ է այրը :

3. Ամենէն խորունկ այրը ո՞րն է :

4. Ամենէն մեծ այրը ո՞րն է :

5. Եւոզոս լեւան այրին վրայ ի՞նչ գիտելիք կայ :

6. Քար դարձող ջրերէն ո՞ւր կը գտնուի : — Շան  
այրին վրայ ի՞նչ գիտելիք կայ : — Ֆինկալի  
այրին վրայ ի՞նչ գիտելիք կայ :

բեր շատ տեղ կը գտնուին, մանաւանդ Սկովտիա, Իտալիա, և Յունաստանի Անտիպարոս կղզիին անուանի այրը: Սիկիլիոյ մէջ այր մը կայ որ կ'ըսուի Շան այր. թէ որ հոն շուն կամ ուրիշ մանր կենդանիք մանեւու ըլլան, շուտ մը կը մեռնին. վասն զի գեանէն ածխային կազ ելլալով գեանին երեսը կը մնայ երկուք ու կէս տոնաչափ բարձրութեամբ. որովհետեւ ածխային կազը մահացու կազ է, անոր համար ան փասակար օդին մէջ եզոզ կենդանիները շուտ մը կը մեռնին: Անուանի է նաև Սկովտիոյ մէջ Ֆինկալի այրը որ հովի ատեն խիստ սաստիկ արձագանդ կ'ընէ ու ահաւոր ձայներ կը հանէ:

### Բ. ԶՈՒՐ

1. Զորը վաղուկ ու թափանցիկ մտրմին է, որ սաստիկ տաքութեամբ գոլորշիք կը դառնայ, խակ սաստիկ պաղութեամբ կը սսուի կը պնդանայ\*:
2. Իրեք տեսակ ջուր կայ. հասարակ, հանքային ու Ծովային:

1. Ի՞նչ է ջուրը:
2. Քանի տեսակ ջուր կ'ըլլայ:

\* Ջրին քառասունը ջերմաւոր գործիչով իրնայ լուրիւ. սովորական ջերմաւորը հարիւր սափիման քառասուն է. ձեջի անդիլը ջրին քառասունենէն ընդարձակուելով թե որ 100 սափիման քառիմանայ, ջուրը ե՛ք կ'ենլէ. Ի՞նչ պաշեւել ինչուան 0 իջնայ նե՛ ջուրը ինչ սառի:

Ա. Հ Ա Ս Ա Ր Ա Կ Զ Ո Ւ Ր

1. Հասարակ կամ Անուշ կըսուի ան ջուրն որ ամէն նեխն աղի չէ կամ հանքային համ չունի . ասանկ են ընդհանրապէս Աղբիւրները, Գետերը, Լճերը :

ԳԵՏ, ԶՐՎԵԺ

2. Գէտ կըսուին լեռներու վրայէն վազած ջուրը, որ դարձար իջնալով ինչուան ծով կը թափին :

3. Աշխարհիս ամենէն մեծ գետերը Ամերիկայի ձկն են :

Միսիսիպիին 3560 մղոն երկայնութիւն ունի .

Ամազոնեաց գետը 3080 մղոն .

Օսի գետը 2320 .

Վոլգա գետը 2040 .

Դանուբ գետը 1496 .

Եփրատ գետը 1492 .

Հսկնոս գետը 600 . և այլն :

4. Գետեր կան որ վազելու տաննին գետնին տակը կ'անցնին, և ուրիշ տեղէ մը դուրս կ'ելեն .

1. Հասարակ ջուրը որն է :

2. Ի՞նչ է գետը :

3. Ամենէն մեծ գետերը ո՞ւր են : — Միսիսիպիին որչափ երկայնութիւն ունի, և այլն :

4. Ո՞ր գետերն են որ գետնին տակը կ'երթան : — Պատճառը ի՞նչ է :

ինչպէս Հռենոս գետին մէկ ճիւղը՝ Ղէյսա քաղաքին քովերը, և Ղուարէ գետը: Այսին զի ինչպէս գետնին երեսը անհաւասար է, ասանկ ալ գետնին տակը այրեք՝ ծակեր ու աւազուտ տեղուանք կը գտնուին. երբոր գետի ընթացքը աս աւազուտ տեղուանքը կամ ծակերուն կը հասնի, բնական կերպով գետնին տակը կ'անցնի:

1. Գետեր կան որ ոսկիի հանքին մէջէն անցնելով, իրենց բերած աւազն ալ ոսկիի հետ խառն է. ինչպէս Զայիրէ ու Կամպիա գետերը:

2. Գետեր կան որ բարձր լեռնէն վաղէլու առանին ժայռի մը հանդիպելով՝ վերէն յանկարծ վար կ'իջնան. աս վար ընկած ջուրը Զբէժ կամ Սահահ կ'ըսուի:

3. Աշխարհիս մէջ ամենէն լայնը Նիսիարայի ջրվէժն է Ամերիկայի մէջ, որ սուրբ Ղաւրենատիոս գետին մէկ մեծ ճիւղն է, 1200 ոտնաչափ լայնութիւն ունի ու 160 ոտք բարձրութիւն:

4. Ամենէն բարձր ջրվէժն ալ Կալիֆորնիայի ջրվէժն է Պիրենեան լեռներուն վրայ, որ 1266 ոտնաչափ բարձրութենէ վար կ'իջնայ:

---

1. Ոսկիի աւազ ունեցող գետերը որոնք են:

2. Ի՞նչ է ջրվէժը:

3. Ամենէն լայն ջրվէժը ո՞րն է:

4. Ամենէն բարձր ջրվէժը ո՞րն է:

1. 1,15 կ'ըսուի մեկ տեղ մը ժողոված ջուրը, որուն չորս գին ցամաքով պատած է:

2. Աշխարհիս ամենէն մեծ լիճը Կասպից ծովն է. որուն երկայնութիւնը՝ հիւսիսէն հարաւ 800 մղոնի չափ է, իսկ լայնքը 120 մղոնէն ինչուան 300 մղոնի չափ. խիստ մեծ է նաև Արալ լիճը:

3. Աշխարհիս երեսը ամենէն բարձր գիւրք ունեցող լիճը Հնդկաստանի Մանասարովար լիճն է՝ ծովուն երեսէն 5400 մեթր բարձր:

Բ. Հ Ա Ն Ք Ա Յ Ի Ն Զ Ո Ւ Ր

4. Հանապի ն ջրերը գետնին տակի հանքերուն մէջէն անցնելով, անոնց համը ու գոյնը կ'առնեն. անոր համար ոմանք երկրթի համ՝ ունին, ոմանք պաղէզի, ոմանք ծծումբի կամ ածուխի և ուրիշ հանքերու:

5. Շատ կերպով փորձուած է որ գետնին որչափ խորունկը երթաս՝ տաքութիւնն ալ աւելի է: Աս բանս յայտնի կ'իմացուի նաև Զէրճո-մէրէն, որ գետնէն բխած բնական տաք ջրեր են:



1. Ի՞նչ է լիճը:
2. Ամենէն մեծ լիճը ո՞րն է:
3. Ամենէն բարձր լիճը ո՞րն է:
4. Ի՞նչ է հանքային ջուրը:
5. Ի՞նչ է ջերմուկը:

1. Հանքային տաք ջրերը խիստ շատ տեղ կը գտնուին, մանաւանդ Իսլանտայի մէջ, որոնցմէ մէկը Կէյլէր անունով՝ գեանէն 150 ոտնաչափ բարձրութեամբ վեր կը ջատքէ:

2. Տեսակ մը հանքային ջրեր կան որ թէպէտ տաք չեն, բայց իրենց մէջ դիւրավառ կազ գրտնուելով՝ յանկարծ յանկարծ իրենք իրենցմէ կը բռննկին: Աս ջրերէն շատ կը գտնուի նաև Պաքուին քովերը, ան պատճառաւ ան տեղը կրակասպաշա Պարսիկներու ուխտատեղի է:

### Գ. ԾՈՎԱՆՅԻՆ ԶՈՒՐ

#### ԾՈՎ

3. Ծով կամ Ուլիանոս կ'ըսուի աշխարհիս մեծ մասը պատուղ աղի ջուրը: Սովորաբար Ուլիանոս կ'ըսուին մեծամեծ ցամաքներուն գրսի կողմը եղած բնդարձակ ջրերը, իսկ Ծով կ'ըսուին ներս մտած մեծամեծ կտորները:

4. Ծովուն տակն ալ ցամաք էրկրի պէս լեռներ, ձորեր ու դաշտեր կան:

5. Ծովուն ամենէն խորունկ տեղը չափեր են

---

1. Տաք ջրերը ո՞ւր կը գտնուին:

2. Բռննկող ջրերը ո՞ւր կը գտնուին:

3. Ի՞նչ է ծովը: — Ի՞նչ է ովկիանոսը:

4. Ծովուն տակը ի՞նչպէս է:

5. Ծովուն խորութիւնը որչափ է:

ու ինչուան 1680 գրկաչափ գտեր են՝ առանց յատակին հասնելու: Ասան զի չափելու ծովը խիստ խորունկ ըլլայ նէ, չափելու համար երկնցած չուանը այնչափ կը թեթևնայ՝ որ ծայրը կախուած ծանրոցը վեր կը վերցընէ: քանի որ տակը չէ հասած, և կը կարծուի թէ ծովուն խորութիւնը համեմատ պիտի ըլլայ ամենէն բարձր լեռներու. և թէ որ անոնց չափ ալ ջրայ խորութիւննին, գոնէ քիչ պակաս:

1. Ծովու ջրին աղիութեան պատճառը որոշ չգիտցուիր. ոմանք կ'ըսեն թէ ծովուն տակի աղի հանքերէն է. ոմանք ալ կ'ըսեն թէ Աստուած բոլոր ջրերը աղի ստեղծած է, որ ետքէն արևին տաքութեամբը գոլորչիք գառնալով զաուեր ու անուշ ցեր են:

2. Ծովուն աղիութիւնը ամէն տեղ միակերպ չէ. հասարակաբար է հասարակածին տակը՝ քան թէ բևեռներուն կողմերը:

3. Երբեմն նաւուն անցած ճամբան, կամ թիակներուն ամէն մէկ զարնուածքին՝ մանր մանր ասաղի պէս լոյս կ'երևնայ ջրին մէջ: Աս լուսոյն բուն պատճառը ինչուան հիմա չէ գիտցուած. ըսող կայ թէ ջրին մէջ եղած լուսաւոր որդերէն է. ըսող ալ կայ թէ ծովուն մէջի փառութիւններէն

1. Ծովուն աղիութիւնը ինչէն է:

2. Ծովուն աղիութիւնը ամէն տեղ միակերպ է:

3. Ծովուն լոյսը ինչ է:

է . ոմանք ալ կ'ըսեն թէ փոսփորեան՝ կազերէն է :  
Բայց ասոնցմէ մէկն ալ հաւանական պատճառներ  
չեն :

1 . Երկու արևադարձներուն մէջտեղի ովկիա-  
նոսին ջուրը արևելքէն արևմուտք կը վազէ . բեւեռ-  
ներուն ջրերն ալ դէպ 'ի հասարակած :

2 . Ծովուն բնական ընթացքին պատճառը եր-  
կրիս արևմուտքէն արևելք արագութեամբ պտը-  
տիլն է . որովհետև աս շարժմունքը հասարակա-  
ծին տակը աւելի ուժով է , ջուրն ալ չկրնար նոյն  
արագութեամբ երկրիս հետ պտըտիլ , անոր հա-  
մար աս ընթացքը կ'ունենայ :

3 . Երբեմն ջրի երկու ընթացք դիմացէ դիմաց  
գալով մեծ պտոյտ կ'ընեն . աս պտոյտը կ'ըսուի  
Յոյժն+ :

4 . Իրեք անուանի յորձանք կայ . Մալսթրէմ՝  
Լոֆֆոսէն կղզիներուն քովը , որ ինչուան մեծ  
նաւեր ալ կ'ընկղմէ . Քարիբդիս՝ Սիկիլիայի նե-  
ղուցը . Եւրիպոս՝ Էյրիպոզ կղզիին քովերը :



1 . Ծովուն բնական ընթացքը որն է :

2 . Բնական ընթացքին պատճառը ի՞նչ է :

3 . Ի՞նչ է յորձանքը :

4 . Մեծ յորձանքները որո՞նք են :

• Փոսփոր կ'ըսուին ան խաչեղեն նիւթերը , որ մը ե  
իցե մարմնոյ հետ չէրուելով՝ լուստուոր արբաշնչութիւն  
կ'ընեն առանց փոփոխութեան . աս լոյսը աւելի մութ  
ի՛րեանայ :

ԾՌՑ

1. ԾՌՅ կ'ըսուի ծովուն ան կաորը որ ցամաքին մէջը մտած է. ասոր խիստ մեծերը ծովալ կ'ըսուին. ինչպէս Աբարիայի ծոցը՝ որ Կարֆէ ծով կ'ըսուի, վենեակոյ ծոցը՝ որ Արգիւսի ծով ալ կ'ըսուի:

ՆԵՂՈՒՑ

2. 'Նէշոյ կամ' Կիւճ կամ' Ջրանոյ կ'ըսուին ծովուն ան նեղ տեղուանքը՝ որոնց մէջէն երկու ծով իրարու հետ կը խառնուին:

3. Աշխարհիս ամենէն անուանի նեղուցներն են՝ Սեպտէի կամ Ճիպիլիթէրրայի նեղուցը, Պեհլինկայ նեղուցը, Կոստանդնուպօլսոյ նեղուցը, և Քալէի նեղուցը:

Գ. Օ Դ

4. ՕԴ կամ Մ'ննուշոյ կ'ըսուի երկրիս չորս դին ստատած թոյլ ու թափանցիկ մարմինը, որուն մէջ օդերևոյթներ կ'ըլլան:

- 
1. Ծոցը ինչ է: — Ամենէն մեծ ծոցերը որոնք են:
  2. 'Նեղուցը որն է:
  3. Ամենէն անուանի նեղուցները որոնք են:
  4. Մթնոլորտը ինչ է:

1. Մ[թնոլորտին բարձրութիւնը ընդհանրապէս 78 մղոնի չափ է:

2. Օդին խտութիւնը ամէն տեղ միակերպ չէ: Մէյնը որ մ[թնոլորտին վարերը՝ այս ինքն երկրիս մտա եղած տեղուանքը աւելի թանձր է քան թէ վերերը, վասն զի վրայի օդին ծանրութենէն տակի օդը կը ճնշուի. անոր համար բարձր տեղուանք մարդս դժուարաւ շունչ կ'առնէ: Երկրորդ՝ տեղ տեղ օդը ցրտէն կը խտանայ. տեղ տեղ ալ տաքէն կ'ուռի կ'անդայտանայ. սա է հովերուն դիսաւոր պատճառը:

Օ Դ Ե Ր Ե Ի Ո Յ Թ Վ

3. Օդէրէն յի կամ Մեթէրայ կըսուին օդուն մէջ տեսնուած երևոյթները:


4. Աս երևոյթները չորս տեսակ կ'ըլլան. Օդեղէն, Զքեղէն, Լուսեղէն ու Հրեղէն:

Ա. Օ Դ Ե Ղ Է Ն Մ Ե Տ Է Ո Ր Ա Յ Վ

5. Օդէղէն Քեթէրայ կըսուին օդին այլևայլ շարժմունքերը. ինչպէս Հով, Մրրիկ, Թաթառ, և այլն:

1. Մ[թնոլորտին բարձրութիւնը սրչափ է:
2. Օդին խտութիւնը ամէն տեղ միակերպ է:
3. Օդերևոյթը ինչ է:
4. Քանի տեսակ օդերևոյթ կ'ըլլայ:
5. Օդեղէն մետեօրաները որոնք են:

17130-58  
4928



ՀՈՎ.

1. Օգին տեղէ տեղ փոխուիլը Հոգի կամ Հոգ կը ըսուի, որ երկու կերպով կը ըլլայ. մէյնը տաքութեանէն, որով օդը ուռելով՝ քովի օդերը մէկդի կը հրէ. երկրորդ՝ ցրտութեանէն, որով նոյն օդը կը խտանայ, ու չորս դին եղած օդը դէպ'ի խտացած տեղը կը վազէ:

2. Հովերը ընդհանրապէս կանոնաւոր են, և իրենց փչելու ատեննին յայտնի է. այսինքն առաւօտը արեւելքէն կը փչեն, կէսօրը հարաւէն, իրիկունը արեւմուտքէն, կէսդիշերուն հիւսիսէն: Բայց սա կարգը ամէն տեղ միակերպ չէ՝ երկրիս այլևայլ բարձր ու ցած գիրքերուն համար. հասարակածին տակը ամէն օր սա կարգը կը սահուի. որչափ որ մէկը դէպ'ի բեւեռները մտենայ՝ սա կարգն ալ կը փոխուի:

3. Կողմնացոյցներուն վրայ նշանած երեսուն ու երկու տեսակ հով կայ. ասոնց գլխաւորները ութը հատ են, որ աշխարհիս չորս կողմէն ու անոնց մէջտեղուանքէն կը փչեն:

4. Աշխարհիս չորս կողմերը ասոնք են. Արեւելք, Արեւմուտք, Հիւսիս, հարաւ:

- 
1. Հովը ի՞նչ է: — Հովերուն սպառճաւոր ի՞նչ է:
  2. Ի՞նչ կարգ ունին հովերը:
  3. Քանի՞ տեսակ հով կայ: — Գլխաւոր հովերը քանի՞ են:
  4. Աշխարհիս չորս կողմերը որո՞նք են:

1. Աբու-Էլ-Կ'ըսու-ի արևունն ելած կողմը. Աբու-Տու-ֆ' արևունն մանեղու կողմը. Հի-ս'իս կ'ըսու-ի երկրիս ան կողմը, որ երբոր երեսս արևելքին դին գարձընեմ՝ ձախ ձեռքս ան կողմը կ'իյնայ. ան ատեն աջ ձեռքս ալ դէսլ 'ի Հար- կընայի :

2. Հովին ընթացքը ամէն տեղ ու ամէն ատեն միակերպ չէ. ընդհանրապէս հասարակածին տակը հովերը խիստ սաստիկ կ'ըլլան :

3. Խիստ հանգարտ հովն որ հազիւ թէ կ'իմացուի, մէկ ժամուան մէջ 5400 ոսնաչափ տեղ կըվազէ. միջակ հովը 20,000. սաստիկ հովը 200,000. փոթորիկը 300,000. սաստիկ մրրիկը 480,000 :

4. Երբոր երկու գիէն երկու հակառակ հով գիմացէ գիմաց ելեն ու իրարու սրըլուէլով ամպերը երկնքէն վար իջեցընեն՝ Թ-ս-իս կ'ըսու-ի :

5. Թաթառը երկու տեսակ է. ծովային ու ցամաքային : Ծովային թաթառը ինչուան 80 ոսնաչափ հաստութիւն կ'ունենայ. ասիկայ ծովուն ջուրը տակնուվրայ կ'ընէ ահագին ձայնով, ու քիչ մը ատեն ծովու ջրին հետ կալած անշարժ կենալէն ետքը յանկարծակի կը ջրուի : Իսկ ցամաքայինը երկայն բարակ կ'ըլլայ, ու գեոնի վրայ ասդիս



1. Ո'րն է արևելք. արևմուտք. հիւսիս. հարաւ :
2. Հովին ընթացքը ինչպէս է :
3. Հովը մէկ ժամուան մէջ որչափ տեղ կ'երթայ :
4. Ի՞նչ է թաթառը :
5. Թաթառը քանի՞ տեսակ կ'ըլլայ :

անդին քաղելով զխմացը ելածը կ'աւրէ, կը կտարէ ու կը փլցընէ :

1. Նորանշան անձրև կ'ըսուին երկնքէն [Թափ[ծը-  
փած խիճ, աւաղ, դորտ, ծծումբ, ցորեն, գարի,  
և այլն, որ [Թա[Թառով վեր կ'ելէն ու այլևայլ  
տեղուանը կ'իյնան :

2. Մբեիւ յանկարծական սաստիկ հովէ . ասի-  
կայ այրեցած դօտիին տակը այնչափ ուժով կ'ըլ-  
լայ՝ որ ինչուան ծառերը իրենց արմատէն կը հա-  
նէ ու շէնքերը կը փլցընէ : Յանկարծական մրրը-  
կին սկսածառը՝ կազերուն յանկարծ իրարու հետ  
խառնուիլն է կ'ըսեն :

3. Խորշո՛ կ'ըսուի ան մնասակար հովը, որ  
սազականեալ ընէրու կամ տաք անսազաներու  
վրայէն փչելով, [Թէ մարդկան և [Թէ կենդանեաց  
կը մնասէ :

#### Բ. ԶՐԵՂԻՆ ՄԵՏԻՈՐԱՅԲ

4. Զբեղէն Գեթեթե՛եբբ բողորն ալ կ'ըլլան գեա-  
նէն ելած գողորչիքներէ, ու եօ[ծը տեսակ են .  
Մէգ, Ամդ, Յող, Եզկամ, Անձրև, Չիւն ու  
Կարկուտ :

1. Նորանշան անձրևը ի՞նչ է :

2. Ի՞նչ է մրրիկը : — Պատճառը ի՞նչ է :

3. Խորշակը ի՞նչ է :

4. Զբեղէն մտէորաները որո՞նք են : — Քանի՛  
են :

1. ՄԵՉ

1. Գեանէն ելած ջրային գոլորշիքը երբոր գիշերուան օդին սաղուածէնէն վեր չխարենան ելելու երկրիս երեսը մնան, վերի գոլորշիքներն ալ վար իջնան ինչուան գեալին, Մէ՛՛՛ կամ Մասախոնոն կ'ըսուի:

2. ԱՄՊ

2. Արեուն տաքութենէն վեր ելած ջրին գոլորշիքը օդին մէջ կը ցրուին, որ թափանցիկ են ու աչքի չեն երեւար. երբոր օդին տաքութիւնը սաղսոյլէն կը ցրտի, վեր ելած գոլորշիքն ալ կամայ կամայ վար իջնալով ու իրարու մօտենալով կը թանձրանան, թափանցկութիւննին կը կորսընցընեն ու օդուն մէջ կը շարժին կամ կը կենան, Աճող կ'ըսուին:

3. Աս բանս յայտնի կ'երևնայ անկէց, որ ամառատեն շատ անգամ իրիկունները երկինքը ամպ չեղած ատենը կը տեսնենք որ բոլոր երկինքին երեսը յանկարծակի ամպով լեցուեր է:

4. Ամպերը երկրէս ինչուան 18,000 ոտք բարձր

1. Ի՞նչ է մեզը: — Մէզը ի՞նչպէս կ'ըլլայ:

2. Ամպը ի՞նչ է: — Ինչէ՞ն կ'ըլլայ ամպը:

3. Օդին սաղելէն ամպերուն թանձրանալը ի՞նչպէս կ'իմացուի:

4. Ամպերը երկրէս որչա՞ք բարձր կրնան ելել:

կրնան էլլել. անկէց վեր սաստիկ ցուրտ ըլլալուն՝  
կը ծանրանան ու ալ վեր չեն կրնար էլլել :

3. 80 Վ.

1. Յօշ է գիշեր ատեն դաշտերու վրայ իջած  
անձրևի պէս թացութիւնը :

2. Գիշերուան ցրտութենէն երկրիս վրայի մար-  
մինները կը պաղին . բայց ամէնն ալ հաւասար չեն  
պաղիր , հապա ոմանք շատ՝ ոմանք քիչ , թէ իրենց  
կազմուածքին և թէ իրենց դիրքին համար : Բնու-  
թեամբ շատ պաղող մարմիններուն վրայ շատ գո-  
լորչիք կը նստի . իսկ անոնք որ քիչ կը պաղին կամ  
ամենեկին չեն պաղիր , վրանին ալ քիչ գոլորչիք  
կ'իջնայ կամ ամենեկին չիջնար ու չոր կը մնան :

3. Յօղը աւելի առաւօտուան դէմ կ'ըլլայ՝ քան  
թէ իրիկունը կամ կէս գիշերուն . վասն զի ինչուան  
առաւօտ երկրիս վրայի մարմինները երթալով  
աւելի կը պաղին :

4. Յօղը միայն երկինքը պարզ եղած գիշերները  
կ'ըլլայ , ու ամպոտ եղածին պէս ցօղ չիջնար , վասն  
զի ամպոտ եղած գիշերը շատ աւելի տաք կ'ըլլայ՝  
քան թէ պարզ եղած գիշերը :

---

1. Ի՞նչ է ցօղը :

2. Յօղը ինչէն կ'ըլլայ :

3. Ո՞ր ատեն ցօղ կ'իջնայ :

4. Ըմէն գիշեր ցօղ կ'իջնայ :

4. ԵՂԵՍՄ

1. Եւէ՛սէ գեանի վրայ կ'իջնայ ճերմակ սառի պէս գարնան ու աշնան ատեն: Աօրկայ գիշերուան իջած ցօղն է, որ գարնան սկիզբները ու աշնան վերջերը սաստիկ ցրտութենէն կը սառի:

5. ԱՆՁՐԵՒ

2. Անձրե՛ կըսուի՝ երբոր երկինք ելած գողորջիքները ցրտէն կը միանան ու ծանրանալով կաթիլ կաթիլ վար կը թափթրփին:

3. Աշխարհիս ամէն կողմը միակերպ անձրև չըլլար: Ընդհանրապէս հասարակածին կողմերը աւելի շատ անձրև կուգայ, թէպէտև շատ անգամ ալ չորութիւն կ'ըլլայ. իսկ բևեռներուն մօտ թէպէտ սառչան անձրև կուգայ, բայց քիչ:

4. Անձրևը աւելի լեռներու վրայ կուգայ՝ քան թէ դաշտերու. վասն զի լեռներուն օդը շատ անգամ պաղէն տաք՝ տաքէն ալ պաղ կը փոխուի. աս փոփոխութեան ատենը թէ որ հոն տեղուանքը ամպ գանուի, մէկէն անձրև կ'ըլլայ:

5. Արեւագարձներուն մեջտեղը միշտ կանոնաւոր

1. Եղեամբ ի՞նչ է:

2. Ի՞նչ է անձրևը:

3. Ամէն տեղ միակերպ կուգայ անձրևը:

4. Անձրևը ո՞ւր տեղուանք աւելի կուգայ:

5. Կանոնաւոր անձրևները ո՞ւր կուգան:

անձրևներ կուգան . վասն զի անտեղուանքի հովերն  
ալ կանոնաւոր կերպով կը փչեն ամիսներով :

1 . Կարժիբ անձրևը կամ Յիւնը շատ անգամ Ալ-  
պեան լեռներուն վրայ կուգայ տեղ տեղ ու քիչ  
քիչ . ոմանք կ'ըսեն թէ աս կարմրու թիւնը հոն  
տեղի մանր ճճիներէն ու բոյսերէն է . բայց ստոյ-  
գը չիմացուիր :

6 . ՁԻՆ

2 . Երբոր ջրային գոլորշիքները օդուն մեջ յան-  
կարծակիան սպողութենէ վեցանկիւնի կամ ուրիշ  
բազմանկիւնի ձևով մը կը սառին ու վար կ'իյնան .  
Ձիւն կ'ըսուի :

3 . Հով չեղած ատենը ձեան հատիկներն ալ  
խոշոր կ'ըլլան . վասն զի ձիւնը վար իյնալու ատեն՝  
մեկ գիէն ուրիշ գոլորշիքներ ալ անոր կպչելով՝  
կը սառին ու կը խոշորնան :

7 . ԿԱՐԿՈՒՏ

4 . Կարժիբն է ձիւն կամ ձիւնախառն անձրև .  
որ օդուն մեջ երկու հակառակ ելեքորականու-



- 1 . Կարմիր անձրևը ի՞նչ է :
- 2 . Ձիւնը ի՞նչ է :
- 3 . Ձիւնը ինչո՞ւ երբեմն խոշոր՝ երբեմն մանր կ'ըլ-  
լայ :
- 4 . Կարկուտը ի՞նչ է : — Ի՞նչ մեծութիւն կ'ու-  
նենայ :

Թեամբ՝ մեկդիէն մեկալ զին նետուելով՝ վար իյնալը կ'ուշանայ, պաղէն կը սառի, ու քանի կ'երթայ խոշորնալով՝ ուժով վար կը թափթըփի: Ինչուան մէկ ու կէս լիպրէ ծանրուլթեամբ կարկուտ եկած է:

1. Տեսակ մը կուճառ ու մանր ձիւն կայ որ դաւառահան բառով «չէլի» կ'ըսուի, և սառնկերէն Բիթի. սափկայ ամառ ու ձմեռ կ'ըլլայ. ամառը կարկուտի հետ խառն՝ ձմեռը ձեան հետ. կարկուտի կը նմանի, բայց անոր պէս կարծր ու թափանցիկ չէ: Չխնայուիր թէ սափկայ օդուն մէջ ինչպէս կը ձևանայ:

#### Գ. ԼՈՒՍԵՂԷՆ ՄԵՏԷՈՐԱՅԻ

2. Լուսեղէն Թեթեօրաներն անոնք են՝ որ արեւուն ճառագայթներուն այլևայլ կերպով զարնուածքէն կը ձևանան, ու վեց տեսակ են: Ծիածան, Արշալոյս, Արևանմանութիւն, Բակ, Չողիակոսիլոյս, Արկներկոյթ:



- 1. Սըկիկը կամ թիփին ինչ է:
- 2. Լուսեղէն մետեօրաները որոնք են: — Քանի են:

\* Եւեթարախանութիւնը հասանափ անվաւելի մարմն է որ բուր մնուլըփին ու մէկալ մարմնոց մէջ քարածուած է, ու սուրբար շփուելով զփաւի կ'ըլլայ, ինչպէս թայլալը ու խոյծալը: Ասիկայ երկու գլխաւոր ցափխութիւն ունի. մեյճը ուրիշ մարմնները իրեն իւրաքանչէր, մեյճն ալ իւր լուսն է:

1. ԵՒՆԵՆԱՆ

1. Արևու լուսոյն մէջ Եօթը գոյն ճառագայթներ կան, որ Էռանկիւնի ապակիին մէջէն անցնելու ատեն կ'երևան. այս ինքն կարմիր, նարնջի գոյն, դեղին, կանանչ, բայ կապուտ, մութ կապուտ, մանուշակագոյն: Անձրևի ատեն երբոր արևը քովնտի անձրևին կաթիլներուն վրայ կը զարնէ, աւ Եօթը գոյները զատ զատ կ'երևան երկինքը՝ կամարաձև. աւ է Ծիածան կամ Ծիշանի գօտի ըսուածը: Ասոր ալ նմանը երբեմն քովի ամպերուն վրայ ձևանալով՝ երկու ծիրանի գօտի կ'երևայ:

2. Երբեմն մեծ ծովերու ու դաշտերու վրայ ալ երբոր գոլորշիքը խիստ թանձր է՝ պզտի ծխածան մը կ'երևայ:

2. ԱՐՇԱՆՈՅՍ

3. Առաւօտները քանի որ արևը հորիզոնէն 18° աստիճան ցած է, իր լուսոյն կարմրագոյն շառախոյնները մեր մթնոլորտին վրայ կը զարնեն՝ ինչուան որ արևը հորիզոնէն վեր բարձրանայ. աւ կարմրագոյն լոյսը Աշտուշ կ'ըսուի, որ արևը ելլելէն մէկ ժամէն աւելի առաջ կը սկսի:

1. Ծխածանն ինչէն կ'ըլլայ:

2. Միայն անձրևի ատեն կ'երևայ ծխածանը:

3. Արշաղոյսն ինչ է:

1. Նոյնպէս ալ իրիկունները արեւը մանեւուն պէս բոլոր արևմտեան եղերքը կը կարմրի . աս կարմրութիւնն ալ Վէրջաւոյ կ'ըսուի , որ ամառը ինչուան երկուք ու կէս ժամ կը գիմանայ :

2. Միջնորարը որչափ թանձր ըլլայ , արշալոյսն ու վերջալոյսն ալ այնչափ մեծ ու տարածուած կ'ըլլայ :

### 3. ԱՐԵՎԱՆՄԱՆՈՒԹԻՒՆ

3. Արևմտեան-թիւնն է ան երևոյթը , որ երբեմն արևուն ըյսը իր գիմացի ամպերուն վրայ անանկ կը զարնէ որ ան ամպերուն վրայ ուրիշ արևներ ալ կ'երևան :

### 4. ԲԱԿ

4. Բակ ալ կ'ըսուի ծխածանի պէս գոյնզգոյն կըր շրջանակը , որ ամառ աստն երբեմն արևուն չորս գին կ'երևայ : Վ'ըսեն թէ աս գոյնզգոյն երևնալը օդուն մէջի ձիւներէն է որ արևուն ըյսը վրան զարնելով անանկ կ'երևցընէ :

5. Երբեմն արևուն վրայի բակը երկու հաս կ'ըլլայ վրայէ վրայ համակեղրոն , բայց գրտի կողմը եղածին գոյները այնչափ փայլուն չեն ըլլար :

1. Վերջալոյսն ինչ է :

2. Արշալոյսն երբ աւելի մեծ կ'ըլլայ :

3. Արևանմանութիւնն ինչ է :

4. Արևու բակն ինչ է : — Պատճառն ինչ է :

5. Կրկին բակ կրնայ ըլլալ :

1. Լուսինն ալ երբեմն բակ կ'ունենայ, բայց արևուն բակէն աս տարբերութիւնս ունի որ անոր պէս գունաւոր չերևար, հասլա ճերմակ կ'ըլլայ, մէկ կողմն ալ քիչ մը կարմրագոյն:

5. ԶՈՒՒՍԿՈՍԻ ԼՈՅՍ

2. Զոուսիւնն ալ կ'ըսուի ան տկար լոյսը, որ մարտ ամսոյն սկիզբները արևը մտնելէն ետեւ երկնքին երեսը բուրգի ձևով կ'երևայ. չխնայուիր թէ աս երևոյթը ինչպէս կը ձևանայ. ոմանք կ'ըսեն թէ մեր մթնոլորտին մէջի մանր մարմիններուն ընթացքէն է:

6. ԿՐԿՆԵՐՆԻՈՅԹ

3. Ամառը տաք ատեն դաշտերու մէջ եղած շէնքը կամ ծովուն մէջի նաւը վրայէ վրայ երկու հաս կ'երևայ, մէկը շտակ՝ մէկալը գլխովար, ինչպէս որ ջրի մէջ կ'երևան. աս երևոյթը կ'ըսուի Կրկնէրնայէ:

4. Ասոր պատճառը արևուն ճառագայթներուն դարնուածքէն է, որ թանձր ու տաք օդուն մէջէն անցնելու ատեն՝ շէնքերը երկերկու հաս կ'երևոյրնէ:

1. Լուսինն ալ բակ կ'ունենայ:

2. Զոգիակոսի լոյսն ինչ է:

3. Կրկնեղջերայ ինչ է:

4. Կրկնեղջերայ պատճառն ինչ է:

Դ. ՀՐԵՂԷՆ ՄԵՏԷՈՐԱՅՔ

1. Հրեղէն Թեթեօրայ կ'ըսուին օգուն մէջ երեցած կրակէ երևոյթները , որ վեց տեսակ են . Փայլակ , Կայծակ , Հիւսիսայգ , Շքջմոլիկ հուր , Ասուպ ու Երկնաքար :

1. ՓԱՅԼԱԿ , 2. ԿԱՅՆԱԿ

2. Երբոր ամպերու մէջ լեցուած երկու տեսակ ելեքորահանութիւնը մէկմէկու հաղորդուին , ձայն՝ կրակ ու լոյս կը հանեն . ձայնը կ'ըսուի Որոպոս՝ , լոյսը՝ Փայլա՛կ , կրակը՝ Կայծա՛կ :

3. Երբեմն առանց որոտմունքի , երբեմն ալ ամպ չեղած ատեն երկինքը փայլակ կ'ըլլայ . ասոր պատճառը դեռ չգիտցուիր :

4. Որոտմունքին ձայնը 30 մղոն տեղէն աւելի հեռու չերթար :

3. ՀԻՒՍԻՍԱՅՔ

5. Հիւսիսայգը կամ Հիւսիսային արշալոյսը լուսաւոր ամպի կը նմանի , գոյնը կրակի պէս կարմիր ,

- 
1. Հրեղէն մետէորաները որոնք են :
  2. Փայլակն ինչպէս կ'ըլլայ :
  3. Առանց որոտման փայլակ կրնայ ըլլալ :
  4. Որոտմունքին ձայնը որչափ տեղ կ'երթայ :
  5. Հիւսիսայգն ինչ բան է : — Պատճառն ինչ է :

տեղ տեղ փայլուն գօտիներով. ասիկայ երբեմն  
հիւսիսային կողմը հորիզոնին վրայ կ'երևայ՝ արեւը  
մանեւէն իրեք չորս ժամ ետքը: Ասոր պատճառը  
մագնիսական ելեքարականութիւնն է կ'ըսեն:

#### 4. ՇՐՋՄՈՒԿ ՀՈՒՐ

1. Շրջակայի հողն է բոցի պէս լոյս մը, որ ասեն  
ասեն գիշերները գերեզմաննոցներու մէջ կամ  
թաց տեղուանք կ'երևայ:

2. Ռամիկները շատ աւելորդապաշտական կար-  
ծիքներով աս կրակէն կը վախնան. բայց վախա-  
լու բան չէ. վասն զի ասոր բուն պատճառն է  
փոսփորեան ջրածին կազը, որ օդին հետ հաղոր-  
դուելուն պէս կը բռնկի, և ինչուան որ հասնի՝  
կը վառի:

#### 5. ԱՍՈՒԳ

3. Ասոր կ'ըսուի ան աստղի պէս թռչող լոյսը,  
որ ամառ գիշերները երկինքը կ'երևայ:

4. Հիմաիուան բնաբաններուն կարծիքովը՝ ա-  
սուպները մեր մթնոլորտէն վեր երկրիս վրայ պտը-  
տող մանր մարմիններ են, որ աչքով չեն երևար.  
ասոնք երբոր մեր մթնոլորտին հետ սաստիկ կը  
չփուլին՝ լոյս կը հանեն կ'ըսեն:

1. Ի՞նչ է շրջակայի հողերը:

2. Շրջակայի հողն պատճառն ի՞նչ է:

3. Ասուպը ո՞րն է:

4. Ասուպն ինչէն կ'ըլլայ:

6. ԵՐԿՆԱԳՐ

1. Երբոր ասուպ մը երկրիս ձգողութեամբը  
դեպիս իյնայ ահագին որոտմունքով ու լուսով՝  
Երբոր ասի կամ Շանեասի կըսուի :

2. Վերջի յիսուն տարուանս մէջ վաթսուն հատի  
չափ երկնաքար ընկած է Եւրոպայի ու Ամերիկայի  
մէջ . ասոնց մէջ ամենէն մեծն է Անգղիա ընկածը ,  
որ 80 լիպրէէն աւելի կը կշռէ :

3. Ամէն երկնաքարերուն բաղադրութիւնն ալ  
գրեթէ նոյնպէս է . այս ինքն՝ երկած, գալլախաղ,  
ծծումբ, նիքել, մանկանէղ : Ասոնց գրախ գոյնը  
հանքային ածուխի պէս սև է , բայց մէջը երկածի  
պէս փայլուն :

---

1. Երկնաքարն ինչ է :

2. Երկնաքարին իյնալը շատ կը սրտասոյի :

3. Երկնաքարին բաղադրութիւնն ինչ է :



## ՅԵՒԵՂՈՒԸ

### Օ Գ Ի Գ ՈՒ Շ Ա Կ ՈՒ Թ Ի Ի Ե

#### ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ա. ՓՈՐՁՈՒԱԾ՝ բան է որ Երբոր աշունք անձրևոտ կ'ըլլայ, ձմեռը սովորաբար քիչ անձրև կուգայ, դարունն ալ ցուրտ կ'ըլլայ. ան պատճառաւ բոյսերը ետ կը մնան:

Բ. Թէ որ ամառը շատ անձրևոտ ըլլայ, ձմեռուան ցուրտն ալ սաստիկ կ'ըլլայ:

Գ. Թէ որ կուռնիները աշնան կանուխիկէ դէս ՚ի տաք երկիրները երթան, ըսել է թէ ձմեռուան ցուրտը սաստիկ պիտի ըլլայ. վասն զի իրենց կանուխ դառնալէն կ'իմացուի որ հիւսիսային կողմերը ցուրտը սկսեր է:

Դ. Երբոր ձմեռը անձրևոտ է, ամառը չոր կ'ըլլայ: Աշունն ալ թէ որ չոր ընելու ըլլայ, ձմեռը շատ հով կը փչէ:

### Հ Ո Վ , Փ Ո Թ Ո Ր Ի Կ

Ե . Առաւօտանց արևը ելլելու ատեն թէ որ չափէ դուրս կարմրութիւն մը ունենայ ու արևուն սկաւառակը խոշորիկէ կ'երևայ , նշան է թէ նոյն օրը հով պիտի ելլէ :

Զ . Երբոր արևը բակ կ'ունենայ ու արևանմա նութիւն կ'երևայ , յայտնի նշան է որ հով ու անձրև պիտի ըլլայ :

Է . Երբոր լուսինը խոշոր ու կարմիր է , չորս դին ալ բակ ունի , հով կ'ելլէ . թէ որ բակը երկու հաս է , նշան է թէ փոթորիկ պիտի ելլէ :

Ը . Ո՛ր օրն որ առաւօտանց ծովու թռչունները իրարու քով ջրին երեսը թռչաւելով կը կանչվըտեն , ան օրը հով կ'ելլէ :

### Ա Ն Ձ Ր Ե Ի

Թ . Իրիկունը արևը մանեղէն ետքը հիւսիսային կողմը թանձր լեռան պէս դիզուած ամպեր ըլլան նէ , ան դիշերը անձրև կուգայ :

Ժ . Արևը ելլելու ատեն թէ որ բոլոր երկնքին երեսը բարակ ամպով մը ծածկած է ու հով չկայ , ան օրը քիչ մը անձրև կուգայ :

ԺԱ . Արևը ելլելէն իրեք չորս ժամ առաջ թէ որ անձրև սկսելու ըլլայ , ինչուան կէսօր օդը կը բացուի :

ԺԲ . Թէ որ յանկարծ հարաւային սաստիկ հով ելլէ , ու երկու իրեք ժամ միակերպ անձրևէ , ան անձրևը ինչուան տասնըհինգ ու տասնըվեց ժամ կը քշէ :

ԺԴ. Թէ որ բոլոր ցորեկը անձրևէ, ու իրիկունը արևը մանեւրու ասե՛ն արևմուտքը բաց ըլլայ, կամ արևը կարմիր ամպերուն մէջէ՛ն վար իջնայ, երկրորդ օրը օդը կը բացուի:

ԺԴ. Թէ որ լուսինը բակ ունենայ արևմտեան քամիով, երկրորդ օրը անձրև կուգայ:

ԺԵ. Օգոստոս ամսուն մէջ լուսնի ծննդեան ու լման օրերը գրեթէ միշտ անձրև կուգայ:

ԺԶ. Ամառ գիշերները թէ որ արևելեան հով ըլլայ, և աստղերը սովորականէն աւելի խոշոր ու փայլուն երևան, քանի մը ժամէն ետքը անձրև կուգայ:

### ԿԱՐԿՈՒՏ

ԺԷ. Ամառը կէսօրէն ետքը գեղին ու ձերմակ ամպեր վրայէ վրայ լեռան պէս գիզուին, ու սաստիկ հովէ ծանր ծանր շարժելով հորիզոնէն վեր բարձրանան նէ, կարկուտի նշան է. բայց ձմեռն ու գիշերը խիստ քիչ անգամ կարկուտ կուգայ:

ԺԸ. Թէ որ ամառուան ամպերու նման ամպ ըլլայ ձմեռը, կարկուտի տեղ ձիւն կուգայ:

### Ծ Ա Ն Ր Ա Չ Ա Փ Գ Ո Ր Ծ Ի

Ծանրաչափ ըսուած գործիքը 30 բթաչափ էր. կայնութեամբ ասպակիէ խողովակ մըն է, մէջը 28 բթաչափ սնդիկով լեցուն. որ օդին ամէն տեսակ

փոփոխութիւնները ժամերով առաջ կը ցուցնէ :  
զոր օրինակ

Թէ որ խողովակին մէջի սնդիկը կամաց կամաց վեր բարձրանայ, նշան է թէ օդը սլիախ շակուի .  
Թէ որ ձմեռ ատեն բարձրանայ, ցուրտը կը սաստկանայ :

Թէ որ ծանրաչափին սնդիկը շուտով ցածնայ կամ բարձրանայ, օդն ալ շուտ մը կը փոխուի . Թէ որ խիստ շուտ ցածնալու ըլլայ, փոթորիկի նշան է :

Թէ որ արեւմտեան հողի ատեն ծանրաչափը բարձրանայ, օդը կը բացուի, ու հովը արեւելեան կը դառնայ . Թէ որ հարաւային քամիով ցածնայ, ձմեռ է նէ՛ սառը կը հալի, ամառ է նէ՛ փոթորիկ կ'ելլէ . իսկ Թէ որ արեւմտեան հողի ատեն ցածնայ, անձրև կուգայ :

Ընդհանրապէս ծանրաչափին նշանները գիշերահաւասարներէն 15 օր առաջ՝ 15 օր ալ ետքը ասպահով չեն . վասն զի օդը ան միջոցին շատ փոփոխական է :



Faint, illegible text at the top of the page, possibly a header or introductory paragraph.

Second block of faint, illegible text, appearing as several lines of a letter or document.

Third block of faint, illegible text, continuing the document's content.



Faint, illegible text at the bottom of the page, possibly a signature or footer.

# ՄԵՍՆ ԵՐԿՐՈՐԳ՝

ԸՇԽԵՐՏԵԳՐՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ



1. ՔԱՂԱՔԱԿԱՆ աշխարհագրութիւնը կը ստրվեցնէ երկրիս քաղաքական բաժանմունքը, և վրայի այլևայլ տեղերուն դիրքն ու անունը:

2. Բոլոր երկրիս վրայի տարածութիւնն է 148,522,000 քառակուսի աշխարհագրական մղւղն<sup>°</sup>. այսչափ տարածութեան հինկին մէկը ցամաք է, չորսը ծով:

1. Քաղաքական աշխարհագրութիւնը ո՞րն է:

2. Բոլոր երկրիս մեծութիւնը ո՞րչափ է:

<sup>°</sup> Մէկ աշխարհագրական մղւղն՝ ասիի մէծ մղւղնէն 4իւ մը աւելի մէծ է. այնչափ որ 10 աշխարհագրական մղւղն ասիի մղւղնով 11 մղւղն կ'ընէ: Քառակուսի մղւղն կ'ըստին ան մընոջ, որուն թէ երկայնքն՝ թէ լայնքն՝ մէկ մղւղն է:

1. Երկիրս հինգ մաս կը բաժնուի. Եւրոպա,  
Ասիա, Աֆրիկէ, Ամերիկա, և Ավելիանիա:

2. Բոլոր երկրիս բնակիչներուն հաւանական  
թիւն է 740,000,000:

---

1. Երկիրս քանի՞ մաս կը բաժնուի:

2. Բոլոր երկրիս բնակիչները որչափ են:

## Ե Ի Ր Ո Պ Ս

### ԸՆԳՆԱՆ ՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

#### ՍԱՀՄԱՆ ԵՒ ՄԵԾՈՒԹԻՒՆ

1. ԵՒՐՈՊԱՅԻՆ սահմանը հիւսիսէն՝ Սառուցեալ ովկիանոսն է, արեւելքէն՝ Ուրալ և Կովկաս լեռներն ու Սև ծովը, հարաւէն՝ Միջերկրական ծովը, արեւմուտքէն՝ Ատլանտեան ովկիանոսը ։

2. Եւրոպայի մեծութիւնը 2,793,000 քառակուսի մղոն է ։ Թէպէտ աշխարհիս մեկալ մասերէն պզտիկ է, բայց ամենէն ալ աւելի բազմամարդ է ։

#### ԲԱԺԱՆՈՒՄ

3. Եւրոպային մեջ գլխաւոր տասնըվեց աշխարհք կայ, չորսը հիւսիսային կողմը, եօթը միջտեղուանքը, հինկը հարաւային կողմը ։

1. Եւրոպային սահմանը ո՞րն է ։
2. Ո՞րչափ է Եւրոպային մեծութիւնը ։
3. Եւրոպային մեջը քանի՞ տէրութիւն կայ ։

1. Հիւսիսայիններն են՝ Բրիտանիա, Տանիմարա, Շուեա, և Ռուսաստան :

2. Եւրոպային մէջտեղուանքն ասոնք են . Գաղղիա, Պելճիա, Հոլանտա, Զուիցերի, Աւստրիա, Բրուսիա, և Գերմանական դաշնակցութիւն :

3. Հարաւային կողմիններն ասոնք են . Փորթուգալ, Սպանիա, Իտալիա, Եւրոպայի Տաճկաստան, և Յունաստան :

### ԾՈՎ

4. Եւրոպայի ծովերն ասոնք են .

Սառուցեալ Ովկիանոս, Սպիտակ ծով, Պալթիկ ծով, Հիւսիսային ծով.

Ատլանտան Ովկիանոս, Մանիքա, Խալանտայի ծով. Միջերկրական ծով, Յոնիական ծով, Արշիպէղադոս, Մարմարա, Սև ծով, Ազախու ծով :

### ՆԵՂՈՒՅ

5. Եւրոպայի նեղուցներն ասոնք են .

1. Եւրոպային Հիւսիսային կողմի տէրութիւնները որոնք են :

2. Միջին Եւրոպայի տէրութիւնները որոնք են :

3. Հարաւային կողմի տէրութիւնները որոնք են :

4. Եւրոպային ծովերը որոնք են : — Ո՛ւր է Սառուցեալ ծովը : — Ո՛ւր է Սպիտակ ծովը, ևն :

5. Եւրոպայի նեղուցները որոնք են : — Ո՛ւր է Վայկացի նեղուցը : — Ո՛ւր է Քաթեկաթ :

Վայկայի նեղուցը՝ Ռուսաստանի Հիւսիսային դին-  
Աբախէրրաք, Քաթեկաթ, Սունա, Պէլթ, Պալթիկ  
ծովուն և Հիւսիսային ծովուն մէջտեղը .

Քալէի նեղուցը կամ անցքը՝ Գաղղիոյ ու Անդղիոյ  
մէջտեղը .

Սեպտէի կամ Ճիսլիլթէրրայի նեղուցը՝ Սպանիոյ  
ու Ափրիկէի մէջտեղը .

Մեսինայի նեղուցը՝ Իտալիոյ Հարաւային ծայրը .  
Չանազապէսի նեղուցը՝ Արշիպեղազոսին ու  
Մարմարայի մէջտեղը .

Վոսփորոս կամ Կոստանդնուպօլսոյ նեղուցը՝ Սև  
ծովուն ու Մարմարայի մէջտեղը .

Լնիզապէի նեղուցը՝ Ազոխու ծովուն ու Սև ծովուն  
մէջտեղը :

### ԾՈՅ

1. Եւրոպայի ծովերուն երևելի ծոցերն ասոնք  
են .

Պոթնեան ծոց, Ֆինլանտեան ծոց, Բիկայի ծոց՝  
Պալթիկ ծովուն մէջ .

Զուխտերզէ՝ Հիւսիսային ծովուն մէջ .

Կասթոնեան ծոց՝ Ատլանտեան ովկիանոսին մէջ .

Լիոնի՝ Ճենովայի՝ Վենետիոյ ծոց՝ Միջերկրական  
ծովուն մէջ .

Սեւանիկի ծոց՝ Արշիպեղազոսին մէջ :

---

— Գաղղիան Անդղիայէն բաժնող նեղուցը  
որն է, և այլն :

1. Եւրոպայի ծոցերը որոնք են: — Ո՛ւր է Պոթ-  
նեան ծոցը: — Ո՛ւր է Զուխտերզէ, և այլն :

ԿԴ, ԶԻ

1. Եւրոպային գլխաւոր կղզիներն են .  
Սառուցեալ ծովուն մէջ՝ Սփիցպերկ, Կոր Զեմէա,  
Քալիույել ու Լոֆֆոտէն կղզիները :  
Պալմիկ ծովուն մէջ՝ Ալանա, Տակոյ, Էօզէլ,  
Կոթլանա, Օլանա, Պորն հոլմ, Բուկէն, Փալա-  
թէր, Լալանա, Զէլանա, և Ֆիսնիա :  
Իսլանտայի ծովուն մէջ՝ Մէն, և Էնկլըսի :  
Ատլանտեան օվկիանոսին մէջ՝ Իսլանտա, Իսլան-  
տա, Անգլիա, Ֆերէօր կղզիները, Շէթլընա  
կղզիները, Որկադէան ու Հերրիգէան կղզի-  
ները :  
Միջերկրական ծովուն մէջ՝ Քորսիքա, Սարաենիա,  
Սիկիլիա, Մայորքա, Մինորքա, Իվիցա, Էլւա,  
Մալթա, և Լիպարեան կղզիները :  
Յոնիական ծովուն մէջ՝ Քորֆու, Փաքչա, Սանթա  
Մաւրա, Թէպքի, Զանթա, և Քեֆալոնիա :  
Աս կղզիները ազատ հասարակապետութիւն  
են Անգլիացւոց պաշտպանութեան տակը :  
Արշակազգոսին մէջ՝ Լեմնոս, Էյրիպոլ, Չերիկոյ,  
Կաքչա, Շիրա և ուրիշ մանր կղզիներ :

- 
1. Եւրոպայի կղզիները որոնք են : — Ուր է Սփից-  
պերկ, և այլն . կամ Սառուցեալ ծովուն կղ-  
զիները որոնք են, և այլն :

### ԹԵՐԱԿՂՁԻ

1. Եւրոպային մէջ վեց թերակղզի կայ .  
Շուէտ , Սպանիա , Իտալիա . որ խիստ մեծերն են .  
Եւթլանտ՝ Տանիմարքայի մէջ .  
Մորա՝ Յունաստանի մէջ .  
Խրիմ՝ Ռուսաստանի մէջ :

### ՀՐՈՒԱՆԴԱՆ

2. Եւրոպային հրուանդաններն են .  
Նորա-Ֆին՝ Շուէտի հիւսիսային ծայրը .  
Միդէն՝ Իւլանտայի արեւմտեան կողմը .  
Լէնտսէնտ՝ Բրիտանիոյ արեւմտեան դին .  
Ֆինիսթէրրա՝ Սպանիոյ արեւմտեան դին .  
Սուրբ Վինչէնցիոս՝ Փորթուգալի արեւմտեան  
կողմը .  
Սփարթիվէնթոյ՝ Իտալիոյ հարաւային դին .  
Մաթափան՝ Մորայի հարաւային ծայրը :

### ԼԵՌ

3. Եւրոպան ընդհանրապէս լեռնոտ երկիր է .  
միայն Ռուսաստանն ու Լէհաստանը աւելի դաշտային են :

- 
1. Եւրոպայի թերակղզիները որո՞նք են :
  2. Եւրոպային հրուանդանները որո՞նք են :
  3. Եւրոպան լեռնոտ երկիր է , թէ՛ դաշտային :

1. Եւրոպային մէջ ինը հաստ մեծամեծ լեռներու  
գօտիներ կան .

Քէօլէն՝ Շուեախ ու Նորվեկիոյ մէջտեղը .

Ուրալ՝ Ասիոյ ու Եւրոպայի մէջտեղը .

Կովկաս՝ Կասպից ու Սև ծովուն միջոցը .

Պալքան՝ Եւրոպայի Տաճկաստանին մէջ .

Կարպաթ՝ Մաճառաստանին մէջ .

Ալպեան լեռները՝ որ Իտալիան Գաղղիայէն ու

Ջուրիցերիէն կը բաժնեն .

Ապենինեան լեռները՝ Իտալիոյ մէջ .

Պիրենեան լեռները՝ Գաղղիոյ ու Սպանիոյ մէջ  
տեղը .

Իբերեան լեռները՝ Սպանիոյ մէջ :

### Հ Ր Ա Բ Ո Ւ Խ

2. Եւրոպային մէջ իրեք մեծ հրաբուխ կայ .

Հէքլա՝ Իսլանտայի մէջ .

Վէսուվ՝ Նափոլի քաղքին քովը .

Ետնա՝ Սիկիլիոյ մէջ :

### Լ Ի Ծ

3. Եւրոպայի գլխաւոր լճերը ասոնք են .

1. Եւրոպային մէջ քանի՞ գօտի կայ լեռներու : —

Ո՞ւր է Քէօլէն : — Ո՞ւր է Կովկաս, և այլն :

2. Եւրոպայի մէջ քանի՞ հրաբուխ կայ : — Ո՞ւր է

Հէքլա, և այլն :

3. Եւրոպայի լճերը որո՞նք են : — Ո՞ւր է Վէնէր, ևն :

Վէնէր, Վէթէր, Մէլար՝ Շուեափն մէջ .  
Սայմա, Լատոկա, Օնեկա, Իլմնն, Պեւոյ, Փէյ-  
փուս՝ Ռուսաստանի մէջ .  
Նէօշաթէլի՝ Ճինեւրայի՝ Լուչերնայի՝ Յուրիքի  
լճերը՝ Չուիցերիին մէջ .  
Մաճորէ լիճը, և Քոմոյի՝ Կարտայի՝ Փերուճիայի՝  
Պոլսենայի լճերը՝ Իտալիոյ մէջ .  
Նայզիսէլ, Պալաթոն՝ Աւստրիոյ տերութեան մէջ :

### ԳԵՏ

1. Եւրոպային խիստ մեծ գետերը ասոնք են .  
Տվինա, որ կը թափի Սպիտակ ծովը .  
Թորնէա, Նեւա, Տունա, Նեմեր, Վիսթուլա,  
Օտեր՝ Պալթիկ ծովը .  
Իլլա, Վէզեր, Հոնոս, Թամիզ, Սենա, Լուառ,  
Շէնըն, Սիվըրն, Կարոն, Մինհոյ, Տուրոյ,  
Թակոյ, Կուաափանա, Կուաապլիվեր՝ Ատլան-  
տեան ովկիանոսը .  
Փոյ, Ափիճէ՝ Ազրիական ծոցը .  
Էպրոյ, Հոսդանոս, Արնոյ, Տիբերիս՝ Միջերկրա-  
կան ծովը .  
Դանուբ, Տնեբեր, Տնեսթեր՝ Սև ծովը .  
Տոն՝ Ազախու ծովը .  
Վոլկա, Ուրալ՝ Կասպից ծովը :

1. Եւրոպայի գլխաւոր գետերը որոնք են : —  
Տվինա որ ծովը կը թափի, և այլն :

ՕԳ, ՀՈՂ, ԲԵՐՔ

1. Եւրոպային օդը բարեխառն է. միայն հիւսիսային կողմերը սաստիկ ցուրտ :

2. Հողը ընդհանրապէս խիստ բարեբեր է, վասն զի մշակութիւնն ալ շատ ծաղկած է :

3. Գլխաւոր բերքն է՝ երկաթ, կապար, սղինձ, անագ, հանքային ամուխ, աղ, սնդիկ : Բոյսերուն մէջ՝ ցորեն, բրինձ, կգիտացորեն, գեանի խնձոր, կանեփ, ձէթ, լեմոն, և ամէն տեսակ պտուղներ : Կենդանիներէն՝ օգտակարներուն ամէն տեսակը շատցած են Եւրոպա, ու մշատակարները ստակած :

ԲՆԱԿԻՉ, ԼԵՋՈՒ, ԿՐՕՆՔ,

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

4. Եւրոպայի բնակիչներուն թիւն է գրեթէ 230,000,000 այլևայլ ազգէ :

5. Եւրոպայի մէջ 53 լեզու կը համբեն. բայց մայր լեզուները ութէն աւելի չեն :



1. Եւրոպային օդը ի՞նչպէս է :

2. Եւրոպայի հողը բարեբեր է :

3. Եւրոպայի բերքը ի՞նչ է : — Բոյսերէն ի՞նչ բերք ունի : — Ի՞նչ տեսակ կենդանիներ կան Եւրոպա :

4. Եւրոպայի մէջ որչափ բնակիչ կայ :

5. Եւրոպայի մէջ քանի՞ լեզու կայ :

1. Եւրոպայի մէջ հիմա գործածական լեզուներն ասոնք են . գաղղիարէն , խալէրէն , գերմաներէն , անգղիարէն , ռուսերէն , սաւճկերէն , հոմերէն , լատիներէն :

2. Իրեք գլխաւոր կրօնք կայ Եւրոպային մէջ . քրիստոնէութիւն , մահմետականութիւն , հրէութիւն : Վրիստոնէութիւնն ալ իրեք երեւելի ճիւղ կը բաժնուի . ուղղափառ , յունադաւան , և նորաղանդ :

3. Քաղաքականութեան ու արհեստի կողմանէ Եւրոպան այնչափ ծաղկած է որ հարկաւորէն զատ՝ զարդի ու զեղխութեան բաներուն ալ չափը չկայ : Վաճառականութիւնը բոլոր աշխարհք տարածուած է . իսկ գիտութիւնները այնչափ սոսիալացած են որ աշխարհիս մէջ ատեն մը կամ տեղ մը ասոր նմանը չէ եղած :

### ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

4. Եւրոպայի մէջ ընդհանրապէս իրեք տեսակ կառավարութիւն կայ . ազատ միապետութիւն ,

1. Եւրոպայի մէջ գործածական լեզուները որոնք են :

2. Եւրոպայի մէջ քանի՞ տեսակ կրօնք կայ : — Վրիստոնէութիւնը քանի՞ ճիւղ կը բաժնուի :

3. Քաղաքականութեան ու արհեստի կողմանէ Եւրոպային վիճակն ինչպէս է : — Վաճառականութիւնն ինչպէս է : — Գիտութիւններն ինչ վիճակի մէջ են :

4. Եւրոպայի մէջ քանի՞ տեսակ կառավարութիւն կայ :

չափաւորած միասկետութիւն ու հասարակասկետութիւն :

1. Ազատ միասկետութիւն կ'ըսուի ան կառավարութիւնը, որուն թագաւորը ինչ օրէնք ուզէ՝ կը դնէ :

2. Չափաւորած միասկետութիւն կ'ըսուի՝ երբոր թագաւորը առանց իշխաններուն խորհրդին չկրնար օրէնք մը դնել, կամ սպասերազմ բանալ :

3. Հասարակասկետութիւն կ'ըսուի՝ երբոր կառավարութիւնը կամ ազգին գլխաւորներուն կամ բոլոր ազգին ձեռքն է :



1. Ազատ միասկետութիւնը ո՞րն է :

2. Չափաւորած միասկետութիւնը ո՞րն է :

3. Հասարակասկետութիւնը ինչ տեսակ կառավարութիւն է :



## Ա. ԲՐԻՏԱՆԵՒԱ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

1. ԲՐԻՏԱՆԵՒԱ կամ ընդհանուր անուամբ Անգլիայի և Վուլֆուրթիան ըստուած երկրին տիրեցին Հռովմայեցիք Քրիստոսի 78 թուականին . բայց 448ին թողուցին : Բրիտանացիք Սկոտիացուոց ձեռքէն նեղութիւն քաշելով . Անկլո-սաքսոն ըստուած ազգէն օգնութիւն ուղեցին . անոնք ալ եկան բոլոր երկրին տիրեցին , ու անունը իրենց գլխաւորին անունովը Անգլի-գրին : Ետքէն 1066ին Նորմանտիոյ Գուլիէլմոս գութալ տիրեց Բրիտանիոյ , և հոն Նորմանտիայէն բնակիչներ խաւրեց . անկէց ետքը Անգլիան քանի գնաց մեծցաւ , Սկոտիան՝ Իռլանտան և ուրիշ շատ կղզիներ ալ իր հետը միացրնելով՝ ըսուեցաւ Միացեալ Թագաւորութիւն Տեժին Բրիտանիոյ :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

2. Բրիտանիան Եւրոպայի արեւմտեան կողմը կիլիսայ , և չորս գին սլատած է Ատլանտեան ովկիանոսը :

1. Բրիտանիոյ վրայ ինչ սլատմական գիտելիք կայ :
2. Բրիտանիոյ սահմանը որն է :

1. Բրիտանիան չորս գլխաւոր մաս կը բաժնուի. Անգլիա, Սկոտլանդ, Իռլանդ, և ասոնց քովի Մանր Իլլէնէրը :

2. Տարածութիւնն է 90,950 մղոն քառակուսի :

3. Երկիրը ընդհանրապէս լեռնոտ է, մանաւանդ Սկոտլանիան :

4. Գլխաւոր գետերն են՝ Թէմզ կամ Թամիզ, Սիվերն, Շէնըն, Ուզ ու Թրենթ :

5. Շատ տեսակ հանք ունի. գլխաւորներն են՝ երկաթ, կապար, անագ, սղինձ ու հանքային ածուխ : Կենդանիներուն մէջ անուանի է ձին՝ ոչ խարներուն բուրդն ալ խիստ աղնիւ :

6. Օգը ցուրտ ու թաց ըլլալուն համար՝ երկիրը խաղող չհասցըներ :

7. Բնակիչն է 24,000,000. ասոնց լեզուն է անգլիարէն, որ հին Կելտաց լեզուէն առաջ եկած է :

8. Արհեստներն ու վաճառականութիւնը խիստ ծաղկած են. ձեռագործները վերջի կատարելութեան հասած. շէնքն սղուոր, սարակզները գեղեցիկ, ուսումնական տեղուանքը խիստ անուանի, և բոլոր աշխարհիս քաղաքականութեանը առաջին

---

1. Բրիտանիան քանի՞ մաս կը բաժնուի :

2. Բրիտանիոյ մեծութիւնը որչափ է :

3. Բրիտանիոյ երկիրն ի՞նչպէս է :

4. Գլխաւոր գետերը որո՞նք են :

5. Բերքն ի՞նչ է : — Ի՞նչ հանք ունի :

6. Օգն ի՞նչպէս է :

7. Բնակիչը որչափ է : — Լեզունին որն է :

8. Բրիտանիոյ քաղաքականութիւնն ի՞նչպէս է :

կեզրուններէն մէկն է : Իրեք հազար նաւ ունի որ աշխարհիս ամէն ծովերը կը ստորաին , և անոր համար ամէն տէրութեանց հետ առուտուր ունին :

1. Կրօնքը՝ Անգղիոյ ու Սկոտլանդի մէջ նորազանդ է , իսկ Իսլանտային մէջ ուղղափառ :

2. Տէրութեան կառավարութիւնն է չափաւորած միապետութիւն :

3. Զօրքն է 100,000 :

4. Նաւատորմիցը 606 կտոր նաւ , մեծ ու սզտիկ :

## ԳԼԽԱԽՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

### 1. ԱՆԳՂԻԱ

5. ԼՈՒՏՐԱ կամ ԼՈՒՏՈՆ (1,900,000 բնակիչ ունի .) տէրութեան մայրաքաղաքը , Եւրոպային մէջ ամենէն բազմամարդ , և բոլոր աշխարհիս մէջ ամենէն վաճառաշահ քաղաքն է , թամիզ գետին վրայ իր նաւահանգստին մէջ միշտ հազար նաւէն աւելի կը գանուի : Մէջի գլխաւոր շէնքերն են՝ Սուրբ Պօղոս , որ բոլոր աշխարհիս վրայ նորազանգներուն ամենէն մեծ եկեղեցին է : Ահաթմինսթրի եկեղեցւոյն մէջ թագաւորներու և մեծ մարդկանց գե-

1. Կրօնքն ինչ է :

2. Տէրութիւնը ինչ կառավարութիւն ունի :

3. Զօրքը որչափ է :

4. Քանի նաւ ունի :

5. Բրիտանիոյ մայրաքաղաքը որն է : — Լոնտոն ինչպէս քաղաք է :

ընդմաններ կան. թագաւորական պալատը, կա-  
թուրջները, գետափուռները, և մանաւանդ Թամիզ  
գետին տակի մեծագործ ճամբան՝ որ 1300 ոտք  
երկայնութիւն, 200 ոտք լայնութիւն ունի: — Աս  
քաղաքի մէջ ծնան՝ Պաքոն, Միլտոն, Փոփ. Կեւտոնն  
ալ Վէսթմինսթրի եկեղեցին թաղուած է:

1. ՄԵՆՉԸՍԹԵՐ (238,000) վաճառականութիւ-  
նը խիստ ծաղկած, բանդակեղէն ու մետաքսեղէն  
գործուածքներն անուանի:

2. ՊԵՐՄԻՆԿԵՄ (147,000) երկրթեղէնի կողմանէ  
բոլոր աշխարհի առաջին գործարանն է. ուստի  
վաճառականութիւնն ալ խիստ մեծ:

3. ԼԻՎԲՈՒԼ (185,000) Լոնտոնայէն ետև աշ-  
խարհի երկրորդ վաճառաշահ քաղաքն է. 30 նա-  
ւարան ունի ուր կը շինուին նաւեր ու շոգենաւեր:

4. ՊԻՆՍԹԸԼ (104,000)	} ասոնք խիստ բանուկ նաւահանգիստներ են:
ՓԼԻՄԸԹ (78,000)	
ՓՈՐԹՍՄԸԹ (51,000)	
ՏՈՒՎԸ (9000)	

5. ԼԻՏՍ (123,000) շատ գործարաններ ունի,  
մանաւանդ բրդէ գործուածքներու:

6. ԵՍԻՔՍՍԻ (54,000) ասոր քովն է Բրիտանիոյ  
ամենէն մեծ ամխահանքը:

1. Մէնչըսթըր Խնչպէս քաղաք է:

2. Ո՛ւր է Պըրմինկէմ:

3. Ո՛ւր է Լիվրփուլ:

4. Ո՛ւր է Պրիսթըլ: — Փլիմթ: — Տուվը:

5. Լիստ քաղաքին վրայ Խնչ գիտնալիք կայ:

6. Նիւքասլ քաղաքը Խնչ երեւի բան ունի:

1. ՊԼԹ (51,000) անուանի է հանքային ջրերուն համար :

2. ՄԻՐԹԲ-ԹԻՏՈՒԻԼ (22,000) մեծ երկաթա-հանք ունի :

3. ԿՐԻՆԻՉ (20,000) աստեղաբաշխութեան երևելի գիտարան ունի :

4. ՕՐՍՖԸՐՏ (20,000) և ասոնց համալսարաններ - ԲԵՄԳՐԻՃ (21,000) } ըր խիստ անուանի են :

5. ՍԹՐԵՖԸՐՏ, հոս ծնաւ Շէքսպիր անուանի բանաստեղծը :

6. Մէկալ երևելի քաղաքներն ասոնք են . Էլիֆէքս, Շէֆֆիլտ, Պրէաֆրրա, Պոլթըն, Նոթիչ, Ռոչտալ, Կլլոսթըր, Ֆէլթըթ, Նըթինկէմ, Ուինսդըր, Վոլբուրսթըր, Լէնքսթըր :

## 2. Ս Կ Ո Վ Տ Ի Ա

7. ԷՏԻՄԳՈՒՐԿ (140,000) անուանի համալսարան ու խիստ բանուկ նաւահանգիստ ունի :

1. Պաթ Բինչ կողմանէ անուանի է :

2. Միրթը-Թիտուիլ Բինչ բան ունի երևելի :

3. Կրինիչ քաղաքն Բինչ կողմանէ անուանի է :

4. Օքսֆրրա ու ՎէմպրիՃ քաղաքներուն վրայ Բինչ գիտելիք կայ :

5. Սթրէֆրրա Բինչ բանի համար անուանի է :

6. Ուրիչ երևելի քաղաքները որոնք են :

7. Սկոլտոնց գլխաւոր քաղաքը որն է : — Ուր է Էտիմպուրի :

1. ԿԼԵՍՅԱՑ (202,000) համալսարանն անուանի է. վաճառականութիւնն ալ խիստ բանուկ, բըր-գէղէն գործուածքի ու շոգեշարժ մեքենաներու կողմանէ երևելի :

2. ՏԸՆՏԻ (45,000) վաճառականութեանն ու կտակեղէն գործուածքին համար անուանի :

### 3. ԻՌԼԱՆՏԱ

3. ՏԸՊԼԻՆ (226,000) Լոնտրայէն ետքը տէրութեան առաջին մեծ քաղաքն է, ու խիստ հին :

ՔՈՐՔ (100,000) վաճառաշահ քաղաք է, նաւահանգիստը շատ գեղեցիկ :

ԼԻՄԵՐԻՔ (67,000)

ՊԷԼՖԵՍԹ (53,000)

ՈՒՈԹԸՐՅԸՐՏ (29,000)

} ասոնք՝ բանուկ նաւահանգիստներ են :

### 4. ՄԱՆԲԿՂԶԻՆԵՐ

4. Ատլանտեան ովկիանոսին մէջ՝ Շէթլընա, և Որկադեան ու Հերրիդեան կղզիները :

1. Կլէսկոյ սօր է : — Ի՞նչ կայ վրան գիտնալիք :

2. Ո՞ւր է Տընտի :

3. Ինչանոսայի գլխաւոր քաղաքը ո՞րն է : — Ո՞ւր է Քորք, և այլն :

4. Բրիտանիոյ մանր կղզիները որո՞նք են : — Անգլիացիք Ատլանտեան ովկիանոսին մէջ ի՞նչ կղզիներ ունին, և այլն :

Իռլանտայի ծովուն մէջ՝ Մէն և Էնկլաի :  
Միջերկրական ծովուն մէջ՝ Մալթա :  
Յոնիական ծովուն մէջ՝ Քորֆու, Փաքչա,  
Սանթա Մաւրա, Թէպի, Քէֆալոնիա, Չանթա :  
Արշիպելագոսին մէջ՝ Չէրիկոյ :

### ԵՒՐՈՊԱՅԻՆ ԴՈՒՐՄ

#### ԱՆԳՂԻԱՅԻՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ

1. Ասիոյ մէջ՝ Հնդկաստանի մէկ մեծ կտորը,  
Սէլլան կղզին, Մալաքքա, և Սինկափուր կղզիները :  
Աֆրիկէի մէջ՝ Կամպիային մէկ մասը, Բարե-  
յուսոյ գլուխը, Սուրբ Հեղինէ, Վերափոխման  
կղզիները, և ուրիշ շատ մանր կղզիներ :

Ամերիկայի մէջ՝ Կրոնշլանտիային հիւսիսային  
կողմը, Նոր Բրիտանիա, Եուքաթանի մէկ կտորը,  
Կույանայի մէկ կտորը, Սուրբ Լաւրենտիոսի ծոցին  
մէջ եղած կղզիները, Պերմուտեան կղզիները, Եա-  
մայիքա կղզին, փոքր Անթիլեան կղզիներուն մեծ  
մասը :

Ովկիանիայի մէջ՝ Նոր Հոլանտա, և Վան Տեմէն :

Անգղիացոց ձեռքն է նաև Ճիպիլթերրա քա-  
ղաքը՝ Սալանիոյ արևմտեան ծայրը :

---

1. Անգղիացոց Եւրոպայէն դուրս ունեցած եր-  
կիրները որոնք են : — Ասիոյ մէջ ինչ երկիր  
ունին Անգղիացիք, և այլն :

## Բ՝ ՏԸՆԻՄԱՐՔԸ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

**ՏԱՆԻՄԱՐՔԱՆ** հին առէն Կիւմրացւոց հայրենիքն էր, որ Քրիստոսէ 100 տարի առաջ բոլոր Եւրոպան կոխեցին ու աւրըշտեցին, անոր համար Կիւմրեան Քերտոնիսոն ալ կ'ըսուէր: Տանխմարքացիք կամ Դանիք 1017ին Անդղիոց վրայ վազեցին ու 25 տարի հոն տիրեցին: Հիմա Տանխմարքան ինքնագլուխ միապետութիւն է:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՎ

Տանխմարքայի սահմանը՝ հիւսիսէն Քաթեկատի ծոցն է, արևելքէն՝ Պալթիկ ծովը, հարաւէն՝ Գերմանական դաշնակցութիւնը, արևմուտքէն՝ Հիւսիսային ծովը:

Հինգ գլխաւոր մաս կը բաժնուի. Բաւն Տանիմարքա կամ Աշխիդեղագոս Դանեւոյ, Եոսելանոս, Շլէսլիի Գոսոսիտնը, և Հոլլանդի ու Լատինոսոսի Գոսոսիտննը: Իսլանոս կղզին ալ աս տէրութեան ձեռքն է:

Տարածութիւնն է 16,500 միլոն քառակուսի:

Երկիրը դաշտային ու անրեր է, մանաւանդ հիւսիսային կողմերը:

Գլխաւոր գետերն են՝ Էլսպա, Էյտեր, Թրաւէ, Կուտէն:

Օդը ցուրտ, խոնաւ ու փոփոխական է:

Իսլանտայի մէջ շատ հրաբուխներ ու հանքային տաք ջրեր կան . օդը շատ ցուրտ է :

Բերքերուն մէջ անուանի է սիսկա ձուկը , որ մարտ ամսուն մէջ խիստ շատ կ'ելլէ . հոչակաւոր է նաև ձին , և մանաւանդ ծովային թռչուններուն փետուրները՝ որ թէ Տանիմարքայի և թէ Իսլանտայի մեծ վաճառքներէն մէկն է :

Բնակիչը 2,000,000 . լեզունին գերմաներէնին մէկ տեսակն է :

Կրօնքն է ընդհանրապէս նորադանդ :

Տէրութեան կառավարութիւնը՝ ազատ միաստեփան :

Զօրքը 30,800 :

Նաւատորմիցը 25 կտոր նաւ :

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՔՌՓԷՆԶԵԿ կամ ՔԵՕՊԷՆԶԵՎՆ (125,000) Զէլանտ ու Ամսկէր կղզիներուն մէջ մայրաքաղաքն է , որ փառաւոր նաւահանգիստ ունի Սունտ նեղուցին վրայ . վաճառականութիւնը խիստ բանուկ է . արհեստի , ճարտարութեան ու գիտութեանց կողմանէ Եւրոպայի երևելի քաղաքներէն մէկն է :

ԱԼԹՈՆԵ (30,000) Էլզլա գետին բերանը աղուոր նաւահանգիստ ունի : Բովիէնհակէն ետքը աս է ծաղկած քաղաքը :

ՀԷԼՍԻՆԿՈՐ (7700) Սունտին նեղ տեղը ամուր ու վաճառաշահ քաղաք :

Իսկ Աալպորկ , Ֆլէնսպորկ , Քիլ , Շլէսլիկ , Բէնտսպուրկ՝ Եութլանտ թերակղզիին վրայ նաւահանգիստներ են :

Կ Ղ, Զ, ԻՆ Ե Բ Ը,

Պալթիկ ծովուն մէջ՝ Զէլանա, Ֆիէն կամ Ֆիոնիա, Լալանա, Ֆալսթէր, Պարնհոլմ:

Ատլանտեան ովկիանոսին մէջ՝ Իալանտա ու Ֆէրէօր կղզիները:

ԵՒՐՈՊԱՅԷՆ ԴՈՒՐՍ

ՏԱՆԻՄԱՐՔԱՅԻ ԵՐԿԻՐՆԵՐԸ,

Ատիայի մէջ՝ Հնդկաստանի մէկ կողքը, որուն գլխաւոր տեղն է Թրանքէպար:

Ափրիկէի մէջ՝ Կուինէային Քրիստիանապոլի քաղաքը:

Ամերիկայի մէջ՝ Սուրբ Թովմաս, Սուրբ Յովհաննէս, և Սուրբ Խաչ կղզիները:



Գ. ՇՈՒՆՏ, ԵՒ ՆՈՐՎԵԿԻԱ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՇՈՒՆՏԻ երկրին հին ասե՛նը Ֆինք կամ Ֆինլանտայլք տիրէր էին, ետքը Գոթացիք առին. խի՛նորվեկիան ասե՛նով Տանխմարքայի կողմն էր. 1814ին Շուեափ տէրութեանը հեա միացաւ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻԲ

Շուեափն սահմանը հիւսիսէն Սառուցեալ ծովն է . արևելքէն Ռուսաստանը . հարաւէն Պալմիրիկ ծովը . արևմուտքէն Ատլանտեան օվկիանոսը :

Շուեափ տէրութիւնը իրէք գլխաւոր մաս կը բաժնուի . Թագաւորութիւն Շաւքայ, Թագաւորութիւն Նորվեիի, և Կաշիները :

Տարածութիւնն է 220,000 մղոն քառակուսի :

Երկիրը դաշտային է . շատ լճեր ունի . բնակիչը քիչ : Նորվեկիան լեռնոտ ու քարոտ է :

Գլխաւոր դետերն են՝ Թորնէա, Լուլէա, Ումէա, Փիթէա, Կլոմմէն, Թանա :

Հողը բարեբեր չէ, բայց երկրթի, սղնձի, արծրթի հանք ունի . փայտը խիստ շատ է . կենդանիներէն ալ անուանի է հիւսիսային եղնիկը, և ուրիշ բրդոտ վայրի կենդանիներ :

Բնակիչն է գրեթէ 4,000,000 . լեզուներն գերմաներէնին մէկ տեսակն է :

Կրօնքը նորադանդ :

Կառավարութիւնը չափաւորած միապետութիւն :

Զօրքը 45,000 :

Նաւաստորմիկը 240 կաոր նաւ :

## ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

### 1. ՇՈՒԵՏ

ՍԹՈՒՌԱՄ կամ ՍԹՈՒՔԶՈՒՄ (84,000) Մէլաւն  
ԸՃին մէջ քանի մը մանր ու խոշոր կղզիներու ու  
երկու թերակղզիի վրայ գեղեցիկ կերպով շինած՝  
տէրութեան մայրաքաղաքն է . աղէկ ձեռագործ-  
ներ և ուսումնական տեղեր ու բանուկ վաճառա-  
կանութիւն ունի :

ԿՈԹԵՆՊՈՒՐԿ կամ ԿՈԹԵՊՈՐԿ (20,000) Քա-  
թեկաթին վրայ բանուկ նաւահանգիստ ունի .  
արհեստի ու վաճառականութեան կողմանէ Սթո-  
քոլմէն ետքը երևելի քաղաքը աս է :

ՔԱՐԼՍՔՐՈՆՆ (13,000) տէրութեան բանուկ  
նաւահանգիստներէն մէկն է :

ՈՒՓՍԵԼՆ (4800) ասոր համալսարանը խիստ  
անուանի է . Լիննէոս բնախօսը հոս վարպետ եղած  
է . աս քաղքիս քովը մեծ ու անուանի երկաթա-  
հանք կայ :

### 2. ՆՈՐՎԵԿԻԱ

ՔՐԻՍՏԻԱՆԻԱ (23,000) մեծ վաճառականու-  
թիւն ունի տախտրկի ու երկրթի :

ՊԵՐԿԵՆ (20,000) վաճառաչահ քաղաք է :

ՐՈՒՐԱՆՆ . պղնձի հանք ունի . ցուրտը խիստ  
սաստիկ է :

ՎԵՐՏՀՈՒՍ . Եւրոպային ամենէն հիւսիսային  
ամուր քաղաքն է :

3. ԿՂ, 2, ԻՆ ԵՐԸ,

Պալմթիկ ծովուն մէջ՝ Կոթլանա, Օլանա ու Լոֆի-  
Ֆոակէն կղզիները . ասոնց քովերն է Մալսթրեմ  
ըսուած սոսկալի յորձանքը, որ շատ անգամ նաւեր  
կ'ընկղմէ :

Շուեաղ Եւրոպայէն գուրս ունի միայն Սուրբ  
Բարթուղիմէոս կղզին, որ փոքր Անթիլեան կղզի-  
ներուն մէկն է :



Դ. ՌՈՒՍՍԻԱ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍՍԻԱ թագաւորութիւնը սկսած է 900ին  
առեւնները . բայց մէջերնին քաղաքականութիւն  
ծաղկեցընողն եղաւ մեծն Պետրոս 1700ին սկիզբ-  
ները, որ տերութիւնն ալ ընդարձակեց : Ետքը  
Լէհաստանի մէկ կտորը և ուրիշ երկիրներ ալ առ-  
նելով՝ աս տերութիւնը շատ մեծցաւ : Հին առեւն  
Ռուսաստանի ընտանիքներն էին Սկիւթացիք, Սլա-  
ւեանք, Սարմատացիք ու Փինլանտացիք : Հիւսի-  
սային կողմերը կը գտնուին Լափոն ու Սամոյեա  
ըսուած կարճահասակ աղջերը, հարաւային կող-  
մերն ալ շատ ժողովուրդներ՝ գրեթէ ամէն աղջէ :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻԲ

Ռուսաստանին սահմանը հիւսիսէն Սառու-  
յեալ ծովն է . արեւելքէն՝ Ասիայի Ռուսաստանը .  
հարաւէն Սև ծովն ու Աւարիան . արեւմուտքէն  
Բրուսիան , Պալմթիկ ծովը ու Շուեար :

Հինգ գլխաւոր մաս կը բաժնուի աշխարհագրո-  
րէն . Հիւսիսային Ռուսաստան , Միջին Ռուսաս-  
տան , հարաւային Ռուսաստան , Լեհաստան , և  
Կղզիները . իսկ ըստ քաղաքական կառավարու-  
թեան 51 նահանգներ կը բաժնուի բոլոր կայ-  
սերութիւնը , նաև քանի մը առանձին նահանգներ  
ու գաւառներ :

Տարածութիւնն է 1,536,000 մղոն քառակուսի :

Երկիրն ընդհանրապէս դաշտային է . միայն եր-  
կու լեռներու գօտի ունի . մէկն Ուրալ , մէկալը  
Կովկաս :

Հիւսիսային կողմերուն հողն անբեր ու քիչ  
մշակած է . իսկ միջին ու հարաւային կողմերը խիստ  
ստղարբեր :

Գլխաւոր գետերն ասոնք են .

Տվինա՝ որ Սպիտակ ծովը կը թափի .

Նեւա ու Նեմէն՝ Պալմթիկ ծովը .

Դանուբ , Տներեր , Տնեսթեր , Տոն , Կուպան՝ Սև  
ծովը .

Վոլկա , Ուրալ , Քուամա , Թերէք՝ Կասպից ծովը :

Գլխաւոր բերքն է՝ երկաթ , սղինձ , ոսկի , ամի-  
անգ , որ Ուրալ լեռներէն ու Սիպերիայէն կ'ելլեն :  
Շատ անասաներ ունի . ցորենը առատ ու ազնիւ  
է . մորթը , կաշին և մուշտակները խիստ ընտիր :

Կենդանիներուն մէջ նշանաւոր է ճերմակ արջը , որ հիւսիսային ծովեզերքը կը գանուի :

Բնակիչն է 56,500,000 . ասոնց լեզուն ռուսերէն է , որ Սլաւեան լեզուին մէկ ճիւղն է :

Կրօնքը յունադաւան :

Տէրութեան կառավարութիւնն է ազատ միապետական :

Զօրքը 720,000 :

Նաւատորմիցը 260 կտոր նաւ :

## ԳՂԵՆՆԻՍԻՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

### 1. Հ Ի Ի Ս Ի Ս Ա Յ Ի Ն Ռ Ո Ւ Ս Ա Ս Տ Ա Ն

Փետրոպոլիս (476,000) մեծն Պետրոս շինեց աս մայրաքաղաքը Նեւա գետին բերանը , ուր որ իրեն սղինձէ ձիւսոր արձանն ալ կայ՝ կրանիթ քարէ ժայռի մը վրայ անկած : Եւրոպայի մայրաքաղաքներուն մէջ ամենէն աւելի ասոր տեսքը փառաւոր է՝ փողոցներուն լայնութեանը և շահութեանը , հրապարակներուն ընդարձակութեանը , գեղեցիկ կրանիթէ գետափանցը , և սալափաներուն ու հասարակաց և մասնաւորաց շէնքերուն ազուտութեանը պատճառաւ : Ուսումնական և արուեստական յառաջագիտութեան կողմանէ ալ՝ բոլոր աշխարհիս առաջին կարգի քաղաքներէն մէկն է : Լազարեան սարսնները հոս հայոց համար գեղեցիկ եկեղեցի մը շինած են . ատենով ալ մեր լեզուովը շատ մը դրքեր տպուած են աս քաղաքիս մէջ :

ԲԻԿԵ (71,000) Փէթրպոլիէն ետքը առաջին վաճառաշրջ և խիստ ամուր քաղաքն է :

ՔՐՈՆՇԹԱՏ (53,200) Կեւա գետին բերանը՝ Ռուսաց ծովային զօրքին գլխաւոր նաւահանգիստն է. նաւարանը աշխարհիս խիստ ազուր նաւարան ներէն մէկն է :

ԿՈՎՎՈՐՈՏ (15,000) Իլմեն լճին վրայ՝ ասե՛նով շատ ծաղկած քաղաք էր, հիմա այնչափ չէ : Ռուրիք հոս սկսաւ Ռուսաց թագաւորութիւնը 862ին :

ԱՐՔԱՆԿԷԼ (10,500) մոր՛՛ի ու մուշտակի մեծ վաճառականութիւն ունի. նաւարանը անուանի ու նաւահանգիստը խիստ բանուկ :

## 2. Մ Ի Զ Ի Ն Ռ Ո Ւ Ս Ա Ս Տ Ա Ն

ՄՈՍԿՈՒՆ կամ ՄՈՍԿՈՎ (350,000) հին ասե՛ն Ռուսաց աթոռանիստ քաղաքն էր, հիմայ ալ երկրորդ մայրաքաղաքն է, և իրենց թագաւորները հոս թագ կը գնեն. 1812ին գրեթէ բոլորովին այրեցաւ, բայց ետքէն ալ վառաւոր շինեցին : Շէնքերուն մէջ երևելի է Քրեմլին՝ թագաւորական սլաւար, և մայր եկեղեցին : Համալսարանն ու ընդհանրապէս գրականութիւնը և արուեստները շատ ծաղկած են աս քաղաքիս մէջ : Անուանի է Ղազարեան իշխաններուն հոս հիմնած Հայկազեան վարժարանը :

ԽՍՁԱՆ (45,000) Վոլկային մօտ՝ թաթարներուն մայրաքաղաքն էր. ունի համալսարան, և աստեղաբաշխութեան գիտարան. արուեստներն ու վաճառականութիւնը շատ բանուկ են, և Սիպերիոյ բերքերուն գլխաւոր վաճառանոցն է : 1842ին գրեթէ կէսը այրեցաւ :

ՕՐԷՆՊՈՒՐԿ (12,000) Պուխարացոց Եւրոպացոց հետ ըրած վաճառականութեանը գլխաւոր տեղն է :

### 3. ՀԱՐԱՒԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՔԻԷՎ (45,000) Մուգուլայէն առաջ Ռուսաց մայրաքաղաքն էր. հիմայ ալ անուանի է նոր համալսարանը, մայր եկեղեցին, և ամուր բերդը:

ԱՅՏԷՐՈՅՆ (46,000) Վոլկա գետին բերանը կողմի մը վրայ շինած՝ հին Թաթարներուն մէկ ցեղին մայրաքաղաքն էր. հիմայ ալ բնակիչներուն շատը հայ են, Կասպից ծովուն վրայ ամենէն բանուկ նաւահանգիստն է, ու բոլոր տէրութեան գլխաւոր վաճառաւաճ քաղաքներէն մէկն է. մորթի վաճառքը անուանի է:

ՕՏԵՍՍ (60,000) Սև ծովուն եզերքը, բոլոր Ռուսաստանի խիստ գեղեցիկ ու ծաղկած քաղաքներէն մէկն է. և Թէպէտ նոր շինուած է, բայց ազատ նաւահանգիստ ունենալովը խիստ շուտ առաջ գնաց վաճառականութեամբ և հարստութեամբ. անուանի է Ռիշըլէօ Լիկեոնը՝ որ համալսարանի աստիճան ունի:

ԹԱՅՂԱՆ կամ ԹԱԿԱՆՐՈՔ (12,600) Ազախու ծովուն վրայ ամուր ու բանուկ նաւահանգիստ է. հոս մեծաւ Ռուսաց կայսրը Աղէքսանդր Ա 1825ին:

ՍԵՒՍՔՈՒ կամ ԱԳԵՍՈՒ (20,000) Սև ծովուն վրայ շատ գեղեցիկ նաւահանգիստ է, ամուր բերդերով սրտած, նաւարանը խիստ բանուկ, և հոս կը կենայ Ռուսաց Սև ծովուն վրայի նաւատորմիցը:

ԱԳՄԷՋԻՏ կամ ՍԻՄՖԷՐՈՓՈՒ (22,000) Խրիմի գլխաւոր քաղաքն է:

ՊԱՂՁԷՍԵՐԱՅ (12,700), Խրիմի Թաթար խաներուն մայրաքաղաքն էր:

Քէֆէ կամ Թէոօոսիւ (8000), Սև ծովուն վրայ նաւահանգիստ է, ատենով անուանի՝ բայց հիմա ընկած :

ԿԵՐԶ (10,000) Ենիգալէի նեղուցին բերանը ազատ ու բանուկ նաւահանգիստ է :

ԿԷՕԶԼԷՎԷ . Խրիմի գլխաւոր նաւահանգիստ ներէն մէկն է :

ԽՅԲԲՍՈՒ . Խրիմի ծաղկած քաղաքներէն մէկն է . բնակիչներուն մեծ մասը Թաթար ու Հայ են :

ՆՈՐ ՆԵՒՒԶԵՒՅՆ (11,000) և ԳՐԻՒՈՐՈՒՊՕԼԻՍ, Հայոց քաղաքներ են, որ շատ ազատութիւններ աւունին :

ՓՈԼԹԵՒՅ (15,000) մեծն Պետրոս հոս անուանի յազմութիւն ըրնու Շուեաի Կարողոս ԺԲ Թագաւորին գէմ :

#### 4. ԼԵՀԱՍՏԱՆ

ՎԵՐՍԵՒԻՅ կամ ՎԵՐՇԵՒ (140,000) վխթուլա գետին քովը՝ ատենով 1 և հաստանի մայրաքաղաքն էր, հարուստ ու փառաւոր . 1830ին եղած սաւերազմին ատենը շատ աւրուեցաւ, բայց հիմայ ալ բոլոր սերութեան քաղաքներուն մէջ երրորդն է, ամուր, գեղեցիկ ու ամէն կողմանէ ծաղկած :

#### 5. ԿՂԶԻՆԵՐԸ

Սառուցեալ ծովուն մէջ՝ Սփիցակերկ, Նոր Զեմլեա, Վայկայ, Քալկուլով :

Պալթիկ ծովուն մէջ՝ Ալանա, Տակոյ, Իօզէլ :

ԵՒՐՈՊԱՅԷՆ ԴՈՒՐՍ

ՌՈՒՍԱՅ ԵՐԿՒՐՆ ԵՐԸ

Ասիոյ մէջ՝ Վրաստան, Շիրուան, Իմերէթ,  
Ապազա, Հայաստանին մէկ մասը, և Սիպերիա:

Ամերիկայի մէջ՝ Ռուսի Ամերիկան՝ որ հիւսի-  
սային ծայրն է:

Ե. ԳԵՂՂՈՒԸ

ՊԵՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԳԵՂՂՈՒԸՆ ատենով Հռովմայեցոց տակն  
էր. 400ին ատենները Գերմանիայէն Փռանք Ը-  
սուած աղքն եկաւ օիրեց հոն, ու իրենց անուանովը  
երկրին անունն ըսուեցաւ Փրանս կամ Փրանսա:  
Մէջերնէն առաջին թագաւորը եղաւ Փարամոնա,  
աերու թիւնը ծաղկեցընողն եղաւ մեծն Կարոլոս.  
1792ին մեծ խռովութիւն մը հանելով թագաւո-  
րութիւննին մոխեցին՝ հասարակապետութիւն  
ըրին. 1804ին Պոնափաութէ՛ն Կախուէնը կայսր  
եղաւ. բայց 1815ին երբոր ինքը քշուեցաւ, Գալ-  
ղիացիք առջինին պէս նորէն թագաւորութիւն  
ունեցան: Իսկ 1830ին նոր խռովութենէ մը ետքը՝  
հիմակուան սահմանադրական թագաւորութիւնը  
հաստատեցին:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Գաղղիոյ սահմանն է Հիւսիսէն՝ Պելձիա, հոլան-  
տա ու Բրուսիա, արևելքէն՝ Գերմանական դաշ-  
նակցութիւնը, Զուիցերի ու Սարոնիա. հարաւէն՝  
Միջերկրական ծովն ու Սարանիա, արևմուտքէն՝  
Ատլանտեան ովկիանոսը և Մանչ կամ Մանիքա :

Տարածութիւնն է 150,000 քառակուսի մղոն :

Երկրին արևելեան ու հարաւային կողմերը լեռ-  
նոտ են, իսկ հիւսիսային ու արևմտեան կողմերը  
դաշտային :

Գլխաւոր գետերն ասոնք են,

հստգանոս կամ Ռոն՝ որ Միջերկրական ծովը կը  
թափի .

Լուառ, Կարոն, Շարանթ՝ Ատլանտեան ովկիա-  
նոսը .

Սէն կամ Սէնա, Օան, Վիբ, Սոմ՝ որ Մանիքայի  
ծոցը կը վազեն :

Օգը բարեխառն ու անողջ է . բայց հիւսիսային  
կողմը ցուրտ :

Բերքն է երկաթ, սղինձ ու հանքային ածուխ .  
հողը խիստ աղէկ բանեցուցած է . ձէթը ազնիւ,  
գինին խիստ անուանի, մանաւանդ Պուրկոյն, Շամ  
փանեա ու Պորտոյ գաւառներուն գինիները .  
կենդանիներն ալ ընտիր են, մանաւանդ եզներն  
ու ոչխարները :

Բնակիչն է 34,200,000 . լեզուներն գաղղիարէն,  
որ Եւրոպայի ամէն լեզուներէն աւելի տարա-  
ծուած է :

Մշակութիւնը, արհեստներն ու ձեռագործները մեծ կատարելութեան մէջ են, [թէպէտև Անգղիոյ չեն հասած . ուսմունքն ու գիտութիւնն ալ շատ ծաղկած են :

Գաղղիան ատենով 33 նահանգ կամ գաւառ կը բաժնուէր . հիմա 86 Բաժին կը համրուի . ան բաժիններն ալ 366 գաւառ , և այլն :

Վրոնքն է ուղղափառութիւն :

Տէրութեան կառավարութիւնը՝ սահմանադրական միապետութիւն :

Զօրքը 300,000 :

Նաւատորմը 320 կտոր նաւ :

### ԳՂԵՆԻՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՓԱՐԻԶ (950,000) մայրաքաղաքը՝ Սէն գետին վրայ . աշխարհիս մէջ առաջին ծաղկած քաղաքն է՝ [թէ քաղաքականութեան , [թէ արհեստից և [թէ գիտութեանց կողմանէ՝ Ղոնարային շատ բանի մէջ հաւասար , շատ բանի մէջ ալ անկէ վեր : Հասարակաց շէնքերը, ձեմելիքները, պարտէզները, ուսումնական [թանգարանները, ամէնն ալ շատ փառաւոր ու անուանի են : Համալսարանը աշխարհիս մէջ մէկ հատիկ , [Թագաւորական գրատունն ալ ամենէն հարուստն է : Շատ երևելի շէնք է նաև մեծ պարիսպը որ նոր շինուեցաւ՝ 16 բերդով : Աս քաղաքը մեռաւ Ռուբինեանց վերջի [Թագաւորը Ղևոն Զ 1391ին . և հոս հաստատուեցաւ մեր ազգային Մուրատեան վարժարանը 1845ին :

ԼԻՈՆ (155,000) Փարիզէն ետքը ամենէն ծաղկած քաղաքը աս է ամէն կողմանէ , շատ հին տնօր

ու գեղեցիկ, գիպակէ գործուածքներուն համար  
էզական :

ՄԵՐՍԻԼԵ (154,000) Միջերկրական ծովուն  
վրայ մեծ ու գեղեցիկ քաղաք, վաճառականու-  
թեան գործունէութիւնը զարմանալի, և նաւա-  
հանգիստը խիստ բանուկ. աս քաղաքը Վրխատոսէ  
600 տարի առաջ շինուած է :

ՊՈՐՏՈՅ (104,000) բանուկ նաւահանգիստ ու-  
նի, և գինիի ու քացախի մեծ վաճառականութիւն :

ՌՈՒՅՆ (96,000) տէրութեան առաջին անուա-  
նի քաղաքն է՝ բամբակեղէն գործուածքներու կող-  
մանէ :

ՍԵՆՔ (87,000) աղուոր նաւահանգիստ ունի Լը-  
ւառ գետին վրայ. թագաւորական նաւերը հոս կը  
շինուին. վաճառականութիւնն ալ շատ բանուկ է :

ԹՈՒԼՈՒՋ (90,000) Եւրոպայի խիստ վաճա-  
ռաչահ քաղաքներէն մէկն է՝ ամուր և արուեստ-  
ները ծաղկած :

ՍԲՐԵՍՊՊՈՒՐԿ (70,000) հոս գտաւ տպագրու-  
թեան արհեստը Յովհաննէս Վութթէնպէրի  
1436ին. խիստ ամուր ու ծաղկած քաղաք, և մայր  
էկեղեցին շատ հոյակապ ու անուանի :

ՕՌԼԷՅՆ (42,000) հոս երկու անգամ անուանի  
յաղթութիւն ըրած են Վաղղիայիք, մէյմը Ատախ-  
ղասայ՝ մէյմըն ալ Անգղիացւոց գէմ. վաճառաչահ  
ու ճարտարարուեստ քաղաք :

ՍԻՆԻՈՆ (33,000) քիչ մը ասեն հոս նստան  
հոռվմայ Պասպէրը :

ՊԵՋԵՆՍՈՆ (30,700) ասոր քովերը անուանի է  
Օսէլ այրը, որ խիստ մեծ է, ու շատ քարացած  
նիւթեր կան մէջը :

ՔԵԼԷ (12,500) Գաղղիայէն Անգղիա անցնելու սովորական ու կարճ ճամբան աս ըլլալով՝ նաև հանգիստը խիստ բանուկ է :

ԹՈՒՆ (45,400) Գաղղիացւոց պատերազմական նաւերը հոս կը կենան նաւարանն ու նաև հանգիստը բոլոր Միջերկրականին վրայ եղական են մեծութեան կողմանէ :

ԿԲԸՆՈՊԼ (30,000) ասոր ձեռագործներն ու ամբուլթիւնը անուանի են :

ՄՈՆՓԷԼԷ (40,000) Եւրոպայի մէջ շատ անուանի է ասոր բժշկական պարտէզը :

ՏԻՃՈՆ (28,000) գինիի ու քացախի վաճառք ունի, հոս ծնած է մեծն Պոսիւէ :

ՈՒԷՆՍ (35,000) Գաղղիոց թագաւորները ասոր եկեղեցւոյն մէջ կ'օծուին :

ՆԱՆՍԻ (40,000) գեղեցիկ ու վաճառաշահ քաղաք է :

ՄԻՆԷՆՉԵՆ (24,000) ասոր ամէն տեսակ գործարանները շատ անուանի են :

ԼԷՄԷՆ (47,000) հին ու ամուր քաղաք է, մայր եկեղեցին շատ փառաւոր :

ՊՈՒԼՆԵՐ (20,000) բանուկ նաւահանգիստ ունի :

ԼԻԼ (72,000) Եւրոպային ամուր ու վաճառաշահ քաղաքներէն մէկն է, անուանի է փողերանոցը :

ՎԵԼՆՍ (14,000) հոս մեռաւ Պիոս 2 սրբազան պատր :

ՍԷՆ-ՏԸՆԻ (9600) Գաղղիացւոց թագաւորները ասոր եկեղեցւոյն մէջ կը թաղուին :

Անուանի են նաև աս քաղաքներս. Նիմ (44,000),

Թրուա, Քամարէ, Քան, Վէրսայլ, Փուաթիէ,  
Անկուլէմ, Քորմար, Մէս, Սէն Քանթէն, Տոն-  
բէբբ, Տուէ, Վալանսիէն, Լը Հաւր, Ռէն, Պրէսթ,  
Լիմոժ, Մոնթոպան, Քլէրմոն :

Քորսիքա կղզին ալ Գաղղիացւոց ձեռքն է, և  
ասոր մէջ անուանի է Այաչչիօ քաղաքը, ուր ծնաւ  
Նափոլէոն Պոնափառթէ. բնակիչն է 11,000 :

## ԵՒՐՈՊԱՅԷՆ ԴՈՒՐՍ

### ԳԱՂՂԻԱՅԻՈՅ ԵՐԿԻՐՆ ԵՐԸ

Ասիային մէջ՝ Հնդկաստանի մէկ կտորը, որուն  
գլխաւոր քաղաքն է Փոնթիշերի :

Ափրիկէի մէջ՝ Ճէզայիր կամ ԱլՃէրի, Սէնե-  
կալին մէկ կտորը, Կորէա և Պուրպոն կղզիները :

Ամերիկայի մէջ՝ Սուրբ Պետրոս, և Միքէլոն  
կղզիները՝ Սուրբ Լաւրենսիոսի ծոցին մէջ. Կուա-  
տալուփիա և Կույանա գաղղիական :



## Չ. ՊԵՆՃՏԵ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԵՆՃՏԵՆ երկար ատեն Գերմանիոյ կայսերաց ձեռքն էր, ետքը Գաղղիացիք առին. 1815ին նոր Թագաւորութիւն եղաւ, որ Հոլանտային հետ մէկտեղ Սփրիւն նահանգաց փէրձիւնն կըսուէր: Բայց 1830ին ՊեՆՃՏԵՆ Հոլանտայէն բաժնուցաւ, ու զամ Թագաւորութիւն եղաւ:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՒՐ

ՊեՆՃՏԵՆ սահմանը հիւսիսէն Հոլանտան է, արեւելքէն Գերմանիան. հարաւէն Գաղղիան, և արեւմուտքէն Հիւսիսային ծովը:

Տարածութիւնն է 8200 մղոն քառակուսի:

Բերքն է երկաթ, հանքային ածուխ, փայտ, արմախք ու աղէկ ձեռագործներ:

Բնակիչն է 3,800,000. լեզունին գաղղիարէն և գերմաներէնին մէկ տեսակն է:

Կրօնքը ուղղափառութիւն:

Տէրութեան կառավարութիւնը սահմանադրական միապետութիւն:

Զօրքը 45,000:

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՊՐՈՒՍԵԼ (107,000) մայրաքաղաքն է, ձեռագործը և վաճառականութիւնը խիստ ծաղկած : Ասոր մօտ է վաթէրլոյ գեղը, ուր յաղթուեցաւ Նափոլէոն 1815ին :

ԱՆՎԵՐՍԵ կամ ԱՆՏՈՒԵՐՊԻԱ (79,000) ամուր ու վաճառաշահ քաղաք է . անուանի է մայր եկեղեցին :

ԿԵՆՏ կամ ԿԵՆԹ (97,000) հոս ծնաւկարոյս է Գերմանիայի կայսրը . անուանի էն կտաւի ու բամբակի գործարանները և ուսումնական տեղուանքը :

ՊՐՈՒԺ (43,000) վաճառաշահ քաղաք է . շատ գեղեցիկ ջրանցքներ ունի :

ԼԻԷԺ կամ ԼԻԹԹԹԻԲ (66,500) մեծ վաճառականութիւն ունի հանքային ածուխի՝ որ քովէն կ'ելէ :

ԼՈՒՎԷՆ կամ ԼՈՎԱՆԻՈՆ (26,000) հին ու անուանի համալսարան ունի :

ՆԵՄՈՒՐ կամ ՆԵՄԷՆ (21,000) հոս 1815ին մեծ յաղթութիւն ըրաւ Նափոլէոն Պրուշներուն դէմ :

Երևելի էն աս քաղաքներս ալ . Օսթէնտա, Մոնս կամ Պէրկէն, Մալին, Թուրնէ, Վէրվիէ . Քուրթրէ :



## Է. ՀՈՒՆՆԵՍԸ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀՈՒՆՆԵՍԸՅՈՒՔ ատենով Սպանիացւոց ատեն էին . 1579ին անոնցմէ գլուխ քաշելով, զսոս հասարակապետութիւն եղան ճարտար ու հարուստ : Ետքը 1815ին Հոլանտան ու Պելճիան մեկտեղ զսոս թագաւորութիւն մը ձեացաւ՝ Սպորթն նահանգաց քէրտնթիւն ըսուած , բայց 1830ին իրարմէ ալ զատուեցան :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Հոլանտային սահմանը հիւսիսէն ու արևմուտքէն Հիւսիսային ծովն է . հարաւէն Պելճիան . արևելքէն Գերմանիան :

Տարածութիւնն է 9800 մղոն քառակուսի :

Երկիրը ծովուն ջրէն ընդհանրապէս ցած ըլլալուն համար մեծամեծ թումբեր շիներ են ծովուն ջուրը բանելու :

Օդը խոնաւ , փոփոխական և անառողջ է :

Հողը ցած ու ջրոտ ըլլալուն՝ խիստ սպաղաբեր չէ : Բերքն է հանրային անուխ , կտաւ , կաշի , կարմիր ներկ ու վարպետ ձեռագործներ : Խիստ ազնիւ են կովերն ու ոչխարները , և անոնց պանիրը :

Բնակիչը 2,500,000 . լեզուներն հին գերմաներէնին մէկ տեսակն է :

Հատ ջրանցքների ունենալուն համար վաճառա-  
կանութիւնը շատ ծաղկած է :

Կրօնքը նորադանդ :

Տէրութեան կառավարութիւնը՝ սահմանադրա-  
կան միապետութիւն :

Զօրքը 30,000 :

Նաւատորմիցը 100 կտոր նաւ :

### ԳԼԽԱԻՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԱՄՄԴԵՐՏԵՄ (210,000) Հողանտայի հին մայ-  
րաքաղաքը, Եւրոպայի ծաղկած ու հարուստ քա-  
ղաքներէն մէկն է, և մեծ ու բանուկ նաւահան-  
գիստ ունի : Ատենով ասոր մէջի հայու տպարանը  
անուանի էր :

ՀԱՅԻՆ կամ ՀԱՆԿ (59,000) հիմակուան մայ-  
րաքաղաքն է :

ՈՒՌԵՐՏԵՄ (80,000) Ամսդերտամէն ետքը վա-  
ճառաշահ քաղաքն է :

ՈՒՌԵՔԻՔԻ (43,000) մետաքսեղէնի գործարան-  
ներ ունի :

ԼԵՅՏԱ (36,000) մեծ համալսարան ունի, ուր  
Պոէրհաւ անուանի բժիշկը գասատու էր :

ՄԱՍՔՐԻՔԻ (22,000) բոլոր Եւրոպայի խիստ  
ամուր քաղաքներէն մէկն է :

Անուանի են նաև Հարլէմ, Կրոնինկէն, Նիմէկ,  
Սարտամ, Լուքսենպուրկ :

ԵՒՐՈՊԱՅԻՆ ԴՈՒՐՍ

ՀՈՒԱՆՏԱՑՒՈՑ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Ափրիկէի մէջ, Սուրբ Գէորգ՝ Կուինէային մէջ :  
Ամերիկայի մէջ, Կույանային մէկ կտորը, Սուրբ  
Եւտայքէոս, և Քուրասայ կղզիները, որ փոքր  
Անթիլեան կղզիներուն քովերն են :

Ովկիանիայի մէջ, Սուամարա կղզիին մէկ կտորը .  
Պանքա ու Պիլիթոն կղզիները՝ Սուամարային քովը .  
Ճաւա կղզիին մէկ կտորը . փոքր Մոլուքեան կղզի-  
ները, և Ամայնա կղզին :

Ր. ՕՆՒՅԵՐԻ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

**ՕՆՒՅԵՐԻՆ** ստեղծված էր Կրտսեր,  
ու Հռովմայեացոց ձեռքն էր. ետքը Գաղղիացոց  
անցաւ, անկէջ ետքն ալ Գերմանիոյ հետ միացաւ .  
1308ին Գերմանացոցմէ գլուխ քաշեցին Չուիցե-  
րացիք ու զատ հասարակապետութիւն եղան : Աս  
հասարակապետութեան վրայ Նափոլէոնն ալ մէկ  
քանի նահանգներ աւելցուց . հիմա 1815էն ՚ի վեր  
բոլորը 22 նահանգ է՝ իրարու զաշնակից, բայց  
առանձին ազատ կառավարութեամբ :

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՒՔ

Զուիցերիին սահմանը հիւսիսէն Գերմանիան է . արևելքէն Աւստրիան . հարավէն Իտալիան . արևմուտքէն Գաղղիան :

Տարածութիւնն է 11,200 միլոն քառակգւտի :

Երկիրը Եւրոպայի խիստ լեռնոտ ու բարձր երկիրներէն մէկն է . մեծամեծ ժայռեր ու այրեր ունի , շատ ալ ծաղկած դաշտեր :

Օդը ընդհանրապէս ցուրտ է , բայց անոդջ :

Հողը շատ բարեբեր ու աղէկ մշակած է : Շատ հանքային ջրեր ունի . դէտեր ալ կան որ աւազնին օսկիով խառն է :

Բերքն է կտաւ , արմտիք , մում . բայց ամենէն ընտիր կով ու ոչխար :

Բնակիչը 2,000,000 . որոնց լեզուն՝ տեղ տեղ գերմաներէն է , տեղ տեղ ալ գաղղիարէն :

Կրօնքը նորադանդ , և ուղղափառ :

Կառավարութիւնն է հասարակապետութիւն 22 նահանգի՝ որ իրարու դաշնակից են , ու զատ զատ կառավարութիւն ունին : Քանի որ ընդհանուր ժողով չըլլար , բոլոր հասարակապետութեան գլխաւոր կառավարութիւնը երկու տարին մէյմը աս իրեք քաղաքներէս մէկուն մէջը կ'ըլլայ , Յուրիք , Պէննա , Լուչեանա :

## ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՃԻՆԵՒԻՆ (28,000) Զուիցերիին ամենէն երևելի քաղաքն է . ձեռագործները , մանաւանդ ժամա-

ցոյցը և ուրիշ ոսկիէ ու արծըթէ բանուածքները շատ յարգի են :

ՊԵՋԻԼԵ ԿԱՄՊԵԼ (22,000) Զուխերիին ամենէն վաճառաշահ քաղաքն է . կըսեն թէ թուղթ շինելու արհեստը հոս գտուած է :

ՊԵՌՆԱ (22,500) հոս ծնած է Հալէյ տասեղաբաշխը :

ԼՈՒՉԵՌՆԱ ԿԱՄ ԼԻՅԵՌՆ (8300) աս քաղաքիս քովերը ահագին առիւծ մը կայ լեռան մը կտորէ փորած հին ասեղնէ 'ի վեր :

ՅՈՒՐԻՔ (14,000) հոս ծնած է Կեսնէր բանաստեղծը . անուանի է բամբակեղէնի ու մետաքսեղէնի գործարաններուն համար :

ԼՈՋԱՆՆԱ (15,000) Ճինէւրայի լճին վրայ աշուոյր քաղաք է :


ՇԱՅՓՈՒՋ (6500) ասոր մտա է Հռենոսին Լոֆէն ըսուած երևելի ջրվէժը :

ՆԷՕՇԱԹԷԼ ԿԱՄ ՆԱՅԷՆՊՈՒՐԿ (6400) Ժամացոյց շինելու գործարաններ ունի :

ՍԼՔՈՐՅ (4000) աս քաղքէն էր Գուլիէլմոս Թէլ ըսուած կարիճը , որ իր հայրենիքը բռնաւորի մը ձեռքէ ազատեց :

ՍԻՌՆ ԿԱՄ ՉԻԹԹԷՆ (2600) լեռներու մէջ քաղաք մըն է . հոս տեսակ մը մարդիկ կան՝ որ խուլ , մունջ , անկար , ու գրեթէ անողջայ են , վերնուռն տակն ալ կախուած խոշոր խոյլ ունին :

Ուրիշ գլխաւոր քաղաքներն են Շուխ , Սանկալայ , Գրիպուրկ , Լուկանոյ , և Հէրիսա :



## Թ . Լ Ի Ս Տ Ր Ի Ը

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՍԵՏՆ Վարդուս երբոր տիրեց աս երկրիս, իր տէրութեանը այս ինքն Գեղամանիոյ և Գաղղիոյ արևելեան զին ըլլալուն համար՝ անունը Ասորիս կամ Էօֆէրրայի գրաւ. որ Արևելեան Թագաւորութիւն ըսել է: Ինչուան 1806 Աւստրիայի կայսերը բոլոր Գեղամանիոյ կայսր կը սեպուէին. 1500ին ասե՛նները իրենց տակը առին նաև Մաճառստանի ու Պոհեմիոյ Թագաւորութիւնները. 1772ին Լեհաստանին մէկ կտորն ալ՝ որ է Վալիցիան՝ իրենց բաժին ընկաւ. 1814ին իրենց եղաւ Լոմպարտիոյ և Վենետիկի տէրութիւնը, Լիւրիկէն, ու Տալմացիան. 1846ին ալ Քրաքովիոյ հասարակաստութեան երկիրը:

### ԸՆԴՆԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՑ

Աւստրիոյ սահմանը հիւտիսէն Բրուսիան ու Լեհաստանն է. արևելքէն Ռուսաստանն ու Մոլտաւիան, հարաւէն Պոսնիան, Սերվիան, Ագրիական ծովն ու Հռովմայ տէրութիւնը, արևմուտքէն Սարտենիան, Չուիցերին ու Պաւերան:

Աւստրիոյ կայսերութիւնը տասներհինգ կուսակալութիւն կը բաժնուի՝ իրարու անհաւասար մեծութեամբ. ասոնց ամենուն մէկէն գլխաւոր կը

տորները ութն էն . այս ինքն Աւստրիոյ արշիդքս-  
սուծիւն , Պոհեմիա , Մորաւիա և Սլեզիա , Կալի-  
ցիա , Մաճառստան , Լիւրիկէ , Տալմացիա ու  
Լոմպարտիա և վեցնեակ :

Տարածութիւնն է 200,000 մղոն քառակուսի :

Գլխաւոր գետերը ասոնք են .

Օաէր , Վիսթուլա , որ Պալմիկ ծովը կը թափին .  
Դանուբ՝ Սև ծովը .

Փոյ , Ատիճէ , Պրէնթա , Պաքքիլիննէ՝ Ագրիական  
ծովը :

Երկրին մեծ մասը լեռնոտ ու բարեբեր է :

Օգը ընդհանրապէս բարեխառն ու առողջ :

Բերքն է երկաթ , պղինձ , կապար , ալ . Մա-  
ճառստանին մէջ սոկիի հանք ունի , որուն նմանը  
Եւրոպայի մէջ չկայ : Շատ արծաթ ու սնդիկ  
կ'եղէ Իստրիայէն . անուանի է Թոքայի գինին ,  
Պոհեմիային ալ ապակին :

Բնակիչն է 34,000,000 . որոնց լեզուն տեղ  
տեղ գերմաներէն , իտալերէն , սլաւերէն ու մա-  
ճառերէն է :

Քաղաքականութիւնը , ճարտարութիւնը և վա-  
ճառականութիւնը աս վերջի տարիներուս մէջ  
չստ առաջ գնացած են :

Կրօնքն է ուղղափառ , նորաղանդ , և յունադա-  
ւան :

Տէրութեան կառավարութիւնն է բացարձակ  
միապետական , բայց Մաճառստանին մէջ չափա-  
ւորած :

Զօրքը 300,000 :

Նաւատորմիդը 60 կտոր նաւ :

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ.

1. ԱՐՇԻՒՒՔ ՍՈՒԹԻՒՆ ԱՒՍՏՐԻՈՅ

ՎԵՆԱ (360,000) տէրութեան մայրաքաղաքը, թէ արհեստի և թէ գիտութեան ու ամէն տեսակ քաղաքականութեան կողմանէ Եւրոպային առաջին կարգի քաղաքներէն մէկը կը սեպուի. անուանի է կայսերական գրատունը, զինարանները, թանգարանը, համալսարանը և ուրիշ ուսումնական տեղուանքը. շէնքերուն մէջ ալ կայսերական սրահան ու սրբոյն Ստեփանոսի եկեղեցին: Հոս է Միսիթարեանց նորաշէն վանքը, որ թրեստէն հոս փոխադրեցան 1811ին:

ԼՆՑ (24,000) ամուր ու վաճառաշահ, կաշիի վաճառականութիւն ունի:

ՍԱԼՏՊՈՒՐԿ (14,000) մեծ աղի հանք ունի:

ՏՐԻԵՆՏՈՆ կամ թրէնթ (11,000) հոս եղաւ 1545ին վերջի ընդհանուր սուրբ ժողովը:

ԿՐԱՑ (46,000) Սթիրիա կամ Շթայէրմարք գաւառին գլխաւոր քաղաքն է, և օրէ օր ծաղկելու վրայ է:

Անուանի են նաև Ինսպրուք, Շթայէր, Մարպուրկ:

2. ՊՈՏԵՄԻԱ

ՓՐԱԿԱ (110,000) անուանի է համալսարանը. շատ ալ երևելի գործարաններ ունի:

ՌԱՅԵԽԵՆՊԵՐԿ (12,800) բոլոր Եւրոպայի խիստ ճարտար քաղաքներէն մէկն է:

ՔՐՈՒԹԹԷՆՊԷՐԿ (10,000) արծըթի, սպինձի ու կապարի հանք ունի :

ՔԱՐԼՍՊԵՏ (3300) տաք ջրերուն համար աշուանի :

Աշուանի են նաև թեփլից, Պուտլէյս, Էկեր :

### 3. Մ Ո Ր Ա Ի Ի Ա Ե Ի Ս Լ Ե Ջ Ի Ա

ՊՐԻՒՆ (40,000) բրդեղէնի և ընդհանրապէս վաճառականութեան և արուեստից կողմանէ երևելի քաղաք է :

ՕԼՄԻՒՅ (15,000) ամուր ու ծաղկած քաղաք : Աշուանի են նաև Իկլաւ, Թրոփաւ, Փրոզնից :

### 4. Լ Ի Ի Ր Ի Կ Է

ԼՐՊՊԻՅՆԱ կամ ԼՅՅՊԱԽ (16,000) գեղեցիկ ու վաճառաշահ քաղաք է :

ԹՐԵՍՏ (70,000) Ադրիական ծոցին վրայ տեղութեան գլխաւոր նաւահանգիստն է, վաճառականութիւնը խիստ բանուկ :

Երևելի են նաև Քափօտիսթրիա, Կորիցիա, Աբուխէա՝ որ խիստ հին քաղաք է, Խաթրիա՝ որ սնդիկի հանք ունի, և Քլակէնֆուրթ :

### 5. Կ Ա Լ Ի Յ Ի Ա

ԻԼՎՈՎ կամ ԼՅՄՊԷՐԿ (70,000) մեծ ու գեղեցիկ քաղաք : Աշուանի է հոս տեղի հայոց արքեպիսկոպոսարանը :

ՊՐՈՏԻ (19,000) վաճառականութիւնը խիստ բանուկ է :

ՎԵԼԻՉԲԱ (6500) անուանի է ասոր քովի աղահանքը :

ՍԵՄՊՈՐ (10,300) վաճառականութիւնն ու արուեստները ծաղկած քաղաք :

Ուրիշ երեւելի քաղաքներն են Սնեաթին, Չեռնովից, Եարոսլաւ, Տրոհոսլիժ, Թարնոփոլ, Սուչովա, Սլեմնիսլաւ, Քութի : Եւ աս ամէն քաղաքներուն մէջ շատ հայեր ալ կան :

## 6. Մ Ա Ճ Ա Ռ Ս Տ Ա Ն

ՓԵՇԹ (85,000) հիմա Մաճառստանին ամենէն մեծ ու գեղեցիկ քաղաքը աս է :

ՊՈՒՏՐՆ կամ ՊՈՒՏԵ կամ ՕՖԷՆ (43,000) Մաճառստանի հին մայրաքաղաքն է, որ երկար ատեն Օսմանցւոց ձեռքն ալ մնաց :

Փէշթ ու Պուտա գիւմացի գիւմաց են Դանուբի երկու կողմը :

ՓՐԵՍՊՈՒՐԿ (37,000) Պուտինէն առաջ Մաճառստանին մայրաքաղաքը աս էր . Աստրիոյ կայսրը հոս Մաճառներուն թագաւոր կը պսակուի, և ազգային ժողովը հոս կ'ըլլայ :

ՓԵԹՐՈՎԵՐԵՏՆ (6500) ամուր ու անուանի բերդ ունի :

ՉԵՄԼՆ (10,400) վաճառաշահ քաղաք :

ՇԷՄՆԻՑ (8400) } ոսկիի, արծըթի ու կապարի

ՔՐԷՄՆԻՑ (4800) } հանքեր ունին, որ Եւրոպայի մէջ ամենէն մեծերն են :

ՔԼԱՆԻՉԷՆՊՈՒՐԿ կամ ՔՈԼՈՇՎԱՐ կամ ՔԼՈՒԺ (25,000) թրանսիլվանիոյ գլխաւոր քաղաքն է :

ՍՒՊՐՆ կամ ՀԷՐՄԱՆՇԹԱՏ (18,000) վաճառաշահ քաղաք :

ՔՐՈՆՇԹԱՏ կամ ՊՐԱՇՈՎ (30,000) թրանսիլվանիոյ ամենէն ծաղկած ու բազմամարդ քաղաքն է :

ԿԵՐԼԱ, ՃՈՒՐՃՈՎ, ՈՒԵՂԻՍՍԲԵԹՈՒՊՕԼԻՍ կամ ՊԱՇՎԱՅԼՈՎ, աս իրեքը Հայոց քաղաքներ են թրանսիլվանիոյ մէջ ու ազատ կառավարութիւն ունին :

ԹԵՄԸՇՎԱՐ (16,000) իխստ ամուր ու անուանի քաղաք :

ԱՎՐԱՄ կամ ԶԱՎՐԱՊ (12,400) իսրուաթից երկրին գլխաւոր քաղաքն է :

Անուանի են նաև ՊԵՂԿՐԱՍ, ՏԵՎՐԵՅԻՆ, ՄՈՐՈՇՎԱՇԱՐՏԷՂ, ՆԱՅՈՅ, ՇԹՈՒՎՅԱՅԷՆԱՊՈՒՐԿ կամ ՊԵՂԿՐԱՍ, ՖԻՈՒՄԷ :

## 7. ՏԱԼՄԱՅԻԱ

Տալմաշիային գլխաւոր քաղաքներն են .

ԾԱՐԱ կամ ԶԱՏՐԻԱ (6400) չափաւորապէս վաճառաշահ :

ՍՓԱԼԵԹՈՅ (2900) ասոր մօտ է Հին Սաղոնա քաղաքին աւերակը :

Բակուզա, ատենով մեծ հասարակապետութիւն էր . Քաթարոյ և Սեպէնիքոյ :

## 8. ԼՈՄՊԱՐՏԻԱ ԵՒ ՎԵՆԵՏԻԿ

ՄԻԼԱՆ (205,000) իտալիոյ աղուոր քաղաքներէն մէկն է, որ բրնձի ու մետաքսի մեծ առուտուր

ունի: Ասոր մէջ Սուրբ Ամբրոսիոսի եկեղեցին, ու Աբաղա ըսուած թէաորոնը խիստ մեծագործ են:

ՄՆԵՂՈՒՆ (27,000) ամուր բերդ ունի. Վիրգիլիոս աս քաղաքին քովերը ծնած է:

ՓԵՒԻՆ (24,000) երևելի համալսարան ունի:

Լոմագարաիոյ մէկալ երևելի քաղաքներն են Մոնցա, Քոմոյ, Պէրկամոյ, Լոսի, Պրէշիա, Քրեմոնա:

ՎԵՆԵՏԻՎ (115,000) Ագրիաիան ծոցին ծայրը 72 կղզիներու վրայ շինած մեծագործ քաղաք է, որուն շատ փողոցներուն մէջ նաւակներով կը սլորարան: Փառաւոր է սուրբ Մարկոսի եկեղեցին, հրատարակն ու գրատունը: Հոս բացուեցաւ 1836ին Ռաֆայէլեան վարժարանը: — Վենետիոյ քով եղած մանր կղզիներէն մէկն է Սուրբ Ղազար Մխիթարեանց վանքը, որ հիմնեց Մխիթար աբբա՛հայրը 1717ին: — Վենետիոյ մօտերը անուանի են Քիօճա, Թրէվիզ, և Պասան:

ՎԵՐՈՆԱ (53,000) հին ու գեղեցիկ քաղաք. հոս ծնած են Պլինիոս երէց բնախօսը, և Վիարովիոս ճարտարապետը:

ՓԵՏՈՒՆ կամ ՊԵՏԵՒԻՈՆ (51,000) խիստ հին քաղաք է. անուանի է համալսարանը. Տիտոս Լիւիոս ըստին սլաոմիչը հոս ծնած է:

ՎԻՉԵՆՑԱ (32,000) հոս ծնած է Պալլադիոս երևելի ճարտարապետը:

ՈՒՏԻՆԷ (23,000) կառւի ու մետաքսի ձեռագործներ ունի:

ՊԵԼԼՈՒՆ (11,000) մեծ սղնձի հանք ունի:

## Ժ. ԲՐՈՒՍԻԸ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԹԻԵԻՏՈՆԵԱՆ ասպետները ժ.Գ. դարուն ըսկիզբները Խրեչին աս երկրիս արևելեան կողմին . բայց Բրուսիոյ մեծնայը 1700ին եղաւ , երբոր իրենց Փեգերիկոս Թագաւորը Լէհաստանի մէկ կտորին ալ Խրեչ :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Բրուսիոյ սահմանը հիւսիսէն Պալթիկ ծովն է . արևելքէն Լէհաստան . հարաւէն Աւստրիա . արևմուտքէն Գերմանիա :

Տարածութիւնն է 40,000 մղոն քառակուսի :

Երկիրը ընդհանրապէս դաշտային ու ջրոտ է , և հիւսիսային կողմը շատ լճեր կան :

Օգը խիստ ցուրտ է , անոր համար շատ պտուղ չկրնար հասցնել :

Բերքն է ամէն տեսակ հանք , կտաւ , աղէկ ձեռագործներ , յախճասպակ , աղնիւ բուրգ , չուխայ , և ոչխար :

Բնակիչը 16,180,000 , որոնց լեզուն մաքուր գերմաներէն է :

Քաղաքականութիւնն ու արհեստները խիստ

ծաղկած են , վաճառականութիւնն ալ աղէկ կը բանի :

Կրօնքը նորազանգ , և ուղղափառ :

Կառավարութիւնը միապետական :

Զօրքը 200,000 :

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՊԵՌԼԻՆ (420,000) մայրաքաղաքը , Եւրոպայի աղուոր քաղաքներէն մէկն է , անուանի են համալսարանը , գիտարանը , թանգարանը , երկրթէ ու յախճապակէ բանուածքը խիստ աղնիւ :

ՊՐԵՍԼԵՒ (94,000) թէ արհեստի և թէ վաճառականութեան կողմանէ շատ ծաղկած քաղաք է :

ՔԵՆԻԿՍՊՈԼԻՍ (69,000) Պալթիկ ծովուն վրայ հին ու փառաւոր քաղաք է :

ՔՈՒՌՆԻՍ (71,000) շատ հին քաղաք է , ու մեծ առուտուր ունի :

ՏԱՆՑԻԿ կամ ԿՏԱՆՍՔ (60,000) տէրութեան խիստ ստնւր քաղաքն է , վաճառաշահ . գլխաւոր վաճառքն է օղի :

ՄԵԿՏԵՊՈՒՐԿ (50,000) հոս ծնած է Ոթոն Կուէրրիք , որ շնչեղջղ մեքենան հնարեց :

ԱՔՈՒՒՍԿՐԱՆՆ (40,000) մեծն Կարողոս և իր յաջորդները երկար ատեն հոս նստան . շատ հանքային ջրեր ունի :

ՍԹԵԹԻՆ (36,000) վաճառականութիւնը խիստ ծաղկած է :

ՓՈԶԷՆ կամ ՓՈԶՆԱՆ (35,000) հին ատենը Ղէհաստանի մայրաքաղաքն էր , հիմայ ալ ամրութեանը համար անուանի է :

ՀԱԼԼԵ (27,000) երևելի համալսարան, ուսումնական տեղումք և աղահանք ունի:

ՓՈՑՏՅՄ (34,000) տերութեան երկրորդ մայրաքաղաքն է:

ՍԹՐԵԼՍՈՒՆՏ (16,500) բանուկ նաւահանգիստ ունի:

ՖՌԵՆՔՅՈՒԹ (24,000) Օտեր գետին վրայ՝ ամուր ու վաճառաշահ քաղաք:

ԹՌԻԷՐ կամ ՏՐԵԻԻՐԻ (16,000) Գերմանիոյ ամենէն հին քաղաքն է:

ՔՈՊԼԵՆՏ (15,000) ամուր քաղաք է:

ԹՈՌՆ. հոս ծնած է Կոպերնիկոս աստղաբաշխը:

Անուանի են նաև Միւնսթեր, Թիլսիթ, Մէմել, Քուսթրին, Լուցէն, Կլոկաւ, Էրֆուրթ, Տիւսէլտորֆ:

Պրուչի ձեռքն է Բուկէն կղզին Պալթիկ ծովուն մէջ. և Թագաւորը սլաշտսլան է Նէօշաթէլի գաւառին Չուիցերիի մէջ:



## ԺԸ. Գ Ե Ր Մ Ը Ն Ը Կ Ը Ն

### ԳԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

#### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻՈՅ մէջ ատենով զանազան բար-  
բարոս աղգէր տիրած էին, ինչուան որ իններորդ  
դարուն մէջ մեծն Կարոլոս նուաճեց զիրենք,  
և իր յաջորդները Գերմանիոյ կայսր ըսուեցան.  
1806ին պէտք եղաւ որ Ֆրանչիսկոս Ա կայսրը  
հրաժարի Գերմանիոյ կայսր ըսուելէն. 1814ին  
Վէննայի ժողովին մէջ Եւրոպայի գլխաւոր թա-  
ղաւորները որոշեցին, որ Գերմանիան քառասունի  
չափ տէրութիւններ բաժնուի՝ իրարու գաշնակից,  
և բոլորը մէկէն ըսուի Գերմանական Դաշնակցութիւնն :  
Աս գաշնակցութեան գլուխն է Աւստրիոյ կայսրը,  
անկէց ետքը Պրուշի թագաւորը, ասոնցմէ ետև  
գաշնակցութեան գլխաւոր տէրութիւնները աս-  
չորան են՝ որ թագաւորութիւն կ'ըսուին. Պաւե-  
րա, Սաքսոնիա, Աննովէր ու Վիրթեմպերկ :

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Գերմանական գաշնակցութեան սահմանը հիւ-  
սիսէն Պալթիկ ծովն ու Տանիմարքան է. արևելքէն

Բրուսիա ու Լեհաստան . հարաւէն Աւստրիա ու  
Չուիցերի . արևմուտքէն Վաղղիա ու Հոլանտա :

Տարածութիւնն է 180,000 մղոն քառակուսի :

Հարաւային կողմի երկիրը լեռնոտ ու անտառ-  
նէրով լեցուն է . իսկ հիւսիսային կողմը դաշտային  
ու ջրոտ :

Բերքն է ամէն տեսակ մետաղ ու հանք , մանա-  
ւանդ արծաթ ու կապար , որ Սաքսոնիայէն կ'ել-  
լեն : Բոյսերուն մէջ անուանի են ցորենը , սրուզ-  
ները , ծխախոտը , կանեփը և գեանախնձորը . կեն-  
դանիններուն մէջ ալ ձին :

Բնակիչը 34,500,000 , որոնց լեզուն գերմանե-  
րէն է :

Կրօնքը՝ հիւսիսային կողմերը աւելի ուղղափառ ,  
հարաւային կողմերը նորազանգ :

Գերմանիոյ գաշնակից աւերութիւնները իրարմէ  
անկախ կառավարութիւն ունին . բայց մեծամեծ  
գործողութիւններու համար Ֆրանքֆուրթ քա-  
ղաքին մէջ ժողով կ'ընեն :

Հոս կը գնենք նախ բոլոր Գերմանական գաշ-  
նակցութեան աւերութիւնները , իրենց բնակիչնե-  
րուն թիւը , ու ամէն մէկուն գլխաւոր քաղաքը .  
եւորը ասոնց չորս գլխաւորներն ալ զատ կը յիշենք .

ՏԷՐՈՒԹԻՒՆ .                      ԲՆԱԿԻԶ .                      ԳԼՈՒ . ՔԱՂԱՔ

Պաւերա .	4,070,000	Մոնաքոյ .
Սաքսոնիա .	1,400,000	Տրեզտա .
Աննովէր .	1,550,000	Աննովէր .
Վիրթէմպերկ .	1,520,000	Շթութկարտ .
Պատէն .	1,130,000	Քարլսրուհէ .

ՏԵՐՈՒԹՅՈՒՆ .	ԲՆԱԿԻՉ .	ԳԼԽ .	ԳՆԱԿՔ
Հաստիա կայսրընտիր .	600,000	Քասսէլ .	
Հաստիա Տարմէլթատ .	700,000	Տարմէլթատ .	
Հողչլթայն և Լաւէն- պուրկ .	400,000	Քիլ, ու Լաւէն- պուրկ .	
Լուքսէմպուրկ .	292,000	Լուքսէմպուրկ .	
Սաքսոնիա վայմար .	221,000	վայմար .	
Սաքսոնիա Կոթա Ալ- թէնպուրկ .	107,000	Ալթէնպուրկ .	
Սաքսոնիա Մայնինկէն .	130,000	Մայնինկէն .	
Սաքսոնիա Քոպուրկ Կոթա .	145,000	Քոպուրկ .	
Մէքլէնպուրկ Շվէրին .	431,000	Շվէրին .	
Մէքլէնպուրկ Սթրէլից .	77,000	Սթրէլից .	
Պրունսվիք .	242,000	Պրունսվիք .	
Նասաւ .	337,000	վիսպասէն .	
Անհալթ Տէսաւ .	56,000	Տէսաւ .	
Անհալթ Պերնպուրկ .	34,000	Պերնպուրկ .	
Անհալթ Քէօթէն .	37,000	Քէօթէն .	
Շվարցպուրկ Սոնտերս- հաւդէն .	48,000	Սոնտերսհաւ- դէն .	
Շվարցպուրկ Բուտտլ- թատ .	57,000	Բուտտլթատ .	
Հողչլթայն Օլտէնպուրկ .	241,000	Օլտէնպուրկ .	
Հոնէնցոլէրն Հէլինկէն .	15,000	Հէլինկէն :	
Հոնէնցոլէրն Սիկմա- րինկէն .	38,000	Սիկմարինկէն .	
Լիխթէնշլթայն .	6000	վատուց կամ Լիխթէնշլթայն .	

ՏԵՐՈՒԹԻՒՆ .	ԲՆԱԿԻՉ .	ԳԼԽ . ՔԱՂԱՔ
Վալտէք .	54,000	Վորպախ .
Ռայս Կրայց .	22,000	Կրայց .
Ռայս Լոպէնշթայն .	30,000	Լոպէնշթայն .
Ռայս Շլայց .	27,000	Շլայց .
Լիփփէ Տէթմոլա .	76,000	Տէթմոլա .
Լիփփէ Շաւէնպուրկ .	26,000	Պուքէպուրկ .
Հասսիա Հոմպուրկ .	24,000	Հոմպուրկ :

ԳԼԽԱՒՈՐ ՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ

ՈՒ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Պ Ա Ի Ե Ր Ա

Պաւերայի Թագաւորութիւնը հաստատուեցաւ 1806ին . կառավարութիւնը սահմանադրական միապետութիւն է . Թագաւորը և բնակիչներուն մեծ մասը ուղղափառ :

ՄՈՆԱՔՈՅ կամ ՄԻՆԻԻՔ (106,000) Գերմանիոյ ազուր ու ծաղկած քաղաքներէն մէկն է . մեծաշէն է Թագաւորական պալատը, համալսարանն ալ անուանի :

ՆՈՒՐԻՄՊԷՐԿ (45,000) հոս շատ ծաղկած են ձեռագործները, որով մեծ առուտուր կ'ըլլայ . ծոցի ժամացոյցը հոս գտուած է :

ԱՒԿՍՊՈՒՐԿ կամ ԱՒԿՈՒՍԹԵ (35,000) հիւանդանոցը խիստ մեծաշէն է . անուանի է սա քաղքիս լրագիրը :

ՌԻՅԹԻՍՊՈՆԱ կամ ՌԵԿԵՆՍՊՈՒՐԿ (26,000) անուանով Գերմանիոյ կայսրընտիրները հոս ժողով կրնէին: Ասոր մօտ է վալհալա անուանով նոր շինուած հռչակաւոր թանգարանը:

ՎԻՐՅՊՈՒՐԿ (27,000) անուանի է համալսարանը ու բերդը:

Անուանի են նաև Պամպերկ, Լանտաւ, Փասաւ, Պայրայթ, Անախա, Աշաֆէնպուրկ:

### ՍԱՔՍՈՆԻՍ

Սաքսոնիոյ թագաւորութիւնը 1806ին հաստատուեցաւ. թագաւորը ուղղափառ է, բայց բնակիչներուն շատը նորազանգ:

ՏՐԵՋՏԱ (81,000) էլզաս գետին վրայ, Գերմանիոյ գեղեցիկ ու ճարտար քաղաքներէն մէկն է. երևելի է գետին վրայի կամուրջը, և մայր եկեղեցին, ուաման կողմանէ ալ Գերմանիոյ Աթէնքը ըսուած է:

ԼԻՓՍԻՍ կամ ԼԵՏՓՏԻԿ (48,000) անուանի է ասոր համալսարանը, և մեծ աօնավաճառը, և գրքի առուտուրը: Հոս յաղթուեցան Գաղղիացիք 1813ին. Լայպնից փրկեստփան ալ հոս ծնած է:

ՔԵՄՆԻՑ (22,000) աս քաղաքս ձեռագործներու կողմանէ խիստ ծաղկած է:

ՅՈՒՅՊԵՐԿ (12,000) անուանի են ասոր արծըթի հանքը, և արծըթէ բանուածքները:

### ԱՆՆ Ո Վ Է Բ

Աննոզերի թագաւորութիւնը 1814ին հաստատուեցաւ, և թագաւորը Անգղիոյ թագուհին է. բնակիչներուն շատը նորազանդ :

ԱՆՆՈՎԷՐ կամ ՀԱՆՈՎՐ (30,000) հոս ծնած է հերշէլ աստղաբաշխը :

ԿՈՅԹԻՆԿ (11,000) անուանի համալսարան ունի :

ՔԼԵՍՍԹԵԼ (8000) արծըթի ու կապարի հանք ունի :

Երևելի են նաև Օսնապրուք, Հիլտեսհայմ, Լուհեպուրկ, Էմսէն :

### Վ Ի Ր Թ Է Մ Պ Է Ր Կ

Վիրթէմպերկի թագաւորութիւնը հաստատուեցաւ 1806ին. բնակիչներուն շատը նորազանդ են :

ՇԹՈՒԹԿԱՐՏ (42,000) աս է առաջին թագաւորանիստ քաղաքը. ուսմունքն ու արուեստները շատ ծաղկած :

ՈՒՄ (15,000) Գանուբ գետին վրայ Գերմանիոյ ամուր ու անուանի բերդաքաղաքներէն մէկն է :

ԼՈՒՏՎԻԿՍՊՈՒՐԿ (7000) երկրորդ թագաւորանիստ քաղաքը աս է :

ԳԵՐՄԱՆԵՒՈՅ ՄԱՆՐ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԱՄՊՈՒՐԿ (130,000) ազատ քաղաք, Գերմանիոյ առաջին վաճառաչահ քաղաքն է . անուանի են շաքարի գործարանները : 1842ին մէկ մեծ մասը այրեցաւ , բայց նորէն շինուեցաւ :

ԻՌԵՆՔՅՈՌԹ Մայն գետին վրայ (60,000) ազատ քաղաք , Գերմանական դաշնակցութեան ժողովի տեղն է . մեծագործ է հիւանդանոցը , ուր ատենով Գերմանիոյ կայսերաց ընտրութիւնը կ'ըլլար , և սուրբ Բարթոլոմէոսի եկեղեցւոյն մէջ կայսր կ'օծուէին :

ՊՐԷՄԵ (43,000) ազատ քաղաք , Վէզեր գետին վրայ , վաճառականութիւնը խիստ բանուկ :

ՄԵԿՈՆՏԵ կամ ՄԵՆՏԵ և կամ ՄՈՂՈՒՆՏԻՆ (25,000) Գերմանիոյ խիստ ամուր քաղաքն է . հոս ծնած է Յովհաննէս Կութթէնպերկ :

ՊՐՈՒՆՍԿԻԲ կամ ՊՐՆՆԵՆՇԵԿ (37,000) մեծ ու փառաւոր քաղաք է :

ԼՈՒՊԷԲ (27,000) ազատ ու վաճառաչահ քաղաք , շաքարի գործարաններ ունի :

ԷՆԵ (5500) համալսարանը անուանի է :

ՌՈՍԹՈՒԲ (19,000) բանուկ նաւահանգիստ ունի :

ԿՈՍՏԱՆԴԻՆ կամ ՔՈՍՏԱՆՏԵ (5000) հոս եղաւ

Կոստանդեան ժողովը 1414ին :

## ԺԲ. Փ Ո Ր Թ Ո Ւ Գ Ա Լ :

### Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Ն Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Փ Ո Ր Թ Ո Ւ Գ Ա Լ Ի Ե Ր Կ Ի Ր Ը հին աստեղը Լուսի-  
տանիա կըսուէր. ութերորդ դարուն մէջ Աբա-  
բայիք տիրեցին հոս, բայց շուտով քշուեցան .  
հարիւր տարիի չափ ալ Սպանիացիք տիրեցին, ին-  
չուան որ 1640ին Փորթուգէզները գլուխ քաշեցին  
անոնցմէ, ու իրենց թագաւոր դրին Յովհաննէս Գ :

### Ը Ն Դ Ն Ա Ն Ո Ւ Ր Գ Ի Տ Ե Լ Ի Բ

Փորթուգալին սահմանը հիւսիսէն ու արևելքէն  
Սպանիան է . հարաւէն ու արևմուտքէն Ատլան-  
տեան ովկիանոսը :

Տարածութիւնն է 30,000 մղոն քառակուսի :

Երկիրը լեւնոտ, ջրոտ, բարեբեր, բայց քիչ  
բանեցուցած է :

Օդը բարեխառն ու առողջ :

Բերքն է ամէն տեսակ հանք ու մետաղ, մանա-  
ւանդ. ոսկի, արծաթ, երկաթ, սպինձ, կապար,  
աղ, մարմարիոն . պտուղներէն՝ լեմն, նարինջ  
խաղող . մետաքսն ալ աղնիւ է :

Բնակիչը 3,700,000, որոնց լեզուն Սպանիա-  
ցւոց լեզուին մէկ տեսակն է :

Կրօնքը ուղղափառ :

Կառավարութիւնը միաստեօական չափաւորած :

Զօրքը 30,000 :

Նաւատորմիցը 17 կոտոր նաւ :

### ԴԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԼԻՍՊՈՆԱ (260,000) մայրաքաղաքը, Եւրոպայի մեծ ու ազնւոր նաւահանգիստներէն մէկն է . շէնքերուն մէջ երևելի է Ալքանթարայի ջրանոցքը, որ 35 կամարի վրայ շինած է ճերմակ մարմարիոնէ :

ՕՓՈՐՔՈՅ (80,000) Լիսպոնայէն ետքը ամենէն հարուստ ու վաճառաշահ քաղաքն է, ու գինին խիստ անուանի : Երկրին անունը աս քաղաքիս անունովը փորթուգալ ըսուեր է :

ՔՈՅԻՄՊՐԱ (15,000) տէրութեան մէջ միայն աս քաղաքս համալսարան ունի :

ՊՐԱԿԱ (14,000) ամուր քաղաք է, ու զէնքի գործարաններ ունի :

ՍԵՔՈՒՊԵԼ (15,000) աղի մեծ առուտուր ունի :

ԷՎՈՐԱ (9000) ասոր մայր եկեղեցին խիստ ազուր է :

ՊՐԱԿԱՆՅԱ (4000) մետաքսեղէնը անուանի է :

### ԵՒՐՈՊԱՅԷՆ ԴՈՒՐՄ

#### ՓՈՐՔՈՒԳԱԼԻ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Աօիոյ մէջ, հնդկաստանի Տիու և Կօս քաղաքները, Չինու մէջ՝ Մաքաոյ կղզին :

Ափրիկէի մէջ՝ Ասորեան կողմները, Մատերա և Սուրբ Թովմաս կողմները, Դաւարի գլխոյ կողմները . Սենեկամալիային արևմտեան կողմը՝ Կէսաքաղաքը . Քանկոյի մէջ՝ Անկոլա ու Պէնկալա, Մոզամպիկը . և Մոնոմոթափայլին մէջ՝ Չանկէպարին ծովէ շէրքը այլևայլ տեղուանք :

Ովկիանիայի մէջ՝ Թիմորի մէկ կողմը :

## Ժ Գ . Ս Պ Ա Ն Ի Ը

### Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ս Պ Ա Ն Ի Ա Ն հին ատենը Հռովմայեցւոյ ձեռքն էր, ութերորդ դարուն մէջ Արաբացիք տիրեցին, ինչուան որ 1492ին Ֆերաինանտոս թագաւորը հալածեց զանոնք : Քիչ ատենէն ետքը Ամերիկան ալ գանուէլով, Սպանիացիք խիստ մեծ ցան ու հարուստ թագաւորութիւն մը եղան :

### Ը Ն Դ Տ Ա Ն Ո Ւ Բ Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Սպանիոյ սահմանը հիւսիսէն Գաղղիան է, արևելքէն ու հարաւէն Միջերկրական ծովը, արևմուտքէն Փորթուգալը :

Տարածութիւնն է՝ 130,000 մղոն քառակուսի :

Երկիրը լեռնոտ, ջրոտ ու բարեբեր :

Գլխաւոր գետերն ասոնք են .

Մինչոյ, Տուէրոյ, Կուստիանա, Կուստալքիվիւր ,  
որ կը թափին Ատլանտեան ովկիանոսը .

Էպրոյ, որ կը վազէ Միջերկրական ծովը :

Ծովեզերքին օդը տաք է, մէջտեղուանքը բարեխառն :

Հողը քիչ մշակած է :

Բերբերուն գլխաւորներն ասոնք են . երկաթ, մնդիկ, կապար, պղինձ. ոսկեհանքը ասե՛նով առատ էր, բայց հիմա երեսէ ձգած է . արծաթի հանք ալ քիչ ունի : Գինին խիստ ազնիւ է . ունի նաև լեմոն, նարինջ, ձէթ, շաքար, բամբակ, մեղր, մետաքս : Կենդանիներուն մէջ անուանի է Անտալուսիա գաւառին ձին, և Մէրինոս ըսուած ոչխարը որ խիստ բարակ բուրդ ունի :

Բնակիչն է 14,000,000 . լեզուինն սպանեօլերէն, որ լատին լեզուին մէկ ճիւղը կը սեպուի :

Արհեստներն ու գիտութիւնները քիչ առաջ գնացած են :

Կրօնքը ուղղափառ :

Կառավարութիւնը սահմանադրական է :

Զօրքը 90,000 :

Նաւատորմիցը 56 կտոր նաւ :

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՄԱՏՐԻՏ (200,000) մայրաքաղաքը, Եւրոպայի գեղեցիկ քաղաքներէն մէկն է . փառաւոր է թագաւորական նոր պալատը, և անուանի է համալսարանը :

ՊԵՐՉԷԼՈՆԱ (120,000) Սպանիոյ ամենէն ամուր  
քաղաքն է . նաւահանգիստը խիստ աղուոր :

ՎԵԼԷՆՅԱ (66,000) տէրութեան մեծ արքեպիս  
կոսպոսարանը հոս է :

ՍԻՒԼԵԱ (90,000) Մատրիտէն ետքը տէրու  
թեան աղուոր քաղաքն է :

ՔԵՏՆՉԷ (53,000) ամուր բերդաքաղաք է . նա  
ւահանգիստը խիստ բանուկ :

ԿՐԵՆՅԱ (80,000) Մաւրիտանացւոց ետքի մայ  
րաքաղաքն էր . հռչակաւոր է Ալճաբ պալատը որ  
անոնցմէ մնացած հոյակապ շէնք է :

ՍԵՐԱԿՈՍԱ (43,000) ատենով Արագոնայի թա  
ղաւորութեան մայրաքաղաքն էր . 1809ին Գաղ  
ղիացւոց պաշարմանը դէմ աղէկ զինացաւ :

ՄԵԼԵՎԱ (52,000) վաճառաշահ քաղաք է .  
գինին խիստ անուանի :

ՍԵՔԻԱԿՈՍ ԿՈՄՊՈՍԵԼԱ (28,000) հռչակաւոր  
ուխտատեղի է . վան զի հոս է սուրբ Յակոբոս  
առաքելոյն մարմինը , որ բոլոր տէրութեան պաշա  
պանն է :

ՔՈՐՏՈՎԱ կամ ԿՈՐԴՈՒԲԱ (57,000) Մաւ  
րիտանացւոց առջի մայրաքաղաքն էր . հիմա ըն  
կած է . մայր եկեղեցին շատ ընդարձակ ու մեծա  
գործ է :

ԹՈՒԷՏՈՍ (25,000) Մատրիտէն առաջ աս էր  
Սպանիային մայրաքաղաքը :

ԿԵՐԹԵԻԵԷ կամ ՔԵՐԹԵՂԷՆԱ (37,000) հին  
Կարթեգոնացւոց շինած քաղաքն է . բանուկ նա  
ւահանգիստ ունի Միջերկրական ծովուն վրայ :

ՎԷԼԷՉ ՄԵԼԵՎԱ (20,000) խիստ անուանի է  
ասոր խաղողը :

ՍԱԼԱՄԲԱՆՔԵՆ (13,000) ասոր համալսարանը անուանի է :

ԹԱՐԵՎԿՈՒՆ (12,000) ասե՛նով անուանի քաղաք էր, բայց հիմա ընկած է :

ՔՈՐՈՆԵՆ (11,000) ամենու վաճառարան քաղաք է :

ԱՄԲԵՏԻՆ, սնդիկի հանք ունի :

### ԵՒՐՈՊԱՅԻՆ ԴՈՒՐՍ

#### ՍՊԱՆԻԱՅԻՈՅ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Ափրիկէի մէջ՝ Վանարեան կղզիները, և Կուխնէայի ծոցին մէջ մէկ քանի մանր կղզիներ :

Ամերիկայի մէջ՝ Քուպա և Փորթուք կղզիները :

Ովկիանիայի մէջ՝ Փիլիպպեան կղզիները :

Սպանիոյ և Գաղղիոյ սահմանակից է ԱՆՏՈՐՐԻ ԷՍՍԵՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ, ասոր մայրաքաղաքն է ԱՎԻՐԵՄ, որ 2000 բնակիչ ունի :



## ԺԳ. ԻՏԱՆԻԸ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՍԷ 750 տարի առաջ հռովմայեցիք մեծնալով բոլոր Իտալիոյ տիրեցին . բայց հինդերորդ գարուն ասե՛նները իրենց իշխանութիւնը տկարացած ըլլալուն համար՝ Իտալիան Գոթացւոց ու Լոմպարտացւոց ձեռքն ընկաւ, ինչուան որ մեծն կարողոս յաղթեց անոնց ու ինքը տիրեց : Կնոր մեռնելէն ետքը Իտալիան զանազան տէրութիւններ բաժնուեցաւ . շատ անգամ ալ մեծ մասը Գերմանացւոց, Գաղղիացւոց ու Սլաւոնիացւոց ձեռքն անցաւ :

Նախուէնին իյնալէն ետքը Վեննայի ժողովին մէջ որոշուեցաւ որ Սալոյայի դքսութիւնն Մարտենիոյ թագաւորութիւն ըսուի՝ Ճենովայի հասարակասպետութիւնն ալ հետը միացընելով . Լոմպարտիան ու Վենետիկը Աւստրիոյ ըլլայ . Թոսքանի Աւստրիոյ արչիդուքսերէն մեկուն արուի, Փարման ու Փիաչենցան Նախուէնին այրի կնոջք՝ քանի որ ողջ է, ու մեռնելէն ետքը իր երկիրը անցնի Լուքսայի դքսին, Լուքքան ալ միանայ Թոսքանայի երկրին հետ . մեկալ տէրութիւններն ալ իրենց առջի վիճակն ունենան :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՒՏԵԼԻՔ

Իտալիոյ սահմանը հիւսիսէն Ալպեան լեռներն են . արեւելքէն Ագրիական ծոցը . հարաւէն ու արեւմուտքէն Միջերկրական ծովը և Գապուլիան :

Տարածութիւնն է 71,000 մղոն քառակուսի :

Իտալիան հիմա եօթը գլխաւոր տէրութիւն կը բաժնուի , որ ասոնք են . Սարաենիոյ թագաւորութիւն , Լոմպարտիոյ և Վենետիոյ թագաւորութիւն , Թոսքանայի մեծ դքսութիւն , Հռովմայ տէրութիւն , Կափոլիի թագաւորութիւն , Փարմայի դքսութիւն ու Մոսկենայի դքսութիւն :

Գլխաւոր լեռներն ասոնք են ,

Մոնթէ Ռոզա , և Մոնթէ Պիանիոյ կամ Սպիտակ լեռան , որ Ալպեան լեռանց բարձր ծայրերն են . Վէսուվ՝ Կափոլիի քով , Եանա՝ Սիկիլիոյ մէջ , Սթրամպոլի՝ Լիպարեան կղզիներուն մէջ , որ հրաբուխ լեռներ են :

Գլխաւոր գետերն ասոնք են .

Անոյ , Տիրերիս կամ Թէվերէ , Վոլթուրնոյ , որ Միջերկրական ծովը կը թափին .

Փոյ , Ափիճէ , Օֆանթոյ , որ Ագրիական ծոցը կը վազեն :

Իտալիան Եւրոպայի հարաւային կողմն ըլլալուն համար՝ օգը տաք ու ընդհանրապէս անօղջ է :

Բերքերուն գլխաւորներն են աղնիւ քար , երկաթ , սղինձ , բամպակ , շաքար , մեղր , ձէթ , նարինջ , լեմոն , բրինձ . ձեռագործներուն մէջ անուանի է մետաքսէ բանուածքը , սպակին , յախճատակին :

Բնակիչն է 21,000,000 . լեզուներն իտալերէն .

աղէկը կը խօսուի Թուրքանայի Սենա դաւառին մէջ :  
Վաճառականութիւնն ու արհեստները ընդ-  
հանրապէս ետ մնացած են . միայն արձանագոր-  
ծութիւնը, սպտկերահանութիւնը, ճարտարապե-  
տութիւնը և երաժշտութիւնը միշտ անուանի են :  
Կրօնքը ուղղափառութիւն :

## ԳԼԽԱԻՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

### 1. Ս Ա Ր Տ Ե Ն Ի Ա

Սարտենիոյ թագաւորութիւնը Փիէմոնթի նա-  
հանգին մէջ կ'ըլնայ, 21,000 քառակուսի մղոն տեղ :  
Բնակիչը 4,300,000 . զօրքը 47,000 . նաւը 12 :  
ԹՈՒՐԻՆ (124,000) Փոյ գետին վրայ աղուոր  
քաղաք է . անուանի են բազմութիւ տալարանները,  
համալսարանը, ճեմարանը, մանաւանդ Եգիպտոսի  
հնութեանց սրահարանը :

ՃԵՆՈՎԱ (115,000) ամուր քաղաք է, նաւա-  
հանգիստը մեծ ու բանուկ : Ատենով ճենովացւոց  
հռչակաւոր հասարակապետութեան մայրաքա-  
ղաքն էր : Աս քաղաքիս մօտերը ծնած է Քրիստա-  
փոր Քոլոմպոս :

ԱՂԵՐՍԱՆԴՐԻՆ (39,000) Խոպիոյ ամուր քա-  
ղաքներէն մէկն է : Ասոր քովը Մարենիոյ գեղին  
մօտ Նափոլէոն մեծ պատերազմով յաղթեց Աւ-  
ստրիացւոց :

ՆՐԵՅԱ (34,000) ազատ ու բանուկ նաւահան-  
գիստ ունի . օդն առողջարար ու մեղմ ըլլալուն  
չատ օտարականք հոս կը ձմերեն :

Սարտենիա կղզին ալ աս ակրութեան ասին է, և գլխաւոր քաղաքն է Քալիարի (30,000), որ համալսարան ունի :

Սարտենիոյ թագաւորութեան երկրին մէջ՝ Արցա քաղաքին մօտ է ՄՈՆԵԿՈՅ քաղաքը, որ ինքնադուր իշխանի ձեռք է, 1200 բնակիչ ունի, և Սարտենիոյ թագաւորն ասոր պաշտպանն է :

## 2. Թ Ո Ս Ք Ա Ն Ա

Թոսթանայի մեծ դքսութեան բնակիչն է 1,200,000 . զօրքը 4000 :

ՖԻՈՐԵՆՏԵ (102,000) խաղիոյ ծաղկած քաղաքներէն մէկն է . մեծագործ է մայր եկեղեցին՝ ուր եղաւ Փլորենտեան ժողովը . սուրբ Աւարենտինոսի եկեղեցին, Մետիչի ըսուած հռչակաւոր ցեղին մատուար, և դքսին պալատը . անուանի է նաև հնութեանց և բնական պատմութեան պահարանը : Հոս ծնած են Տանթէ բանաստեղծը, և Ամբրիկոս Վեպուչչի :

ԼԻՎՈՐՆՈՅ կամ ԱԼԻՊՈՒՌՆԵ (76,000) նաև հանդիսան ու վաճառականութիւնը շատ բանուկ է : Հոս հայոց եկեղեցի մը կայ՝ Անտոնեան կրօնաւորաց ձեռքը :

ՍԵՆԵ (18,000) ասոր համալսարանն ու մայր եկեղեցին անուանի են :

ՓԻՉԵ (20,000) աստենով հասարակապետութիւն էր . ասոր մայր եկեղեցւոյն զանգակատունը 13 ոտք քովինաի ծած է . գերեզմաննոցը շատ երևելի է, ու հողը հրէաստանէն բերած են քաղաքացիք 50 նաւով : Հոս ծնած է Ղալիլէոս փիլիսոփան :

Թոսքանայի մեծ դքսին անցաւ 1847ին նաև  
1 ուրբայի դքսութիւնը, որ անկէ առաջ ինքնա-  
դուլիս էր: Աս երկրիս բնակիչն էր 143,000:

Գլխաւոր քաղաքն է ԼՈՒԲԲՅ (24,000) ասոր  
գրատունը, դիւանը, մայր եկեղեցին, ու մօտ եղած  
ջերմուկները շատ անուանի են:

### 3. Հ Ռ Ո Մ

Հ ումայ աէրութիւնը սրբազան պապին ձեռքն  
է. աս երկրին մեծ մասը 750ին ասե՛նները պա-  
պերուն տուաւ Պեպինոս՝ մեծին Կարողոսի հայրը,  
մնացածն ալ ետքի սպաւերը կէս մը գնեցին՝ կէս  
մըն ալ կտակով Տառանդեցին: Հիմա բոլոր երկրին  
տարածութիւնն է 13,000 մղոն քառակուսի. բնա-  
կից 2,600,000. զոքը 7500:

Հ Ռ Ո Մ (160,000) հնութեանց ու գեղարուես-  
տից կտրմանէ աշխարհիս առաջին քաղաքն է. եզա-  
կան շէնքեր են Սուրբ Պեարոսի տաճարը, և Վա-  
տիկանի սրազանն ու գրատունը, և պապին աթոռը  
հոն բլլալով աշխարհիս մեծամեծ մայրաքաղաք-  
ներուն մէկն է:

ՊՈՒՐՆԻՅ (70,000) Հ ումէն ետքը Իտալիոյ գե-  
ղեցիկ ու հարուստ քաղաքներէն մէկն է. անուանի  
է համալսարանը, գիտութեանց ճեմարանը և գե-  
րեզմաննոցը: Հոս ծնած է Կալվանի բնագէտը:

ԱՆԲՈՆՅ (35,000) Ագրիական ծովուն վրայ  
վաճառաշահ քաղաք է:

ՓԷՐՈՒԾԻՅ (30,000) ասոր քովն է Տրասիմեն  
լիճը, որուն մօտ Աննիբաղ Հ ուովմայեցւոց յաղթեց:

ՖԵՏԷՆՑԱ (14,000) ասոր յախճապակը ազնիւ է :  
ԲԻՄԻՆԻ կամ ԱՐԻՄԻՆԻ (9500) երևելի է հոս  
Օգոստոս կայսեր յաղթական կամարը :

ՀՌԵՒԵՆՆԵԱ (16,000) Ոնորիոս կայսրը երկան  
տանն հոս նստաւ :

ՖԷՐՐԵՐԱ (26,000) հոս է Արիսթոյ բանա-  
տակը ծին գերեզմանը. ասոր միջնաբերդը Աւսորիոյ  
զորաց ձեռքն է :

ՉԻՎԻԹԱ ՎԷՔԷԻԱ (7000) ազատ ու բանուկ  
նաւահանգիստ ունի :

ԹԻՎՈՒԻ (12,000) գիրքը խիստ աղւուր է .  
Ովրատիոս բանաստեղծը հոս բնակէր է :

ՈՒՐՊԵՆՈՅ (7000) հոս ծնած է Ռաֆայէլ  
անուանի պատկերահանը :

ԼԵՒՐԵՏՈՆ (8000) հռչակաւոր ուխտատեղի է  
սուրբ Աստուածածնայ տանը համար :

ՍԻՆԿՍԼԻԱ (8000) մեծ տօնավաճառ ունի :

Անուանի են նաև Ֆորլի, Չէզէնա, Ռեթի,  
Ֆոլինեօ, Պէնէվէնթ :

Հռոմայ տէրութեան պաշտպանութեանը տակն  
է ՍԵՆ ՄԵՐԻՆՈՅ քաղաքին ազատ հասարակապե-  
տութիւնը, որ Եւրոպայի ամենէն հին հասարա-  
կապետութիւնը կը սեպուի : Բնակիչն է 4500 :

#### 4. Ն Ա Փ Ո Ւ Լ Ի

Նափոլիի երկրին երկար տանն Լոմպարտացիք  
ու Յոյնք տիրեցին. անոնցմէ էտքը Արաբացիք,  
էտքն ալ Նորմանտացիք. ասոնք երբեմն միայն  
Նափոլին կը տիրէին, երբեմն Սիկիլիային ալ :

ասոր համար հիմա հասփողի թագաւորութիւնը  
Երևոյ Սիիլիայոյ Բագաւորութիւն ալ կ'ըսուի :

Տարածութիւնն է 31,400 մղոն քառակուսի :

Բնակիչը 7,400,000 • շէղունին խաղերէն :

Ձօրքը 51,500 :

Նաւասորովիը 17 կտոր նաւ :

ՆԱՓՈՒԻ կամ ՆԵՆՊՕՒՍ (365,000) Խաղիոյ  
ամենէն մեծ քաղաքն է . աղուոր նաւահանգիստ  
ու փառաւոր շէնքեր ունի . հնութեանց սահա-  
րանը անուանի է . դիպակը աղնիւ , դիլքը , բարե-  
բերութիւնը , օդը շատ զուարճալի : Ասոր քովերն  
են Պոմպէա ու հերքուլանոն հին քաղաքները , որ  
Քրիստոսէ 79 տարի ետքը վէսուվ լեւան մոխ-  
րովը ծածկուեր էին , ու 100 տարիէն 'ի վեր ին-  
չուան հիմա կը փորեն ու կը բանան :

ՔՅՍԹԷԼԼԵՄԲՐԷ (15,000) ասոր քովերն է հին  
Սթապէա քաղաքին աւերակը :

ՏԵՐԵՆՏՈՆ (14,000) } անուանի հին քաղաքներ  
ԿՅՊՈՒՅ (8000) } էն :

ՍԵԼԷՐՆՈՅ (11,000) ասոր բժշկութեան գրա-  
րոյն անուանի է :

Երևելի են նաև Աբուիլա , Քեթի , Յոճիա ,  
Պարի , Լէջէ , Թրափանի :

Սիկիլիա կղզւոյն մէջ՝ որ աս աւերութեան տակն  
է՝ դիտաւոր քաղաքներն ասոնք են .

ՓԵԼԷՐՄՈՅ (180,000) Եւրոպայի գեղեցիկ քա-  
ղաքներէն մէկն է . անուանի է ասաղաբաշխահան  
գիտարանը :

ՄԵՍՆԵ (80,000) մեծ ու աղուոր նաւահան-  
գիստ ունի :

ՄԻՐԱԿՈՒՄԱՆ (14,000) հին ու անուանի քաղաք է, բայց կէսէն շատն աւերակ է. հոս ծնած է Արքիմեդէս երկրաչափը :

ՔԱԹԱՆԻՅ (52,000) աղուոր քաղաք է Եանա լեռան տակը՝ որ Եւրոսպոլի ամենէն մեծ ու հռչակաւոր հրաբուխն է :

ՃԻՐՃԷՆԹԻ (14,000) հին Ակրականդ քաղաքին քովն է. անուանի է ասոր քով ծծմբի հանքը :

### 5. Փ Ա Ր Մ Ա

Փարմոսի դքսութեան բնակիչն է 440,000 :

Զօրքը 1800 :

ՓԱՐՄԱ (40,000) ասոր թատրոնը Եւրոսպոլի թատրոններուն ամենէն ընդարձակն է. անուանի է նաև Պոտոնեան ըսուած սպարանը :


Մէկալ գլխաւոր քաղաքներն են Փիաշէնցա (29,000), Կուսսթալա :

### 6. Մ Ո Տ Ե Ն Ա

Մոսկնոսի բնակիչն է 409,000 :

Զօրքը 1780 :

ՄՈՏԵՆԱ (27,000) մեծաշէն է դքսին պաշտար : Անուանի են նաև Ռէճճիոյ, Միրանաոլա, և Քարրարա՝ ուսկից խիստ ազնիւ մարմարին քար կ'երևէ :



## ԺԵ՛՝ ՏԵՃԿԸՍՏԸՆ,

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

**ՏԵՃԿԻ** կամ Օսմանեցոց ակրութիւնը 1300ին սկսաւ սուլդան Օսմանէն Քէօթաճիայի կողմերը . ու քիչ ատենէն Լոսրը Պրուսան, Էսիրնէն ու Կոստանդնուպօլիսը առնելով տարածեցաւ ինչուան Մաճառասան ու Գերմանիա : Անոր համար բոլորը երկու գլխաւոր մաս կը բաժնուի . Եւրոպայի Տաճկաստան՝ որ է Բուսկիլի, և Ասիայի Տաճկաստան՝ որ է Անատօլու :

### ԸՆԴՅԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Եւրոպայի Տաճկաստանին սահմանը հիւսիսէն Ռուսաստանն է . արեւելքէն Սե ծովն ու Ասիա . հարաւէն Արշիպէղադանն և Յունաստան . արեւմուտքէն Աւստրիա :

Քանի մը տարի առաջ Օսմանեցոց ձեռքն էին նաև Ուլաճ ու Պուլդասն, որ հիմա միայն հարկատու են, և Սերվիան՝ որ ինքնագլուխ է . ասոնք իրեքն ալ հիմա Ռուսաց պաշտպանութեանը տակն են :

Տարածութիւնն է 112,500 մղոն քառակուսի :

Գլխաւոր լեռներն ասոնք են .

Պալքան , որուն գլխաւոր ճիւղերն են Տէափոթ  
տաղը , Չար տաղը , Տինարեան լեռները :

Պինդոս լեռը , Ողիմպոս կամ Լաքա , Պառնասոս ,  
և Ֆիմերեան լեռները :

Գլխաւոր գետերն ասոնք են .

Դանուբ , որ Սև ծովը կը մանէ .

Տրին , որ Ադրիական ծովը կը թափի .

Մէրիճ , որ Արշիպեղազոսը կը վազէ .

Մորաւա , Ալութա , Սէրէթ , որ Դանուբ գետը  
կը մանեն :

Երկիրը խիստ լեռնոտ է , մանաւանդ հարաւային  
կողմը . անոր համար ալ սաստիկ ցուրտ կ'ըլլայ :

Հողը բարեբեր է , բայց քիչ մշակած . շատ տե-  
սակ հանք ունի , թէպէտև քիչ բանեցուցած :

Գլխաւոր բերքն է ցորեն , բրինձ , խաղող , նա-  
բինջ , ձէթ , բամպակ , մետաքս , քրքում , և ծխա-  
խոտ :

Արհեստն ու ճարտարութիւնը հիմա առաջ  
երթալու վրայ է : Անուանի են մետաքսէ բա-  
նուածքները , գիսակը , շալը ու կաշին :

Բնակիչն է 9,000,000 Եւրոպայի մասին մէջ .  
լեզուներն թուրքերէն :

Կրօնքը ընդհանրապէս մահմէտական :

Կառավարութիւնը ազատ միապետական :

Զօրքը 300,000 :

Նաւատորմիւր 135 կտոր նաւ :

ԳԼԽԱՒՈՐ ԲԱՂԱՔՆԵՐԸ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՕԼԻՍ կամ ՍՏԱՄԳՕԼ (600,000) բոլոր Տաճկաստանի մայրաքաղաքն է՝ Մարմարային ու Սև ծովուն վրայ, գիրքը եզական, նաւահանդիսաւ շատ փառաւոր ու ընդարձակ, որ 1200 նաւէն աւելի կ'առնէ. վաճառականութիւնը խիսաբանուի. շէնքերուն մէջ երևելի են մէկ քանի մը կիթնէրը, մանաւանդ Այա Սոֆիան. անուանի է նաև փողերանոցը, թագաւորին պալատները, նոր բացուած գործարանները, և այլն: Մեծն Կոստանդիանոս շինեց սաքաղաքը 320ին. իսկ 1453ին Ֆէթիհ սուլդան Մէհմէմէար առաւ Յունաց ձեռքէն:

ՍԻԼԵՍԻ. բանուի նաւահանդիսաւ ունի:

Ինճիկ. հանքային ջրեր ունի, և շէնքերուն շատը ժայռի մէջ փորած են:

ԱԴՐԻՆՍՆՈՒԳՕԼԻՍ կամ ԷՏԻՐՆԷ (100,000) տէրութեան երկրորդ մայրաքաղաքն է. շէնքերուն մէջ անուանի է սուլդան Սէլիմին մշկիթը:

Գովերն են Չիրմէն, Տիմեթոքա, Գըրգ քիլիսէ քաղաքները:

ՖԻԼԻՊԷ (30,000) մեծ ու վաճառաշահ քաղաք է. մետաքսեղէն բանուածքն աղնիւ. շատ հնութիւններ ալ ունի:

ԻՍԼԷՄԵԷ } ասոնք երկուքն ալ մեծ տնա-  
ՈՒՋՈՒՆ ՃՈՎԱ } վաճառ ունին:

ԿԵԼԻԳՕԼՈՒ (10,000) անուանի է սեկը:

Ուրիշ երևելի տեղուանքն են Թաթար պալարը, Վիզէ, Պուրղազ, Ռոսոսթոյ, Միտիա:

ԹԵՍԵՂՈՆՒԿԷ կամ ՍԵԼՅՆՒԿ (70,000) հին ատենի Մակեդոնիա դաւառին գլխաւոր քաղաքն է, մեծ ու բանուկ նաւահանգիստ ունի, շատ ալ հետեթիւններ :

ՍԷՐԷՁ (30,000) վաճառաշահ քաղաք է, բայց ստառուան օդը ինասակար. քովերը արծըթի հանք կայ :

ԻՒՍԿՒՒԳ (10,000) գերքը դեղեցիկ :

Անուանի են նաև Ենիճէ վարտար, Գարաֆէրիէ, Վիւսթէնաիլ, Քասթորիա :

ԱՅՆՕՐՕՍ լեռը՝ ուր քանի մը տարի առաջ 22 հոռմի վանք կար, և 500 մասուն :

ՏԲՅՄՅ, որուն քովերն են հին Փիլիպպէ քաղաքին աւերակները :

ԼՅՐԻՍՍԵ կամ ԵՆԻՇԷՀԻՐ (30,000) կարմիր ներկի անուանի գործարաններ ունի :

ԹՐՀԱԼԱ, ՉԱՂՈՐԵ, ՉԵԹԱԼՃԱ՝ որ հին ատեն փարսաղիա կ'ըսուէր :

ԵՅՆԵՅ (40,000) Ալպանիա կամ Առնաւուալուդ դաւառին գլխաւոր քաղաքն է. ասկէց էր Տէփէտէլէնի Ալի փաշան որ թագաւորէն ապրստամբած ըլլալով 1822ին հոս սլաշարուած մեռաւ :

ՇՔՈՏՐԵ կամ ԻՍԲԷՆՏԷՐԻԷ (20,000) ամուր քաղաք :

ԳՅՐԵՏԵՂ, որ գրեթէ ինքնադուխ դաւառ մըն է :

Երևելի են նաև Փրեվէզա, Փարկա, Աւլոնեա, Տիւրաճ, Իչդասան, Օխրի, Ագսէրայ կամ Քոռոյա :

ՊՈՍՆԱ կամ ՊՈՍՆԱ ՍԵՐԵՅ (70,000) ամուր ու վաճառաշահ քաղաք է :

ՉՂՈՐՆՒԲ (14,000) կապարի հանք ունի :

ՊԱՆԵՍԱՌՈՒՔԱ (15,000) ամուր բերդ, ու հան-  
քային ջրեր ունի :

Պոսնա գաւառին մէկալ գլխաւոր տեղուանքն  
են թրաւնիք, Մաստար, Դուզլա, Պիհաչ :

ՍՈՅԵՍ (50,000) Պուլլարիա գաւառին մեծ ու  
վաճառաշահ քաղաքն է :

ՇՈՒՄԵՒ ԿՈՄ ՇՈՒՄԼԱ (30,000) տէրութեան  
ամուր քաղաքներէն մէկն է :

ՌՈՒՍՃՈՒԳ (30,000) մեծ ու վաճառաշահ քա-  
ղաք է :

ՍՒԼԻՍՏՐԷ (20,000) ամուր ու վաճառականու-  
թիւնը բանուկ քաղաք :

ՎԻՏԻՆ (25,000) ամուր բերդաքաղաք :

Անուանի են նաև Սիսթով, Հըրշովա, Իսագճը,  
Կիկէպօլու :

### ՈՒԼԱՀ, ՊՈՒՂՏԱՆ

ՊՈՒՔՐԷՇ (80,000) Ուլահի մայրաքաղաքն է,  
վաճառաշահ ու մեծ՝ բայց գեղի նման :

ԵՍՇ (40,000) Պուղտանի մայրաքաղաքն է՝  
Պուքրէշին նման :

ԻՊՐԵՏԻԼ. ամուր ու անուանի բերդ է :

Մէկալ երևելի տեղուանքն են Ֆոքշան, Պո-  
թուշան, Թերկովից, և Կալայ՝ որ բանուկ նաւա-  
հանգիստ ունի :

### ՍԵՐՎՒՍ

ՊԵԼԿՐԵՏ (30,000) Եւրոպայի ամուր քաղաք-  
ներէն մէկն է. Սերվիոյ իշխանը շատ անգամ հոս

նասեր է, և բոլոր երկրին գլխաւոր քաղաքն է :

ՍԵՄԵՆՏԻ (12,000) Սերվիոյ նախագահ արքեպիսկոպոսը հոս կը նստի :

ՔՐԱԿՈՒՑԵՎՅՑ (5000) հիմա Սերվիոյ իշխանը հոս կը նստի :

ՔԼԱՏՈՎՅ. ասոր քոյն է Տրայիանոս կայսեր շինած կամուրջը :

## ԵՒՐՈՊԱՅԻ ՏԱՃԿԱՍՏԱՆԻՆ

### Կ Ղ, Ձ Ի Ն Ե Ր Ը

ԹԱՍՈՍ կամ ԹԱՇՈՁ. գեղեցիկ մարմարիոնն ու գինին անուանի են :

ՍԱՄՈԹՐԱԿԷ կամ ՍԵՄԵՆՏԻՔ. հին ասենք խիտ անուանի էր :

ԼԵՄՆՈՍ կամ ԼԻՄՆԻ. ասենով անուանի էր ասոր լարիւրինթոսը, և հռոմկաւ (Լիւնի մալեւան) ըսուած կաւը :

ՔԱՆՏԻԱ կամ ԿԻՐԻՏ կամ ԿՐԵՏԷ, մեծ կղզի է, որ հին ասենք խիտ անուանի էր, բայց հիմա ընկած է :



## Ժ.Օ. ՅՈՒՆԵՍԵԱՆ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Նոյն ատենը Յունաստանի մէջ այլևայլ հասարակապետութիւններ կային՝ իրարու հետ սովորաբար դաշնակից . արհեստներն ու գիտութիւնները ծաղկած էին Յունաց մէջ, պատերազմական քաջութեամբ ալ մեծ անուն ունեին : Հռովմայեցւոյ հասարակապետութեան մեծցած ատենը՝ անոնց տակն ընկան . բայց երբոր Վոստանդիանոս իր աթոռը Վոստանդնուպօլիս փոխադրեց, կամաց կամաց Հռովմայեցւոյ կայսերութիւնը Յունաց ձեռքն անցաւ, ու սկսան Հոսիոս ըսուիլ : Անկեց ետքը Վենետիկեցւոյ ու Օսմանցւոյ ձեռքն անցատերութիւննին . ինչուան որ 1830ին Եւրոպայի թագաւորներուն պաշտպանութեամբը նոր թագաւորութիւն ունեցան միապետական, որ 1842ին սահմանադրական միապետութեան փոխեցին : Հիմակուան թագաւորը Պաւերայի թագաւորին որդին է :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Յունաստանի սահմանը հիւսիսէն Եւրոպայի Տաճկաստանն է . արևելքէն Արշիպոլսոսը . հարավէն Միջերկրական ծովը . արևմուտքէն Յոնիական ծովը :

Տարածութիւնն է 12,000 մղոն քառակուսի :  
Երկիրը ընդհանրապէս լեռնոտ :  
Օդը բարեխառն ու առողջ :  
Գլխաւոր գետերն ասոնք են .

Օֆիէ կամ Բուֆիա, որ Արկադիոյ ծոցը կը թափի,  
Իրին կամ Եւրոտաս, որ Մանեայի ծոցը կը վազէ .  
Պամիսոս, որ Մեթոնի քովը կը թափի :

Հողը բարեբեր է, և ամէն տեսակ հանք ու մետաղ ունի, բայց գրեթէ ինչուան հիմա երեսն ձգած է :

Բնակիչն է 900,000 . լեզունին հռոմերէն, որ հին յունարէնին ռամկականն է :

Քաղաքականութիւնն ու արհեստները գեռ ևս մնացած են :

Կրօնքը յունադաւան :

Կառավարութիւնը սահմանադրական միապետական :

Զօքը 12,000 :

Նաւատորմիցը 20 կտոր նաւ :

### ԳԼԽԱՒՈՐ ԲԱՂԱՔՆԵՐԸ

ԱԹԵՆՔ կամ ԱԹԵՆ (26,000) Յունաստանի մայրաքաղաքը, հին ատենը խիստ ծաղկած էր՝ ամէն արհեստից ու գիտութեանց կողմանէ. հիմայ ալ սկսած է զարդարուիլ նոր նոր շէնքերով, ուսումնական տեղերով, ասարաններով, և հին շէնքերը նորոգուելով : Աս. քաղաքը ծնած են Սողոն, Միլաթիագէս, Թեմիստոկղէս, Արիստիդէս, Պերիկղէս, և ուրիշ շատ երևելի մարդիկ :

ՆԱՒՓՈՒՆ . ամուր բերդաքաղաք է :

ԹԻՒԵ . հին Թերէ քաղաքին տեղը շինած սղափ քաղաք մըն է :

ՄԻՍԻԹԻՐԵ . ասոր քովերն է Սպարտային աւերակները :

ՄԻՍՈՒՈՒՆԿԻ . ասոր բերդին մէջ հռոմիները շատ գիմնացան Օսմանցւոց գէտ 1826ին :

ԿՈՐՆԹՈՍ կամ ԳՈՐՏՈՍ . անուանի քաղաք է՝ Մոռայի սարանոցին վրայ , դիրքն ալ աղուոր :

ԹՐԻՓՈՒԻՏԵ . Օսմանցւոց ատենը Մոռային գլխաւոր քաղաքն էր :

ՄԵԹՈՆ կամ ՄՈՒԹՈՒՆ . ամուր բերդ է . Մխիթար արքան հոս հաստատեր էր իր վանքը՝ Վէնէտիկ երթալէն առաջ :

ՆԱԻԲԻՆ . անուանի է 1827ին ասոր նաւահան գտաին մէջ եղած նաւահան սպտերապմը :

ՓԵԹՐԵՍ . Յունաստանի ամենէն վաճառաշահ քաղաքն է :

Ուրիշ շատ տեղուանք ալ կան որ թէսլէտ հին ատենը անուանի քաղաքներ էին , բայց հիմա որը գեղ է՝ որը աւերակ :

## ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԿՂՋՒՆԵՐԸ

Յունաստանի գլխաւոր կղզիներն ասոնք են .


ՆԵԿՐՈՓՈՆԹԵ կամ ԷՅՐԻՊՈԶ . բանուկ նաւահանդիստ ունի :

ՇՐԵ կամ ՍՐԵ (15,000) հռոմիներուն ետքի ապստամբութենէն ՚ի վեր խիստ բանուկ ու վաճառաշահ է :

ՆԱԲԸԵ կամ ՆԱԲՍՈՍ . Կիւկղաղայք կամ Բոլոր կղզիք ըսուած կղզիներուն մէջ ամենէն մեծն է :

ԻՏԲԱ կամ ՉԱՄԱՆՃԱՆ . ասոր քաղաքը շէն ու  
բանուկ է :

Անուանի են նաև աս կղզիներս . Ծխա կամ  
Մուրթաա ասաւը , Անարա , Թինէ կամ Իսթին  
տիւ , Դեղոս կամ Ստիլի , Մեղոս կամ Պիւլիք  
Տէյիբմէնլէք , և Պարոս՝ որուն մարմարիտնը խիստ  
անուանի է :



## Ս Ս Ի Ս

### Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Բ Գ Ի Տ Ե Լ Ի Ք

#### ՍԱՀՄԱՆ ԵՒ ՄԵԾՈՒԹԻՒՆ

**ԱՍԻՈՅ** սահմանը հիւսիսէն Սառուցեալ ծովն է, արևելքէն Խաղաղական օվկիանոսը, հարաւէն Հնդկաց ծովը, արևմուտքէն Ուրալ լեռները, Կասպից ծովը, Կովկասու լեռները, Միջերկրական ծովը, և Կարմիր ծովը :

Մեծ ութիւնն է 12,080,000 մլն քառակուսի : Աշխարհիս մեկալ մասերուն մէջ ամենէն մեծն է, ու հին աստնէ ՚ի վեր ամենէն ալ անուանի, որովհետև մարդկային ազգը աս մասին մէջ ստեղծուած ու ամէն կողմանէ ծաղկած է, թէպէտ և հիմա առջի ծաղկած ութիւնն ու մեծ ութիւնը չէ մնացած :

#### ԲԱԺԱՆՈՒՄ

Ասիան գլխաւոր տասնըմէկ աշխարհք կը բաժնուի. մէկը հիւսիսային կողմն է, հինկը մէջտեղը, հինկն ալ հարաւային կողմը :

Հիւսիսայինն է Ասիոյ Ռուսաստանը :

Մէջտեղուանքը ասոնք են . Տաճկաստան Ասիոյ ,  
Հայաստան , Թուրքաստան կամ Թաթարստան ,  
Չին , և Ճափոն :

Հարաւայինները ասոնք են . Արաբիա , Պարս-  
կաստան , Աֆղանիստան , Պեշուճիստան , և Հընդ-  
կաստան :

### ԾՈՒՎ

Ասիոյ գլխաւոր ծովերը ասոնք են .  
Սառուցեալ ծով , Միջերկրական ծով , Հնդկաց  
ծով , և խաղաղական ովկիանոս :

### ՆԵՂՈՒՅ

Ասիան ութը գլխաւոր նեղուց ունի .  
Չաննագ գալէսիի , և Ստամբուլի նեղուցը .  
Պապիւլմաննակայ՝ Արաբիոյ ու Աֆրիկէի մէջտեղը .  
Հիւրմիւզի նեղուցը՝ Արաբիոյ ու Պարսկաստանի  
մէջտեղը .  
Սինկափուրի նեղուցը՝ Հնդկաստանի Հարաւային  
գին .  
Մալաքքայի նեղուցը՝ Չինու Հարաւային գին .  
Քորէայի նեղուցը՝ Չինու ու Ճափոնի մէջտեղը .  
Պէհլիսկայ նեղուցը՝ Ասիոյ ու Ամերիկայի մէջտեղը :

### ԾՈՒՅ

Վէց մեծամեծ ծոցեր կան Ասիոյ մէջ .  
Արաբիոյ ծոցը , որ է Կարսիւր ծովը .  
Պարսկային ծոցը .

Էսմէնի ու Պէնկալայի ծոցը .  
Սիամայ ու Թոնքինի ծոցը .  
Քամչաթքայի ծոցը .  
Անատիւր՝ Պէհրինկայ ծովուն մէջ :

### Կ Դ Ջ Ի

Ասիոյ գլխաւոր կղզիները ասոնք են .  
Արշիպէղագոսի կղզիները . անոնցմէ զստ՝ Հսոդոս  
և Կիպրոս , Միջերկրական ծովուն մէջ .  
Պահրէյն կղզիները՝ Պարսկային ծոցին մէջ .  
Մալաբարէական կղզիները , Լաքէաթիական կղզիները ,  
Սէյլան , և Անտաման կղզիները՝ Հնդկաց ծո-  
վուն մէջ .  
Հայնան և Մաքաոյ՝ Չինաց ծովուն մէջ .  
Ֆորմոզա կղզին , Ճափոնի կղզիները՝ Խաղաղական  
ովկիանոսին մէջ :

### Հ Ր Ո Ւ ԱՆ Դ ԱՆ

Ասիոյ գլխաւոր հրուանդանները ասոնք են .  
Պասպա պուրնու՝ Տաճկաստանի արևմտեան կողմը .  
Պապիւլմանուտպ ու Ռասէլիաթ՝ Արաբիոյ հարա-  
ւային դին .  
Քոմորին՝ Հնդկաստանի հարաւային դին .  
Ռոմանիա՝ Մալաքքայի հարաւային գին .  
Գլուխ արևելեան՝ Սիպերիոյ արևելեան ծայրը .  
Գլուխ հիւսիսային՝ կամ Սեվերովոսթոնչնոյ՝ Սի-  
պերիոյ հիւսիսային ծայրը :

ԼԵՌ

Ասիոյ գլխաւոր լեռները ասոնք են .

Փոքր Ալթայ՝ Սիպերիոյ ու Չինու տէրութեան  
մէջտեղը .

Յունկլինկ՝ Թաթարստանի ու Չինու մէջ տեղը .  
Հիմալայա և Պոլուր՝ Հնդկաստանի հիւսիսային  
կողմը .

Տորոս և Լիբանան՝ Տաճկաստանի մէջ .

Մասիս և Աորդուայ լեռները՝ Հայաստանի մէջ .

Էլբլէնա՝ Պարսկաստանի ու Տաճկաստանի մէջտեղը .

Էլարէա՝ Արաբիոյ մէջ :

ՀՐԱԲՈՒԽ

Ասիոյ հրաբուխներուն շատը հիմա մարած են .  
Իսկ բանուկ հրաբուխներուն մեծ մասը Քամչաթ-  
քային՝ Քուրիլեան կղզիներուն ու Ճափոնի կղզ-  
ղիներուն մէջն են :

ԼԻՃ

Ասիոյ գլխաւոր լճերը ասոնք են .

Վանայ ծովը, Որմէայ լիճը, Սեանայ լիճը՝ Հայաս-  
տանի մէջ .

Չանի և Պայքալ՝ Սիպերիայի մէջ .

Մեռեալ ծովը՝ Հրէաստանի մէջ .

Արալ լիճը՝ Թաթարստանի մէջ .

Պալքաչի, Սայսան, Խուխունուր, Փալթէ՝ Չինու  
մէջ :

ԳԵՏ

Ասիոյ գլխաւոր գետերն են .

Օպի , Ենիսէյ , Լէնա , Ամուր՝ որ Սառուցեալ  
ծով կը թափին .

Ուրալ՝ Կասպից ծովը .

Հոանկոյ կամ Դեզին գետ , Եանսէքեան՝ Չինու  
ծովը .

Գանգէս՝ Պէնկալայի ծոցը .

Ինդոս կամ Սինս՝ Իամէնի ծոցը .

Տիգրիս ու Եփրատ՝ Պարսկային ծոցը :

ՕԴ . ՀՈՂ , ԲԵՐԻՔ

Ասիոյ օդը ընդհանրապէս հիւսիսային կողմերը  
խիտացուրտ , մէջտեղուանքը բարեխառն ու առողջ ,  
հարաւային կողմերն ալ տաք է :

Երկրին մեծ մասը լեռնոտ ու բարեբեր է , մա-  
նաւանդ մէջտեղուանքն ու հարաւային կողմերը .  
խիւ հիւսիսային կողմը անբեր անապատ է :

Գլխաւոր բերքերն են ոսկի , արծաթ , երկաթ ,  
փլաթին , պղինձ , անագ , և հանքային ներկ , մա-  
նաւանդ ազամանդ , և ուրիշ ազնիւ քարեր . բայց  
բոլոր աս հանքերը գրեթէ երեսէ ձգած են :

Բոյսերը խիտ առատ ու ստղաբեր են . ասոնց  
մէջ երեւելիներն են խահուէ , չայ , շաքարի եղէգ ,  
արմաւ , պանան , քոքոյ , կինամոն , պղպեղ , զա-  
նազան խէժ ու խնկեղէններ , բամբակ , մետաքս ,  
և ամէն տեսակ ազնիւ պտուղներ :

Վայրի կենդանիներուն մէջ գլխաւորներն են

Ճերմակ արջ, սև աղուէս, սամյր և ուրիշ տեսակ տեսակ աղնիւ մորթ ունեցող կենդանիներ, այժեամն, բէշկ մշկոյ, փիղ, ռնգեղջիւր, առիւծ, վագր, ընձառիւծ, կապիկ, կոկորդիլոս, ուղա, և այլն :

ԲՆԱԿԻՉ, ԿՐՕՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Բնակիչն է գրեթէ 400,000,000 . և գլխաւոր ազգերն են տաճիկ, հայ, սարսիկ, հրեայ, արաբայի, հնգիկ, չին ու թաթար :

Չորս գլխաւոր կրօնք կայ Ասիոյ մէջ . քրիստոնէութիւն, մահմետականութիւն, հրէութիւն, կռապաշտութիւն :

Քաղաքականութիւնը հին ատենը շատ աւելի ծաղկած էր քան թէ հիմա . ուսմունքը և գիտութիւնները թէպէտ Ասիոյ մէջ սկսած են, բայց հիմա գրեթէ բոլորովին դադրած են . արհեստներուն ալ շատը մոռցուած կամ իրենց անկատարութեան մէջ մնացած . բայց վաճառականութիւնը շատ բանուկ է :

Ասիոյ մէջ եղած տէրութիւններուն գրեթէ ամէնն ալ ազատ միապետական կառավարութիւն ունին :

## Ե. ՌՈՒՍՍԵՍԵԱՆ ԸՍՒՈՅ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԸՍՒՈՅ Ռուսաստանը գլխաւոր երկու մաս կը բաժնուի . Սիպերիա , և Կովկասու երկիրները Սիպերիոյ բնակիչները հին ատեն շատ անգամ Եւրոպան ու Ասիան կոխեր էին . բայց իրենց երկիրը ինչուան 1500 թուականը անձանօթ էր Եւրոպացւոց . ան ատենները Ռուսները սկսան փրկուա երկրիս , և իրենց տէրութեան յանցաւորներուն մահապարտները հոն քշելով՝ ան տեղուանքը շէնցուցին :

Կովկասու երկիրներուն մէկ մասը ատենով Պարսից ձեռքն էր , մէկաւք Օսմանցւոց , մէկքանի տեղուանք ալ ինքնազուխ էին . մտա տարիներս Ռուսները ասոնց ամենուն ալ փրկցին :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵՒԼԻՔ

Ասիոյ Ռուսաստանին տահմանը հիւսիսէն Սաուուցեալ ծովն է , արևելքէն Պէհրինկայ նեղուցը , հարաւէն Տաճկաստան , Պարսկաստան , և Թուրքաստան , արևմուտքէն Ուրալ լեւները :

Տարածութիւնն է 4,000,000 մղոն քառակուսի :

Սիպերիան ամբողջ Եւրոպայէն մեծ է , բայց բնակիչը իստա քիչ . օգը ցուրտ , երկրին մեծ մասը

անապատ ու քիչ մշակած . բերքը արծաթ , երկաթ , մագնիս , պղինձ , և աղնիւ քարեր , և մանաւանդ աղնիւ մորթեր :

Վովկասու երկիրները լեռնոտ ու խիստ բարեբեր են . օգը առողջ , բերքն ամէն տեսակ ստուղ ու արմաիք :

Բոլոր Ասիոյ Ռուսաստանին բնակիչն է 3,600,000 . ուռւս , հայ , վրացի , մնկուէլ , ասպաղա , չէրքէզ , թաթար , և այլն :

Վրօնքը՝ բրիտանեկութիւն , մահաձտականութիւն , և կռապաշտութիւն :

## ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

### 1. Ս Ի Պ Ե Ր Ի Ն

ԹՌՊՈԼՍՔ (16,400) ամուր քաղաք է , վաճառականութիւնն ալ ծաղկած :

ԻՐՔՈՒԹՍՔ (14,000) Պայքալ լճին քովը վաճառաշահ քաղաք է :

ԵՆԻՍԷՅՍՔ (6000) անուանի տօնավաճառ ունի :

ԵՅՔՈՒԹՍՔ (3000) սամուրի վաճառք ունի :

ՆԵՐՉԻՍՔ . արծաթի ու կապարի հանք ունի :

ՔԵՆԷՔՅ . երկու քաղաք է զխնացէ զխնաց , մէկը Ռուսաց ձեռքը , մէկալը Չինաց :

Անուանի են նաև Թոմսք , Պառնասուլ , Օխոթսք , Վրասնոյեարսք , և Փեթրովաււովսք՝ որ Քամչաթքայի գլխաւոր քաղաքն է :

2. ԿՈՎԿԱՍՈՒ ԵՐԿՐՆԵՐԸ

ՏՓՆԻՍ կամ ԹԻՖԼԻՉ (30,000) վրաստանի ետքի մայրաքաղաքն էր. նոր շինուած մասը խիստ գեղեցիկ է. շատ հանքային ջրեր ունի. վաճառակա նութիւնն ալ խիստ ծաղկած :

ՄՏԻԹԱ (12,000) վրաստանի հին մայրաքաղաքն է, մեծ մասը աւերակ. ասոր քովերը պաղլէղի ու երկաթի հանքեր կան :

ՇԱՄԱՆԻ (6300) հին ու անուանի քաղաք է :

ՊԱՐՈՒ (8000) Կասպից ծովուն բանուկ նաւահանգիստն է. ասոր քովերը նաւթի ջրհորներ ու տղմային հրաբուխներ կան. կրակատուն մըն ալ կայ հին ատենէն մնացած, ուր ինչուան հիմա կրակապաշտներ կան :

ԳԱՆՁԱԿ կամ ԵԼԻՍԱՎԷԹՓՈԼ (12,000) հին ատենը Աղուանից թագաւորութեան մայրաքաղաքն էր, հիմա ընկած է. քովերը շատ աւերակներ կան :

ԱՌԼՅՈՒՍ (20,000) ամուր քաղաք. անուանի է սուլդան Ահմէտի մզկիթը՝ Այասոֆեային ձևովը շինած :

ԽՈՒԹԱՅԻՍ (3900) ատենով Խներէթի թագաւորներուն մայրաքաղաքն էր, հիմա մեծ մասն աւերակ է :

ԿՐԻՄՐԻ կամ ԱՂԱՐՍԱՆԳՐՈՒԳՕԼԻՍ (12,000) Արփաչային վրայ նոր ու ամուր քաղաք է :

ՌԷՏՈՒԹԳԱԼԷ, ՍՈՒՈՒՄԳԱԼԷ, ԱՆԱՓԱ. բանուկ նաւահանգիստներ են Սև ծովուն վրայ :

Աս տեղուանքս և ներսերը Տաղատանին մէջ կը բնակին Ապաղա, Չէրքէզ, Լէզիի, Մնկուէլ և ուրիշ Կովկասային ազգեր :

Տաղատանին ուրիշ երևելի տեղուանքն ասոնք են . Դարբանդ կամ Դուռն Ճորայ, Մոզտոք, Ղզար, Թարբու, և Սլժաւրովոյ :

Հայաստանին ալ մէկ մասը Ռուսաց ձեռքն է :



## Բ. ՏԵՃԿԱՍՏԵՆ ԼՍԻՈՅ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԼՍԻՈՅ Տաճկաստանին մէջ ասե՛նով այլևայլ մեծ ազգեր կը տիրէին . ինչպէս Բարեւրացիք, Ասորեստանցիք, Հայերն ու Հուռոմները : Եօթներորդ դարուն մէջ Արաբացիք զբացան . 1300ին ալ Օսմանցիք սկսան մեծնալ, որ կամաց կամաց Ասիոյ մեծ մասին տիրեցին :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Ասիոյ Տաճկաստանին ահմանը հիւսիսէն Սև ծովն ու Կովկասու երկիրներն է , արևելքէն Ասիոյ Ռուսաստանն ու Պարսկաստանը , հարավէն Արաբիան , արևմուտքէն Միջերկրական ծովը և Արշիպեղազոսը :

Տարածութիւնն է 55,000 մղոն քառակուսի :

Ատոյ Տաճկաստանը եօթը գլխաւոր մաս կը բաժնուի . փոքր Ատիա կամ Անատոլու, Հայաստանին մէկ կտորը \*, Քիւրտիստան, Միջագետք, Ասորիք, Իրազ Արապի, և Կղզիները :

Օղը բարեխառն ու շատ առողջ է, անանկ որ ամէն տեսակ արմախք ու սրուղ կը հասցընէ . բայց հողը քիչ մշակած :

Երկրին բերքն է ամէն տեսակ հանք, արնիւ սրուղներ, մետաքս ու բամբակ :

Բնակիչք 12,500,000, տաճիկ, հուռմ, հայ, հրեայ, ասորի, քաղղէացի :

## ԳԼԽԱՒՈՐ ՎԱՂԱՎՆԵՐԸ

### 1. ՓՈՒՔԻ ԱՍԻԱ

ԿՈՒՏԻՆԱ կամ ՎԵՕՔԱՀԵԱ (50,000) գիրքը խիստ աղուոր է . քովերն ալ հանքային ջրեր ունի :

ԳՆՐԱՀԻՍԵՐ (30,000) ասոր քովերէն շատ ափսոն կ'ելլէ :

ՊՐՈՒՍԱ (100,000) Ողիմպոս լեռան տակը, Օսմանեաց առաջին մայրաքաղաքն էր ինչուան 1360 շատ ջերմուկներ ունի, և մէկ քանի մեծագործ մզկիթներ :

ՆԻԿՈՄԻԴԻԱ կամ ՆՁՆԻՄԻՏ } աստեղով շատ ա.

ՆԻԿԻԱ կամ ՆՁՆԻՔ } նուանի քաղաքներ էին, հիմա ընկած են :

ՉՄԻՒՈՆԻԱ կամ ԻՉՄԻՐ (130,000) Տաճկաստ.

\* Հայաստանին առ իբրեւ որ Օսմանեաց յետէ է, քէ էրէ = 139 :

տանի ամենէն վաճառաչահ քաղաքն է : Եւրոպացիք հոս շատ աղատութիւններ ունին :

ՄԱԳՆԵՍԻԱ կամ ՄԱԳՆԻՍԱ (40,000) ասոր քրքումը շատ ազնիւ է :

ԱՅԵՍՈՒՂՈՒԴ . հին Եփեսոսի աւերակներուն քովը սղտի դեղ մըն է :

ԿԻՒՋԷԼ ՀԻՍՅՐ (30,000) բամբակն անուանի է :

ԻԿՈՆՈՍ կամ ԳՈՆԵԱ (30,000) ասէնով Սէլ ճուգեանց մայրաքաղաքն էր . հիմա ալ վաճառաչահ քաղաք է :

Իկոնիոնի քովերն անուանի են Տարէնտէ , Ագլէնիք , և Դուզլա՝ որ աղի լիճ է :

ԷՒԴՈՎԻՍ կամ ԹՈՒՅԹ (100,000) դեղեցիկ ու վաճառաչահ քաղաք է , սղնձեղէնն անուանի . ունի նաև բամբակէ ու մետաքսէ բանուածք և ալէկ կապերա :

ՍԵՐԱՍՏԻԱ կամ ՍԵՂԱՋ (25,000) հին ու անուանի քաղաք է . քովերը սղնձի հանք կայ : Հոս ծնաւ Միսիթար արբահայրը 1676ին :

ԱՄԵՍԻԱ (25,000) վաճառաչահ քաղաք է . հոս ծնած է Ստրաբոն յոյն աշխարհագիրը :

ԿԵՍԵՐԻԱ կամ Գ.ՅՏՍԷՐԻ (25,000) մեծ ու վաճառաչահ քաղաք է . քովերը հին շէնքերու աւերակներ կան :

ՏԵՅՊԷՋՈՍ (50,000) Սև ծովուն վրայ վաճառաչահ ու անուանի քաղաք է . 200 տարիի չափ Յունաց կայսերաց մէկ ճիւղը հոս կը թագաւորէր Ինչուան Կոստանդնուպոլսին Օսմանցւոց ձեռքն լինալը :

ԿԻՒՄԻՒՇԷՒՅԵՆԷ . կասպրի , սղնձի ու արծաթի հանք ունի :

ԱՆՎԻՐԻՐԵՆ կամ ԷՆՎԻՐԻՐԻՐ (40,000) անուանի է ասոր շալին ու սոփը, և այժերուն բուրդը՝ որ երկայն ու մետաքսի սէս բարակ է. նոյնպէս երկայն մաղերով են աս տեղի կատուներն ու ճագարները :

Փոքր Ասիոյ մէկալ երևելի տեղուանքն են Իւսկիւտար, Սինասլ, Պօլու, Մարսուան, Գասթէմունի, Փունար սաջը՝ որ հին Տրոյիոյ տեղը կը կարծուի, Ատանա, Սաթաշիա, Սելէկիա կամ Սելէֆքէ, Փայաս :

ՏԱՐՍՈՆ կամ ԹԱՐՍՈՒՍ (30,000) Կիլիկիոյ ամենէն մեծ քաղաքն էր, և ատենով արհեստը, ուսմունքը և վաճառականութիւնը շատ ծաղկած :

ՍՒՍ. մեր Ռուբինեանց թաղաւորութեան մայրաքաղաքն էր :

## 2. Ք Ի Ի Ր Տ Ի Ս Ս ԱՆ

Քիւրտիստանին գլխաւոր տեղուանքն են Բաղէշ կամ Պիթլիզ, Ճէզիրէ, Ամասիա, Ճուլամերկ, և Գարաճոլան. ասոնց ամենուն մէջ մէյմէկ քիւրտիշիաններ կը տիրեն որ գրեթէ ինքնագլուխ են :

## 3. Մ Ի Զ Ա Գ Ե Տ Ք Կամ Է Լ Ը Է Զ Ի Ր Է

ԷԳԵՍԻՆ կամ ՈՒՐՀԱ (50,000) մեր Արդար թաղաւորին շինած քաղաքն է, հիմայ ալ ճարտար ու վաճառաշահ :

ՄԷՐՏԻՆ (20,000) լեռան վրայ շինած մեծ ուսմուր քաղաք է :

ՀՈՌՄԿԼԵՅ կամ ԲՈՒՄՂԱԵԼԱ . հոս է սուրբ  
Ներսէս Շնորհալոյն գերեզմանը :

ՄԾԲԻՆ կամ ՆՒՍՒՊԻՆ . մեծ ուխտատեղի է հոս  
սուրբ Յակոբայ գերեզմանը :

ՄՈՒՍՈՒԼ (60,000) Տիգրիս գետին վրայ վա-  
ճառաշահ քաղաք է . անուանի են ասոր բամպրկէ-  
լաթերը :

ՆՈՒՆԻՆ . հին Նինուէ քաղաքին ակըր գեղ մըն է :

ԱԼՔՈՇ . անուանի լեռ մըն է՝ քովերը շատ գե-  
ղերով . մօտերն են Եղիափ ըսուած բարբարոս ու  
անկրօն մարդիկը :

ՄԱՏԷՆ . Օսմանցւոց ակրութեան ամենէն ա-  
ւատ սղինձի հանքն է :

#### 4. ԱՍՈՐԻՔ

ԲԵՐԻՆ կամ ՀԱԼԷՊ (150,000) աս քաղաքը  
Կոստանդնուպօլսէն ու Եգիպտոսէն ետքը ակրու-  
թեան մեծ , բազմամարդ ու հարուստ քաղաքնե-  
րէն մէկն է :

ՀԱՄԱ (50,000) վաճառաշահ ու բարեբեր  
քաղաք է :

ԱՆՏՈՒՔ կամ ԱՆԹԱՔԻՆ (10,000) ատենով Սե-  
լեկիացւոց մայրաքաղաքն էր . հիմա անուանի են  
ջերմուկները :

ՏՐԱՊՕԼԻՍ կամ ԴԱՐԱՊՈՒՍ (16,000) Ասորոց  
երկրին մէջ գեղեցիկ ու բանուկ քաղաք է :

ԱՔԵՆ (20,000) վաճառաշահ ու անուանի քա-  
ղաք է . մեծագործ է հասարակաց բաղնիքը : Ասոր  
մօտ է Կարմեղոս լեռը :

ԴԱՄԱՍԿՈՍ կամ ՇԱՄ (140,000) աշխարհիս

Հին քաղաքներէն մէկն է, շատ բարեբեր, բաւա-  
կան ճարտար ու վաճառաշահ :

ԵՄԵՍՍ կամ ՀԷՄՍ (20,000) ճարտար ու բա-  
րեբեր քաղաք է : Ասոր քովերն են Պալմիրա քա-  
ղաքին աւերակները :

Երևելի են նաև Խաբէնտերուն, Անթապ, Պաալ-  
պէք՝ որ Հին Հեղեուսօղիս քաղաքին տեղն է . Պէ-  
րուծ, Լաւոդիկէ կամ Լաթաքեա, Սուր ու Սէյ-  
սա՝ որ Տիւրոս ու Սիդոն քաղաքներուն տեղը  
սղտի գեղեր են : — Պէրուծին մօտ է Լիբանանու  
լեռը, ուր է մեր ազգէն Անտոնեան կրօնաւորնե-  
րուն վանքը՝ որ Հիմնեց Աբրահամ կաթողիկոսը  
1730ին :

Պաղեստինու կամ Հին Հրէաստանին մէջ ալ  
գլխաւոր տեղուանքն ասոնք են .

ԵՐՈՒՍԵՂԷՄ (30,000) աշխարհիս ամենէն հըռ-  
չակաւոր քաղաքը, և ամենայն բրիտանից մեծ  
ուխաստեղին է . Հիմա բոլորովն ընկած է առջի  
մեծութենէն :

Երուսաղեմի քովերն են բոլոր Քրիստոսի անօ-  
րինական տեղերը, որ Հին ատենը մէյմէկ քաղաք  
կամ գեղ էին, բայց Հիմա կամ գեղ դարձեր են,  
կամ անուննին միայն մնացեր է . ասանկ են Բեթ-  
ղէհէմ, Նապլուսա կամ Սիւքէմ, Երիբոլ, Յոպպէ  
կամ Եաֆա, Գալիլ, Գաղա, Կեսարիա Պաղես-  
տինոյ, Սերաստիա՝ Հին Սամարիային տեղը, Սա-  
ֆէա, Նազարէթ, Կանա, Տիբերիա, Կափառնաոււմ,  
Բեթանիա, Թաբոր լեռը, Չիթենեայ լեռը, ևն :

5. Ի Ր Ա Գ Ա Ր Ա Պ Ի

ՊԱՂՏԵՏ (100,000) Տիգրիս գետին վրայ ամուր  
ու վաճառաչահ քաղաք է: Ասոր քովերն են հին  
ատենի հռչակաւոր քաղաքներուն աւերակները,  
ինչպէս Բաբելոն, Սելևկիա, Տիգրոն, և հին Պաղ-  
տատ:

ՊԵՍՐԵ (60,000) ամուր ու վաճառաչահ քա-  
ղաք է: Քովերն անուանի են նաև Հիլէ, և Մէշհէա  
հիւսէյին:

6. Կ Ղ Ձ Ի Ն Ե Ր Ը

ԿԻՊՐՈՍ կամ ԳԸՊՐԸՁ. Միջերկրական ծովին  
մէջ կղզիներէն մէկն է. անուանի է գինին, բամ-  
պակը, և ուրիշ բերքերը: Մէջի գլխաւոր քաղաքն  
է Նիկոսիա կամ Լէֆթուէա (16,000):

ՀԻՈՂՈՍ կամ ՌՈՏՈՍ. հին ատենը շատ անուա-  
նի էր, բայց հիմա աւերակ ու անապատ է:

ՄԵՐՄԵՐԵ. ասոր մարմարինն առատ է:

ԼԵՍԲՈՍ կամ ՄԻՏԻԼԼԻ. գլխաւոր քաղաքն է  
Մեափլինէ:

ՔԻՈՍ կամ ՍԵԳԸՁ. ինչուան 1822 աղէկ ծաղ-  
կած, բաղմամարդ ու բարեբեր էր. անկէջ ետքը  
անապատ դարձած է:

ՍԵՄՈՍ կամ ՍՈՍԵՄ ԱՏԵՍԸ. շատ բարեբեր է:



## Գ. ՀԱՅԱՍՏԱՆ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՍՆՆԵՂԵՂԵՂԵՆ ԵՄՔԸ աշխարհիս ամենէն ծաղկած մասը Հայաստանն էր՝ Նոյի տապանը հոն Մասիս լեռան վրայ իջնալուսն համար։ Հայաստանի առաջին տիրոջը Հայկ նահապեանն էր, որ Նոյի թոռան թոռն էր. իր անունովը մեր ազգն ալ Հայ ըսուեցաւ, և իր ցեղին թագաւորութիւնը որ Հայկազանց իշխանութիւն կ'ըսուէր՝ ըջէց 1779 տարի։ Քրիստոսէ 149 տարի առաջ սկսաւ Աբշահանէաց ցեղին փառաւոր թագաւորութիւնը, որ ըջէց 580 տարի. 885ին ելաւ Ռաֆրափանէաց թագաւորութիւնը, որ 1079ին վերջուեցաւ. անկէց ետքը Հայաստանի մեծ մասը օտար տէրութեանց ձեռքն ընկաւ. միայն Վիլիկիոյ կողմը Ռաֆիանէաց թագաւորութիւնը մնացեր էր, ըայց 1375ին ան ալ վերջուեցաւ, ազգերնիս ալ օտար ազգաց բռնութիւններէն ցիր ու ցան եղաւ։ Իսկ հիմա Հայաստանի մէկ մասը Օսմանցւոց ձեռքն է, մէկը Ռուսաց, մէկալն ալ Պարսից։

Մեր ազգը իր ցրուած վիճակին մէջ ալ միշտ անուանի եղած է արթուն ու հաւատարիմ վաճառականութեանը համար. անանկ որ Գաղղիացիք, Իսաւրացիք ու Ռուսները իրենց երկրին վաճառականութիւնը ծաղկեցրնելու համար՝ ատե-

նով մեծամեծ ազատութիւններ տուեր են Հայոց ու իրենց մայրաքաղաքները կանչեր են :

Ուսումնասիրութեան կողմանէ ինչպէս հին ատենը, ասանկ ալ հիմա, արևելեան ազգերուն գլխաւորներէն մէկն է մեր ազգը : Ասոր մեծ նշանն ալ բարեկարգ դպրոցներու և սպարաններու շատ նաչն է :

Հիմակուան դպրոցներուն մեծերն են՝ Տաճկաստանի մէջ Պօլսոյ, Իզմիրի, Իւսկիւտարի, Տրապիզոնի դպրոցները. Իտալիոյ մէջ՝ Ռաֆայէլեան վարժարանը . Գաղղիոյ մէջ, այս ինքն Փարիզ՝ Մուրատեան վարժարանը. Ռուսաստանի մէջ՝ Լազարեանց Ճեմարանը . Հնդկաստանի մէջ՝ Կալկաթայի դըպրոցը, և այլն :

Բանուկ սպարաններուն մէջ անուանի են Վէնետոյ Միսիթարեանց Սուրբ Ղազարու սպարանը, Վէննայի Միսիթարեանց սպարանը . Տաճկաստանի մէջ Իզմիրի՝ Օրթոգէղի և Իւսկիւտարի սպարանները . Ռուսաստանի մէջ Փեթրպոլսկի, Մոսքուայի, Աթաերխանու, Էջմիածնայ, Թիֆլիզու և Շուշիի սպարանները . Հնդկաստանի մէջ ալ Կալկաթայի սպարանը :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՒԹ

Հայաստանի սահմանը հիւսիսէն Սև ծովն ու Վրաստանն է . արևելքէն Կասպից ծովն ու Պարսկաստան . հարաւէն Միջագետք . արևմուտքէն փոքր Ասիա ու Միջերկրական ծովը :

Տարածութիւնն է 150,000 մղոն քառակուսի : Երկիրն ընդհանրապէս լեւնոտ ու բարեբեր է :

Գլխաւոր գեաւերը ասոնք են .

Եփրատ ու Տիգրիս , որ Պարսկոց ծոցը կը թափին .  
Երասխ ու Կուր՝ Կասպկոց ծովը .

Ճորոխ , Ալիս , Եշիլ ըրմադ՝ Սև ծովը :

Գլխաւոր լեռներն են Մասիս կամ Արարատ ,  
Պինկէօլ , Տորոս , Կորդուաց լեռներն ու Գրդուռ  
լեռները :

Գլխաւոր լճերն են Վանայ ծովը , Սեանայ ծո-  
վը , Որմեայ ծովակը :

Բերքն է ամէն տեսակ հանք՝ որ երեսէ ձգած  
են , և տեսակ տեսակ աղնիւ ստուղներ ու արմաթք-  
անուանի է ձին ու գաղպէն՝ որ մանանայի սէս  
ծառերուն վրայ կ'իջնայ :

Օգը բարեխառն ու առողջարար է :

Բնակիչը գրեթէ 5,000,000 , և ըստ ոմանց՝ շատ  
աւելի . որոնց մէկ մասն ալ քիւրա , թիւրքմէն ու  
տաճիկ են :

Հիմա Հայաստանի մէջ միայն ապրուստի հար-  
կաւոր արհեստները մնացած են , բայց երկրագոր-  
ծութիւնը շատ ծաղկած է :

Հին աստուծոց 15 նահանգ կը բաժնուէր . իսկ հիմա  
իրեք տիրող տէրութիւնները իրենց ուղածին սէս  
այլևայլ գաւառներ բաժնէր են :

## ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

### 1. ՕՍՄԱՆՑՒՈՅ ՄԱՍԻՆ ՄԷՋ

ԿԱՐԻՆ կամ ԷՐԶՒՐԻՐԻՄ (100,000) Ասիոց վա-  
ճառաշահ քաղաքներէն մէկն է . շատ հեռութիւն-  
ներ ալ ունի : Ասոր մօտ է Բիւրակն կամ Պինկէօլ

լէոք, ուսկից կը բխին Եփրատ ու Տիգրիս գետերը . և անանկ ծաղկաւէտ ու բարեբեր է, որ օտարազգի ճամբորդներ ալ կը վկայեն թէ Ադամայ դրախտին տեղը հոս սխաի ըլլայ :

**ՀԱՍՆ ՂԱԼԱ.** ամուր քաղաք, ասոր քոյն է Գրիգոր Մագիստրոսին շինած վանքը, ուր իրեն գերեզմանն ալ կայ : Մօտերն է Չօղան + Էօ՛րի-Պարսուած կամուրջը՝ Երասխին վրայ եօթը կամարով, և հին Վաղարշաւան քաղաքին աւերակները :

**ԵՐՁՆԿԱ.** հոս չարչարուեցաւ մեր սուրբ Գրիգոր Լուսաւորիչը :

**ԽԱՐԲԵՐԴ.** ամուր քաղաք . ասկէց օրուան մը ճամբով հեռու երկաթի ու արծաթի հանք կայ :

**ԱՎԼ** գեղին մէջ եկեղեցի մը կայ մէկ քարէ փորած :

**ՍԱՍՈՒՆ** գաւառը լեռներու մէջ ինքնազուխ երկիր մըն է :

**ԲԱՂԷՇ** կամ ՊԻԹԼԻՉ (30,000) ոսկիի ու արծաթի հանք ունի : Քոյն է Գրգուռ, լէոք, որ Նեֆրոլիայ լէռ ալ կ'ըսուի՝ Ներբովթին հոս թաղուած ըլլալուն համար :

**ՏԻՐԵԱՆԱԿԵՐՏ** կամ ՏԻՆՊԵՐԻ (60,000) լայն ու ամուր սարխապ ունի 72 աշտարակով, և շատ հնուածիւններ :

**ԱՐՃԷՇ** (7000) ասոր քոյն է Մեծօփայ վանքը :

**ՄՈՒՇ** (40,000) ամուր բերդով մեծ քաղաք է . ասոր քովի վանքերէն մէկուն մէջ Թարգմանչաց շատին գերեզմանները կան : Մօտ է նաև սուրբ Կարապետի վանքը՝ որ մեր ազգին մեծ ուխտառու զին է . նաև Եփրատ գետին վեց գրկաչափ լայն սահանքը :

Մշու քովերն է Ծակքար, որ քարաժայռը ծա-  
կած՝ կէս ժամուան ճամբայ է:

ՎԱՆ կամ ՇԱՄԻՐԱՄԱԿԵՐՏ (60,000) ասոր քովն  
է Շամիրամին շինած բերդը՝ որուն վրայ խխտ հին  
գրուածքներ կան: Վանայ ծովուն մէջ չորս կղզի  
կայ, Աղթամար, Առտէր, Կտուց, Լխմ. Աղթա-  
մարայ մէջն է Գազիկ թագաւորին շինած փա-  
ռաւոր եկեղեցին:

ՈՍՏԱՆ գեղին մէջ է սրբոյն Եղիշէի վանքն ու  
գերեզմանը:

ՆԱԽՂՈՒԱՆ (30,000) պարսպապատ քաղաք է,  
մեծ մասն աւերակ:

ՄԱՏԷՆ. պղնձի հանք ունի:

ՊԱՅՆՁՈՒՏ (15,000) ամուր ու վաճառաշահ  
քաղաք է:

ԱՆԻ, որ Բագրատունեաց մայրաքաղաքը, և  
աշխարհիս բազմամարդ քաղաքներէն մէկն էր,  
հիմա բոլորովին աւերակ է, բայց ուրիշ երևելի  
շինուածքներու մնացորդներէն զատ՝ թագաւորաց  
պալատն ալ գեռ կեցած է քաղաքի մը պէս ընդ-  
արձակ ու սքանչելի քաշուածքներով ու փո-  
րուածքներով զարդարած:

## 2. ՌՈՒՍԱՅ ՄԱՍԻՆ Մ Է Զ

ԵՐԵՒԱՆ (12,000) ամուր բերդ ունի, և շատ  
հնու թիւններ: Երևանին մօտ է Էջմիածնայ վանքը,  
ուր կը նստի հայոց կաթուղիկոսը, ու հռիփսի-  
մեանց և Գայիանեանց եկեղեցիները:

ՕՇԱԿԱՆ գեղին մէջ է սուրբ Մեսրոպայ գե-  
րեզմանը:

**ԽՈՇԱՎԱՆՔ.** մեծագործ վանք մըն է, ուր կան մեր Թագաւորներուն գերեզմանները:

**ՏՐԱՏԻՆ.** սղախ քաղաք մըն է, որուն քովն է Ծաղկէոյ լեռը՝ ուր նահապետեացան Ոսկեանք. և ասկէ կրային ջուր մը կը բխի որ ետքը կը քարանայ:

**ԹՈՓՐԱԳՅԱԼԷ,** հին վաղարշապատին աւերակներուն քովը՝ ամուր բերդով քաղաք մըն է:

### 3. ՊԱՐՍՒՅ ՄԱՍԻՆ ՄԷՋ

**ԴԱՎՐԷՅ** կամ ԹԵՊՐԻՋ (100,000) Ասիոյ ամեղէն ծաղկած ու վաճառաշահ քաղաքներէն մէկն է. անուանի է մետաքսը և կտաւը:

**ԱՐՏԱՒԻ.** հոս է Շահսէֆի ու Շահաբաս Պարսից Թագաւորներուն գերեզմանները:

**ԽՈՅ** (20,000) ամուր ու վաճառաշահ քաղաք է:

**ՍԱՄԱՍ** (20,000) Որմկայ լճին քովը մեծ քաղաք է. մօտերը հանքային ջրեր կան:

**ՄԱՐԱՂԱ** (15,000) ասոր քովերը գեանախոր տեղուանք կան Ժայռի մէջ փորած:



## Գ. ԸՐԱԲԻՒԸ

### ՊԸՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԸՐԱԲԻՈՅ մէջ հին ատենը այլևայլ բնակիչներ կային վրանաբնակ . եօթներորդ դարուն մէջ Մէհէմէտ ասոնց մեծ մասը միացուց, որ զօրաւոր տէրութիւն մը ձևացան ու քիչ ատենի մէջ տարածուեցան իրենց երկրէն ինչուան Սպանիոյ ծայրը . բայց Օսմանցիք բոլորովին վերուցին ասոնց տէրութիւնը : Հիմա Արաբիոյ բնակիչներէն ոմանք Ֆէլաճ կ'ըսուին, որ երկրագործութիւն կ'ընեն . ոմանք ալ Պէթէլէ, որ վրանաբնակ ու հովիւ են :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Արաբիոյ սահմանը հիւսիսէն Ասիոյ Տաճկաստանն է . արևելքէն Պարսից ծոցը . հարաւէն Հնդկաց ովկիանոսը . արևմուտքէն Կարմիր ծովը :

Տարածութիւնն է 800,000 միլոն քառակուսի :

Երկիրն ընդհանրապէս դաշտային ու աւազուտ է : Արաբիոյ մէջ են երկու անուանի լեռները, Սինա ու Քորեր :

Օդը չոր ու խիստ տաք է, մանաւանդ հիւսիսային կողմը, ուր շատ խորշակ ալ կ'ըլլայ, ու անձրև խիստ քիչ կուգայ :

Հողն անբեր է . բայց Եմէն դաւառը սաստիկ պտղաբեր ըլլալուն՝ Երջմէի Արաբիա կ'ըսուի :

Գլխաւոր բերքն է խնկեղէն, ձէթ, շաքարի եղէգ, բամբակ, աղնիւ խաճուէ, արմաւ, թուզ, բալասան : Կենդանիներէն ալ շատ անուանի է ձին . ունի նաև ուղտ, ջայլամ, կապիկ . Կարմիր ծովուն մէջէն աղէկ բուստ (Ռէրճան) կ'երլէ, Պարսից ծոցէն ալ մարդրիտ :

Բնակիչն է 12,000,000 :

Կրօնքը մահմէտականն :

Երկրին մեծ մասը Օսմանեաց ձեռքն է . մեկալ տեղուանքը այլևայլ շէխերու և իմամներու ձեռքով կը կառավարուին :

### ԳԼԽԱՆՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՄԵՔՔԵ (18,000) Մէհմէտին ծնած քաղաքն է . Տաճկաց հաճիները հոս կուգան Քեապէն տեսնելու :

ՄԵՏԻՆԵ (6000) հոս մեռած է Մէհմէմէտ, որ Մէքքէէն հոս քաջուեր էր 622ին, անոր համար հիճրէն ըսուած թուականը ան տարիէն կը սկսի :

ՄԵՇԿԵԹ (60,000) Էօմէնի ծոցին վրայ Արաբիոյ ամենէն վաճառաշահ քաղաքն է . ասոր քովերը կապարի հանք կայ :

ՄՈՔԵ (5000) Կարմիր ծովուն վրայ բանուկ նաւահանգիստ է, ու Եմէնի խաճուէն ասոր անունովը Մոքայի խաճուէ ալ կ'ըսուի :

Կարմիր ծովուն քովերն է Սինա լեռը, որուն վրայ հոռմի վանք մը կայ՝ սուրբ Կատարինէ ըսուած՝ բերդի նման :

Արաբիոյ ներսի կողմը 60,000 հրեայ կայ վրանաբնակ՝ Ուրդի + Ուե+Բայ ըսուած :

## Ե. ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ատենով աշխարհիս ամենէն մեծ թագաւորութիւններէն մէկն էր . եօթներորդ դարուն մէջ Արաբացիք առին , ու իրենց հաւատքը Պարսից սորվեցուցին : Քիչ ատենէն Պարսիկները զօրանալով իրենց երկրին մէկ մասը նորէն ձեռք ձգեցին . իսկ 1747ին բոլոր երկիրը երկու տէրութիւն բաժնուեցաւ . այս ինքն Իրան կամ բուն Պարսկաստան , և Աֆղանիստան , որուն մէջն է Խորասան ու Պէշուճիստան :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՒՏԵԼԻՔ

Պարսկաստանի սահմանը հիւսիսէն Ասիոյ Ռուսաստանը , Կասպից ծովն ու Թուրքաստանն է . արևելքէն Աֆղանիստան , Խորասան ու Պէշուճիստան . հարաւէն Իւմէն ու Պարսից ծոցը , արևմուտքէն Ասիոյ Տաճկաստան :

Տարածութիւնն է 340,000 մղոն քառակուսի :

Երկիրը լեռնոտ ու բարեբեր է :

Օգը հիւսիսային կողմը բարեխառն է , հարաւային կողմը տաք :

Գլխաւոր բերքերն են երկաթ , սղինձ , կապար , մարմարիտն , նաւթ , ցորեն , բրինձ , գինի , ազնիւ

սրտուղներ, կանեփ, մետաքս, բամպակ, բուրդ, ծխախոտ, և մարգարիտ :

Բնակիչն է 9,000,000, մեծ մասը սլարսիկ. մնացածը տաճիկ, քիւրա, թիւրքմէն, հրեայ, հայ :

Վրօնքն է մահմետականութիւն՝ Ալիին աղանդը :

Տէրութեան կառավարութիւնն է աղսա միապետական :

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԳԻԷՐԱՆ (50,000) 1794էն 'ի վեր Պարսից շահը հոս կը նստի. ամառուան օդը լինասակար է :

ԱՍՊԵՆԱՆ (200,000) Պարսից առաջին մայրաքաղաքը, արևելքի մեծ ու աղուոր քաղաքներէն մէկն է : Քոյն է 'նոր ջուղան՝ որ հին ջուղայէն քշուած հայերուն բնակած տեղն է :

ՇԻՐԱՉ (52,000) ասոր գինին ու վարդի եղը շատ աղնիւ է : Աս քաղաքիս մօտ են Ստահր կամ Պերսեպոլիս քաղաքին աւերակները, որ հին ասեն Պարսկաստանի մայրաքաղաքն էր :

ՀԱՄՏԱՆ (45,000) հին Եկրատան քաղաքին տեղը շինած է. մորթի գործարաններ ունի :

ԳԵՉՊԱՆ (40,000) Պարսկաստանի մեծ քաղաքներուն մէկն է, արհեստները շատ ծաղկած. աղնիւ գինի, պիտակ (Քլարք), մետաքս ու կասկերտ ունի :

ԵՉՏ (35,000) վաճառաշահ քաղաք է. հոս կրակասպաշտ սլարսիկներ կան :

ՊԵՆՏԵՐԱՊԱՍ (20,000) Պարսկային ծոցին վրայ բանուկ նաւահանգիստ է :

## Զ. ԸՖՂԱՆԻՍՏԷՆ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԸՖՂԱՆՆԵՐԸ հին Աղուանք ազգն են, որ Թաթարները Հայաստանէն հոս քշեր ու տաճկացուցեր են: Ասոնք ատենով Պարսից տակն էին, բայց 1747ին ինքնազուխ ակրութիւն ունեցան:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Աֆղանխտանի սահմանը հիւսիսէն Պարսկաստանն է. արևելքէն Հնդկաստան. հարաւէն Հընդկաց ծովը. արևմուտքէն Պարսկային ծոցը:

Տարածութիւնն է 200,000 մղոն քառակուսի:

Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է, բայց արևելեան կողմը աւազուտ:

Գլխաւոր լեռներն են Հիմալայա ըսուած բարձր գոտիները:

Հողը շատ բարեբեր է, և օդն առողջ:

Բերքն է ամէն տեսակ ստուղ ու կենդանի. ունի նաև առիւծ, վագր, ընձառիւծ, բորենի, դայլ, և արջ:

Բնակիչն է 10,000,000, աֆղան, պարսիկ, հնդիկ:

Կրօնքը մահմէտական:

## ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Ք.Ե.Պ.ՈՒԼ Կամ Ք.Յ.Պ.ՈՒԼ (80,000) գլխաւոր վաճառքն է աղէկ ձի :

Պ.Ն.Տ.Յ.Ը.Յ.Ր (100,000) ամուր բերդով՝ բոլոր էրկրին հին մայրաքաղաքն է :

Հ.Ե.Ր.Յ.Թ (100,000) Խորասանի ամենէն մեծ քաղաքն է :

Ք.Ե.Լ.Յ.Թ (20,000) Պէլուճխասանի գլխաւոր քաղաքն է :

## Լ. Թ Ո Ւ Ր Ք Ը Ս Տ Ը Ն

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔԱՍՏԱՆԻՆ մեջ ատենով այլևայլ ազատ ցեղեր կը տիրէին . ասոնցմէ ելան ատեն ատեն Օսմանցիք , հոնք , Թաթարները , և Ղէնկիթխուրը՝ որ մէկգիւնէն ինչուան Չինու սարխապը , մէկալ գիւնէն ինչուան Միջերկրական ծովը տիրեց : Հիմակուան բնակիչներն են Իւզպէք , Պուխարացի , Թիւրքմէն , և Խըրղըզ :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Թուրքաստանի սահմանը հիւսիսէն Ասիոյ Ռուսաստանն է . արևելքէն Չինու երկիրը . հարաւէն Պարսկաստանը . արևմուտքէն Կասպից ծովը :

Տարածութիւնն է 500,000 մղոն քառակուսի :  
Թուրքստանն չորս գլխաւոր մաս կը բաժնուի .  
Խըրղըզ , Խիվա , Պուխարա , Խոքանա :

Երկիրը շատուտ ու խիստ բարեբեր է , բայց քիչ  
մշակած . աղի լճեր ալ շատ ունի :

Օդը բարեխառն ու առողջարար է :

Գլխաւոր բերքն է ոսկի , արծաթ , յակինթ ,  
մետաքս ու բամբակն ալ աղնիւ է :

Բնակիչն է 3,000,000 :

Կրօնքը մահմետականն է :

Կառավարութիւնը չորս գլխաւոր ազատ խա-  
ներու ձեռքն է :

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՅՆԵՐԸ

ՊՈՒՌԵՐԵ (100,000) հին ու վաճառաշահ ,  
թուրքստանին ամենէն ծաղկած քաղաքն է :

ՍՄԵՐՂԱՆՏ (10,000) վաճառաշահ քաղաք է .  
Լէնկթխնուրը իր աթոռը հոս դրեր էր , և ինչուան  
հիմա մեջը իր գերեզմանը կայ յասպիս քարէ :

ԽՒՎԱ (20,000) ասիկայ գերիներու վաճառք  
ունի :

ԽՈՒՔԱՆՏ (100,000) վաճառաշահ ու արհեստ  
ները ծաղկած քաղաք է :

ԲԱՀԼ կամ ՊԱԼԻ . հին ատենը Բակարայ թա-  
գաւորութեան մայրաքաղաքն էր , ուստի Ասիայ  
ամենէն հին քաղաքներէն մէկն է :



## ԸՆԴՀԱՆՈՒՄ ԵՐԱՅԻՆ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՍՏԱՆԻ մէջ հին ատենը այլևայլ ինքնագլուխ տէրութիւններ կային. 1100ին ատենները Աֆղանները տիրեցին հիւսիսային կողմերուն, ետքը Լէնկթիմուրը. ասոր թուներէն մէկը 1526ին Մողոլի տէրութիւնը հաստատեց հոն. բայց 1739ին Պարսից Նասարը շահը գնաց մէկ մասին տիրեց: Անկէց ետքը երբոր Մողոլներն ու Մահաթիները իրարու գէմ կուռըտելու հետ էին, Եւրոպացիք սկսան տեղ տեղ ոտքերնին հաստատել: Իսկ 1700ին վերջերը անգղիացի վաճառականները սկսան Հնդկաստանին կալիաթա ու Մաարաս քաղաքներուն տիրել. 1803ին Մողոլի տէրութիւնը ջնջեցին, Մահաթիները նուաճեցին. 1812ին ալ գրեթէ բոլոր արևելեան Հնդկաստանի տիրեցին: Անոր համար աս ընկերութիւնը որ Հնդկաստանի ընկերութիւն կ'ըսուի, հիմա ինքնագլուխ հասարակապետութեան սէս կը տիրէ հոն անբաւ հարստութեամբ. միայն հարկատու է Անգղիոյ թագաւորին, ու երթեմն երթեմն համար կուտայ երկրին կառավարութեանը վրայ:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Հնդկաստանի սահմանը հիւսիսէն Չինու երկիրն է . արևելքէն Չինու ծովը . հարաւէն Հնդկաց ովկիանոսը . արևմուտքէն Աֆղանիստանը :

Տարածութիւնն է գրեթէ 1,000,000 մղոն քառակուսի :

Հնդկաստան երկու գլխաւոր մաս կը բաժնուի . մէյնը Գանգէսէն ասդիս եղած երկիրները , մէյնըն ալ Գանգէսէն անդին եղածը :

Գլխաւոր լեռներն են Հիմալայա ըսուած բարձր գօտիները , որոնց վրայ Տավալակիրի լեռը աշխարհիս ամենէն բարձր լեռն է . Կաթ լեռները՝ որ ինչուան Քամորին կ'երթան , և Մոկ լեռները որ ինչուան Մալաբարային ծայրը կը հասնին :

Գլխաւոր գետերն են Ինդոս , Գանգէս , և Պրահմաութրա :

Հողն ընդհանրապէս խիստ բարեբեր է :

Օդը չոր ու տաք . ձիւն գրեթէ ոչ երբէք կուգայ , անձրևներն ալ կանոնաւոր ժամանակ ունին , որ ամիսներով կուգան :

Գլխաւոր բերքերն են առատ ոսկի ու ադամանդ՝ Կոլքոնա գաւառին ու Պիրմանի տերութեան մէջ . Յէյլան կղզիին քովերէն ազնիւ մարգարիտ կ'ելլէ . Մալալովեան կղզիներուն քովերէն ալ տեսակ մը սասրէ կ'ելլէ որ Հնդկաստանցիք ստակի տեղ կը բանեցընեն : Բոյսերուն մէջ գլխաւորներն են բըրինձ , պանան , չաբար , խնկեղէն , ափիոն , ազնիւ բամպակ ու մետաքս , արմաւ , պամպու ըսուած եղէգը , թուղ , և ազնիւ փայտ : Կենդանիներէն

ալ շատ կը գտուին ուղտ, վայրի այծ, փիղ, ուրն-  
դեղջիւր, վագր, առիւծ, պօս օձ, կապիկ, սիրա-  
մարդ, և դրախտահաւ :

Բնակիչն է 150,000,000 մեծ մասը Հնդիկ, մնա-  
ցածը սարսիկ, հրեայ, հայ ու եւրոպացի ազգեր :

Լեզունին Հնդկերէն, որուն գրաբանը «անգրի-  
կըսուի, իսկ աշխարհաբանը շատ տեսակ կը բաժ-  
նուի :

Արհեստներն ու ձեռագործները շատ ծաղկած  
են :

Կրօնքը կուսակաշառութիւն է՝ Պրահմայի ազան-  
դը . հոգեփոխութեան կը հաւտան, անոր համար  
կենդանեաց սպախու կ'ընեն, ու անոնց միւսը չեն  
ուտեր . մասնաւոր կերպով կով կը սպաշտեն իրենց  
†•†•† ըսուած կուստուններուն մէջ :

## ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

### Ա. ԳԱՆԳԻՍԷՆ ԱՍԴԻՍ

Գանդէսէն ասդիս եղած երկիրները չորս կտոր  
կը բաժնուին . Անգղիացւոց Հնդկաստան, Անգ-  
ղիացւոց հարկատու երկիրներ, Ազատ Հնդկաց եր-  
կիրներ, ու Եւրոպայի այլևայլ ազգաց տեղուանք :

### 1. ԱՆԳՂԻԱՅԻՈՅ ՀՆԳԱՍՏԱՆ

ԿԱԼԿԱԹԱ (650,000) Հնդկաստանի ամենէն  
ծաղկած քաղաքն է՝ թէ գիտութեան և թէ ար-  
հեստից կողմանէ : Անգղիական ընկերութեան գը-

ըստի հոս կը նստի . մեր ազգէն ալ չափաւոր բազմութիւն կայ :

ՏԵԼԷԻ (200,000) Մողղի Թագաւորութեան մայրաքաղաքն էր :

ԱԿԲ (100,000) ատենով զարգարուն քաղաք էր , բայց հիմա երեսէ ձգած է :

ՊԷՆԵՐԷՍ (600,000) Հնդկաստանցւոց ուսումնարանն ու մեծ ուխտատեղին է :

ՏԵՔԲԵ (200,000) Գանգէսին վայ ծաղկած քաղաք է :

ԲԵԹԹԵ (40,000) աս քաղաքիս մօտ է Ճակընաթ կուռքին մեծ կուստունը :

ԲԵԼԻՔՈՒԹ (24,000) Եւրոպացիք Հնդկաստանին մէջ առաջ աս քաղաքս ունեցան :

ՄԵՏՐԵՍ (460,000) Պէնկալայի ծոցին վայ շատ վաճառաշահ քաղաք է . բամբակի ու ապակիի գործարաններ ունի , մեր ազգէն ալ երկելի վաճառականներ ու Ժողովուրդ կայ հոս , ինչպէս նաև Հնդկաստանի ուրիշ քաղաքները :

ՄԵՐԵՆԿՅԹԵՅԵ (10,000) ատենով Հնդկաստանցւոց մեծ ցեղի մը մայրաքաղաքն էր :

ՊՈՄՊԵՍ (200,000) սզտի կղզիի մը մէջ Անգղիացւոց վաճառականութեանը գլխաւոր քաղաքն է . հոս կրակապաշտ Պարսիկներ կան որ մեծ կրակատուն ալ ունին :

ԱՃՄԻՐ . ամուր քաղաք է , բնակիչները երկրագործութենէն զատ ուրիշ արհեստ չեն գիտեր :

ԿԵՄՊԵՅ (300,000) վաճառաշահ քաղաք է , բայց նաւահանգիստը շատ վտանգաւոր :

ԱՆՄԵՏԵՊԵՍ (100,000) ատենով ծաղկած էր , հիմա կէսը աւերակ է :

**ՍՈՒՐԵԹ** (160,000) ամուր քաղաք է, և բանուկ նաւահանգիստ ունի :

**ՓՈՒՆԱ** (150,000) Հնդկաստանցւոց թաղաւորութեան ետքի մայրաքաղաքն էր :

**ՍԵՅԼԵՆ** կղզին ալ Անդղիացւոց թաղաւորինն է . գլխաւոր քաղաքն է Քոլումպոյ :

## 2. ԱՆԳՂԻԱՅԻՈՅ ՀԱՐԿԱՏՈՒ

### ԵՐԿԻՐՆԵՐ

**ԼՈՒՔՆՈՎ** (300,000) Մողղլի տէրութեան վերցուելէն ետքը Հնդկաստանին ծաղկած քաղաքն աս է :

**ՀԱՅՏԻՐԱՊԱՏ** (200,000) մեծ ու անուանի քաղաք է :

**ԱՐԻԷՆԿԱՊԱՏ** (60,000) մեծ քաղաք է, բայց կէս աւերակ :

**ՆԱՂՓՈՒՐ** (115,000) } ասոնք ալ մէյմէկ թաղա-  
**ՊԱՐՈՏԱ** (100,000) } ւորութիւններու մայրաքաղաքներ են :

## 3. ԱԶԱՏ ՀՆԴԿԱՅ ԵՐԿԻՐՆԵՐ

**ԼՆՀՈՒ** (70,000) ատենով շատ անուանի էր . ասոր յջնարներուն բուրդը բարակ ու ազնիւ է :

**ԱՄՐԷՑԻՐ** (100,000) ամուր ու վաճառաշահ քաղաք :

**ՄՈՒԼԹԱՆ** (60,000) արհեստից կողմանէ ծաղկած . անուանի է մահմէտական ուսումնարանը :

**ՔԱԹՄԱՆՏՈՒ** (20,000) Նէփալի թաղաւորու-

Թեան մայրաքաղաքն է. շատ կուստոււններ կան  
մէջը :

ՔԱՇՄԻՐ (150,000) խիստ անուանի է աղնիւ  
շալերուն համար :

ՄԱՆՏԻՊԵԱՆ կղզիները, որ հազարաւոր մանր  
ժայռերէ ձևացած են, և ստոնց մէջ 40 կամ 50  
մը կայ որ աւելի մեծ են, բարերէր ու բազմամարդ,  
և մէկ թաղաւոր մը ունին որ Մալէ կղզին կը նստի :

#### 4. ԵՒՐՈՊԱՅԻ ԱՅԼԵՒԱՅԼ ԱԶԳԵՐՈՒՆ

##### ՏԵՂՈՒԱՆՔԸ

ՓՈՆԹԻՆԻՐԻ (25,000) } Գաղղիացւոց ձեռքը  
ՉԱՆՏԻՐԱՅՈՐ (30,000) } երկուքն ալ վաճա  
ռաչահ քաղաքներ են :

ԹՐԱՆՔԷՊԵՐ (15,000) Տանխմարբացւոց ձեռ  
քը, բամպակի գործարաններ ունի :

ԿՕՍ (30,000) Փորթուղէզներուն ձեռքը՝ ամուր  
քաղաք է, և ապահով ու բանուկ նաւահանգիստ  
ունի :

##### Բ. ԳԱՆԳԻՍԷՆ ԱՆԴԻՆ

Գանգէսէն անդին եղած երկիրը վեց մաս կը  
բաժնուի. Պիրման, Սիամ, Մալաքքա, Աննամ,  
Անգղիացւոց երկիրները, և Կղզիները : Աս թա  
ղաւորութիւնները գրեթէ ամենն ալ ազատ միա  
պետական են ու կուստաշտ :

### 1. Պ Ի Ր Մ Ա Ն

Պիրմանի տէրութիւնը առաջուց փէկուի թա-  
գաւորութեան տակն էր, բայց հիմա ազատ է :  
Ասոր բնակիչները շատ պատիւ կ'ընեն ճերմակ փղի  
մը, որ թագաւորին պալատին քովը մեծ պալատ  
մը ունի . կ'ըսեն թէ իրենց թագաւորին հողին ան  
փղին փորը պիտի մանէ :

ԱՌՆ (40,000) մայրաքաղաքն է :

ԱՄԵՐԵՓՈՒՐԱ } Աւային այնչափ մօտ են աս  
ՍԵՅԿԱՆ } երկու մեծամեծ քաղաքներն որ  
անոր մասը կրնան սեպուիլ :

Փէ՛ԿՈՒ . ատենով զատ թագաւորութիւն էր .  
անուանի է ասոր բրգաձև կռատունը 300 ոսնա-  
չափ բարձր :

### 2. Ս Ի Շ Մ

Սիամի թագաւորութիւնը ատենով պղտիկ էր,  
բայց հիմա խիստ ընդարձակ է :

ՊԱՆՔՈՒՐ (160,000) Սիամի մայրաքաղաքն է . աս  
քաղաքի բնակիչներուն մեծ մասը Չինացի են .  
բոլոր շէնքերուն մէջ անուանի է մեծ կռատունը,  
ուր 1500 կուսք կայ :

### 3. Մ Ա Լ Ա Ք Ք Ա

Աս թերակղզիին մեծ մասը հիմա Սիամի տէրու-  
թեան ձեռքն անցած է . մնացած մասին բնակիչ

ները վայրենի ու թափառական մարդիկ են, որ այլևայլ խնամներ ունին իրարմէ ազատ:

#### 4. ԱՆՆԱՄ

Աննամին բնակիչները Չինաց լեզուն և աղանդն ունին, և շատը գեաերու վրայ կը բնակին նաւակներով:

ՀՈՒԷ (100,000) գլխաւոր քաղաքն է, խիստ ամուր ու վաճառաշահ:

ՔԷՉՈՅ (80,000) } մեծ մեծ քաղաքներ են:  
ՍԱՅԿՈՆԿ (100,000) }


#### 5. ԱՆԳՂԻԱՅԻՈՅ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Անգղիացւոց երկիրներուն բնակիչներէն տմանք ինքնապլուխ են, տմանք հարկատու:

ԱՐԵՔԱՆ (100,000) } խիստ վաճառաշահ քա-  
ՍԻՆԿԱՓՈՒՐ (24,000) } ղաքներ են:

#### 6. ԿՂՁԻՆԵՐԸ

Գանգէսէն անդին եղած կղզիներն են ԱՆՏԱՄԱՆ կղզիները, և ՆԻՔՈՊԱՐ կղզիները: Ասոնց բնակիչները քիչուոր ու ինքնապլուխ են:



## Թ. ՉԻՆ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

**ԼՇԽԱՐՀԻՍ** առաջին ծաղկած տէրութիւններուն մէկն է Չինը. բայց Չինացիք ուրիշ ամէն ազգերէն զատուած կենդանուն համար՝ արհեստի ու գիտութեան մէջ շատ առաջ դնացած չեն : Թաթարներուն յարձակմունքէն ազատ մնալու համար՝ իրենց երկրին հիւսիսային կողմը 1100 մղոն երկայնութեամբ պատ մը քաշած են . բայց եօթնևաասներորդ դարուն մէջ Մանչու թաթարները օրկեցին Չիներուն , և հիւսիսային կողմերը թագաւորը անոնց ցեղէն է :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Չինու սահմանը հիւսիսէն Ասիոյ Ռուսաստանն է . արևելքէն Մեծ ովկիանոս . հարավէն Հընդկաստան . արևմուտքէն Թուրքաստան :

Տարածութիւնն է 4,000,000 մղոն քառակուսի :

Տէրութիւնը հինգ գլխաւոր մաս կը բաժնուի . բուն Չին , Չինու թաթարստան , Քորէա , Չինաց հարկատու երկիրներ ու Կղզիները :

Երկիրն ընդհանրապէս դաշտային ու աղէկ մշակած է , բայց արևմտեան ու հիւսիսային կողմերը լեռնոտ են :

Օղբ բարեխառն, տեղ տեղ ալ շատ տաք :

Հողը խիստ բարեբեր է :

Գլխաւոր բերքն է չայ, քափուր, մետաքս, բամպակ, վերնիճ, յախճապակ, մուշկ, այծու բուրդ, և թանաք : Շերամի որդը, և ոսկեգոյն կարմրախայտ ձուկը Չինէն Եւրոպա եկած են :

Եւրոպացիք ընդհանրապէս Քանթոնէն ներս չեն կրնար երթալ վաճառականութեան համար . միայն Անգղիացիք 1842ին Չինու տէրութեան հետ դաշնագրութիւն ընելով՝ հրաման առին որ աս հինգ քաղաքներու մէջ կարենան վաճառակա նութիւն ընել, Քանթոն, Փուչեու, Հիամէն, Կինկփո, և Շանչայ :

Բնակիչն է 363,000,000 որով աշխարհիս մէջ ամենէն բազմամարդ տէրութիւնն է :

Կրօնքը կռապաշտութիւն . բայց կարգացողներն ու մեծերը Կոնփուկիոսի աղանդին կը հեռակն, հասարակ ժողովուրդը Ֆոյի աղանդին : Քանի մը հազար հրեայ կայ տէրութեան մէջ՝ հին ատենէ մտած . քանի մը հազար ալ ուղղափառ քրիստոնեայ՝ որ գրեթէ միշտ հալածանքի մէջ են :

Կառավարութիւնն է ազատ միապետութիւն . իշխանները Մանչուի կըսուին :

## ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՓԵՔՆ (1,300,000) աշխարհիս ամենէն մեծ քաղաքը կը սեպուի . ու երկու կտոր կը բաժնուի . մէկուն մէջ թաթարները կը բնակին, մէկալին մէջ Չիները . մեծագործ է թագաւորական պալատը՝ որ գրեթէ վեց մլոն շրջապատ ունի :

ՔԱՆԹՈՆ (500,000) Եւրոպացի վաճառականները ասքաղաքս կրնան գալ, մեծ վաճառքը չայ է:

ՆԱՆԲՐՆ կամ ՔԵՆՆՆՐՆ (500,000) ինչուան 1368 ասիկայ էր Չինու մայրաքաղաքը, անուանի է ասոր աշտարակը ինը յարկով ու 200 ոտք բարձրութեամբ, որ վերէն ՚ի վար յախճապակով զարգարած է:

ՄԱԲԱՅ (33,000) ասքաղաքիս մեծ մասը Փորթուգէզներուն ձեռքն է:

ԼԱՍՍԱ (80,000) Թիպէթի գլխաւոր քաղաքն է, ասոր մօտ կը բնակի Փոյի կրօնին գլխաւորը որ Տալայի լոճա կըսուի:

ՖՈՒՉԻՈՒ (500,000) արհեստի ու վաճառականութեան կողմանէ ծաղկած քաղաք, շատ ուսումնական մարդիկ ալ կը բնակին մէջը:

ՀԻՍՄԷՆ կամ ԷՄՈՒՅ (250,000) շատ վաճառաշահ ու բանուկ նաւահանգիստ ունի:

ՆՆՎՓՕ (300,000) ասքաղաքը միայն արածնութիւն ունի ճափոնի հետ վաճառականութիւն ընկու:

ՀԱՆՉԻՈՒ (700,000) հարաւային Չինու գլխաւոր քաղաքն է:

ՇԱՆՉԱՅ (500,000) ասոր նաւահանգիստը ասրին 20,000 նաւ կը մանէ կըսեն:

ՆԱՉԱՆԿ (300,000) ասոր մեծ վաճառքն է յախճապակ՝ որ մօտերը կը շինուի:

ՔՈՐԷՆ քաղմամարդ երկիր մըն է որ ութը գաւառ կը բաժնուի. բայց Եւրոպացիք խիստ քիչ անդեկութիւն ունին վրան:

Չինու կղզիներուն մէջ անուանիներն են ՀԱՆՆԱՆ, ՖՈՐՄՈՉԱ ու ՓԷՍԲԱՏՈՐԷՍ:

## Ժ. ՆՄՓՈՒՆ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՆՄՓՈՒՆԻ ԵՐԿԻՐՐ ԹԵՍԿԵՍ ԵՐԷՔԱՍԱՍԱՆԵՐՈՐԳ ՊԱՐՈՒՆ ՄԷՂ ԱԿՍԱԸ ԾԱՆՈԹ ԸԼԼՈՂ ԵՒՐՈՍՊԱԿԱՆՈՅ, ԲՈՅՅ ՎՐԱՆ ԱՒԵՂԻ ԱՆԳԼԵԿՈՒԹԻՒՆ ԱՌՆՈՂՆԵՐԻՆ ԵՂԱՆ ՓՈՐԹՈՒԳԷՂՆԵՐՐ 1842ԻՆ: ՃՎԱԲՈՆՆԵՐՐ ՉԻՆԵՐՈՒՆ ՄԷԿ ԳԵՂՐ ԿՐ ԱԵՍՈՒՆԻՆ, ԲՈՅՅ ՀԻՄՆԱ ԱՆՆՈՆԳՄԷ ԱՒԵՂԻ ԾԱՊԿԱԾ ԵՆ ԹԵՍ ԿՐՀԵՍԱԲԻ Ե ԹԵՍ ԱԿԱՍԵՐԱՂԺԻ ՄԷՂ: ՏԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՂ ՕՍՏԱՐ ԱՂԳԷ մարդ չկրնար մըա նեՂ. ԵՐԿԻՐԵԼՔ ԱՂ ԻՐԵՆԵՅ ԱՆԵՐՈՒԹԵՆՆԷՆ ՊՈՒՐԱ ՃԵՆ ԿՐՆԱՐ ԵՂԸՂ, ՃԵՆԷ ԱԿԱՍԻՓՆԻՆ մահ է:

### ԸՆԴՏԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՃՎԱԲՈՆԻ ԱՆԵՐՈՒԹԻՒՆՐ ԱՍ չՈՐԱ ՊԸՍԱՒՈՐ ԿՂԳԸՆԵՐԷՍ ձԵՍԿԱԾ Է. ԿԻՖՈՆ, ՍԻՔՈՔՖ, ՔԻՒՄԻԸ Ե ԵՍՈՅ: ԱՍՆԵՅ չՈՐԱ ՊԻՆ ԱԿԱՍԱԾ Է ԱՐԵԿԸԼԵԱՆ ՈՂԿԻԱՆՈՍՐ, ՈՐ ՄԵԾ ԹՎԱԹԱՐԱՍՏԱՆԻՆ ԱՐԵԿԸԼԵԱՆ ԿՈՂՄԻՆ Է:

ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆՆ Է 180,000 մըրն քառակուսի: ԵՐԿԻՐՐ ՂԵԱՆՈՍ Է, Ե շԱՍ ՀՐԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԻԱՆՈՐ ՀԱՄԱՐ ՊԵՄՆԱՇԱՐԺ ԱՂ շԱՍ ԿՐԸԼՈՅ ՀՈՆ:

ՀՈՂՐ ԲԱՐԵՔԵՐ ՈՒ ԱՂԷԿ մշակած է:

ՊԸՍԱՒՈՐ ԲԵՐՔԵՐԻՆ ԵՆ ՈՍԿԻ, ԱՐԾԱԹ, ԱՂԻՆՁ, ԵՐԿԱԹ, ԱՂՆԻՒ քարեր, քափուր, չայ, բամբակ, մետաքս, և յափճապակ:

Բնակիչը 25,000,000, ամէնքը կուսապաշտ :

Կառավարութիւնը երկու հոգւոյ ձեռք է . մէկը Տօնէրի կըսուի, որ հաւատոյ բաներուն կը խառնուի . մէկալը Քօպոյ, որ տէրութիւնը կը կառավարէ :

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԵՏՈՅ (1,300,000) Եօիոյ մեծ ու աղուոր քաղաքներէն մէկն է . հոս կը նստի իրենց Քուսոյ կամ Սէֆօն թագաւորը :

ՄԻՆԲՈՅ (600,000) ուսման կողմանէ ճափոնի ամենէն ծաղկած քաղաքն է . Տայիրին հոս կը նստի :

ՆԱՆԿԱՍԵՐԻ (50,000) օտար ազգերը աս քաղաքս միայն տարին մէկ անգամ մը կրնան մանեւ վաճառականութեան համար :

ՄԱՅՄԱՅ (30,000) Եսոյ կղզիին ծայրը վաճառաշահ քաղաք է :

ԼԻԵՈՒՔԻՆԻ Կղզիներն ալ ճափոնի մաս կը սեպուին, բայց առանձին թագաւոր մը ունին Չինու և ճափոնի հարկատու :

## Ա Փ Ր Ի Կ Է

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՍԱՀՄԱՆ ԵՒ ՄԵԾՈՒԹԻՒՆ

**Ա**ՓՐԻԿԷԻ տասնմանը հիւսիսէն Միջերկրական ծովն է. արևելքէն Կարսիւր ծովն ու Հնդկաց ովկիանոսը. հարաւէն հարաւային ովկիանոսը. արևմուտքէն Ատլանտեան ովկիանոսը :

Տարածութիւնն է 8,500,000 մղոն քառակուսի :

ԲԱԺԱՆՈՒՄ

Ափրիկէն տասնըութը աշխարհք կը բաժնուի . ասոնցմէ իրեքը հիւսիսային կողմն են , եօթը մեջ տեղուանքը , ութը հարաւային կողմը :

Հիւսիսայիններն ասոնք են . Եգիպտոս , Պէրսիայի ստան , Սահրա :

Միջիններն ասոնք են . Սենեկամալիա , հիւսիսային Կուինէա , Նիկրիտիա , Նուպիա , Եթովպիա , Ատէլ , Այան :

Հարաւայիններն ասոնք են . հարաւային Կուի-

նէա, Օթենթացւոց երկիրը, Գլուխ բարեյուսոյ,  
Քափրաստան, Մոնոմնթափա, Մողամպլը, Չան  
կէպար, և Անճանօթ երկիր:

ԾՈՅ

Ափրիկէի գլխաւոր ծոցերն ասոնք են .  
Կուինէայի ծոց՝ Աղանաւեան ովկիանոսին մէջ .  
Արաբիոյ ծոց կամ Կարմիր ծով՝ Հնգկաց ծովուն  
մէջ .  
Սիրթ և Քասպէս՝ Միջերկրական ծովուն մէջ:

ԿՂԶԻ

Ափրիկէի գլխաւոր կղզիներն ասոնք են .  
Ասորեան կղզիները, Մատերա կղզին, Քանարեան  
կղզիները, Գալարի գլխոյ կղզիները, Կուի-  
նէայի կղզիները, Սուրբ Մատթէոս, Սուրբ  
Համբարձումն, Սուրբ Հեղինէ՝ Աղանաւեան  
ովկիանոսին մէջ .  
Մատակասքար, Սոքոթորա, Չանգիպար, Քոմո-  
րեան կղզիները, և Մադբարեան կղզիները՝  
Հնգկաց ծովուն մէջ:

ԼԵՌ

Լեռներու հինգ գլխաւոր գօտի կայ Ափրիկէի  
մէջ . այս ինքն  
Աալա՝ Պերպերիաստանին մէջ .  
Քոնկ՝ Նիկրիտիոյ ու Կուինէայի մէջ .  
Լուանի լեռները՝ Եթովպիոյ հարաւային կողմը .

Ի յուխաթա լեռները՝ Ափրիկէի հարաւային կողմը .  
Մատակադար՝ համանուն կղզիին մէջ :

ԳԵՏ

Ափրիկէի գլխաւոր գետերն ասոնք են .  
Նեղոս՝ որ կը թափի Միջերկրական ծովը .  
Սենեկալ , Կամպիա , Նիկէր , Զայրէ՝ Ատլանտեան  
ովկիանոսը .  
Զամպէզ՝ հնդկաց ծովը :

ՕԴ , ՀՈՂ , ԲԵՐԲԵ

Ափրիկէն այրեցած գոտիին տակն ըլլալուն համար  
սաստիկ տաք է . մեծ մասը երկու եղանակ ունի ,  
մէկը չոր՝ մէկալն անձրեային , վասն զի վեց  
նոսիս գրեթէ միակերպ անձրե կուղայ :

Երկիրը գաշտային է , և շատ տեղ մեծամեծ  
աւազուտ անապատներ կան : Հողն ընդհանրապէս  
անբեր է . բայց գետերուն քովերը քիչ մը սրտաբեր  
են . աւազի անապատներուն մէջ ալ տեղ տեղ  
կղզիի պէս երկիրներ կան Ո՛չա՛խ ըսուած՝ որ  
շատ բարեբեր են :

Գլխաւոր բերքերն են արմաւ , թուղ , ժանտաթուղ ,  
քոքօ , կասիա , խէժ , խնկեղէն , սրտապապ  
ծառը՝ որ աշխարհիս մէջ ամենէն խոշոր ծառն է ,  
և ուրիշ ազնիւ փայտեր . տեղ տեղ ալ կը գտուի  
բրինձ , շաքար , սղպեղ , բամպակ , կտաւ , լեղակ ,  
ոսկի , արծաթ , երկաթ ու քարեր :

Բարեյուսոյ գլխոյն գինին խիստ ազնիւ է : Աենդանին  
երուններուն մէջ գլխաւորներն են առիւծ , վագր ,

ինձ, անդեղջիւր, գոմէշ, փիղ, ընձուղտ, վայրի  
էշ, կոկորդիլոս, ձիագետի, տեսակ տեսակ կա-  
պիկներ, մեծամեծ օձեր, ջայլամ, թուլթակ և կը-  
ռունկ :

ԲՆԱԿԻՉ, ԿՐՕՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ,


### ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Ափրիկէի բնակիչն է 60,000,000, գոյներնին  
սև, բնութեամբ ընդհանրապէս պակասամիտ,  
տգէտ ու վայրենի :

Կրօնքը՝ Եգիպտոսին, Պերսպերիտանին ու Նու-  
սիայի մէջ մահճատական է. Եթովպիայինը քրիս-  
տոնեայ, մէկալ տեղերունը կուսպաշտ :

Քաղաքականութեան կողմանէ Ափրիկէի մեծ  
մասը բարբարոսութեան մէջ մնացած է. ինչուան  
հարկաւոր արհեստներն ալ հօն չեն գտուիր. իսկ  
ուսմունք ու գիտութիւն ամենեկին չկայ : Միայն  
Եգիպտոս ու Միջերկրականին ծովեզերքը քիչ մը  
քաղաքականութիւն սկսած է :

Կառավարութիւնները ազատ միասլետական են  
Ափրիկէի մեծ մասին մէջ :



## Ե. Ե Գ Ի Պ Տ Ո Ս

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՆՐԵՆ աստեղը խիստ ծաղկած էր Եգիպտոս ամէն արհեստի ու գիտութեանց կողմանէ . մէջը շատ մեծաշէն քաղաքներ կային , և թագաւորութիւնը զօրաւոր ու անուանի էր . բայց երկու հազար տարիէն աւելի է որ քանի գնաց տկարացաւ , առջի մեծ ութիւնը գրեթէ ամենեկին չմնաց : Եօթներորդ գարուն մէջ Արաբացիք տիրեցին Եգիպտոսի , և Աղէքսանդրիոյ հռչակաւոր գրքատունը այրեցին . ետքը անցաւ Մէմլուք ըսուած Չերքէզներուն , անոնցմէ ալ Օսմանցոց ձեռքը . 1798ին Գաղղիացիք առին , բայց խիստ քիչ դիմացան . հիմա Մէհէմմէտ Ալի փաշան սկսաւ ծաղկեցընել Եգիպտոսի մէջ արհեստներն ու վաճառականութիւնը :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Եգիպտոս Միջերկրականին ու Կարմիր ծովուն մէջտեղն է՝ Արաբիոյ հետ կպած :

Տարածութիւնն է 150,000 մղոն քառակուսի :

Օդը խիստ տաք . անոր համար և մանր աւազի փոշիներէն՝ որով օդը շատ անգամ լեցուած կ'ըլլայ՝ հոն տեղի բնակիչներուն շատին աչքը ցաւոտ է կ'ըսեն :

Երկիրն աւազուա ըլլալուն համար շատ սրտա-  
բեր չէ . միայն Նեղոսի մօտ տեղուանքը խիստ սրտ-  
զարեր կ'ըլլան, որովհետեւ աս գետը ամէն տարի  
կանոնաւոր կերպով կը բարձրանայ ու ամիսներով  
կը ծածկէ երկու կողմի գաշաւերն ու արտերը :

Գլխաւոր բերքն է բրինձ, արմու, մորացորեն,  
բամպակ, շաքար ու սրտակառուկ խոտը . կենդա-  
նիններուն մէջ ալ անուանի է հիլոս ըսուած մուկը,  
որ կողորդիլոսին թշնամի է, ու քաջահաւ թըռ-  
չունը՝ որ օձերը կը սպաննէ :

Բնակիչն է 4,000,000, զիտի՝ որ հին Եգիպտա-  
ցիքն են, աաճիկ, արաբացի, հայ, և հրեայ :

### ԳԼԽԱՎՈՐ ԲԱՂԱՔՆԵՐԸ

ԳՆՀԻՐԷ կամ ՄԸՍԸԲ (300,000) մեծ ու վա-  
ճառաշահ քաղաք է . ասոր մօտ են իրեք անուանի  
բուրգերը, որոնց մեծին բարձրութիւնն է 428 ոտ-  
նաչափ, և մեծ գեանափոր գերեզմաննոցը՝ որուն  
մէջ 3000 տարուան մուսիաներ կան :

ԱՂԱԲՍՆԱԴՐԻԱ կամ ԻՍԲԵՆՏԵՐԻՏԷ (50,000)  
ատենով Եգիպտոսի թագաւորութեան մայրաքա-  
ղաքն էր, հիմա աշխարհիս վաճառաշահ քաղաք-  
ներէն մէկն է :

ԲԱՇԻՏ կամ ՌՕՁԷԹԹԱ (15,000) Նեղոսին բե-  
րանը՝ Եգիպտոսի բանուկ նաւահանգիստներէն  
մէկն է :

ՏԱՄԻԱԹ (30,000) նաւահանգիստը բանուկ  
քաղաք է :

ՄԻՈՒԹ . Ափրիկէի ներսերը գացող կարաւան-  
ները ասկէ ճամբայ կ'ելան :

ՍԻՒՎԷՅԻՍ . համանուն պարանոցին վրայ պզտի  
բաղաբ է :

ՃԻՋԷ . ասոր քով են Մեմփիս բաղաբին աւե-  
րակները :

ԼՈՒՔՍՈՐ . հին Թերէ բաղաբին աւերակներուն  
մէջ պզտի գեղ մըն է :

## Բ . Պ Լ Բ Պ Լ Բ Ի Ս Տ Ա Ն

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԼԲՊԼԲԻՍՏԱՆԸ , որ Բաբելոնացի աշխարհ  
ալ կըսուի , հին ատենը կարբեգոնացւոց ձեռքն  
էր . ետքը հռովմայեցւոց անցաւ , անկէջ ալ ետքը  
Արաբացւոց ձեռքը . հիմա մէկ մասը այլևայլ իշ-  
խանութեանց տակն է , մէկ մեծ մասն ալ Գաղ-  
ղիացւոց ձեռքն է :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Պերսկերիստան կըսուի Ափրիկէի հիւսիսային  
ծովեզերքը՝ Եգիպտոսէն ինչուան Ատլանտեան  
ովկիանոս :

Օղը բարեխառն է . երկիրը բարեբեր :

Գլխաւոր բերքն է բրինձ , ցորեն , շաքար , ձի ,  
ուղտ , առիւծ :

Բնակիչն է 18,000,000 սէրպէր, մուղի, տա-  
ճիկ, հրեայ, գաղղիացի :  
Կրօնքը մահմեդականն :

### ԳՂԽԱՒՈՐ ՎԱՂԱՔՆԵՐԸ

ԹՈՒՆՈՒՋ (100,000) հին Կարբէղոնի աւե-  
րակներուն մօտ՝ մեծ քաղաք է, վաճառականու-  
թիւնն ու արհեստները ծաղկած, ասոր սէյը կամ  
իշխանը Օսմանցւոց հարկատու և հպատակ է :

Թ.ՅՐԱԳՈՒԼՈՒՍ կամ ԹՐԻՓՈԼԻ (20,000) ասոր  
վաճառակօնութիւնը առաջ աւելի ծաղկած էր :

ՖԷՍ (90,000) ասենով արհեստի ու գիտու-  
թեան կողմանէ ծաղկած քաղաք էր. հիմայ ալ  
Մարոքի կամ Մէրաքէշի ինքնադուլս թագաւո-  
րութեանը գլխաւոր քաղաքն է :

ՄԱՐՈՔ (60,000) Մարոքի մայրաքաղաքը՝ շատ  
վաճառաշահ. կաշին խիստ աղնիւ է :

ՄԷՔԻՆԷՋ կամ ՄԸԳՆՅՍՅ (50,000) Մարոքի  
թագաւորը տարւոյն մէկ մօտը հոս կը նստի :

ԹԱՆՃԵՐ (9000) Ճիպիլթէռայի նեղուցին  
վրայ՝ Ափրիկէի խիստ հին քաղաքներէն մէկն է .  
Եւրոպացւոց դեսպանները հոս կը կենան :

ՃԷՋԱՅՅԻՐ կամ ԱԼՃԵՐԻ (38,000) երկար ասեն  
Օսմանցւոց հարկատու էր աս քաղաքը քովի եր-  
կիրներովը . 1830էն ետքը Գաղղիացւոց ձեռքն  
անցաւ, ու ամէն կողմանէ սկսաւ հետզհետէ ծաղ-  
կիլ ու զարգարուիլ :

ԿՈՍՏԱՆԴԻՆՅԱՆ . ամուր բերդ է, որ Գաղղիացիք  
առին 1837ին :

## Գ. Ս Ե Ն Ի Ը

**Ս** Երկիրը ընդարձակ անապատ մըն է, որ Պէրսիէրիստանի հարաւային կողմը կ'իյնայ :

Իրեքհարիւր հազար մղոն տարածութեան մէջ հազիւ թէ մէկ միլիոն բնակիչ ունի, բոլորն ալ գրեթէ վայրենի մարդիկ :

Կրօնքնին մահմետական ու կռապաշտ :

Գլխաւոր քաղաքներն են Հոտէն, Թաքազդէ, Թապու, Առնա, Ակապլի, և Պիլմա . բայց վրանին խիստ քիչ տեղեկութիւն կայ :



## Գ. Ս Ե Ն Ե Կ Ա Մ Պ Ի Ը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

**Ս Ե Ն Ե Կ Ա Մ Պ Ի Ա Ն**, Սահրային հարաւային կողմը կ'իյնայ . անուշը Սենեկալ ու Կամպիա գետերէն առած է :

Երկիրն ընդհանրապէս աւազուտ է :

Օղը խիստ տաք . յուլիսէն ինչուան հոկտեմբեր միակերպ անձրև կուգայ զարհուրելի փոթորիկներով :

Բերքն է առատ ոսկի, խնկեղէն, սլաքեղ, ջայլամի փետուր, փղոսկր, և սլասուսապ ծառք՝ որ ինչուան 90 ոտնաչափ հաստութիւն կ'ունենայ : կենդանիներէն ալ սաք երկրի դազաններուն ամէն տեսակէն ալ ունի :

Բնակիչն է գրեթէ 12,000,000 կռասպաշտ :

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ


ՊԵՄՊՈՒՔ . մեծ ոսկիի հանք ունի :

ԹԻՄՊՕ . բոլոր երկրին աւելի կրթուած մարդիկը ասոր բնակիչներն են :

ՔԱՇԷՕ . հիմա Անգղիացւոց ձեռքն է :

ՍՈՒՐԲ ԼՈՒԴՈՎԻԿՈՍ . Գաղղիացւոց ձեռքն է :

ՍԷՆ ՃԵՅՄՍ . աս երկրին մէջ Անգղիացւոց գլխաւոր քաղաքն է :



### Ե . ՀՒՒՍԻՍԸՅԻՆ ԿՈՒՒՆԵԼԸ

ԿՈՒՒՆԵԱՆ ՍԵՆԵԿԱՄԿԻՅ ՀԱՐԱՒԱՅԻՆ կողմի ծովեղերքն է :

Աս երկրիս մեծ մասին Եւրոպացիք տիրած են :

Օգը տաք, թաց ու շնասահար է :

Գլխաւոր բերքերն են բամբակ, շաքար, լեղակ, և ոսկիի աւազ . կենդանիներէն ալ փիղ, վագր, առիւծ, ոնգեղջիւր ու մեծամեծ օձեր :

Բնակիչն է 10,000,000 կուսապաշտ, որ մարդա-  
զոհ ալ կ'ընեն :

Գլխաւոր քաղաքներն են Քոււմասիա, Ապոմէյ,  
Գլուխ Քորս, Քրիսթիանսպուրկ :



## Օ. Ն Ի Կ Ր Ի Տ Ի Ը

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Ն Ի Կ Ր Ի Տ Ի Ա Ն Ս ահարային հարաւային կողմն է :  
Երկրին մեծ մասը աւազուտ անապատ :  
Բերքն է ոսկի, արծաթ, արմաւ, բրինձ, բամ-  
պակ ու վայրի գաղաններ :

Բնակիչն է 20,000,000, բոլորն ալ սև ու բար-  
բարոս մարդիկ :

Կրօնքնին կուսապաշտ ու մահմէտական :

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԹՈՄՊՈՒԲԹՈՒ . Ափրիկէին երևելի քաղաքն է-  
րէն մէկն է . ոսկիի, փղոսկրի ու խէժի մեծ առու-  
տուր ունի :

ՊՈՌՆՈՒ . Հիմաիւան մայրաքաղաքն է :

ԷՆԿՈՐՆՈՒ . Երկրին գլխաւոր վաճառաշահ քա-  
ղաքն է :

Անուանի են նաև Սեկոյ, Հին Պոսնու, Քոսպ-  
պէ, Իւպէյիր :


## Լ. ՆՈՒՊՈՒՆ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ՆՈՒՊՈՒՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՐԱԼԱՅԻՆ ԿՈՂՄԸ ԿԵՆՈՅ, ու հիմա ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՒՍԱԿԱՂԻՆ ձեռքն է: Երկիրը աւաղուտ, քարոտ ու անբեր է: Բերքն է ոսկի, վոզոսկր, երենոս ու արմաւ. կենդանիներէն ալ ամէն տեսակ վայրի գաղաններ: Բնակիչը 2,000,000 մահմէտական, կուսպաշա ու քրիստոնեայ:

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՍԵՆՍԱՐ. Նեղոսին վրայ վաճառաշահ քաղաք է:  
ՍՈՒՆՔԷՄ. Կարմիր ծովուն վրայ բանուկ նաւահանգիստ է:



## Ը Ե Թ Ո Վ Պ Ի Ը

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԸԵԹՈՎՊԱՅԻՔ որ հասկէջ կամ խափշիկ ալ կ'ըսուին՝ հին ատենը Ափրիկէի ծաղկած ազգերէն մէկն եղած են, ու չորրորդ դարուն մէջ քրիստոնէութիւնը մտեր է մէջերնին. բայց հիմա տէրութիւնն շատ տկարացած է, ու գիտութիւն ամենեկին չունին :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Եթ ուղիւն Նուպիոյ հարաւային կողմը ընդարձակ երկիր է՝ այլևայլ ինքնագլուխ տէրութիւններ բաժնուած :

Երկիրը լեռնոտ ու բարերեր :

Բերքն է ցորեն, բրինձ, շաքար, խահուէ, բամպակ. եզները խիստ խոշոր են, ու Ափրիկէին հասարակ գաղանները հոն ալ կը գտուին :

Բնակիչը 4,000,000 քրիստոնեայ եւտիքական :

Գլխաւոր քաղաքն է Կեօնտէր (50,000) որ Ահհարայի Թագաւորութեան մայրաքաղաքն է :

Մէկալ տէրութիւններուն գլխաւոր քաղաքներն են Անքոպէր, Աքսում, Տոպարվա, Ալքիբօ :

Ժ. ԱՏԷԼ

**ԱՏԷԼԸ** Եթովպիոյ արևելեան կողմը սլափ  
տերութիւն մըն է :

Երկիրը թաց, օդը մնասահար :

Բերքն է ոսկի, կնդրուկ, խէժ, մոմ ու փղոսկր :


Բնակիչը 200,000 մահմադականն է :

Գլխաւոր քաղաքներն են

**ՉԵՑԼԵ**, որ Պապիւլմանտէպի նեղուցին մէջ  
կղզի է :

**ՊԵՐՊՈՐԵ**, որ Արաբիայի հետ առուտուր ունի :

**ԱԻՍԵԿՈՒՐԷԼ**, որ ատենով Ատէլի մայրաքա-  
ղաքն էր :



Ժ. ԱՅԱՆ

**ԱՅԱՆԸ** Ափրիկէի արևելեան ծովեզերքն է-  
սա երկրիս ներսի կողմը անբնակ անապատ է :

Երկիրն աւազուտ, բայց ստոյգաբեր :

Բերքն է ոսկի, դեղին սաթ, փղոսկր, խունկ,  
խէժ :

Բնակիչն է 150,000 մահմադական ու կռապաշտ :

## ԺԸ. ՀԱՐԱՆՆԵՐԻՆ ԿՈՒՒՆԵԼԸ

ՀԱՐԱՆՆԵՐԻՆ ԿՈՒՆԵՆԻՆ ընտնող ու բարեբեր երկիր է՝ Ախրիկէի հարաւային կողմը :

Ասոր վայրի գաղաններուն մէջ երևելի է սրտ ըսուած ահագին օձը , և ուրիշ շատ ինասական ճճիներ . տեսակ մը մթէխ կայ որ խայթելուն պէս կը մեռցնէ կ'ըսեն . տեսակ մը խոշոր մըջիւն՝ ին սոնտի ըսուած , որ փղին պատիճը կը մտնէ՝ կը կատղեցնէ ու կը սպաննէ . տեսակ մըն ալ որդ , որ ինչ վաճառք կամ կարասիք ըլլայ՝ կը կրծէ , փոշի կը դարձնէ :

Բնակիչն է 5,000,000 կռասպաշտ ու վայրենի :

Գլխաւոր տեղուանքն են Լոանկոյ , Քոնկոյ , Պէնկէլա :



## ԺԹ. ՕԹՆԵԹԱՅԻՈՅ ԵՐԿԻՐ

( ) ԹՆԵԹԱՅԻՐ Բնակութեան քաղաք չունին , հապա գեղերու պէս տեղուանք խումբ խումբ բաժնուած կը բնակին :

Բնութեամբ վայրենի են , աւաղակաբարոյ , աղէկ վաղող , ու թունաւոր նետ կը բանեցնեն :

Ամէնքը մէկէն 400,000ի չափ :

## ԺԳ. ԳԼՈՒԽ ԲԱՐԵՅՈՒՍՈՅ

**ԲԱՐԵՅՈՒՍՈՅ** գլուխը Ափրիկէի հարաւային ծայրն է՝ Անգղիացւոց ձեռքը :

Օգը բարեխառն , երկիրը բարեբեր :

Ափրիկէի բոյսերուն գրեթէ ամէնն ալ կը բուսցընէ . իսկ վայրի գազանները հիմա քիչցած են , ոչխարները խոշոր գմակ ունին , ծովեզերքէն ալ շատ կէտ կամ պալէնա կ'երևէ :

Բնակիչն է 120,000 , կէսը ճերմակ՝ կէսը սև :

Գլխաւոր քաղաքն է ԳԼՈՒԽ ԲԱՐԵՅՈՒՍՈՅ կամ ՎԵՓ , և կամ Վափօ - տի - սոնա - սիէսանցա (20,000) Եւրոպայէն Հնդկաստան գացող եկող նաւերը հոս կը հանդիսն . ուստի աշխարհիս խիստ երևելի քաղաքներէն մէկն է :



## ԺԴ. ՔԵՓՐԵՍԱՆ

**ՎՔԱՓՐԱՍԱՆԻՆ** մեծ մասը լեռնոտ է , մնացածը աւազուտ , բայց բարեբեր :

Բնակիչն է 2,000,000 սև , կարիճ , աղէկ վազող ու վարպետ որսորդ :

## ԺԵ. ՄՈՆՈՄՈԹԱՓԸ

**ՄՈՆՈՄՈԹԱՓԱՆ** ատենով մեծ թագաւորութիւն էր, հիմա մանր տէրութիւններ բաժնուած, ու ծովեզերքը փորթուղէզներու ձեռքն է:

Օղբ բարեխառն, հողբ բարեբեր, ոսկին ու արծաթը շատ:

Բնակիչն է 1,400,000:




## ԺԶ. ՄՈՂԱՄՊԻՔ

**ՄՈՂԱՄՊԻՔ** փորթուղէզներուն ձեռքն է, բայց բնակիչները ինքնագլուխ են:

Գլխաւոր բերքն է ոսկի, արծաթ, բրինձ, փղոսկր: Բնակիչը 10,000:

Գլխաւոր քաղաքն է Մոզամպիք (2800):




## ԺԵ. ՕՒՆ ԿԵՊԱՐ

ՕՒՆ ԿԵՊԱՐԸ Լուսիսաթալեաներուն արևելեան կողմը ծովեզերեայ ցած երկիր մըն է, ոգն ալ անառողջ :

Բերքն է խէժ, փղոսկր, ծարիր ու կապոյտ արջասպ :

Բնակիչը 2,000,000, կէսը արաբացի, կէսը տեղացի կուսպաշտ :

Գլխաւոր տեղուանքն են Մակասոդքսոյ, Պրավա, Քիլոա, Մոնկալոյ, Մոմկազա, Մէլինտա :



## ԺԸ. ԼՆ ԾՆ ԵՐ ԿԻՐ

ԼԻԿՐԻՏԻՈՅ ու Օթենթացոց երկրին մէջ տեղը ընդարձակ երկիր մը կայ, որ գեռ անձանօթ է : Մէջը շատ վայրենի ու բարբարոս ժողովուրդ կայ, որ ատեն ատեն արշաւանքներ ըրեր են իրենց քովի երկիրներուն վրայ :

## Ժ Թ Ե Փ Ր Ի Կ Լ Ի Կ Գ Լ Գ Ի Կ Ե Բ Ը

### 1. ԱՆԳՂԻԱՅԻՈՅ ՁԵՌՒՔԸ

ՖԵՐՆԱՆՏՕ ՓՈՅ (30,000) ԿՈՒՆԷՅԿԻ ՃԶՔ :

ՎԵՐԱՓՈՒՌԻՄՆ . ապառաժ ու անբնակ կղզի  
մըն է :

ՍՈՒՐԲ ՀԵՂԻՆԷ (5000) ՀՈՍ ՄԼՈՒԱԸ ՆՍԱՓԻՈՂԷՆ  
ՊՈՆԱՓԻԱՆԹԷՆ 1821ին :

ՄԱՐԻՏԻՆՈՍ կամ ԳԱՂՂԻՈՅ ԿՂՁԻ . ափկայ  
առաջ Գաղղիացւոց ձեռքն էր :

ՍԷՑԷԼԵԱՆ կղզիները , որ շատ վաճառաշահ են :

### 2. ԳԱՂՂԻԱՅԻՈՅ ՁԵՌՒՔԸ

ՊՈՒՐՊՈՆԻ ԿՂՁԻ (42,000) ՀՈՍ տեղի խահուէն  
ու շաքարը աղնիւ է :

### 3. ՓՈՐԹՈՒԳԷՋՆԵՐՈՒՆ ՁԵՌՒՔԸ

ԱՍՈՐԵԱՆ կղզիները (200,000) ասոնց ՃԶՔ ԿԸԸ  
խաւորներն են Թէրչերա , Սուրբ ՄիքայէԼ , Սուրբ  
Մարիամ ու Փիքոյ կղզին :

ՄԵՏԷՐԱ (120,000) ասոր գինին շատ անուանի  
է . առենով բոլոր կղզին անառ է եղեր , Փոր-  
թուգէզները 1431ին կրակ տուին այրեցին , անկէ  
ետքը երկիրը բարեբեր եղաւ :

ԳԱԼԱՐԻ ԳԼԽՈՅ կղզիները (42,000) ասոնց  
գլխաւորներն են Սուրբ Յակոբ, Սուրբ Անտոն,  
ու Աղի կղզին. շատին մէջն ալ հրաբուխ կայ:

ՍՈՒՐԲ ՄԱՏԹԵՈՍ. Ատլանտեան ովկիանոսին  
մէջ անբնակ կղզի է:

ՍՈՒՐԲ ԹՈՎՄԱՍ. Կուինէայի ծոցին մէջ. ուս-  
կից շատ շաքար կ'եւէ:

#### 4. ՍՊԱՆԻԱՅԻՈՅ ՁԵՌԻՔԸ

ՔԱՆԱՐԵԱՆ կղզիները (174,000) ասոնց գլխա-  
ւորներն են Քանարիա, Թէնէրիֆֆա, Փալմա,  
Երկաթի կղզին, և Ֆորթալէնթուրա, որոնց գլխ-  
աւոր բերքն է աղիւ գինի:

ԻՇԻԱՆԻ ԿՂԶՈՆ, և ԱՆՆԱ ՊՈՆԱ՝ Կուինէայի ծո-  
ցին մէջ:

#### 5. ԵՒՐՈՊԱՅԻՈՅ ՁԵՌԻՔԸ, ՉԵՂԱԾ

##### ԿՂԶՈՆԵՐԸ

ՄԱՏԱԿԱՍՔԱՐ (4,000,000) Ափրիկէի կղզիներ  
բուն մեծն է. ասոր ծովեզերքը միայն ծանօթ է  
մեզի. օդը թաց ու շնասակար: Կ'ըսեն թէ ներսերը  
աղէկ մշակած է:

ՍՈՒՐԹՈՐԱ (100,000) ասոր բնակիչները Արա-  
բացի են:

ՉԱՆԶՈՊԱՐ. Չանկէպարին ծովեզերքն է.  
գլխաւոր վաճառքն է խէժ ու փղոսկր:

ՔՈՄՈՐԵԱՆ կղզիները, որ Արաբացւոց ձեռքն  
են:

## Ս Մ Ե Ր Ի Կ Ս

### Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Գ Ի Տ Ե Լ Ի Ք

#### Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՍՄԵՐԻԿԱՆ ատենով անձանօթ երկիր էր . 1492ին Քրիստափոր Գոլոմպոս Ճենովացի նաւորդը ան կողմերը գնաց Սպանիոյ Թագաւորին կողմանէ , ու նախ Կուանաճանի ըսուած կղզին գտաւ , որ Լուքայեան կղզիներուն մէկն է : Ետքը Ամերիկոս Վեափուչչի խաղացին ան երկրին մէկ մասը պարսեցաւ , ու ստորագրութիւնը ընելուն համար երկիրն ալ իրեն անունովը ԱՔրիկոս ըսուեցաւ :

#### Ս Ա Տ Մ Ա Ն Ե Ի Մ Ե Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ամերիկան Եւրոպայի արեւմտեան դին կիկնայ . չիւսիտային կողմէն պատած է Սառուցեալ ծովը . արեւելքէն Ատլանտեան ովկիանոսը . արեւմուտքէն Հարաւային ովկիանոսը :

Տարածութիւնն է 3,000,000 մղոն քառակուսի :

ԲԱԺԱՆՈՒՄ

Ամերիկան երկու մեծ կտոր կը բաժնուի . Հիւսիսային ու Հարաւային . ասոնք իրարու կսլած են Փանամայի սլարանոցովը :

Ամերիկայի մէջ 15 տէրութիւն կայ . ասոնցմէ վեցը Հիւսիսային կողմը կ'էյնայ , ինչը Հարաւային ,

Հիւսիսայինները ասոնք են . Ռուսի Ամերիկա , Կրոնշտանիա , Նոր Բրիտանիա , Միացեալ Նահանգներ , Մեքսիկոյ , Կուլաթէմալա :

Հարաւայինները ասոնք են . Վոլուսիա , Կուլա Նա , Պրազիլ , Փէրու , Պոլիվիա , Փարակուայ , Փլաթա , Բիլի , Փաթակոնիա :

ԾՈՅ

Ամերիկայի գլխաւոր ծոցերն ասոնք են .

Հուասոնի ծոցը , Սուրբ Լաւրենտիոսի ծոցը , Մեքսիկոյի ծոցը , Հոնտուրաս ծոցը , Բալիֆորնիայի ծոցը :

ՆԵՂՈՒՅ

Ամերիկայի գլխաւոր նեղուցներն ասոնք են .

Պէհրինկայ նեղուցը՝ Ամերիկայի ու Ասիոյ մէջտեղը . Լէնքասթըր , Տէվիա , Բըմպըրդէնա , Հուասոն՝ Նոր Բրիտանիոյ Հիւսիսային կողմը .

Պահամայի ջրանցքը՝ Միացեալ Նահանգներուն Հարաւային կողմը :

Մակելլանեան նեղուցը՝ Փաթակոնիոյ Հարաւային գին :

ԿՂԶԻ

Ամերիկայի գլխաւոր կղզիներն են .

Սառուցեալ ծովուն մէջ՝ Կրոէնլանտիա .

Ատլանտեան ովկիանոսին մէջ՝ Լոնկիալանա , Պերմուտեան կղզիները , Լուքայեան կղզիները , Մեծ ու Փոքր Անթիլեան կղզիները .

Մեծ ովկիանոսին մէջ՝ Նոր Գէորգիա , Մալուխեան կղզիները , Մակեղանեան կղզիները կամ Երկիր հրոյ , և Քիլոէ կամ Չիլոէ կղզին :

ԼԵՌԻ

Ամերիկայի մէջ լեռներու գլխաւոր գօտիներն ասոնք են .

Ալէկանի՝ Միացեալ նահանգներուն մէջ .

Քորաիլեան լեռները , որոնց ամենէն բարձրը Չիմպորասոյ կ'ըսուի . ու Պրազիլի լեռները :

ՀՐԱԲՈՒԽ

Ամերիկայի անուանի հրաբուխներն ասոնք են .

Սուրբ Եղիա՝ Ռուսաց Ամերիկային մէջ .

Փոփոքաթէփէթլ՝ Մեքսիկոյին մէջ .

Քոթոպիաքսի , և Փիչինբա՝ Բոլուամպիոյ մէջ .

Արէքիփա՝ Փերուին մէջ :

ԳԵՏ

Ամերիկայի գլխաւոր գետերն ասոնք են .

Նեւադն , որ հուսանի ծոցը կը թափի .

Մխիթարի՝ Մեքսիկոյի ծոցը .  
Քոլումպիա՝ Մեծ ովկիանոսը .  
Սուրբ Լաւրենտիոս , Օրենոք , Ամազոնաց գետը ,  
Թոքանթին ու Փլաթա , որ Ատլանտեան ով-  
կիանոսը կը վազեն :

ՕԴ , ՀՈՂ , ԲԵՐԲ

Ամերիկան հիւսիսային բևեռէն ինչուան հա-  
րաւայինը տարածուած ըլլալուն՝ աշխարհիս մե-  
կալ մասերուն ամէն կլիմաներն ունի : Միայն թէ  
Ամերիկայի մէջ աւելի քիչ է մի և նոյն կլիմային  
տարութիւնը՝ քան թէ Ափրիկէի ու Ասիոյ մէջ .  
սրտաճառն է Ամերիկայի լեռներուն շատութիւնը ,  
որոնց վրայէն ամառ ձմեռ ձիւնը սահաւ չէ :

Հողը տեղ տեղ աւազուա է , բայց ընդհանրա-  
պէս շատ բարեբեր , ու Եւրոպայէն հոն տարուած  
բոյսերուն ամէնն ալ աղէկ առաջ եկած են :

Բերքերուն մէջ Ամերիկայի հանքը շատ առատ  
է . ոսկիի մեծ հանքերը՝ Քոլումպիոյ , Պրազիլի ,  
Մեքսիկոյի ու Փէրուի մէջ են . արծաթը՝ Քիլիի ,  
Մեքսիկոյի ու Փէրուի մէջ . յակինթը՝ Քոլում-  
պիոյ մէջ , ադամանդը՝ Պրազիլի մէջ : Առատ են  
նաև ուրիշ մետաղներն ու հանքերը :

Բոյսերուն մէջ՝ բուն Ամերիկայի բերքն է գետ-  
նախնձոր , մարացորեն , ու ծխախոտ . այրեցած  
գօտիին տակն ալ տաք երկրի ամէն բերքերը կը  
գանուին :

Ամերիկան գանուած ատենը մեր կողմերուն ըն-  
տանի կենդանիները հոն չէին տեսնուեր . բայց  
հիմա խիստ շատցած են : Վայրի կենդանիներն

Հիւսիսային կողմը կը գտնուի եղջերու , գայլ , արջ ,  
ջրուն . հարաւային կողմերն ալ վայրի խոզ , կա-  
պիկ , լամա , և այլն :

ԲՆԱԿԻՉ , ԿՐՕՆ , ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Ամերիկայի բնակիչն է 40,000,000 , ասոնց մեկ  
մասը բուն եւրոպացի է , նոյն չափ մըն ալ բուն ա-  
մերիկացի , մնացածը ամերիկեցի գերիներ :

Կրօնքը՝ հարաւային կողմը գրեթէ ամէն տեղ  
ուղղափառ է , Միացեալ նահանգներուն ու Անգ-  
ղիացւոց երկիրներուն մէջ նորաղանդ . իսկ տե-  
ղացի վայրենիները կռասպշա են :

Կառավարութիւնը շատ տեղ հասարակապե-  
տութիւն է , Փարսկուայն ալ ինքնագլուխ իշխա-  
նութիւն մըն է :



## Ե. ՌՈՒՍԻ ԱՄԵՐԻԿԱ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԻ Ամերիկան Ռուսաց կայսրը վաճառականներու ընկերութեան մը յանձնած է, բայց բնակչաց մեծ մասը դեռ ինքնազուխ են. ասոնց մէկ ցեղին պակուհքը երկուք ճեղքուած՝ անասնաբարոյ մարդիկ են :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Ռուսի Ամերիկային միայն ծովեզերքը յայտնի է, ան ալ գրեթէ միշտ ձիւնով ծածկած. իսկ ներսերը անծանօթ :

Գլխաւոր վաճառքն է տեսակ տեսակ մորթ ու պալէնա ձուկը :

Բնակիչը գրեթէ 50,000 կուսապաշտ :

Գլխաւոր քաղաքն է Նոր Արքանկէլ (1000) Սիլվա կղզիին մէջ :



## Բ. ԿՐՈՒՆԼԱՆՏԻԱՆ

**ԿՐՈՒՆԼԱՆՏԻԱՆ Ամերիկայի հիւսիսային ծայրն է, բոլորովին սաւանապատ, ու միայն ծովէ զերբքը ծանօթ :**

Օդը ցուրտ. տարուան մէջ ատեն կ'ըլլայ որ իրեք ամիս միակերպ գիշեր, իրեք ամիս ալ ցորեկ կ'ունենան :

Բերքն է ամիանդ, հանքային ածուխ, կրանիթ, և ուրիշ քարեր :

Բնակիչները Եսքիմացիք կ'ըսուին՝ որ հասակով սլզափկ մարդիկ են, ու որսորդութեամբ կ'ապրին. ձմեռը գետնափոր տեղուանք կը բնակին, իսկ ամառը ծովու շան կաշիէ շինած վրանի տակ :

Աս երկիրը Տանիմարբացիք դասն 983ին. բայց հիմա կէսը Անգղիացւոց ձեռքն է :

## Գ. ՆՈՐ ԲՐԻՏԱՆԻԱ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋ աս երկրին մեծ մասը Գաղղիացւոց ձեռքն էր. 1760ին Անգղիացիք առին, անունն ալ դրին Նոր Բրիտանիա :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Նոր Բրիտանիոյ մեծ մասը անձանօթ է, հողը թաց, օդը ցուրտ. միայն հարաւային կողմը բարեբեր է :

Բնակիչը 1,000,000, շատը եւրոպացի և ուղղափառ, մնացածը տեղացի կուսպաշտ :

Գլխաւոր քաղաքներն են

Քեյօֆ, որ Քանաաային մէջ ամուր ու վաճառաշահ քաղաք է :

Մոնրէսլ, որ մերթի վաճառք ունի :

Էլլիֆօթ. աղուոր նաւահանգիստ ունի :



## Գ. ՄԻԱՅԵԱԼ, ՆԵՋԸՆ ԳՔ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՄԻԱՅԵԱԼ, նահանգները ատենով Անգղիացւոց ձեռքն էին . ետքը կամաց կամաց զատուեցան ու 25 տերութիւն եղան իրարու գաշնակից . ասոնք մէյմէկ գլխաւոր իշխան ունին՝ որ չորս տարին մէյմը կը փոխուի :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ


Աս ընդարձակ երկիրը Ատլանտեան ովկիանոսէն ինչուան Մեծ ովկիանոսը , Մեքսիկոյի նեղուցէն ալ ինչուան Սուրբ Լաւրենտիոս գետը կ'երթայ :

Օդը տեղ տեղ ցուրտ է , տեղ տեղ ալ տաք . իսկ հարաւային կողմի օդը թաց ու զնասակար :

Գլխաւոր բերքն է բամբակ , շաքար , ծխախոտ , քաքաոյ , լեղակ :

Բնակիչը 13,000,000 , շատը եւրոպացի նորազանդ , մնացածը տեղացի :

Աս երկրի մէջ քաղաքականութիւնը , արհեստներն ու գիտութիւնները քիչ ատենի մէջ շատ առաջ գնացած են :



### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ,

ՎՈՇԻՆԿԹՈՆ (19,000) գլխաւոր քաղաքն է :

ՆՈՐ ԵՕՐՔ (315,000) վաճառականութիւնը շատ բանուկ է :

ՓԻԼԱԳԵՂՓԻՅ (230,000) աս քաղաքիս մէջ գիտութիւնները շատ ծաղկած են :

ՊԵԼՔԻՄՈՐ (102,000) ասոր նաւահանգիստը 2000 նաւ կրնայ առնել :

ՆՈՐ ՕՐԼԵԱՆ (100,000) բնակիչներուն մեծ մասը գաղղկացի են :

ՊՈՍԹՈՆ (93,000) հոս ծնած է ֆրանքլին բնախօսը :



## Ե. Մ Ե Ք Ս Ի Կ Ո Յ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵՔՍԻԿՈՅԻ երկիրը 1521ին Սպանիացւոց ձեռքն անցաւ . բայց 1820ին բոլոր բնակիչները գլուխ քաշեցին ու զատ զատ հասարակապետութիւններ եղան՝ իրարու դաշնակից :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Մեքսիկոյի երկիրն ընդհանրապէս լեռնոտ է, ու շատ հրաբուխներ ունի :

Գլխաւոր բերքն է արծաթ, ոսկի, բամպակ, շաքար, ծխախոտ, ցորեն, լեզակ, որդնուկ՝ որ ծիրանի ներկ կը ըլայ :

Օգը ներսերը բարեխառն, խակ ծովեղերքը տար, թայ ու փաստակար :

Բնակիչը 8,000,000 ուղղափառ :

### ԳԼԽԱՒՈՐ ԲԱՂԱՔՆԵՐԸ

ՄԵՐՍԻԿՈՅ (200,000) Ամերիկայի ամենէն ազւոր քաղաքն է . մայր եկեղեցին մեծագործ ու հարուստ . փողերանոցը շատ երևելի : Մեքսիկոյին մօտ եղած լճերուն վրայ եղէգներով շինած շարժական սարակներ կան :

ՓՈՒԷՊԼԵ ՏԷ ԼՈՍ ԱՆԿԷԼԵՍ (75,000) վաճառաւոր քաղաք է :

ԿՈՒՆԱՆ ԽՈՒՆԹՈՅ (60,000) Մեքսիկոյին հարուստ արծաթահանքը հոս է :

ԲԷՐԷՅԱՐՈՅ (35,000) շատ գործարաններ ունի՝ չուխայի, կաշիի ու ծխախոտի :

ՉՈՒՈՒԼԵ (16,000) ասենով Մեքսիկացւոց կրօնքին գլխաւոր քաղաքն էր . հոս մեծ քառակուսի բուրգ մը կայ աւերակ :

ՎԷՐԵ ԲՐՈՒՋ (12,000) Եւրոպացւոց վաճառականութեան բանուկ տեղն է :



## Օ. ԿՈՒՆԹԻՄԱՆԱ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԿՈՒՆԹԻՄԱՆԱՆ ԷՐԿԱՐ ատեն Սպանիացւոց  
ձեռքն էր . 1821ին զատ հասարակապետութիւն  
Էղաւ , 15 տէրութիւններէ ձեացած :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Կուտարթէմալային հասարակապետութիւնը Մեք-  
սիկոյէն ինչուան Փանամայի պարանոցը կ'երթայ :

Երկիրը լեռնոտ է , հողը բարեբեր , օդը բարե-  
խառն՝ բայց լիասահար :

Շատ հրաբուխներ ունենալուն համար՝ գեա-  
նաշարժը անպակաս է :

Բերքն է մարացորեն , բամբակ , շաքար , լեղակ  
ու ազնիւ փայտեր :

Բնակիչը 2,000,000 ուղղափառ :

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԿՈՒՆԹԻՄԱՆԱ (60,000) ասոր տեղը ուրիշ քա-  
ղաք մը կար նոյն անունով որ 1777ին գեանաշար-  
ժով մը գետնին տակն անցաւ :

ՎԵՐԵՓՅԶ կամ ԲՈՓՅՆ (12,000) հոս տարին  
ինը ամիս միակերպ անձրև կուգայ :

ՔՆՐԹԵՎՈՅ (20,000) ասոր ծովեզերքէն տեսակ  
մը ստարէ կ'ելլէ որ փորուն մէջ կարմիր ներկ ունի :

## Է. ՔՈՒՆՈՒՄ ՊԻԸ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԸՍ Երկրիա բնակիչները 1811ին Սպանիացւոցմէ գլուխ քաշեցին, և իրէք հասարակապետութիւն եղան իրարու դաշնակից :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Վոլումպիան Փանամայի սարանոցէն ինչուան Կուլանա ու Փէրու կ'երթայ :

Երկիրը լեռնոտ է, ու շատ հրաբուխներ ունի : Օդը բարեխառն, տեղ տեղ ալ ցուրտ . ծովէ զերբի օդը շնասակար :

Բերքն է ոսկի, արծաթ, վիլաթին, պղինձ, աղնիւ քարեր, քաքայ, ծխախոտ ու քինա :

Բնակիչը 2,800,000 :

Կրօնքը ուղղափառ :

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Պոպոթա կամ Սանթա-Ֆէ Տէ Պոպոթա (40,000) ասոր զիրքը խիստ բարձր է, օդը բարեխառն, մօտերը մեծ ջրվէժ մը կայ որ 550 տնաչափ բարձրութենէն վար կ'իյնայ :

ՔՈՒԻԹՈՅ կամ ՔՒԹՈՅ (70,000) աշխարհիս մէջ  
ամենէն բարձր գիրք ունեցող քաղաքն է, ծովուն  
էրեւէն 2885 մեթր բարձր գեղեցիկ ձորի մը մէջ  
չինսած անոր համար օդը տաք չէ, թէպէտև գրեթէ  
հասարակածին տակը կ'իյնայ :

ԿԱՐԹԱԳՒՆԷ (16,000) ապահով ու բանուկ  
նաւահանգիստ ունի :

ՓԱՆԱՄԱ (10,000) հարաւային ու հիւսիսային  
Ամերիկայի մէջտեղը շատ աղուոր գիրք ունի :

ՎԱՐՒՆԱՍ (8000) ծխախոտը ազնիւ է :

## Բ. ԿՈՒՅԱՆԱ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻԲ

ԿՈՒՅԱՆԱՆ Օրէնոք գետին ու Ամազոնաց  
գետին մէջտեղը կ'իյնայ :

Ասոր ծովեզերքը շատ լճեր կան :

Օդը բարեխառն է, տարին ութը ամիս միակերպ  
անձրև գալէն ետքը, չորս ամիս անանկ չոր ու տաք  
կ'ըլլայ որ կենդանիներուն շատը անօթի ծարաւ  
կը ջարդուին :

Բերքն է խահուէ, շաքար, խեժ, քոքոյ, բամբակ  
ու սղալեղ :

Բնակիչն է 280,000 ուղղափառ :

Երկրին մեծ մասը Քոլումբիոյ ու Պրազիլի կտորը


կը սեպուլի . մնացածին մէկ կտորը Հոլանտացւոց  
ձեռքն է , մէկը Անգղիացւոց , մէկն ալ Գաղղիա-  
ցւոց . ներսի կողմերը գեռ անծանօթ են :

### ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՓԵՐԱՄԱՐԻՊՈՅ (20,000) Հոլանտացւոց գլխա-  
ւոր քաղաքն է :

ՍԹԱՊՐՈՔ (10,000) Անգղիացւոց ձեռքը վա-  
ճառաշահ քաղաք է :

ԲԱՅԵՆՆԱ (5200) Գաղղիացւոց ձեռքը՝ համա-  
նուն կղզիին մէջ առուսուրի քաղաք է :



### Թ . ՊՐԱԶԻԼ

#### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊՐԱԶԻԼԻ երկիրը ինչուան 1822 Փորթու-  
գէզներուն ձեռքն էր . անկէջ կտքը Փորթուգալի  
Թագաւորին տղան ինքնագլուխ կայսր եղաւ հոն .  
բայց 1835էն ՚ի վեր միապետական կառավարու-  
թիւնը շատ չափաւորուեցաւ :

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Պրազիլը հարաւային Ամերիկայի արեւմտեան  
կողմը կ'իյնայ :

Այրեցած գօտիին տակն ըլլալուն համար խիստ  
տաք է, բայց ամիսներով ալ անձրև կուգայ :

Հողը շատ ստղարեր :

Գլխաւոր բերքն է ոսկի, ադամանդ, և ուրիշ  
ազնիւ քարեր ու փայտեր. մանաւանդ Պրազիլի  
փայտ ըսուածը՝ որ աղէկ կարմիր ներկ կ'ըլլայ.  
անկէց զատ բրինձ, բամբակ, ծխախոտ, շաքար :  
Կենդանիներէն ալ կապիկ, կոկորդիլոս, ջայլամ,  
օձ ու աղուոր թիթեռնիկներ :

Բնակիչք 5,000,000 բողորն ալ ուղղափառ :

### Գ. Լ. ԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՌԻՕ ԵՆԵՅԵՐՈ կամ ՌԻՈՅ ԽԵՆԷՅԵՐՈՅ կամ  
ՍՈՒՐԲ ՍԵԲԵՍՏԻԱՆՈՍ (150,000) աշխարհիս ամե-  
նէն ապահով ու մեծ նաւահանգիստներէն մէկն է :

ՊԵՀԻՆ կամ ՍԵՆ-ՍԵՂԱՏՈՐ (80,000) ինչուան  
1763 Պրազիլի մայրաքաղաքն էր. հիմայ ալ բողոր  
երկրին սրբեպիսկոպոսը հոս կը նստի :

ՓԷՐՆԵՄՊՈՒՔ կամ ՌԷՏԻՖԷ (60,000) խիստ  
վաճառաշահ քաղաք է :

ՎԻՂԵՈՒՔ (20,000) արծաթահանքն առատ է :

ՍՈՒՐԲ ՊՕՂՈՍ (22,000) մեծ ոսկեհանք ունի :



## ժ . Փ Լ Բ Ո Ւ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՔԱՆՒ որ Ամերիկան գտնուած չէր, Փէրուի թագաւորութիւնը շատ զօրաւոր ու հարուստ եղած է. 1821ին Փէրուի բնակիչները գլուխ քաչեցին Սպանիացւոցմէ, ու զատ հասարակապետութիւն եղան :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԵԼԻՔ

Փէրուն Քոլումպոյ հարաւային կողմը՝ Մեծ ովկիանոսին ծովեզերքն է :

Երկիրը շատ տեղ աւազուտ է :

Մեծ ովկիանոսին ծովեզերքը ոչ անձրև կուգայ, ոչ որոտմունք կ'ըլլայ :

Բերքն է ոսկի, արծաթ, սնդիկ, զմրուխտ. ունի նաև գինի, օղի, շաքար, քինա, բուրգ : Վայրի կենդանիներուն մեջ անուանի է լամա ըսուած ոչխարի նման կենդանին : Թայ տեղուանքը ահագին օձեր ու անթիւ ճճիներ կը գտնուին . տեսակ մը ճճի ալ կայ «-»-իւ ըսուած՝ որ թղթի նման բոյն կը շինէ :

Բնակիչն է 1,700,000 ուղղափառ, բայց կուսպաշտ լեռնցիներ ալ կան :

ԳԼԽԱԽՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԼԻՄԵ (70,000) աս. քաղաքը Սպանիայից շինեցին 1524ին :

ՔՈՒԶՔՈՅ (40,000) փերուի հին թագաւորու թեան մայրաքաղաքն է :

ԼՐԵՔՓԱ (30,000) դիրքը գեղեցիկ, բայց մեծ հրաբուխի մը մօտ ըլլալուն համար՝ շատ գեանա շարժ կ'ունենայ :

— 323 —

ԺԸ. ՊՈՒԼՒՎԵԼ

ՊՈՒԼՒՎԵԼՆ 1825էն 'ի վեր ինքնադաշտի հասարակապետութիւն մըն է :

Երկրին մէջտեղուանքը լեռնոտ, արևելեան կողմը բարեբեր, արևմուտքը անբնակ անապատ :

Բերքն է գինի, ձէթ ու աղնիւ փայտեր :

Բնակիչն է 1,300,000 ուղղափառ :

ԳԼԽԱԽՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԼԵ ՓԼԵԹԻ ԿՈՄՉՈՒՔՐՍԵՔՍ (14,000) ասոր. ք. վերը հարուստ արծաթահանք կայ :

ԼԵ ՓԱԶ (40,000) ոսկեհանքը անուանի է :

ՓՈԹՈՍԻ (11,000) ասոր արծաթահանքը աշխարհիս ամենէն մեծ հանքերէն մէկն է :

## ԺԲ. ՓԵՐԱԿՈՒՆՅ

**ՓԵՐԱԿՈՒՆՅՆ** ատենով Սպանիացւոց ձեռքն էր : Բնակիչներուն մէկ մասը Յիսուսեան կրօնաւորներուն ձեռքովը շատ կրթուեցաւ 1767ին . երբոր անոնք հեռացան , Ժողովուրդն ալ շատ պակսեցաւ : Հիմա ինքնագլուխ հասարակապետութիւն է :

Երկիրը դաշտային ու խիստ բարեբեր :

Գլխաւոր բերքն է չայ , ծխախոտ , բամպակ , շաքար :

Բնակիչը 300,000 ուղղափառ :

Գլխաւոր քաղաքն է ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ (12,000) :



## ԺԳ. ՌԻՈՅ ՏԷ ԼԱ ՓԼԱԹԱ

**ՌԻՈՅ ՏԷ ԼԱ ՓԼԱԹԱՆ** 1515ին Սպանիացիք գտան . 1810ին բնակիչները գլուխ քաշեցին անոնցմէ , ու ինքնագլուխ հասարակապետութիւն մը կ'զան :

Երկրին մեծ մասը թաց է , օդը սառ :

Բերքն է գինի , ձէթ , բամպակ , շաքար ու լամայի ազնիւ բուրդ :

Բնակիչը 1,000,000 ուղղափառ :

Գլխաւոր քաղաքն է ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ (90,000)  
Փլաթա գետին վրայ, օդը շատ աղէկ. վաճառաչահ  
քաղաք է :



## ՃԴ. ՔԻԼԻ կամ ՉԻԼԻ

ՔԻԼԻՒՆ Բնակիչները 1818ին զատուեցան  
Սպանիացւոցմէ ու ազատ հասարակապետութիւն  
եղան :

Քիլին փերուի հարաւային կողմը՝ Քորաիլեան  
լեռներուն ու խաղաղական ովկիանոսին մէջտեղը  
կ'իյնայ :

Երկիրը լեռնոտ ու ջրոտ է. օդը բարեխառն :

Բերքն է պղինձ, ոսկի, արծաթ ու ազնիւ քարեր :

Բնակիչը 1,650,000 ուղղափառ :

Գլխաւոր քաղաքներն են ՍԱՆԹ-ԻԱԿՈՅ, Ե ՎԱԼ  
ՏԻՎԻԱ :




## Ժ Ե Փ Ը Թ Ը Կ ՈՆ Ի Ը

Փ Ը Թ Ը Կ ՈՆ Ի Ը ԱՆ Ամերիկայի հարաւային  
ծայրն է, գրեթէ բոլորն ալ անձանօթ :

Արևելեան ծովեզերքը տաք ու աւազուտ է, և  
անուշ ջուր չունի :

Բնակիչն է 200,000 բարձրահասակ ու հիւրա-  
սէր մարդիկ . ասոնք բնակութեան քաղաք չունին ,  
հասկա խումբ խումբ դաշտերու մէջ կը բնակին :



## ԸՆԹԻՒԼՆԵԱՆ ԿՂՁԻՔ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Ընթիւնեան կղզիները, որ Աշխարհի հարաւորեալ աւելցողին, գտաւ Քրիստոսոսի Քրիստոսոս 1492ին: Ետքը Սպանիացիք կամաց կամաց տիրեցին բոլոր աս կղզիներուն, ու տասը տարուան մէջ Մեծ Անթիլեաններուն բնակիչները ջնջեցին, որ վախկոտ մարդիկ էին:

Փոքր Անթիլեան կղզիներուն բնակիչները որ Քրիստոսոսի կ'ըսուէին, կարիճը ըլլալով Սպանիացեաց շատ գէտ գրին, ինչուան որ 1600ին ատենները Եւրոպայի ուրիշ ազգերը կամաց կամաց զանոնք ալ ջնջեցին:

### ԸՆԹԻՍԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Անթիլեան կ'ըսուէին ան կղզիներն որ հիւսիսային ու հարաւային Ամերիկայի մէջ աւելցողին կ'իյնան:

Աս կղզիները իրեք գլխաւոր խումբ կը բաժնուին. Մեծ Անթիլեանք, Փոքր Անթիլեանք, և Լուբայեան կամ Պահամա կղզիները:

Մեծ Անթիլեան կ'ըսուէին աս չորս կղզիները. Քուպա, Եամայիքա, Հայիթի կամ Սուրբ Գոմի նիկոս ու Փոսթոյ Ուիքոյ:

Փոքր Անթիլեան կղզիներուն գլխաւորներն ասոնք են. Սուրբ Խաչ, Սուրբ Բարթոլոմէոս,

Սուրբ Լուչիա, Սուրբ Վինչենցիոս, Կրանատա,  
Կուսատալուփփա, Մարթինիկէ, Սուրբ Եւատա-  
բէոս, և Քուրասայ :

Լուբայեան կղզիները մանր կղզիներ են Անգ-  
ղիացւոց ձեռքը. ասոնց մէջ անուանի է Կուանա-  
հանի կամ Սան Սալվատոր կղզին, որ Քոլոմպոսի  
աս կողմերը առջի գտած տեղն է :

Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է, ու շատ հրա-  
բուխներ ունի :

Օդը սաք ու թաց է. հոկտեմբերէն ինչուան  
ապրիլ չոր կ'ըլլայ, մնացած ամիսները միակերպ  
անձրև կուգայ :

Սաստիկ մրրիկներ ալ շատ կ'ըլլան աս կղզիները,  
անանկ որ ինչուան շէնքերն ու աները կը փլցընեն :

Հողը շատ սպողաբեր է. գլխաւոր բերքն է լե-  
զակ, բամբակ, շաքար, ծխախոտ, խնիկղէն, և  
Ափրիկէի ու Ասիոյ ամէն բերքերը. միայն թէ Եւ-  
րոսպայի բոյսերն ու կենդանիները հոն Երթան նե՛-  
քիչ ատենի մէջ ցեղերնին կը փոխուի :

Բնակիչն է 2,600,000 :

### ԳԼԽԱՒՈՐ ԲԱՂԱՔՆԵՐԸ

ՀԵՒԵՆԵ (70,000) Քուպա կղզին գլխաւոր  
քաղաքն է, ամուր ու շատ վաճառաշահ :

ՔԻՆԿՍԹՈՆ (33,000) Եամայիքային մէջ երևելի  
վաճառաշահ քաղաք է :

ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ (18,000) Մարթինիկէ կղզին  
մէջ վաճառաշահ քաղաք է :

ՍՈՒՐԲ ԴՈՐՆԻԿՈՍ (12,000) Հայիթի կղզին  
մէջ աս քաղաքը Քոլոմպոսի կղբայրը շինեց :

## ՈՎԿԻՒԱՆԻՍ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՈՎԿԻՒԱՆԻԱՆ Եւրոպայիք գրեթէ Ամերիկան գտած ատեննին գտան, անոնցմէ առաջ Արարացիք ասոր հարստին Արտուր ըսուած կողմը գնացեր ու իրենց հաւատքը տարածեր էին 1100ին կամ 1200ին ատենները, բայց Փորթուգէզները զիրենք հալածեցին :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՒԹ

Ովկիանիա կ'ըսուին հարաւային Ովկիանոսի մէջ զբուած կղզիները, որ բոլորը մեկէն Եւրոպայէն շատ մեծ է :

Տարածութիւնը կը սեպուի 3,100,000 մղոն քառակուսի :

Օդն ընդհանրապէս տաք է, բայց ծովեզերքը բարեխառն :

Երկրին մեծ մասը լեռնոտ է, ծովեզերքն ալ շատ տեղ ժայռերով լեցունն :

Գլխաւոր բերքն է հացի ծառ, բոբոյ, գետնախնձոր ու ամէն տեսակ խնկեղէն :

Բնակիչը 20,300,000, շատը սև, վայրենի, անկիրթ ու սպակասամիտ. ինչուան գեաին բանիլն ալ չեն գիտեր. հիւղերու մէջ կը բնակին, որսորդութեամբ կ'ապրին, ոմանք ալ մարդակեր են :

Բոլոր Ովկիանիան իրեք գլխաւոր մաս կը բաժնուի. Մալէզիա, Ասթրալիա, և Փոլինէզիա կամ Արևելեան Ովկիանիա :

## ԳԼԽԱՒՈՐ ԿՂՋԻՆԵՐԸ

### 1. Մ Ա Լ Է Ջ Ի Ա

Մալէզիոյ բնակիչները Հնդկաստանէն եկած կ'երևան, ու բուն Ովկիանիոյ բնակիչներուն սէս վայրենի ու ագեղ չեն :

Գլխաւոր կղզիներն են Պորնէոյ, Ճաւա, և Սումատրա. ասոնց թագաւորները Հոլանտացւոց հարկատու են. կրօնքնին՝ ոմանցը մահմաական, ոմանցն ալ կռապաշտ : Ճաւային գլխաւոր քաղաքն է՝ ՊԱԹԱՒԻԱ՝ Հոլանտացւոց ձեռքը. օգը վնասակար :

ՊԱՆՔԱ. անագի հարուստ հանք ունի :

ՄՈԼՈՒՔԵԱՆ կղզիները. ասոնց մէկուն մէջ ծառ մը կայ՝ որուն խէժը սասաիկ թոյն է :

ԱՄՊՈՅՆԱ. մեխակի ծառ ունի :

ՊԱՆՏԱ. Հնդկաստանի ընկոյզ ունի :

ՓԻԼԻՊՊԵԱՆ կղզիները. ասոնք աղէկ բարեբեր են, բայց շատ գեոնաշարժ ու փոթորիկ կ'ըլլայ հոս :

## 2. Ա Ի Ս Թ Բ Ա Լ Ի Ա

Աւսթրալիոյ մեծ մասը Հոլանտացիք գտան 1600ին ատենները, անոր համար անունը 'Նոր Հոլանդիա' դրին. ասոր արևելեան ծովեզերքն ալ Վուք նաւապետը գտաւ, ու անունը դրաւ 'Նոր Կալէտանիա': Հիմա Անգղիացիք իրենց երկրին չարագործ մարդիկը հոս քշելով երկիրը շատ ծաղկեցուցին:

Գլխաւոր կղզիներն են՝ Ան Տեմն, որ երկրթի առատ հանք ունի, 'Նոր Կալինէա, 'Նոր Բրիտանիա, 'Նոր Իռլանտա, Սողոմոնի կղզիները, Հոգլոյն սրբոյ կղզիները, 'Նոր Վալէտոնիա, և 'Նոր Զելանտա:

## 3. Փ Ո Լ Ի Ն Է Զ Ի Ա

Փոլինեզիոյ գլխաւոր կղզիները ասոնք են.

ՄԵՐԻԵՄ ԱՆՆԱ կամ ՄԵՐԻԱՆԵԱՆ կղզիք, և կամ ԱԻՆԶԵԿՆԵՆ կղզիները. ասոնց հիւսիսային կողմը ահագին Ժայռ մը կայ բրդածև, որ Ղալիսոյ ին կ'ըսուի:

ՔԵՐՈԼԻՆԵԱՆ կղզիները:

ՄԷՆՏՈՒԷԶ կղզիները. ասոնց մէկուն մէջ սպաննուեցաւ Վուք նաւապետը 1779ին:

'ՆԱՐՈՐԵԱՆ կղզիները, ԲԵՐԵԿԱՄԵԱՆ կղզիները, ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ կղզիները, և ՄԵՐՔԻԶԵԱՆ կղզիները:

# Հ Ա Մ Ե Մ Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Կ Ն

## Ա Շ Խ Ա Ր Հ Ի Ս

### Գ Լ Խ Ա Ի Ո Ր Տ Է Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ց



Ա Շ Խ Ա Ր Հ Ի Ս տերութիւններուն տարածու-  
թեանէն, բնակիչներէն, զօրքէն ու պատերազմական  
նաւերէն կ'իմացուի ընդ հանրապէս իրենց քաղա-  
քական վիճակը . բայց իրարմէ որչափ մեծ կամ  
պզտիկ ըլլալնին ալ որոշ հասկըցընելու համար՝  
հոս քովէ քով կը դնենք գլխաւորները : Կաւելցը-  
նենք նաև ամէն մէկուն գլխաւոր քաղաքը , և անոնց  
լայնութեան ու երկայնութեան աստիճանները  
(Փարիզու միջօրէէն հաշուելով) . ասիկայ մեծ  
գիւրութիւն կրնայ տալ ուսանողներուն քա-  
ղուածք ընելու, ու մայրաքաղաքները գունտի կամ  
աշխարհացուցի վրայ շուտով գտնելու համար :  
Միայն թէ Եւրոպայէն զտո՝ աշխարհիս մէկալ  
մասերուն թէ մեծութիւնները և թէ բնակիչնե-  
րուն թիւը անստոյգ ըլլալուն, մենք հոս անոնց  
միայն գլխաւոր աշխարհները ու իրենց մեծու-  
թեան կամ բնակիչներուն հաւանական թիւերը  
դրինք . իսկ իրենց զօրքը ամենեւին չդրինք :

## Ե Ի Բ Ո Պ Ա

ԵՇԻՅԸՆԻՔ	ՄԵԾՈՒՔ	ԲՆԱԿԻՉ	ԶՕՐՔ	ՆԱԻ	ՄԱՅԲԱՔԱՂԱՔ	ԼԵՅՆ	ԵՐԿ
ԲՐԻՏԱՆԻԱ	90,950	24,000,000	100,000	606	Լճնորա	54 . 30	2 . 26
ՏԱՆԻՄԱՐՔԱ	46,500	2,000,000	30,800	25	Ք. Կիլենհայկ	55 . 40	10 . 14
ՇՈՒԿՏ	220,000	4,000,000	45,000	240	ՍԹոբոլ	59 . 20	15 . 43
ՌՈՒՍԱՍԱՆ	1,536,000	56,500,000	720,000	260	Փեթրոպոլի	59 . 46	27 . 59
ԳԱՂՂԻԱ	150,000	34,200,000	300,000	320	Փարիզ	48 . 50	0 . 0
ՊԵՂՃԻԱ	8,200	3,800,000	45,000	..	Պրուսիա	50 . 51	2 . 1
ՀՈՒՍՏԱ	9,800	2,500,000	30,000	100	Ամսթերամ	52 . 22	2 . 32
ՉՈՒՅԵՐԻ	44,200	2,000,000	..	..	Յուրթ	47 . 22	6 . 12
ԱՌՍՏՐԻԱ	200,000	34,000,000	300,000	60	Վենետիկ	48 . 12	14 . 2
ԲՐՈՒՍԻԱ	40,000	16,180,000	200,000	..	Պեդան	52 . 30	11 . 3

ԳԵՐՄԵՆԻԷ	180,000	34,500,000	...	...	Ֆրանկֆուրթ	50 . 6	6 . 21
ՊԵՐՏԻԵ	22,120	4,070,000	35,800	...	Մոնպարյ	48 . 8	9 . 16
ՍԵՐՍՈՆԻԷ	4,340	1,400,000	12,000	...	Տրեզուս	51 . 3	11 . 23
ԼՆՆՈՎԷՐ	11,125	1,550,000	13,000	...	Լինոլէր	52 . 22	7 . 24
ՎԻՐՔԷՄՊ .	5,720	1,520,000	13,900	...	Շիուլիկարս	48 . 46	6 . 50
ՓՈՐՓՈՒԹԵԼ	30,000	3,700,000	30,000	47	Լիպոնա	38 . 42	11 . 28
ՍՊԵՆԻԷ	130,000	14,000,000	90,000	56	Մարսիս	40 . 24	6 . 12
ՍԵՐՏԵՆԻԷ	21,000	4,300,000	47,000	12	Թուրին	45 . 4	5 . 21
ԹՈՍՔԵՆԷ	6,636	1,200,000	4,000	...	Ֆիորենցա	43 . 46	8 . 55
ՀՈՍՄ	13,000	2,600,000	7,500	...	Համբ	41 . 53	10 . 8
ԿԵՓՈԼԻ	31,400	7,400,000	51,500	17	Կաֆոլե	40 . 51	10 . 55
ՓԵՐՄԷ	1,660	440,000	1,800	...	Փարմա	44 . 48	7 . 59
ՄՈՏԵՆԷ	1,570	409,000	1,780	...	Մոսկոնա	44 . 38	8 . 35
ՏԵՃՐԱՍԵՆ	112,500	9,000,000	300,000	135	Կոստանդն .	41 . 0	26 . 38
ՅՈՒՆԱՍԵՆ	12,000	900,000	12,000	20	Աթէնք	37 . 58	21 . 23

# Ա Ս Ի Ա

ԱՇԽԱՏԱԿ	ՄԵԾՆՈՒԹ.	ԲՆԱԳԻՉ	Գ.Լ.Թ. ԲԵՂԱՔ	ԱՅՅՆ.	ԵՐԿ.
ԱՍԻՈՅ ՌՈՒՍ.	4,000,000	3,600,000	Թուրքիա	58. 12	65. 58
ԱՍԻՈՅ ՏԱՏԿ.	55,000	12,500,000	Հայկա	36. 11	34. 45
ՀԱՅԱՍՏԱՆ	150,000	5,000,000	Կարին	39. 0	39. 40
ԱՐԱՐԵ	800,000	12,000,000	Մաշխաթ	23. 58	56. 20
ՊԱՐՍՅԱՍՏԱՆ	340,000	9,000,000	Ասպահան	72. 39	49. 24
ԱՖՂԱՆՍՏԱՆ	200,000	10,000,000	Գանդահար	33. 52	62. 9
ԹՈՒՐԿԱՍՏԱՆ	500,000	3,000,000	Պուսարա	39. 18	61. 0
ՀՆԴԿԱՍՏԱՆ	1,000,000	150,000,000	Կալկաթա	22. 33	86. 0
ՉԻՆ	4,000,000	363,000,000	Փեքին	39. 54	114. 8
ՃԱՓՈՆ	180,000	25,000,000	Եսո	35. 20	36. 0

Ա Փ Ր Ի Կ Է

ԱՇԽԱՏԱԿ	ՄԵԾՈՒԹ .	ԲՆԱԿՈՒՄ	ՔԼՈ . ՔԱՂԱՔ	ԼԱՅՆ .	ԵՐԿ .
ԷԳԻՊՏՈՍ	150,000	4,000,000	ԳաՏրի	30 . 2	28 . 55
ՊԵՐՊԵՐՍԻԱ	400,000	18,000,000	Թուրքի	36 . 47	7 . 51
ՍՍՐԻԱ	300,000	4,000,000	Թուրքի	23 . 30	2 . 15
ՍԵՆԿԵՆԻԱ	150,000	12,000,000	Պանդուր	12 . 15	11 . 35
ԿՈՐԻՆԻԱ	300,000	10,000,000	Պանդուր	6 . 0	2 . 30
ՆԻՊՈՒՐ	700,000	20,000,000	Պանդուր	21 . 0	19 . 25
ՆՈՒՐ	120,000	2,000,000	Սեյան	13 . 20	31 . 30
ԵՐԵՎԱՆ	150,000	4,000,000	Կենտրոն	13 . 10	35 . 20
ՀԱՐԱՆ . ԱՓՐԻԿԷ	1,800,000	12,800,000	Գլխի Բարեբաղ	33 . 56	13 . 5
ԿԱՋԱՆԻԱ	100,000	5,000,000	Երկաթի կողմ	27 . 45	16 . 5

## Ա Մ Ե Ր Ի Կ Ա

ԱՇԽԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ	ՄԵՆՍՈՒԹ .	ԲՆԱԿԻՉ	ԳԼԽ . ՏԵՂ .	ԼԱՅՆ .	ԵՐԿ .
ՆՈՐ ԲԵՐՏԱՆԻՆ	1,500,000	1,000,000	Վ. Է. Կ. Բ.	46 . 49	73 . 36
ՄԻՆԵՐՍԻ ԿՆԱՆ .	1,500,000	13,000,000	Վ. Է. Կ. Բ.	38 . 53	79 . 22
ՄԵՐՍԻՆԻՆ	1,300,000	8,000,000	Մ. Է. Կ. Բ.	19 . 25	40 . 25
ՎՈՂՈՒՄՊԻՆ	350,000	2,800,000	Վ. Է. Կ. Բ.	0 . 14	81 . 5
ՊԵՆՆԻՆ	2,250,000	5,000,000	Ռ. Է. Կ. Բ.	22 . 54	45 . 35
ՓԵՐՈՒ	370,000	1,700,000	Լ. Է. Կ. Բ.	12 . 2	79 . 27
ՊՈՒՐՊԻՆ	310,000	1,300,000	Փ. Է. Կ. Բ.	2 . 23	78 . 11
ՓԼԵՐՍ	800,000	1,000,000	Պ. Է. Կ. Բ.	34 . 36	60 . 44
ՎԻՆՆ	130,000	1,650,000	Ս. Է. Կ. Բ.	50 . 42	77 . 48
ԱՆՔԻՆԻՆ	50,000	2,600,000	Հ. Է. Կ. Բ.	23 . 9	84 . 42
ՈՎԿԻՆԻՆ	3,100,000	20,300,000	Ն. Է. Կ. Բ.	45 . 54	164 . 49

# ՄԸՄՆ ԵՐՐՈՐԳ

## ԵՇԽԵՐՋԵԳՐՈՒԹԻՒՆ

### ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ



1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ աշխարհագրութիւնը կը սորվեցընէ աշխարհիս գիւղքը, ու երկրիս ուրիշ երկնային մարմիններուն հետ ունեցած վերաբերութիւնները :

2. Երկնքին ու երկրիս գիւղքը երկու գունտի վրայ կ'երևայ . որոնց մէկը կ'ըսուի Երկնագիւղք, մէկալը Երկնագիւղք :



1. Ուսումնական աշխարհագրութիւնը ինչ կը սորվեցընէ :

2. Աշխարհիս գիւղքը ինչով կրնայ խմացուիլ : — Քանի տեսակ գունտ կայ :

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

1. Ան գիծն որ երկու կէտի մէջ քաշուած գը-  
ծերուն ամենէն կարճն է, կ'ըսուի Ուշիչ գիծ .  
մեկալները կ'ըսուի գիծ : (Ձև 1 :)

2. Ան գծերն որ իրարմէ միշտ նոյն հեռաւորու-  
թիւնը ունին, կ'ըսուին Չափահասակ : (Ձև 2 :)

3. Երբոր երկու գիծ մեկզմէկ կարեն, Անիւն  
կ'ըսայ : (Ձև 3 :)

4. Երբոր մէկ գիծ մը ուրիշ գծի վրայ անանկ  
իջնայ, որ տակի գծին երկու կողմէն ալ հաւասար  
հեռաւորութիւն ունի, ան գիծը Ուշահասիչ  
կ'ըսուի . ու երկուքէն ձևացած անկիւնն ալ Ուշիչ  
անիւն կ'ըսայ, որ իննսուն աստիճանի բացուածք  
կ'ունենայ : (Ձև 4 :)

5. Թէ որ անկեան մը բացուածքը ուղիղ անկիւ-  
նէն սակաւ քիչ քիչ Մուտ անիւն կ'ըսուի . (Ձև 5 .)  
Իսկ թէ որ աւելի քիչ, Բուտ անիւն : (Ձև 6 :)

6. Բուտիւն ան կոր գիծն է, որ շարունակ իր  
շակութեանէն ծուկով երկու ծայրերը իրարու կը

---

1. Ո՞րն է ուղիղ գիծը : — Կոր գիծը :

2. Չափահասակներն ո՞րն է :

3. Ի՞նչպէս կ'ըսայ անկիւնը :

4. Ուղահասակացըն ո՞րն է : — Ո՞րն է ուղիղ ան-  
կիւնը : — Մէկ ուղիղ անկիւնը քանի աստի-  
ճան է :

5. Սուր անկիւնը ո՞րն է : — Բուտ անկիւնը ո՞րն է :

6. Ի՞նչ է բոլորակը : — Կեդրոնը ո՞րն է :

գայլին : Բոլորակին մեջտեղի կէտը կ'ըսուի Կէտրան .  
որ շրջապատին ամէն կողմէն հաւասար հեռու է :  
(Ձև 7)

1. Ամէն բոլորակ, թէ մեծ ըլլայ թէ սլափի,  
360 աստիճան կը բաժնուի. ամէն մէկ աստիճանը 60  
մաս . ամէն մէկ մասն ալ 60 մանրամաս : (Ձև 10)

2. Աստիճանը սովորաբար այսպէս կը գրուի (°),  
մասը այսպէս ('), մանրամասը այսպէս (") :

3. Շառաւիչը բոլորակի մը կեդրոնէն ինչուան  
շրջապատը քաշուած գիծն է : (Ձև 7)

4. Ան գիծն որ բոլորակին կեդրոնէն անցնելով  
երկու շրջապատին կը գայլի, ու բոլորակը երկու  
հաւասար կտոր կը բաժնէ, կ'ըսուի Տրամագիծ :  
(Ձև 7)

5. Առանցք է գնտին մեջտեղէն անցած գիծը :  
Աս գծին ալ երկու ծայրերը Բևեռ կ'ըսուին :

6. Զոգահեռական Բուրակ կ'ըսուին մէկ կեդրոնի  
վրայ քաշուած այլևայլ բոլորակները : (Ձև 8)

7. Արբալէտրան Բուրակն ան է որ երկու բոլորակ  
մէջէ մէջ այլևայլ կեդրոնով կը քաշուին : (Ձև 9)



1. Բոլորակը քանի՞ կը բաժնուի :
2. Բոլորակին աստիճաններն ու մասերը ի՞նչպէս  
կը գրուին :
3. Բոլորակին շառաւիղը ո՞րն է :
4. Ո՞րն է տրամագիծը :
5. Առանցքը ի՞նչ է :
6. Ո՞րն է զուգահեռական բոլորակը :
7. Արտակեդրոն բոլորակը ո՞րն է :

# ԳՆՏԵԲԸՆ ՈՒԹԻՒՒՅ

## ԵՐԿՐԱԳՈՒՅՏ

1. ԵՐԿՐԱԳՈՒՅՏԸ երկրիս ձևին նման դործիք մըն է, որուն վրայ կ'երևնայ բոլոր երկրիս երեսը, շարժմունքը ու աշխարհագրական բաժանմունքները :

2. Երկրագնաին վրայ ութը շրջանակ կայ. չորսը մեծ, չորսը սզտիկ : (Ձև 11)

## ԳՆՏԻՆ ՄԵԾ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

3. Գնաին մեծ շրջանակներն են, Հորիզն, Միջօրեայ, Հասարակած, և Ծիր խաւարձան :

4. Ասոնք մեծ շրջանակ կ'ըսուին, վասն զի գունտը երկու հաւասար կտոր կը բաժնեն :

1. Ի՞նչ է երկրագունտը :

2. Երկրագնաին վրայ քանի՞ շրջանակ կայ :

3. Գնաին մեծ շրջանակները որո՞նք են :

4. Ինչո՞ւ մեծ շրջանակ կ'ըսուին :

Ա. ՀՈՐԻՉՈՆ

1. Հորիզոնը մարդու մը կեցած տեղին չորս դին էրեցած կը որ գիծն է :

2. Երկու կերպ հորիզոն կայ . մէյնը ԶԳ՝ԱԷ՛, մէյնն ալ Ի՛մանալէ :

3. Զգալի հորիզոնը ան կը որ գիծն է , որ մարդ մը դաշտի կամ ծովու մէջ կեցած ասե՛նը երկինքը երկրիս հեա կը սկըլոր կըսածի սէս կը տեսնէ :

4. Խմանալի հորիզոնը մարդուս կեցած տեղին չորս գիէն 90 աստիճան հեռու եղած շրջանակն է , որ գունաը երկու հաւասար կիսագունա կը բաժնէ :

5. Խմանալի հորիզոնով կիմացուի աստղերուն ելլելու ու մանելու ատեննին :

6. Գնաի վրայ խմանալի հորիզոնը լայն ու տա փարակ շրջանակ մըն է , որուն վրայ սյլեայլ գծեր նշանած են : Աս գծերուն մէկը կը ցուցնէ տասու երկու կենդանակերպները , ամէն մէկը 30 աստիճան բաժնուած : Երկրորդ գծին վրայ նշանած են կենդանակերպներուն անունները և ամսուն օրե .

---

1. Ի՛նչ է հորիզոնը :

2. Քանի՛ տեսակ հորիզոն կայ :

3. Զգալի հորիզոնը ո՞րն է :

4. Խմանալի հորիզոնը ո՞րն է :

5. Խմանալի հորիզոնը ի՛նչ բանի կուգայ :

6. Գնաին վրայի խմանալի հորիզոնին վրայ ի՛նչ գծեր քաշած կան :

ըր : Երբորդ գիծը 32 հաւասար կտոր բաժնած է ,  
32 հովերուն չափովը . ամէն մէկ կտորն է 11° , 15' :  
Չորրորդն ալ 360 աստիճանն բաժնուած է , ու չորս  
կտոր ըրած՝ իննանական աստիճանով :

1 . Իմանալի հորիզոնին երկու բևեռներն են  
Չէնի կամ Գագալնալէք , և Նափիբ կամ Սաւալէք :

2 . Չէնիթը շիփշխտակ մեր գլխուն վրայ եղած  
երկնքին մեջտեղի կէսն է :

3 . Նափիբ կ'ըսուի զէնիթին շակութեամբ մեր  
ոտքին տակէն անցած՝ վարի կիսագնտին մեջտեղի  
կէտը :

Բ . ՄԻՋՕՐԵՅՅ

4 . Միջօրէան է ան շրջանակը , որ բևեռէ բևեռ  
ձգուելով հասարակածը կը կարէ , ու գունտը եր-  
կու հաւասար կտոր կը բաժնէ :

5 . Անոր համար միջօրէայ կամ միջօրէանի կ'ըսուի  
աս շրջանակը , որ արևը վրան հասնելուն պէս՝ աս  
շրջանակիս տակը եղած քաղաքներուն կէտը  
կ'ըլայ :

6 . Կէս գիշեր ան ատենը կ'ըլայ մեզի , երբոր  
արևը վարի կիսագնտին միջօրէին վրայ է :

1 . Իմանալի հորիզոնին բևեռները որո՞նք են :

2 . Ո՞րն է զէնիթը :

3 . Ո՞րն է նափիբը :

4 . Ո՞րն է միջօրէական շրջանակը :

5 . Ինչո՞ւ համար միջօրէայ կ'ըսուի :

6 . Ե՞րբ կէս գիշեր կ'ըլայ :

1. Գնտին վրայ 24 հաս միջօրէական դժեր քաշուած են, ամէն մէկը իրարմէ 15 աստիճան հեռու, որ մէկ ժամ կ'ընէ :

ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ ՈՒ ԼԱՅՆՈՒԹԵԱՆ ԵՍՏԻՃԱՆՆԵՐ

2. Տեղ մը ուրիշ տեղէ որչափ հեռու ըլլալը իմանալու համար երկու տեսակ աստիճան կայ, մէկը Երիւնդան-Բէան աստիճան, մէկալը Լայնո-Բէան աստիճան :

3. Երկայնութեան աստիճան կ'ըսուին բևեռէ բևեռ քաշուած միջօրէական դժերը :

4. Երկայնութեան աստիճաններով կ'իմացուի թէ մէկ քաղաք մը մէկալ քաղաքէն որչափ հեռու է արևելքէն դէս 'ի արևմուտք :

5. Աս աստիճանները հասարակածին վրայ նշանած են :

6. Երկայնութեան առաջին աստիճանը, որ Առաջին Դիօրէայ ալ կ'ըսուի, հին ատենը Գաղղիացիք Երկաթի կղզիէն սկսան համրել, բայց հիմա ամէն աղք իր գլխաւոր գիտարանէն կը համրէ :



1. Գնտին վրայ քանի՞ միջօրէական քաշուած կայ :

2. Երկու տեղի իրարմէ հեռաւորութիւնը ինչպէս կ'իմացուի :

3. Երկայնութեան աստիճանները որո՞նք են :

4. Երկայնութեան աստիճանները ի՞նչ բանի կուգան :

5. Երկայնութեան աստիճանները ո՞ւր գրած են :

6. Ուսկի՞ց կըսկսի երկայնութեան առաջին աստիճանը :

1. Լայնութեան աստիճան կ'ըսուին հասարակածին շտկութեամբ քաշուած զուգահէտական գծերը :

2. Աս աստիճանները գրած են միջօրէական շրջանակին վրայ :

3. Լայնութեան առաջին աստիճանը հասարակածն է. մէկալ աստիճաններն ալ անկէ կ'ըսկսին համրուիլ, ու կ'երթան ինչուան բևեռները, որ բոլորը մէկէն 90 հաս կ'ըլան :

4. Լայնութեան աստիճաններով կը չափուի թէ մէկ քաղաք մը մէկալ քաղաքէն ո՞րչափ հեռաւորութիւն ունի դէպ 'ի բևեռները. կամ թէ մէկ քաղաք մը հասարակածէն ո՞րչափ հեռու է :

Գ. ՀԱՍԱՐԿԱԿԱԾ

Յ. Հասարակածը ան շրջանակն է որ երկու բևեռներէն իննսնական աստիճան հեռու՝ արևելքէն դէպ 'ի արևմուտք ձգուած է, ու գունար երկու հաւասար կտոր կը բաժնէ, Հիւսիսային ու հարաւային կիսագունս :

1. Ո՞րն է լայնութեան աստիճանը :

2. Լայնութեան աստիճանները ո՞ւր գրած են :

3. Լայնութեան աստիճանները ուսկի՞ց կ'ըսկսին համրուիլ :

4. Ի՞նչ բանի կը գործածուին լայնութեան աստիճանները :

5. Ո՞րն է հասարակածը :

1. Անոր համար հասարակած կ'ըսուի աս շրջանակը, վասն զի ասոր տակի բնակիչներուն գիշերն ու ցորեկը գրեթէ միշտ հաւասար է:

2. Գիշերահասարակած կ'ըսուին հասարակածին ան կէտերը, որ ծիր խաւարմանը կը կտրեն. վասն զի արեւը աս կէտերուն վրայ հասնելուն պէս՝ բոլոր աշխարհք գիշեր ու ցորեկ հաւասար կ'ըլլայ:

Գ. ԾՒՐ ԽԱՒԱՐԾԱՆ

3. Ծիր խաւարման գիծն է որ հասարակածին վրայ քովընտի ձգուած է ինչուան լայնութեան 23° 1/2. ասիկայ կը ցուցնէ թէ արեւը իր տարեկան շրջանը որ ճամբով կ'ընէ երկնքին մէջ:

4. Ծիր խաւարման ըսուելուն պատճառն է, որ արեւն ու լուսինը գիմացէ գիմաց ան դժին վրայ հանդիպելու ըլլան նէ՛ խաւարում կ'ըլլայ:

ԳՆՏԻՆ ՊԶՏԻ ՇԲԶԱՆԱԿՆԵՐԸ

5. Գնտին վրայի չորս սղտի շրջանակները ասոնք են. Արեւոտարի խեցփեփի, Արեւոտարի այծեշէր, Աշտային շրջանի, հաւարջային շրջանի:



1. Ինչո՞ւ հասարակած կ'ըսուի:
2. Որո՞նք են գիշերահաւասարները:
3. Ո՞րն է ծիր խաւարմանը:
4. Ինչո՞ւ ծիր խաւարման կ'ըսուի:
5. Գնտին սղտի շրջանակները որո՞նք են:

1. Աբեադարձ խեղճեանի կ'ըսուի հիւսիսային լայնութեան 23° 1/2 աստիճանին վրայի շրջանակը վասն զի արևը իր տարեկան շրջանովը հոս հասածին պէս, կըսկսի գէսլ 'ի հարաւ դառնալ :

2. Աբեադարձ այժեղջեր կ'ըսուի հարաւային լայնութեան 23° 1/2 աստիճանին վրայի շրջանակը վասն զի արևը ինչուան հոս հասնելէն ետքը՝ նորէն գէսլ 'ի հիւսիս կը դառնայ :

3. Բեեաային շրջանակի կ'ըսուին անոնք որ գիշերահաւասարէն ետքը մէյնը մէկը մէյնը մէկալը արև չեն տեսներ : Աս շրջանակները կ'ըսուին նաև Աբշային ու Հաիարշային շրջանակի, ու բեեաներէն 23° 1/2 աստիճան հեռու են :

### ԳՆՏԻՆ ԲԵԻՆՈՒՆԵՐԸ

4. Երկրիս բեեաներն են առանցքին երկու ծայրերը . մէկը կ'ըսուի Հիսիսային բեեա, մէկալը Հարաային :

5. Գնտին վրայ հիւսիսային բեեակն ծայրը սղնձէ սղախի շրջանակ մը կայ, որ յաճախան շրջանակի կ'ըսուի . ասոր վրայ գրած են օրուան 24 ժամերը, և կը գործածուի աստղերուն կամ քաղաքներուն իրարմէ քանի ժամ հեռու ըլլալը իմանալու համար :

1. Ո՞րն է արևադարձ խեցգեանի :

2. Ո՞րն է արևադարձ այժեղջեր :

3. Բեեաային շրջանակները որո՞նք են :

4. Երկրիս բեեաները որո՞նք են :

5. Երկրիս շրջանակը ո՞րն է : — Երկրիս շրջանակը ի՞նչ բանի կուգայ :

## ԳՆՏԻՆ ԱՐԱՅԻ ԳՕՏԻՆԵՐԸ

1. Գնտին վրայ հինգ գօտի կայ. մէկը կ'ըսուի Այրեցած գօտի, երկուքը Բարեխառն գօտիներ, երկուքն ալ Յրօթի գօտիներ :

2. Այրեցած գօտին է երկու արևադարձներուն միջոցը, ուր որ արևը ուղղահայեաց զարնելով սաստիկ կը տաքցընէ : Աս գօտիին լայնութիւնն է 47° սասիճան :

3. Այրեցած գօտիին բնակիչները Երօթիէն կ'ըսուին. վասն զի արևը դէպ 'ի հիւսիս գնացած ատենը՝ շուքերնին հարաւային դին կը ձգեն, հարաւ գնացած ատենն ալ դէպ 'ի հիւսիս : Հասարակածին տակի բնակիչներն ալ Արօթիէն կ'ըսուին, վասն զի կէսօրը իրենց գլխուն վրայ արևը շիփշիտակ զարնելով ամենեկին շուք չեն ունենար :

4. Բարեխառն գօտիներն են արևադարձներուն ու բևեռային շրջանակներուն միջտեղի միջոցները. որովհետև հոնտեղը արևը քովընտի զարնելով օդին տաքութիւնը բարեխառն կ'ըլլայ : Աս գօտիներուն լայնքն է 43° սասիճան :



1. Գնտին վրայ քանի՞ գօտի կայ :
2. Այրեցած գօտին ո՞րն է :
3. Այրեցած գօտիին բնակիչները ինչո՞ւ երկասուեր կ'ըսուին : — Որո՞նք են անտուեր :
4. Որո՞նք են բարեխառն գօտիները :

1. Բարեխառն գօտիներուն բնակիչները Միսս֊  
ֆոսէր կ'ըսուին, վասն զի շուքերնին միշտ դէսս 'ի  
բևեռ կը ձգեն :

2. Յրտային գօտիներն են բևեռային շրջանակ  
ներէն ինչուան բևեռ եղած միջոցները, և հոնտե  
ղերը խիստ ցուրտ կ'ըլլայ : Աս գօտիներուն լայնու  
թիւնն է  $23^{\circ} . 30'$  :

3. Յրտային գօտիներուն բնակիչները Շշմս֊  
ֆոսէր կ'ըսուին, վասն զի արեւը  $23^{\circ} \frac{1}{2}$  աստիճանէն աւելի  
հորիզոնէն վեր չբարձրանալուն համար՝ առանց  
մտնալու իրենց չորս գին կը սալաթի, ասով շուքեր  
նին ալ միշտ իրենց չորս գին դառնալով՝ շրջա  
սուեր կ'ըսուին :

### ԿԼԻՄԱՅ

4. Կլիմայ ըսելով կ'իմացուի հասարակածէն դէսս  
'ի բևեռ այնչափ միջոցը, որով կը փոխուին օրե  
րուն իրարմէ ունեցած երկայնութիւնն ու կար  
ճութիւնը :

5. Երկու տեսակ կլիմայ կայ, յամախն ու Աճ  
ստիան :



1. Բարեխառն գօտիներուն բնակիչները քանի՞  
սուեր ունին :

2. Յրտային գօտիները որո՞նք են :

3. Յրտային գօտիներուն բնակիչները քանի՞ ըս  
տուեր ունին :

4. Ի՞նչ է կլիման :

5. Քանի՞ տեսակ կլիմայ կայ :

ԺԱՄԱԿԱՆ ԿԼԻՄԱՆԵՐ

1. Եամական կլիմաները 24 հատ են, որ հասարակածէն կրակսին ու ինչուան լայնութեան 66° աստիճանը կ'երթան:

2. Ամէն մէկ կլիմային երկայն օրը իրմէ առջի կլիմային երկայն օրէն կէս ժամ աւելի է:

3. Հասարակածէն ինչուան 8 աստիճան տեղ Առաջին իւժմայ կ'ըսուի, վասն զի հոնտեղի օրը հասարակածին տակի օրէն կէս ժամ աւելի երկայն կ'ըլայ. 8°էն ինչուան 16° Երկրորդ իւժմայ. 16°էն ինչուան 24° Երրորդ իւժմայ, և այլն: Ասանկով Եամական կլիմաներուն միջոցը քանի կ'երթայ՝ կը սղտիկնայ: Ասկէց կը հետևի որ, եթէ մէկ տեղի մը երկայն օրը գիտնանք, հոնտեղի կլիման ալ կըրնանք իմանալ: Օրինակի համար՝ թէ որ Աոստանդնուսօլսի երկայն օրը 15 ժամ է, ուրեմն Աոստանդնուսօլսի վեցերորդ կլիմային տակն է: Նոյնպէս երբոր գիտնանք թէ Աոստանդնուսօլսի վեցերորդ կլիմային տակն է, կ'իմանանք որ հոնտեղի ամենէն երկայն օրը 15 ժամ է:

1. Եամական կլիմաները քանի՞ հատ են:

2. Կլիմաները իրարու ինչպէս կը համեմատին:

3. Կլիմաները իրարմէ ինչպէս կ'աւելնան:

ԿԼԻՄԱՅ	ՕՐՈՒՄՆ		ԼԱՅՆՈՒԹԵՄՆ	
	ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆ		ԱՍՏԻՃՄՆ	
	ժՄ.	ր.		
0	12	0	0 <sup>n</sup> .	0'
1	12	30	8 .	34
2	13	0	16 .	43
3	13	30	24 .	10
4	14	0	30 .	46
5	14	30	36 .	28
6	15	0	41 .	21
7	15	30	45 .	29
8	16	0	48 .	59
9	16	30	51 .	57
10	17	0	54 .	28
11	17	30	56 .	36
12	18	0	58 .	25
13	18	30	59 .	57
14	19	0	61 .	16
15	19	30	62 .	24
16	20	0	63 .	20
17	20	30	64 .	8
18	21	0	64 .	48
19	21	30	65 .	20
20	22	0	65 .	46
21	22	30	66 .	6
22	23	0	66 .	20
23	23	30	66 .	28
24	24	0	66 .	32

ԱՄՍԵԿԱՆ ԿԼԻՄԱՆԵՐ

1. Ամսական կլիմաները բեւառային շրջանակներէն ինչուան բեւեռները կ'երթան. ասոնց առջի կլիման մէկ ամիս օր կ'ուշե՛նայ, ու օրերնին իրարմէ մէյմէկ ամիս կ'աւելնան: Ամսական կլիմաներուն միջոցը համեմատութեամբ քանի կ'երթայ կը լայննայ:

ԿԼԻՄԱՆ	ՕՐՈՒՆ		ԼՅՅՆՈՒԹԵԱՆ	
	ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆ		ԱՍՏԻՃԱՆ	
1	1	ամիս	67°	23'
2	2	ամիս	69	10
3	3	ամիս	73	39
4	4	ամիս	78	31
5	5	ամիս	84	5
6	6	ամիս	90	0

1. Ամսական կլիմաները օրո՛նք են:

Գ Ի Ր Բ Գ Ն Տ Ո Յ

1. Արևը երկրիս ամէն դին հաւասար չղարներ ,  
հապա տեղ տեղ շխտակ՝ տեղ տեղ ալ քովընտի .  
անոր համար գունտան ալ իրեք տեսակ գիրք կ'ու-  
նենայ . Ուշիչ, խոփոբ ու Զոգահեռան :

2. Գնտին ուղիղ գիրքը ան է որ երկու բեւեռ-  
ները ճիշդ հորիզոնին վրայ կ'ըլլան : (Ձև 12)

3. Հասարակածին տակի բնակիչները ուղիղ  
գիրք ունին . որով երկնքին ամէն աստղերը կը տես-  
նեն , ու բոլոր տարին իրենց գիշերն ու ցորեկը  
հաւասար կ'ըլլայ :

4. խոտոր գիրք գնտոյ կ'ըսուի՝ թէ որ բեւեռ-  
ներուն մէկը հորիզոնէն վեր բարձրանայ , մէկալը  
հորիզոնէն վար մնայ : (Ձև 13)

5. Աս գիրքը կ'ունենան բարեխառն գօտիներուն  
բնակիչները , և իրենց օրը գիշերահաւասարներէն  
զատ միշտ փոփոխելու հետ է . երբեմն կ'երկըննայ,  
երբեմն ալ կը կարճընայ :

6. Զուգահեռական կ'ըսուի գունտին ան գիրքն  
որ հասարակածը հորիզոնին հետ զուգահեռական

---

1. Գնտին գիրքը ի՞նչ է :

2. Գնտին ուղիղ գիրքը ո՞րն է :

3. Ո՞ր տեղի բնակիչները աս գիրքը ունին :

4. Գնտին խոտոր գիրքը ո՞րն է :

5. Ո՞ր տեղի բնակիչները խոտոր գիրք ունին :

6. Զուգահեռական գունտը ո՞րն է :

է, բեւեռներուն ալ մէկը գէտ 'ի զէնիթ' մէկալը  
գէտ 'ի նատիր շտկած է : (Ձև 14)

1. Աս գիրքը կ'ուսենան երկու բեւեռներուն  
բնակիչները . որովհետև գիշերահաւասարէն ետքը  
արևը իրենց հորիզոնէն վեր չելեր , անոր համար  
վեց ամիս ցորեկ՝ վեց ամիս ալ գիշեր կ'ուսենան :

2. Գնաին վրայի բնակիչները իրարու համե-  
մատութեամբ որը հանդիպեալ կ'ըսուին , որը  
Շքեմալ , որն ալ հանդիպեալ :

ՀԱՆԴԻՊԱԲՆԱԿ , ՇՔԵՄԱԲՆԱԿ , ՀԱԿՈՏԵՆԵՆՅ

3. Հանդիպաբնակ կ'ըսուին անոնք , որ նոյն մի-  
ջօրէին տակը կը բնակին , մէկը գէտ 'ի հիւսիս մե-  
կալը հարաւ , ու հասարակածէն նոյն հեռաւո-  
րութիւնը ունին :

4. Շքեմալ եւ անոնք՝ որ հասարակածին մէկ  
կողմը նոյն լայնութեան աստիճանին վրայ կը բնա-  
կին :

5. Հակոտնեայ կ'ըսուին անոնք որ մի և նոյն լայ-  
նութեան աստիճանին տակը կը բնակին , մէկը հիւ-



1. Ո՞ր տեղի բնակիչները զուգահեռական գիրք  
կ'ուսենան :
2. Գնաին վրայի բնակիչները իրարու համեմա-  
տութեամբ ի՞նչ անուն կ'ուսենան :
3. Հանդիպաբնակները ո՞րոնք են :
4. Որո՞նք են շքեմալները :
5. Որո՞նք են հակոտնեայները :

սխալյին գին՝ մեկալը հարաւային . բայց անանկ որ նոյն երկայնութեան աստիճանին մեկը մէկ կողմը իյնայ, մեկալը անոր ներհակ կողմը :

ԳՆՏԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ

Ա.

1. Գունտը շտկել կ'ըսուի մէկ գնտին գիրքը տեղի մը կամ քաղաքի մը հորիզոնին յարմարցընելը :

Բ.

2. Գնտին վրայ տեղի մը լայնութիւնն ու երկայնութիւնը գտնելու համար պէտք է ան քաղաքը միջօրէական շրջանակին տակը բերել, ու նայելու է թէ նոյն միջօրէականին վրայ ինչ թիւ գրած է . ան թիւը քաղաքին լայնութեան աստիճանն է : Ետքը նոյն շտկութեամբ հասարակածին վրայ ինչ թիւ որ գրած կայ՝ անիկայ ալ երկայնութեան աստիճանն է : Զոր օրինակ թէ որ Կոստանդնուպօլիս քաղաքին լայնութիւնը ըսածիս պէս փընտուեմ, կը գտնեմ 41° աստիճան, երկայնութիւնն ալ 26° աստիճան, 38' մաս :



1. Գունտը շտկել ինչ ըսել է :

2. Գնտին վրայ քաղաքի մը լայնութիւնն ու երկայնութիւնը ինչպէս գտնալու է :

Գ

1. Քաղաքի մը լայնութեանը դիրքով գունարը շտկելու համար՝ առաջ պէտք է ան քաղաքը միջօրէականին տակը տանիլ, որ լայնութեան աստիճանը խմացուի. և բևեռը լայնութեան աստիճանին չափովը հորիզոնէն վեր վերցընելու է :

Գ

2. Թէ որ ուղեհը խմանալ թէ այսչափ լայնութեան աստիճանները քանի մղոն կ'ընեն, առաջ աս դիտնալու է որ լայնութեան մէկ աստիճանը 60 մղոն է. ուստի ան քաղաքին աստիճաններն ալ վաթսուհով բազմապատկելու է, որ քանի մղոն ըլլաք խմացուի : Օրինակի համար դնենք թէ Չմիւռնիոյ լայնութեան աստիճանն է 38°. 25', աս լայնութեան աստիճանները 60ով բազմապատկելու ըլլամ'նէ 2280 մղոն կ'ընէ. 25 մասին համար ալ աւելցընեմ քսանըհինգ մղոն, կ'ըլլայ 2305, որ ըսել է թէ Չմիւռնիան հասարակածէն 2305 մղոն հեռու է : Ասանկ կ'ընեմ մէկալ ամէն ուղած քաղաքներս ալ :



1. Գունարը ի՞նչպէս քաղքի մը լայնութեանը յարմարցընելու է :
2. Լայնութեան աստիճանները ի՞նչպէս մղոն ընելու է :

Ե

1. Այնութեան աստիճաններով կ'իմացուինաւ թէ քաղաք մը մէկալ քաղաքէն որչափ հեռու է հիւսիսէն դէս 'ի հարաւ, կամ հարաւէն դէս 'ի հիւսիս:

2

2. Երկայնութեան աստիճաններով կ'իմացուի թէ մէկ քաղաք մը մէկալ քաղաքէն որչափ հեռու է արեւելքէն դէս 'ի արեւմուտք: Չոր օրինակ թէ որ ուղեմ փարիզին ու Փէքինին իրարմէ ունեցած հեռաւորութիւնը իմանալ, կը նայիմ թէ փարիզին ու Փէքինին շտկութեամբ հասարակածին վրայ ինչ աստիճան գրած է. անով կ'իմանամ թէ աս երկու քաղաքները իրարմէ այսչափ աստիճան հեռու են:

Ե

3. Երկայնութեան աստիճանները մղոն ընելու համար՝ բարձրութեան քառորդը ուղած լայնութեան աստիճանին վրայ հաստատելու է՝ հաստ

- 
1. Այնութեան աստիճաններով մասնաւոր ինչ կ'իմացուի:
  2. Երկայնութեան աստիճանները գիտնալը ինչ բանի կուգայ:
  3. Երկայնութեան աստիճանները ինչպէս մղոն ընելու է:

բակածին զուգահէճական . ետքը նայելու է թէ ան երկու տեղին երկայնութեան աստիճանները բարձրութեան քառորդին ո՞ր աստիճաններուն վրայ կ'ըլնան . աս աստիճանները թէ որ 60ով բազմասպատկուին , ելածը այնչափ աշխարհագրական միջոց կ'ըլլայ :

Ը

1. Թէ որ հեռաւորութիւննին փնտռած տեղերու երկայնութիւնն ու լայնութիւնը իրարմէ տարբեր ըլլան , անոնց հեռաւորութեան չափը պէտք է կարկինով առնել , ու կարկինին ոտքերը հասարակածին վրայ դնելով նայելու է թէ քանի աստիճան կայ մէջտեղը . ետքը աստիճանները 60ով բազմասպատկելով միջոց ընելու է : Դնենք թէ Զմիւռնիան Աոստանդնուպօլսէն 3<sup>o</sup> . 6' հեռու է . թէ որ 3 աստիճանը 60ով բազմասպատկեմ , 180 աշխարհագրական միջոց կ'ընէ . 6 վայրկեանին համար ալ վեց միջոց աւելցրնելու ըլլամ 'նէ' 186 կ'ընէ . որ ըսել է թէ Աոստանդնուպօլս 186 միջոց հեռու է Զմիւռնիայէն :

Թ

2. Տեղի մը շրջաբնակները գտնելու համար պէտք է նոյն տեղը միջօրէական շրջանակին տակը բերել ,



1. Թէ որ ուղած տեղերու երկայնութիւնն ու լայնութիւնը նոյն աստիճանին տակը չէ , չափը ի՞նչպէս առնելու է :

2. Տեղի մը շրջաբնակները ի՞նչպէս գտնելու է :

ու գունարը ամբողջ դարձնել, որ տեղերն որ ան լայնութեան աստիճանին տակէն կ'անցնին՝ անոնք են շրջաբնակները: Ինչպէս՝ Կոստանդնուպօլսի շրջաբնակներն են Տրապիզոն, Փորթոյ, և ուրիշ մանր մունր քաղաքներ ու գեղեր:

Ժ

1. Տեղի մը հակաբնակները գտնելու համար, պէտք է ան տեղին լայնութիւնը առնել, ու գունարը հաստատ բռնած՝ նոյնչափ աստիճան ալ համբերելու է հասարակածին մէկալ դին: Ինչպէս՝ Պելկրատ քաղքին հակաբնակ է Գլուխ Բարեյուսոյ:

2. Հակաբնակներուն ալ հակադրեալ շրջաբնակները իրարու հակոսնեայ կ'ըլլան:

ԺԱ

3. Որոշեալ օր մը արևը զոդխակոսին որ աստիճանին վրայ ըլլալը իմանալու համար, պէտք է նախ ան օրը հորիզոնին վրայ գտնել, աս օրը որ կենդանակերպին որ աստիճանին դիմացն որ լինայ, ան կենդանակերպին նոյն աստիճանը վնտուելու է ծիր խաւարմանին վրան ալ: Ծիր խաւարմանին

1. Հակաբնակները ի՞նչպէս գտնելու է:

2. Հակոսնեաները ի՞նչպէս գտնելու է:

3. Որոշ օր մը արևը ծիր խաւարմանին որ աստիճանին մէջ ըլլալը ի՞նչպէս կ'իմացուի:

վրայ գանուած աստիճանը ուղած օրուան արևուն  
 եղած տեղն է . զոր օրինակ Օգոստոսի 18ը Առիւծ  
 կենդանակերպին 25° . 20' աստիճանին կը պատաս-  
 խանէ . աս է Օգոստոսի 18ին արևուն եղած տեղը :

ԺԲ

1 . Տարուան ամէն մէկ օրը ուրիշ քաղաքին մէջ  
 արևը քանիին ելլելը կամ մտնելը իմանալ ուղողը՝  
 թէ որ իր քաղաքին մէջ արևուն ելած ու մտած  
 ատենը գիտէ , պէտք է նայի թէ փնտուած քաղաքը  
 որչափ դէս 'ի արևելք կամ արևմուտք է . քանի  
 աստիճանի տարբերութիւն որ գտնէ՝ ան աստի-  
 ճանները չորս վայրկեանով բազմապատկէ . ելա-  
 ծովը կ'իմանայ թէ որչափ առաջ որ կը ծագի  
 արևը եթէ ան քաղաքը դէս 'ի արևելք է , նոյնչափ  
 վայրկեան ետքը կը ծագի արևը եթէ ան քաղաքը  
 նոյնչափ դէս 'ի արևմուտք ըլլայ : Օրինակի համար  
 հոստեղս քանի մը քաղաքներու Կոստանդնուպօլ-  
 սէն դէս 'ի արևմուտք ունեցած հեռաւորութիւ-  
 նը , ու արևուն ծագած ատենը գնենք .

Վ Էնեափկ	14°	820 մղ .	0 .	56'
Վ Էննա	11°	660 մղ .	0 .	44'
Հ ո ս մ	12° . 30'	750 մղ .	0 .	55'
Փարիզ	20° . 20'	1220 մղ .	1 ժ .	25'
Լոնսոն	22° . 18'	1338 մղ .	1 ժ .	46'



1 . Արև իցէ օր ուրիշ քաղաքի մը մէջ արևուն ել-  
 լելու ու մտնելու ատենը ինչպէս կ'իմացուի :

ԺԳ

1. Թէ որ մէկը առանց իր քաղաքինը գիտնալու՝ կ'ուզէ իմանալ թէ ուրիշ քաղաքի մը մէջ արևը որ ատեն կ'ելլէ, առաջ ան ուզած քաղաքին լայնու-  
 թիւնը պէտք է որ դանէ, ու քաղաքին յարմար բնե-  
 ուր բարձրացընէ: Ետքը պէտք է դանէ թէ ան օրը  
 արևը ծիր խաւարմանին որ աստիճանին վրան է .  
 ան դուռն աստիճանը միջօրէական շրջանակին տա-  
 կը բերելու է, ու ժամական շրջանակին լեզուակը  
 կէսօրուան վրայ դնելէն ետքը՝ դունսը դարձընե-  
 լու է դէպ 'ի արևելք, ինչուան որ ծիր խաւարմա-  
 նին վրայ դանուած աստիճանը հորիզոնին հասնի .  
 ան ատեն ժամացուցին ցուցակը կ'իմացընէ՝ թէ  
 ուզած օրը ժամը քանիին արևը կը ծագի ան քա-  
 ղաքը: Օրինակի համար վերի դրած քաղաքներուն  
 արևուն ելած ատենը գտիր .

Յունուար	6 .	Ն	16° .	0'
Մարտ	26 .	Կ	6° .	10'
Ապրիլ	15 .	Ճ	25° .	20'
Օգոստոս	15 :	Ձ	22° .	23'
Նոյեմբեր	8 .	Ս	16° .	0'

1 . Թէ որ առանց իր քաղաքինը գիտնալու կ'ուզէ  
 մէկը ուրիշ քաղաքի մը մէջ արևուն ելլելու  
 ատենը իմանալ ինչ պիտի ընէ :

## ԺԳ

1. Թէ որ մէկը ուզէ աս ալ խմանալ թէ արևը քանիին կը մանէ, վերի գործողութիւնն ընելու է. միայն թէ գունտը փոխանակ դէպ ՚ի արևելք դարձնելու՝ արևմուտք դարձնելու է, որ ծիր խաւարմանին վրայ գտնուած աստիճանը արևմտեան հորիզոնին վրայ խնայ. ան ատեն ցուցակն ալ արևուն քանիին մանելը կը ցուցնէ: Զոր օրինակ՝ թէ որ ուզեմ խմանալ թէ Յունիսի 10ին Աղէքսանդրիոյ մէջ արևը քանիին կ'ելէ ու կը մանէ, վերի գործողութեամբ կը գտնեմ որ ժամը 4. 30' ին կը ծագի, 7. 30' անցած կը մանէ:

## ԺԵ

2. Երբոր քաղաք մը կէսօր է, ինչպէս Կոստանդնուպօլիս, ուրիշ քաղաք մը՝ զոր օրինակ Ալենեաիկ՝ ժամը քանի ըլլալը ասանկ կ'խմացուի: Կոստանդնուպօլիսը միջօրէական շրջանակին տակը բերելու է. ժամացուցին լեզուակն ալ կէսօրուան վրայ



1. Ուրիշ քաղաքի մը մէջ արևուն քանիին մանելը ինչպէս կ'խմացուի:
2. Երբոր մէկ քաղաք մը կէսօր է, ուրիշ քաղաքի մը ժամը քանիին ըլլալը ինչպէս կ'խմացուի: — Երբոր Կոստանդնուպօլիս կէսօր է, Ալենեաիկ ժամը քանի է:

գնելով գունար գարձընելու է գէս 'ի արևելք  
ինչուան որ Վ նեհակի քաղաքը նոյն միջօրէին տակն  
լինայ . ան ստեն ժամացոյցը կը ցուցնէ թէ Վ նե-  
հակի ժամը քանի է :

### ԺԶ

1. Թէ որ ուղէ մեկը իմանալ թէ Փարիզու մէջ  
ժամը 6 եղած ստենը Փեթրպուրկի մէջ ժամը  
քանի կ'ըլլայ , սէտք է Փարիզը միջօրէին տակը  
բերել . ու բևեռը լայնութեան յարմար բարձրա-  
ցնելէն ետքը , ժամացուցին ցուցակը ճին վրայ  
բերելու է , և գունար գարձընելու է՝ ինչուան որ  
Փեթրպուրկի քաղաքը միջօրէին տակն լինայ . ան  
ստեն ժամացոյցը ո՛ր ժամուն վրան որ ըլլայ , Փե-  
թրպուրկին ժամն ալ ան է . այս ինքն 7 . 25' :  
'Նոյնպէս Կոստանդնուպօլսի մէջ ժամը 10 եղած  
ստենը Փարիզու ժամն է 8 . 25' :

### ԺԷ

2. Ամէն օր արևը մեկ տեղի մը հորիզոնին որ կէ-  
տէն ելլելը իմանալու համար . սէտք է բևեռը ան  
տեղին լայնութեան աստիճանին չափովը բարձրա-

- 
1. Քաղաքի մը ժամը գիտնալէն ետքը ի՞նչպէս գրա-  
նելու է ուրիշ քաղաքի ժամը քանի ըլլալը :
  2. Ի՞նչպէս իմանալու է թէ արևը ամէն օր հորի-  
զոնին որ կէտէն կ'ելլայ :

ցընեւ, ու գտնեւ թէ նոյն օրը արևը ծիր խաւար-  
մանին որ աստիճանին վրայ է: Ծիր խաւարմանին  
աս աստիճանը տանելու է ինչուան արևելեան ու  
արևմտեան հորիզոնին վրայ, և որ կէտերով որ հո-  
րիզոնին դպչի՝ ան կէտերն են նոյն օրուան մէջ  
արևուն ելլելու ու մտնելու կէտերը:

## ԺԸ

1. Տեղւոյ մը կլիման կամ ամենէն երկայն օրը  
գտնելու համար՝ պէտք է բևեռը բարձրացընեւ,  
ու թէ որ ան տեղը հիւսիսային կիսագնդին վրայ  
է՝ խեցդեանին առաջին աստիճանը միջօրէին տակը  
ձգել. ժամացոյցը կէսօրուան վրայ հաստատելէն  
ետքը՝ գունտը դարձնելու է, որ խեցդեանի առա-  
ջին աստիճանը արևելեան ու արևմտեան հորիզո-  
նին հասնի, և նայելու է թէ նոյն օրը քանի ժամ  
երկայնութիւն ունի. թէ որ 16 ժամ է, նայելու  
է որ 12էն ինչուան 16 երթալու քանի՛ կէս ժամ  
կայ, և որչափ կէս ժամ որ գտնուի, այնչափ է կլի-  
ման. ինչպէս 12էն ինչուան 16, 8 կէս ժամ կայ,  
ուրեմն որ տեղւոյն որ երկայն օրը 16 ժամ է՝ ու-  
թերորդ կլիմային վրան է: Նոյն գործողութիւնը  
պէտք է ընել՝ թէ որ ուղած տեղը հարաւային կի-  
սագնդին վրայ ըլլայ, միայն թէ ան ատեն այժեղ-  
ջիւրին առաջին աստիճանով ընելու է գործողու-  
թիւնը:

1. Մէկ տեղւոյ մը կլիման ինչպէս իմանալու է:

ԺԹ.

1. Թէ որ քաղաքի մը ամենէն կարճ գիշերը ուղեմ գանեւ, վերի գործողութիւնը ընելէս ետքը քանի ժամ որ մնայ՝ ան է կարճ գիշերը:

Ի

2. Թէ որ մէկը քաղաքի մը ամենէն կարճ օրը ուղէ գիտնալ, ան քաղաքը թէ որ հիւսիսային կիսագնդին վրայ է՝ այժեղ ջիւրին առաջին աստիճանը միջօրէին տակը բերելու է, ու ժամացոյցը կէսօրուան վրայ հաստատուէն ետքը՝ այժեղ ջիւրին առաջին աստիճանը արևելեան հորիզոնէն ինչուան արևմտեան հորիզոնը դարձնելու է. ժամացոյցը քանի ժամ որ ցուցնէ՝ ան է ամենէն կարճ օրը, մնացածն ալ ամենէն երկայն գիշերն է:

ԻԱ

3. Հարաւային կիսագնդին վրայ եղած քաղաքին ալ կարճ օրը ու երկայն գիշերը գանեւ հա-



1. Ի՞նչպէս գանեւ ինչ քաղաքի մը ամենէն կարճ գիշերը:
2. Հիւսիսային կիսագնդին վրայ եղած քաղաքին կարճ օրը ի՞նչպէս գանեւ: — Ամենէն երկայն գիշերը ի՞նչպէս կը գանես:
3. Հարաւային կիսագնդին վրայ եղած քաղաքի մը

մար վերի գործողութիւնը խեցդեանի առաջին  
աստիճանովը ընելու է :

ԻԲ

1. Թէ որ մէկը իր տեղւոյն ամիսը՝ օրը՝ ժամը՝  
գիտէ, ու կ'ուզէ խմանալ թէ նոյն ատեն արևը ո՞ր  
տեղերուն միջօրէականին վրայ է, բնէօրը իր տե-  
ղւոյն լայնութեանը յարմար շտկելէն ետքը՝ մեծ  
միջօրէականին տակը բերելու է, և ժամական շրջա-  
նակին ցուցակը կեցած տեղւոյն ժամուն վրայ  
դարձընելով՝ գունտը ստորացընելու է, ինչուան որ  
ցուցակը կէսօրուան վրայ դայ : Որ քաղաքներն որ  
վերի կիսագնտին վրայ միջօրէին տակը կ'ըյնան՝ ա-  
նոնց կէսօր է :

ԻԳ

2. Թէ որ մէկը ուղէ այրեցած գօտիին տակը  
եղած տեղուանքէն մէկուն ան օրը գտնել՝ որ օրն  
որ արևը հոն ուղղահայեաց կ'ըլլայ, պէտք է ան

---

կարճ օրը ու երկայն գիշերը ի՞նչպէս գտնե-  
լու է :

1. Ամիսը՝ օրը և ժամը գիտնալէն ետքը ի՞նչպէս  
գտնելու է ան տեղուանքն որ արևը իրենց մի-  
ջօրէին վրայ է :
2. Ի՞նչպէս գտնելու է ան օրն որ արևը ուղղա-  
հայեաց կ'ըլլայ այրեցած գօտիին տակը ո՞ր և  
իցէ քաղաքի մը վրայ :

տեղը մեծ միջրէական շրջանակին աակը բերէ, ու անոր վրայ էղած լայնութեան աստիճանը նշանէ. ետքը գունտը դարձընէ ու գիտէ թէ նոյն լայնութեան աստիճանին վրայէն անոյնող ծիր խաւարմանին երկու կէտերը որոնք են. ետքը նայի թէ ծիր խաւարմանին սն աստիճանը հորիզոնին վրայ որ ամսուն՝ որ օրուան կը պատասխանէ. գանուած օրն է ան օրը՝ որ արևը ան տեղւոյն ուղղահայեաց կ'ըլլայ: Ինչպէս՝ Մատրաս քաղաքին լայնութիւնն է  $13^{\circ} 18'$ . սա աստիճանին վրայէն Առիւծ կենդանակերպին  $25^{\circ}$  աստիճանը կ'անցնի.  $25^{\circ}$  աստիճանն ալ հորիզոնին վրայ փնտուելով կը գտնեմ որ Օգոստոսի 18ին կը պատասխանէ. սա օրն է որ արևը Մատրաս քաղաքին վրայէն ուղղահայեաց կ'անցնի:

Ի՛Գ.

1. Տեղւոյ մը լայնութիւնը և ամսուն օրը գիտնալէն ետքը, թէ որ մէկն ուղէ խմանալ թէ արշալոյսն ու երեկոյեան լոյսը որչափ կը գիմանայ, լայնութեան յարմար գունտը շահելէն ետքը՝ ծիր խաւարմանին վրայ արևուն տեղը գտնէ, ու հորիզոնին վրայ բերէ: Ժամացոյցը շահելէն ետքը, գունտը այնչափ պէտք է դարձընէ որ արևուն տեղը հորիզոնէն  $18^{\circ}$  վար իջնայ. Ժամացուցին ցուցակը քանի ժամ որ ցուցընէ՝ այնչափ է արշալուսին մի-

---

1. Ի՞նչպէս կ'խմացուի թէ տեղւոյ մը արշալոյսը որչափ կը գիմանայ:


Ջոջը : Արեւիկայեան լոյսին համար նոյն գործողութիւնն ընելու է արեւմտեան հորիզոնին վրայ : Զոր օրինակ՝ Յուլիսի 20ին Վէնեաիկ քաղաքին արշալոյսը 1 . 35՝ կը գիմանայ :

## ԻԵ

1 . Որոշ օր մը արշալոյսը ժամը քանիին սկսիլը իմանալու համար՝ պէտք է ծիր խաւարմանին վրայ նոյն օրուան արեւուն տեղը գտնել . ետքը տեղւոյն լայնութեանը յարմար գունարը շտկել . ժամացուցին ցուցակն ալ կէսօրուան վրայ հաստատելով՝ գունարը դարձընելու է , ինչուան որ ծիր խաւարմանին վրայ գտնուած աստիճանը արեւելեան հորիզոնէն 18" վար իջնայ . ան առե՛ն ժամացոյցը կ'իմացընէ թէ ժամը քանիին կը սկսի արշալոյսը : Զոր օրինակ՝ Յուլիսի 20ին Վէնեաիկ քաղաքին արշալոյսը 2 . 45՝ անցած կը սկսի :



1 . Արշալուսին սկսած ատենը ինչպէս իմանալու է :



# ԵՐԿՆԱԳՈՒՆՏ

## ԸՆԳՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

1. Երկնապետն զործիք մըն է, որուն վրայ քաշուած են աստղերը իրենց գիւղքովը : Ասով կ'իմացուի աստղերուն իրարմէ հեռաւորութիւնը և իրենց ելլելու ու մտնելու ատենը :

2. Աստղերուն գիւղքն ու շարժմունքները իմանալու համար՝ երկրագնտին վրայ ինչ շրջանակ կամ գիծ որ գրինք՝ երկնագնտին վրայ ալ նոյն շրջանակներն ու գծերը կան : Ասոնցմէ զսա մէկ քանի շրջանակներ ու գծեր ալ կան, ինչպէս Չորթիս, Ալիս-ն ու Բարթոն-նեան աստղեր :

ԶՈՒՄԱԿՈՍ, ԱԶԻՄՈՒԹ, ԲԵՐԶՐՈՒԹԵԱՆ ՔԱՌՈՐԳ

3. Զողիակոսը լայն կամար մըն է, որ հասարակածին վրայէն քովնտի կանցնի, ու 12 ամիսներուն թուովը 12 կտոր բաժնուած է, ան կտոր-

1. Ինչ է երկնագունալ :

2. Երկնագնտին վրայի շրջանակները որո՞նք են :

3. Ո՞րն է զողիակոսը :

ներուն վրան ալ 12 կենդանակերպաները գրած են : Տասուերկու կենդանակերպաներն ալ երեսնական կտոր բաժնուած են՝ ամսուն օրերուն համրանքովը . վասն զի արեւը ամէն ամիս աս կենդանակերպաներուն մէկուն վրայէն կ'անցնի :

1. Ազիմուլթ կ'ըսուին ան շրջանակները , որ զենիթէն ու նասիրէն անցնելով՝ հորիզոնը երկու հաւասար կտոր կը կտրեն : Ասով կ'իմացուի թէ աստղ մը միջօրէէն որչափ հեռու է :

2. Բարձրութեան քառորդը ան պղնձէ բարակ շրջանակն է , որ զենիթէն ինչուան հորիզոն կ'իջնայ , ասով կը չափուի աստղերուն բարձրութիւնը :

ՄԻՋՕՐԷԱԿԱՆ ՈՒ ԶՈՒԳԱԶՆՌԱԿԱՆ ԳԾԵՐ

3. Միջօրէական գծերով կ'իմացուի թէ աստղերը իրենց օրական շրջանին մէջ երկնքին որ կողմը կ'իյնան . ասիկայ կ'ըսուի Ուշիշ էւ :

4. Զուգահեռականներով կ'իմացուի թէ աստղ մը բևեռէն որչափ հեռու է . ասիկայ կ'ըսուի Խոսիշ էւ :



1. Ո՞րն է ազիմուլթը : — Ազիմուլթով ի՞նչ կ'իմացուի :
2. Բարձրութեան քառորդը ո՞րն է : — Ի՞նչ բանի կուգայ :
3. Երկնագնաին միջօրէական գծերը ի՞նչ բանի կուգան : — Ուղիղ ելքը ո՞րն է :
4. Երկնագնաին զուգահեռականները ի՞նչ բանի կուգան : — Ո՞րն է խոտոր ելքը :

ԱՍՏՂ.

1. Ասող կ'ըսուին երկինքը երեցած լուսաւոր մարմինները, որ իրենց հեռաւորութեանը համար մանր կ'երևան: Իրեք տեսակ ասող կայ. հասարակական, Մուսուլման և Գիսուսի:

Ա. ՀԱՍՏԱՏՈՒՆ ԱՍՏՂ.

2. Հաստատուն ասող կ'ըսուին ան երկնային մարմինները՝ որ արեւուն պէս իրենք իրենցմէ լոյս ունին, և մեղի այնպէս կ'երևայ թէ իրարմէ ամենեւին չեն հեռանար ու տեղերնին չեն փոխեր. թէպէտև իրօք ամէն ասողերն ալ մէյմէկ քիչ տեղափոխութիւն կ'երեցնեն:

3. Հաստատուն ասողերուն թիւը չգիտցուիլ, վասն զի անբաւ բաղմութիւն են, և ասողաբաշխները կարծիք կ'ընեն թէ լաւ գիտակներով 100 միլիոնէն աւելի ասող պիտի կարենայ համբուլ երկնքին երեսը. ինչուան հիմա 60,000 միայն համբեր են:

4. Ասողաբաշխները երկու կերպով կը համբեն ասողերը. մէյմը բոլոր ասողերը այլևայլ համաստեղութիւն բաժնելով, մէյմըն ալ ասողերուն մեծութեանը համեմատ՝ կարգ կարգ զատելով:

- 
1. Ի՞նչ է ասողը: — Քանի՞ տեսակ ասող կայ:
  2. Ո՞րն է հաստատուն ասողը:
  3. Հաստատուն ասողերը քանի՞ հատ են:
  4. Ասողերը քանի՞ կերպով կը համբուին:



- |            |                    |
|------------|--------------------|
| 27 Մողէզ . | 29 Փոքր եռանկիւն . |
| 28 Վահան . | 30 Կերբերոս :      |

1. Զողիակոսին 12 համաստեղութիւնները աստիք են , որ 12նոսնաիւրդ ալ կըսուին .

- |             |                |
|-------------|----------------|
| 1 Խոյ .     | 7 Կշիւ .       |
| 2 Յուլ .    | 8 Կարիճ .      |
| 3 Երկաւոր . | 9 Աղեղնաւոր .  |
| 4 Խեցդեպի . | 10 Այծեղջիւր . |
| 5 Ասիւծ .   | 11 Զբհոս .     |
| 6 Կոյս .    | 12 Չուկն :     |

2. Հարաւային 35 համաստեղութիւնները աստիք են .

- |                    |                              |
|--------------------|------------------------------|
| 1 Անաինոս .        | 15 Պսակ հարաւային .          |
| 2 Կէտ .            | 16 Չուկն հարաւային .         |
| 3 Երիզանոս .       | 17 Փիւնիկ .                  |
| 4 Նասպաստակ .      | 18 Կառնիկն .                 |
| 5 Հայկ կամ Որինն . | 19 Սիրամարդ .                |
| 6 Մեծ շուն .       | 20 Հնդիկ .                   |
| 7 Փոքր շուն .      | 21 Գրախոսահաւ .              |
| 8 Նաւ արգիացւոյ .  | 22 Եռանկիւն հարաւային .      |
| 9 Հիդրայ .         | 23 Ըանջիւն .                 |
| 10 Ըմպանակ .       | 24 Գեանաուիւծ .              |
| 11 Ադուս .         | 25 Չուկն թռչական .           |
| 12 Չիացուլ .       | 26 Տուքան կամ Սադ Ամերիկայ . |
| 13 Գայլ .          | 27 Արու Հիդրայ .             |
| 14 Սեղան .         |                              |

1. Զողիակոսին համաստեղութիւնները որոնք են :  
2. Հարաւային համաստեղութիւնները որոնք են :

- |                         |                |
|-------------------------|----------------|
| 28 Տորառ կամ Թրաձուկն . | 32 Միեղջերու . |
| 29 Մեծ ամս .            | 33 Տարանկիւն . |
| 30 Փոքր ամս .           | 34 Աքաղաղ .    |
| 31 Նոյի աղանի .         | 35 Խաչ :       |

1. Աստղերը իրենց մեծութեանը նայելով 12 կարգ կը բաժնուին, ու կըսուին Առաջին կարգի աստղ, Երկրորդ կարգի աստղ, Երրորդ կարգի աստղ, և այլն :

2. Ինչուան վեցերորդ կարգի աստղերը աչքով կերևան . վեցերորդ աստիճանէն վեր եղածները միայն դիտակով կերևան, ու անթիւ են :

3. Առաջին կարգի աստղերը 23 հատ են . չորսը հիւսիսային դին, եօթը զոգիսկոսին վրայ, աստուերիկուքն ալ հարաւային դին :

4. Հիւսիսային չորս մեծ աստղերը ասոնք են . Արբորոս՝ Եզոզ համաստեղութեան վրայ . Էլդայիր՝ Արծիւ համաստեղութեան վրայ . Վեկա՝ Քնար համաստեղութեան վրայ . α «պֆ» \* գիրը Կարապի սոչին վրայ :



1. Աստղերը քանի՞ կարգ կը բաժնուին :
2. Ինչուան ո՞ր աստիճանի աստղերը աչքով կերևան :
3. Առաջին կարգի աստղերը քանի՞ հատ են :
4. Առաջին կարգի հիւսիսային աստղերը որո՞նք են :

\* Պայէռ անունով փերմանոյի մը համաստեղութեանն էրուն ամեն մեծ աստղին վրայ Յոնաց քրէրը գրած՝ դիւրան փորժածելու համար, որ ինչուան հիմա նոյնպէս ինքանէրոսին :

1. Զողիակոսին վրայի եօթը մեծ աստղերը աստիճանի են .

Ալտեպարան՝ Յուլին ճակտին վրայ .

Կաստոր ու Պողիակոսին՝ Երկաւորին վրայ .

Հուպուզոս՝ Ասիւծին վրայ .

β Էթե = Ասիւծին սրունին վրայ .

Կուսին հասկը .

Անդարեւ՝ Կարձին վրայ .

Փոմպուզոս՝ Զրհոսին վրայ :

2. Հարաւային 12 մեծ աստղերն են .

Բիճեւ կամ Հոխեւ՝ Հայկին ձախ ոտքին վրայ .

α = Էթե = Հայկին ուսին վրայ .

Հիգրային սիրտը .

Սիրիոս՝ Մեծ շունին վրայ .

Պրոկիոն՝ Փոքր շունին վրայ .

Աքարնար՝ Երիզանոսին վրայ .

Կանովպոս՝ Արգիացւոց նաւուն վրայ .

β Էթե = Արգիացւոց նաւուն վրայ .

Չիացուլին ոտքը .

Չիացուլին սրունիքը .

Խաչին ոտքը .

Սիրամարդին աչքը :

3. Հաստատութեան աստղերը անբաւ հեռաւորութիւն ունին մեզմէ . անոր համար է որ աստղերը

1. Զողիակոսին վրայի եօթը մեծ աստղերը որոնք են :

2. Հարաւային մեծ աստղերը որոնք են :

3. Աստղերը մեզմէ որչափ հեռու են :

նանկ խաչոր մարմինները մանր կ'երևնան: Օրինակի համար՝ դնելով թէ լոյսը մէկ ժամուան մէջ 594 միլիոն մղոն տեղ կը վազէ, առաջին կարգի աստղերէն մէկուն լոյսը իրեք տարիէն աւելի ատեն կ'ուզէ մեզի հասնելու համար:

1. Յարգոյն կամ Ծիւր կաթին ըստածը որ հիւսիսէն գէտ 'ի հարաւ ձգուած է՝ աչքով միակերպ լուսի տէս բան մը կ'երևայ. թէ որ գիտակով նայելու ըլլաս, կը տեսնես որ մանր մանր անթիւ աստղեր են իրարու մօտիկ:

2. Յարգոյն նման երկնքին վրայ ուրիշ տեղեր ալ կան ամպի տէս տայծառ, որ կ'ըսուին Միգմա: Հերշէլ աստղաբաշխը ինչուան 2400 միգամած համբեր է, բայց ամենէն երևելիներն են Հայկինը, Քնարինը, Անդրոմեդինը ու Կարծինը: Միգամածներուն վրայ ալ կարծիք կայ թէ ամենամանր աստղեր ըլլան:

3. Կրօնապէշ, Եռապէշ, Քառապէշ, կ'ըսուին ան հաստատուն աստղերը որ իրարու խիստ մօտ կ'երևան՝ երկուքը կամ իրեքը մէկտեղ, ու մէկը մէկալին վրայ կը ստորաի: Ասոնք երեսունումէկ տարուան մէջ հազիւ մէկ անգամ մը կը ստորաին իրենց քովի աստղին վրայ. ոմանք ալ ինչուան 9500 տարուան մէջ կ'ընեն նոյն ստոյար:



1. Յարգոյնը ինչ է:

2. Ինչ է միգամածը: — Քանի միգամած տեսնուած է:

3. Արոնք են կրկնակ աստղք, և այլն:

1. Ինչուան հիմա 3057 հաս այսպիսի աստեղք  
սեանուած են ըստ նոր դիտողութեանց :

2. Հին սլամոնութիւններուն մէջ անանկ աստ-  
ղեր յիշուած են, որ հիմա չկան : Ատեն ասեն  
աստղեր երեցեր ու շուտ մը աներկոյթ եղեր են .  
ինչպէս Կասիոպէ համաստեղութեան ան երևելի  
աստղը որ 1572ին երեցեր է, ու իրէք ամիսէն ետքը  
բոլորովին աներկոյթ եղեր է : Աստղեր ալ կան որ  
քանի մը օրուան մէջ լոյսերնին կը սլայծառանայ  
ու նորէն կը սրահսի : Աս փոփոխութիւններուն  
սլամոնաք չիմացուիր :

3. Հիւսիսային կիսագնտին վրայ կէտ մը կայ որ  
մեղի անշարժ կ'երևայ, աս բևեռին քովը եղած  
Փոքր արջ համաստեղութեան սոցին ծայրի աստղը  
անշարժ երեցած կէտին մօտ ըլլալէն՝ Բեւեռային  
աստղ կ'ըսուի, բևեռն ալ Հիւսիսային կամ Արջային  
Բեւեռ :

4. Հարաւային կիսագնտին վրան ալ Հիւսիսային  
բևեռին գիմայը ուրիշ աստղ մը կայ նոյնպէս  
անշարժ սեպուած, որ Հարաւային կամ Հակաբլային  
Բեւեռ կ'ըսուի :



1. Քանի՞ հաս կրկնաստեղք, եռաստեղք, ևն կան :

2. Աստղերուն վրայ մասնաւոր փոփոխութիւն  
կ'ըլլայ :

3. Բևեռային աստղը ո՞րն է :

4. Հարաւային բևեռը ո՞րն է :

ԱՐԵՒ

1. Արևը հաստատուն ըսուած աստղերուն մէկն է, և մեր արեգակնային գրից մոլորակներուն կեդրոնը. վասն զի ասոր վրայ կը պտտաին մէկալ մեղի ծանօթ մոլորակ աստղերը:

2. Հիմակուան մեծանուն աստղաբաշխներուն կարծիքովը՝ արևն ալ բոլոր իր քովի մոլորակներովը մէկաեղ՝ ուրիշ կեդրոնի մը վրայ ահագին պտոյտ կ'ընէ: Ոմանք կ'ըսեն թէ աս կեդրոնը հերակէս համաստեղութեան Բ ԲԵ և Ն ՆԻՊՊ աստղերուն մեջտեղուանքը կ'իյնայ, ոմանք ալ թէ Բոյլք ըսուած աստղերէն Ադիիոն աստղն է ան կեդրոնական արևը: Աս ալ կ'ըսեն թէ արևը աս իր մեծ շրջանը 18, 200, 000 տարուան մէջ հազիւ կրնայ ընել, թէպէտ և իր ընթացքը երկրիս ընթացքին կրկին արագութիւնն ունի:

3. Արևը աշխարհէս 1, 400, 000 անգամ մեծ է. բայց խիստ հեռու ըլլալուն պզտիկ կ'երևայ:

4. Արևուն տրամագիծը 770, 107 աշխարհագրական մղոն է:

5. Արևը մեզմէ 82, 840, 200 մղոն հեռաւորութիւն ունի: Իսկ իր կեդրոնէն՝ ըստ աստղաբաշխից

1. Արևը ի՞նչ է:

2. Արևը շրջան մը ունի:

3. Արևը երկրէս ո՞րչափ մեծ է:

4. Արևուն տրամագիծը ո՞րչափ է:

5. Արևը ո՞րչափ հեռու է մեզմէ:

ենթադրուածեանը 34,000,000 անգամ նոյն հե-  
ռաւորութիւնն ունի :

1. Արեւը 25 օրուան ու 15 ժամուան մէջ իր ա-  
ռանցքին վրայ մէյմը կը դառնայ, որ իր վրայի բը-  
ծերէն կ'իմացուի :

2. Բիծ կ'ըսուին արեւուն վրայի սև ու մութ աե-  
ղուանքը, որ գիտակով որոշ կ'երևան : (Ձև 28)  
Աս բծերը խիստ փոփոխական են . անանկ որ մի  
և նոյն բիծը երբեմն կը մեծնայ՝ երբեմն ալ կը սրբ-  
տիկնայ : Տարի կ'ըլլայ որ արեւը շատ բծեր կ'ու-  
նենայ . տարի ալ կ'ըլլայ որ ամենեկին բիծ չմնար  
վրան : Աս բծերուն այլևայլ մեկնութիւններ կ'ու-  
տան աստղաբաշխները, բայց ասոյքը չգիտցուի :

### Բ . ՄՈՒՈՐԱԿ

3. Մուրակ կ'ըսուին ան աստղերն որ երկրիս  
պէս են, ու իրենք իրենցմէ լոյս չունին, հասկա  
արեւուն լոյսը անոնց վրայ զարնելով՝ մեզի լուսաւոր  
կ'երևան : Ասոնց անլոյս ըլլալը կ'իմացուի մէյմը  
իրենց խաւարմունքէն, մէյմըն ալ լուսնի պէս այլ-  
ևայլ երևոյթներ ունենալէն :



1. Արեւը որչափ աստենի մէջ իր առանցքին վրայ  
կը դառնայ : — Արեւուն ինքիւր վրայ դառնալը  
ինչէն կ'իմացուի :
2. Արեւուն բիծը ի՞նչ է :
3. Ի՞նչ է մուրակ աստղը :

1. Երկինքը եղած մոլորակները ճանչնալու համար սկսոք է գիտնալ, որ անոնց ընդը հաստատուն աստղերուն սկս չփալթիլըլիլ, հասպա աղօս՝ անշարժ ու միակերպ ըստ մը կ'երևայ :

2. Մոլորակներուն շափն վրայ սև սև բծեր կ'երևան : Վ'երևայ թէ աս սևութիւնները իրենց վրայի լեռներուն ու ձորերուն դիրքէն է :

3. Հին ատենը հինգ մեծ մոլորակները միայն ճանչցուած էին . այս ինքն՝ Փայլածու, Արուսեակ, Հրատ, Լուսնթագ, Երևակ . Լուսինն ալ մոլորակներուն կարգը կը սեպուէր, ու Երկիրս հաստատուն :

4. Հիմա մոլորակները տասնըհինգ հասա են . և իրենց արևէն ունեցած հեռաւորութեան կարգովը ասոնք են .

Փայլածու .	♃	Հրատ .	♂
Արուսեակ .	♀	Վեոսա * .	♁
Երկիր .	♁	Իրիս .	♃



1. Մոլորակները ինչպէս ճանչնալու է :
2. Մոլորակներն ալ բիծ ունին :
3. Հին ատենը քանի մոլորակ ծանօթ էր :
4. Հիմա քանի՞ հասա մոլորակ կայ : — Մոլորակները որոնք են : — Արևուն ամենէն մօտ մոլորակը որն է : — Ամենէն հեռութիւնը որն է : — Փայլածուէն ետքը որ մոլորակը կուգայ, են :

\* Ա. ինչ Դուրսիները, Վէոսա, Իրիս, Հեբե, Արսեա, Հերայ, Գեմարե, Պալաս, Հերշել, ու Պոսիդոն իմ Լըվեթի աստղ շին երեսը, հասպ մայն գիտական :

Հեբէ .	Y	Լուսնթագ .	Մ
Ատորէա .	⊕	Երևակ .	Կ
Հերայ .	⊙	Ուրանոս կի՞ Հերշէլ .	Ք
Դեմեարէ .	☾	Պոսիդոն կամ Լըվէ .	
Պալլաս .	♁	Աիէ .	Յ

1. Ատղաբաշխները շատնց դիտած էին որ մուրակները մէկ համեմատական հեռաւորութիւն մը ունին արեւէն . միայն Հրատին ու Լուսնթագին մէջտեղի միջոցը չափէ դուրս մեծ կ'երևար, Երևակէն ալ անդին ուրիշ մուրակի մը տեղ կը մնար . ուստի հետզհետէ լաւ դիտակներով դիտելին ու գտան որ իրաւցրնէ ան միջոցները մուրակներ կան: Իսկ գանձողները իրենց ժամանակովն ասոնք են .

Ուրանոսը գտաւ Հերշէլ, 13 մարտի 1781ին
Դեմեարէ " Փիացցի, 1 յունուարի 1801
Պալլաս " Օլպերս, 28 մարտի 1802
Հերայ " Հարտինկ, 1 սեպտեմբ. 1804
Վէտտա " Օլպերս, 29 մարտի 1807
Ատորէա " Հենքէ, 8 գեղակեմբերի 1845
Պոսիդոն " Լըվէ-Աիէ ու Վալէ, 23 սեպտ. 1846
Հեբէ " Հենքէ, 1 յուլիս 1847
Իրիս " Հայնս, 13 օգոստոս 1847

2. Տասնըհինգ մեծ մուրակներէն զատ ասանը-ութը հատ ալ սղտի մուրակներ կան, որ մէկալ մուրակներուն վրայ կը ստորաին, ու Արեւիկէն կ'ըսուին:

1. Երբ մուրակները կ'ըն ու ինչպէս գանուեցան :
2. Որո՞նք են արբանեակները :

1. Տասնըֆնոց մեծ մողորակներէն չինոգը միայն արբանեակ ունին . Երկիրս ունի մէկ հատ , որ է լուսինը . Լուսնթագը չորս արբանեակ ունի . Երևակը եօթը հատ , Ուրանոսը վեց , Պոսիդոնը երկուք :

2. Մողորակները երկու տեսակ ստոյտ ունին . մէկը իրենց առանցքին վրայ , մէկալն ալ արտակեգրոն չըջանով արևուն վրայ : Աս երկու տեսակ շարժմունքնին ալ արևմուտքէն դէս ՚ի արևելք է : (Ձև 26)



1. Ո՞ր մողորակները արբանեակ ունին : — Երկիրս քանի՞ արբանեակ ունի : — Լուսնթագին արբանեակները քանի՞ են , և այլն :
2. Մողորակները քանի՞ տեսակ շարժմունք ունին : — Մողորակներուն շարժմունքը ի՞նչպէս է :

Մ Ո Ւ Ռ Ր Ե Վ Կ Ն Ե Ր ՈՒ Յ ՈՒ Ց Ա Կ

Յ ն Ն	Ա ն Ո Ւ Ն	Ե Ր Ե Ի Է Ն Հ Ե Ր Ե Ա Ի Ռ Ր ՈՒ Մ Ք Ի Ի Ն	Ջ Ա Ն Ք ՈՒ Ե Ն	Պ Տ Ո Ց Տ Ե Ռ Ե Ն Ց Ք Ի	Ա Ս Տ Ե Ղ Ա Վ Ե Ն Շ Ի Ր Ջ Ա Ն
♀	Փայլածու.	32,000,000	0,074	24Ճ. 5ր.	87 օր, 9693
♀	Արուսեակ.	60,000,000	0,922	23. 21	224, 7008
♀	Երկիր.	83,000,000	4,000	23. 56	365, 2564
♂	Հրատ.	126,000,000	0,134	24. 38	686, 9796
☐	Վ.Լ.սոս.	196,000,000	.	.	1325, 485
⊕	Իրիս.	205,000,000	.	.	1333
Υ	Հեթէ.	210,000,000	.	.	1381
⊖	Աստղատ.	216,000,000	.	.	1509

Ⓐ	Հերայ .	221,000,000	.	.	.	.	1393	067
Ը	Դեմարտ .	229,000,000	.	.	.	.	1684	735
Պ	Պալատ .	230,000,000	.	.	.	.	1686	305
Մ	Լուսնթագ .	431,000,000	343,125	9	56		4332	5848
Ե	Երևակ .	790,000,000	102,682	10	30		10759	2498
Ի	Ուրանոս .	1589,000,000	14,613	.	.	.	30686	8205
Յ	Պոսիդոն .	2509,000,000	23,381	.	.	.	60000	

Ծան. Աս ցուցակիս մեջինները մուրաֆներուն արևէն ունեցած միջնն հեռաւորութիւններն են՝ աշխարհագրական մղոնի վերածուած : Զանգուածներուն մեծութիւնները տասնորդական կոտորակներու վայ անուած են՝ Երկրիս զանգուածը 1 սեպտիլով. իսկ աստեղական շջանները միջակ օրուան վայ համարուած են՝ ճշգրիտեան համար, նոյնպէս տասնորդական կոտորակով :

1. Մոլորակներուն մեծութեան ու հեռաւորութեան կողմանէ իրարու հետ ունեցած համեմատութիւնը կրնանք ընդհանրապէս այսպիսին թահան օրինակներով ըմբռնել .

Արեւը ենթագրեւիք դունտ մը՝ 2 ոտնաչափ (կամ 65 հարիւրամեթր) տրամագծով .

Փայլածուն կ'ըլլայ ճանախոյ հասի՛ն մը՝ 27 մեթր հեռաւորութեամբ .

Արուսեակը ունի մը՝ 46 մեթր հեռու .

Երկիրս «իսկ» մը՝ 70 մեթր հեռու .

Հրատը թէ՛ Գնդասելի Գլխի մը՝ 106 մեթր հեռու .

Վեստա, Իրիս, Հերէ, Աստրէա և մէկալ մանր մոլորակները մէյմէկ սասելի՛ հասի՛ն՝ 162 ու 195 մեթր հեռու .

Լուսնթագը միջակ մեծութեամբ նորի՛նջ մը՝ 357 մեթր հեռու .

Երեակը սլոտիկ նորի՛նջ մը՝ 650 մեթր հեռու .

Ուրանոսը մեծ ինտաս մը՝ 1332 մեթր հեռու :

Պոսիդոն, կամ Լըվէնիէ ընդ մը՝ գրեթէ 2650 մեթր հեռու :

## 1. ՓԱՅԼԱԾՈՒ Գ

2. Փայլածուն սլոտիկ մոլորակ մըն է, որ արեւուն շատ մօտիկ ըլլալէն՝ հազիւ կ'երևայ. իրեն տա-

1. Մոլորակներուն համեմատական մեծութիւնն ու հեռաւորութիւնները ինչչնիւթահան օրինակներով կրնանք ըմբռնել :

2. Փայլածուն ինչպէս մոլորակ է:— Տարբութիւնը որչափ է :

քութիւնն ալ երկրէս դրեթէ եօթը անդամ աւելի սաստիկ է : Փայլածուն երբեմն արևուն գիմայը իյնալով անոր վրայ սև բծի պէս կ'երևայ :

## 2. ԱՐՈՒՍԵԱԿ ♀

1. Արուսեակը ամենէն սրայծառ մոլորակն է, որ երբեմն առաւօտները արևը ելլելէն առաջ կ'երևայ, ու կ'ըսուի Արուսեակ : Երբեմն ալ արևը մանեկէն ետքը կ'երևայ, ու կ'ըսուի Գիշերաշար :

2. Արուսեակը երբոր երկրիս ու արևուն մէջ աեղը կ'իյնայ, լուսնի պէս ազուոր երևոյթներ կ'ունենայ. գիտակով ալ լեռներ ու ձորեր կ'երևան վրան : (Ձև 30)

3. Արուսեակը իր վրայ սաստած մթնոլորտ ունի, որ երկրիս մթնոլորտէն շատ աւելի թանձր է :

## 3. ԵՐԿՐ ♂

4. Երկիրս ուրիշ մոլորակներուն պէս գիմահար մարմին է, ու անոնց պէս կը պտտուի :

5. Երկրիս տրամագիծը 6880 մղոն է, շրջապատը 21,600 մղոն, մակերևոյթը 148,521,600 մղոն քառակուսի :

1. Ո՞րն է արուսեակը : — Ե՞րբ լուսաբեր կ'ըսուի, ե՞րբ գիշերավար կ'ըսուի :

2. Արուսեակը ի՞նչ երևոյթ ունի :

3. Արուսեակը մթնոլորտ ունի՞ :

4. Ի՞նչ է երկիրս :

5. Երկրիս մեծութիւնը որչափ է :

ԵՐԿՐԻՍ ՁԵՒԸ

1. Երկիրս կը որ դնտաձև է . երկու բևեռներուն կողմը քիչ մը տափակ է , հասարակածին տակն ալ ուռած :

2. Երկրիս կը որ ըլլալը կիսմացուի մէջը երկրիս վայի՛ մէջըն ալ երկնքի երևոյթներէն :

3. Երկրիս վայ երկու գլխաւոր երևոյթ կայ որ երկրիս կը որ ըլլալը կը ցուցնեն :

Ա. Թէ որ երկիրս կը որ ջրաւոր , մեծ դաշտի կամ ծովու մէջ եղած բարձր շէնքերը հեռուանց ամբողջ կ'երևային : Ուրեմն կը որ ըլլալուն համար է որ հեռուանց ան շէնքերուն ծայրերը միայն կ'երևան , ետքը քանի որ մարդ անոնց մօտիկնայ՝ կամաց կամաց ամբողջն ալ կը տեսնէ : (Ձև 19)

Բ. Շատ նաւորդներ մեծ ովկիանոսին մէջ մի և նոյն շտկութիւնը բռնած երթալով , ներհակ կողմէն դարձան հասան ան տեղը՝ ուսկից որ ճամբայ ելեր էին :

4. Երկնքի երևոյթները երկու կերպով կը ցուցնեն երկրիս կը որ ըլլալը :

---

1. Երկիրս ի՞նչ ձև ունի :

2. Երկրիս կը որ ըլլալը ինչէն կիսմացուի :

3. Որո՞նք են երկրիս վայի երևոյթներն որ իրեն կը որ ըլլալը կը ցուցնեն :

4. Երկնքի երևոյթներով ի՞նչպէս կիսմացուի երկրիս կը որ ըլլալը :

Ա. Երկրիս մէկ բևեռին կողմէն երեցած աստղերը՝ մէկալ բևեռին դիէն չէն երևար :

Բ. Լուսնի խաւարման ատենը երկրիս շուքը լուսնին վրայ կը որ ձևով կը զարնէ, ասով ալ կ'իմացուի որ երկիրս կը որ է :

1. Երկրիս բևեռներուն կողմը տափակ ըլլալը այլևայլ դիտողութիւններէ կ'իմացուի. անոնցմէ մէկն ալ աս է որ հասարակածին տակը եղած մարմինները աւելի թեթեւ են՝ քան թէ բևեռայինները : Աս անկէց կ'իմացուի որ մի և նոյն երկայնութիւնը ունեցող ժամացուցի ճօճանակը հասարակածին տակը ծանր կը շարժի, քան թէ բևեռներուն կողմերը. անոր համար է որ մէկ ժամացոյց մ'որ բևեռներուն մօտ աւելի առաջ կ'երթայ, հասարակածին տակը ետ կը մնայ :

2. Երկրիս բևեռներուն տափակ ըլլալը իրեն կեդրոնաձիգ ու կեդրոնախոյս զօրութենէն է : Կեդրոնաձիգ զօրութեամբ երկիրս գէտ 'ի իր կեդրոնը կը գիմէ. կեդրոնախոյս զօրութեամբն ալ կեդրոնէն կը հեռանայ :

3. Որովհետև աս կեդրոնախոյս զօրութիւնը հասարակածին տակը աւելի, ու բևեռներուն տակը քիչ է, անոր համար բոլոր ջրերը գէտ 'ի հասարակածին կ'ընկնեն :

1. Ինչէն կ'իմացուի թէ երկրիս բևեռներուն կողմը տափակ է :

2. Երկրիս բևեռներուն տափակ ըլլալը ինչէն է :

3. Երկրիս կեդրոնաձիգ ու կեդրոնախոյս զօրութիւնները ինչպէս կրնան պատճառ ըլլալ որ բևեռները տափակ ըլլան :

րակած կը վազեն . որով ան տեղը կը բարձրանայ . բեւեռները տափակ կը մնան :

1. Երկու բեւեռներուն տափակութիւնն է 2½ մղոնի չափ , այս ինքն բեւեռային տրամագիծը հասարակածի տրամագծէն 2½ մղոն կարճ է , կամ թէ ըսենք՝ երկիրս բեւեռային շառաւիղը՝ հասարակածի շառաւիղին հետ բաղդատելով 299 մասին մէկ մասը կարճ է . ասոր համար դնտաձևութիւնը քիչ կ'աւրուի :

ԵՐԿՐԻՍ ՇԱՐԺՄՈՒՆՔԸ

2. Երկրիս շարժելուն պատճառները շատ հաւանական են ու աստղաբաշխական հաշիւներով հաստատուած . ասոնցմէ ամենէն պարզ ու յայանի պատճառները աս երկուքս են .

Ա. Ամէն մոլորակները շարժմունք ունին . երկիրս ալ մոլորակներէն մէկն է , ուրեմն կը շարժի :

Բ. Շատ աւելի հաւանական է որ երկիրս 24 ժամուան մէջ մէյմը ինքիր վրայ պտըտի . որ կ'ըլլայ 21,600 մղոն տեղ , քան թէ արևն ու բոլոր աստղերը մէկէն՝ մէկ մասնըրկրորդի մէջ 600,000,000 մղոն տեղ պտըտին :

3. Մեզի անանկ կ'երևայ թէ երկիրս անշարժ կեցած է , ու երկինքն է որ վրանիս կը պտըտի .

---

1. Երկրիս բեւեռներուն տափակութիւնը ո՞րչափ է :

2. Ինչէն կ'իմացուի թէ երկիրս կը շարժի :

3. Թէ որ երկիրս կը շարժի ու երկինքը անշարժ է , մեզի ինչո՞ւ ներհակը կ'երևայ :

բայց անանկ չէ . ինչպէս վաղուկ կառքով երթալու  
ատեն՝ թէ որ ծառերուն ու շէնքերուն վերի ծայ-  
րերը գիտենք , անանկ կ'երևայ թէ անոնք ետ  
կ'երթան , բայց շարժող ու առաջ գնացողը մենք  
ենք :

1 . Թէ որ երկրիս հողագունտը միայն դառնար  
ու վրայի մ'իջնուորտը հետը չստըտեր , անդադար  
օդի շարժմունք կամ սասաիկ հով կ'ունենայինք .  
բայց որովհետև օդն ալ երկրիս հետ կը ստըտի ,  
անոր համար մենք չենք խմանար : Ինչպէս նաևով  
ճամբայ ընելու ատեն՝ մէջը եղողները երթալնին  
չեն խմանար :

2 . Երկիրս երկու տեսակ շարժմունք ունի . մէյմը  
Օրսիան , մէյմըն ալ Տարեիան :

#### 1 . ԵՐԿՐԻՍ ՕՐԱԿԱՆ ՇԱՐՇՄՈՒՆԻՔԸ

3 . Օրական շարժմունք կ'ըսուի անիկայ որ եր-  
կիրս 23 ժամուան , 56 վայրկենի ու 4 բոպէի մէջ  
մէկ անգամ առանցքին վրայ կը դառնայ . և սովորաբար  
24 ժամ կը սեպուի :

4 . Երկրիս օրական շարժմունքովը գիշեր ու ցո-  
րեկ կ'ըլլայ մեզի :



1 . Թէ որ երկիրս կը ստըտի , մենք ինչո՞ւ չենք  
խմանար :

2 . Քանի՞ տեսակ շարժմունք ունի երկիրս :

3 . Երկրիս օրական շարժմունքը ո՞րն է :

4 . Երկրիս օրական շարժմունքովը ի՞նչ կ'ըլլայ :

1. Արտիճեաւ երկիրս մեկալ մողորակներուն  
պէս՝ լըսը արեւէն կ'առնէ, անոր համար երկրիս ո՞ր  
գին որ արև կը տեսնէ՞ ան կողմը ցորեկ է. անոր  
ներհակ՝ արև չտեսած կողմն ալ գիշեր է: (Ձև 20)

2. ԵՐԿՐԻՍ ՏԵՐԵԿԱՆ ՇԱՐԺՄՈՆԻՔԸ

2. Տարեկան շարժմունքովը երկիրս արևուն վրայ  
կը ստորաի 365 օրուան, 5 ժամուան ու գրեթէ  
49 րոպէի մէջ:

3. Ինչպէս մեկալ մողորակները՝ ասանկ ալ եր-  
կիրս իր տարեկան շրջանը արևուն վրայ կըսկըլոր  
չըներ, հապա քիչ մը ձուածն (Ձև 21): Աս շրջանը  
Ծ.Ի. Խաւարճի կ'ըսուի. վասն զի ինչուան որ արևը՝  
լուսինն ու երկիրս շփշխտակ աս գծին վրայ չգան,  
խաւարում չըլար:

4. Արևը երկրիս շրջանին մէջտեղը չէ, հապա  
քովընաի՝ ամենէն մեծ արամագծին վրայ. անոր  
համար երկիրս արևուն երբեմն մօտ կ'ըլլայ, երբեմն  
հեռու: Ասիկայ անկեց ալ կ'իմացուի որ մեկը գի-  
տակով նայելու ըլլայ նէ, գեկտեմբեր ամսուն մէջ  
արևուն սկաւառակը աւելի մեծ կը տեսնէ. յու-  
նիսի մէջ ալ աւելի սղտիկ. ըսել է թէ երկիրս  
գեկտեմբերի մէջ աւելի արևուն մօտ է քան թէ  
յունիսի մէջ: (Ձև 21)



1. Գիշեր ու ցորեկ ինչպէս կ'ըլլայ:
2. Երկրիս տարեկան շարժմունքը ո՞րն է:
3. Երկիրս տարեկան շրջանը ինչ ձևով կ'ընէ:
4. Արևը երկրիս շրջանին ո՞ր տեղն է:

1. Երկրիս արևէն հեռու եղած միջոցը հէ՛տ-տէ՛ք  
կըսուի, մօտ եղածը Մէ՛շ, Կէ՛ք :

2. Երկրիս արևուն հետ հեռակէտ ու մերձակէտ  
եղած միջոցներուն տարբերութիւնը գրեթէ  $2\frac{1}{2}$   
միլիոն մղոն է, իսկ միջակ հեռաւորութիւնը 83  
միլիոն մղոն է :

3. Երկիրս իր տարեկան շրջանովը գրեթէ 540  
միլիոն մղոն տեղ կը քալէ . բայց արագութիւնը  
բոլոր շրջանին մէջ հաւասար չէ :

4. Երկրիս արագութեանն անհաւասար ըլլա-  
լուն սլաոճառը աս է որ, քանի որ երկիրս արևուն  
կը մօտենայ՝ ձգողութիւնը կ'աւելնայ, անով աւելի  
